Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

3385

Zwycięzca Ulpianus
Tychmetów

1872

82
U-58

ԻՎԱՆՇՕԷ

ՀԵՂԻՆԱԿ

ՎՕԼԹՐ ՍՔՕԹ

ԹԱՐԳՄԱՆԵՑ ՅԱՆԿԻՍԱԿԱՆԷ

Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

ՀԱՏՈՐ Բ

ՏԷՐ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

ՏԻԳՐԱՆ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՏԷՏԷԵԱՆ

Չմիջոցեալ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՏԷՏԷԵԱՆ

1873

Ճգնաւորն ու ասպետը մէկ երկու անգամ իրարու լռելեայն ակնարկ կելէն ետև՝ առաջինը հիւղին ներսի կողմը գնաց, զգուշութեամբ պահուած դուռ մը բացաւ, և դահլիճ մը խորէն, ուր կ՚տանէր նոյն մուտքն, ահագին կարկանդակ մը բերաւ՝ անապէ լայնատարած պնակի մը մէջ դնելով։ Այս փարթամ կերակուրն իր հիւրին առջև դրաւ, որ, զայն բանալու համար, իր դաշոյնը գործածելով, առանց ժամանակ կորուսելու նոյն կարկանդակին պարունակութեան տեղեկացաւ։

— Այն բարի պահակն ոչչափ առեն է վեր այս տեղ եկած է — հարցուց ասպետը Ճգնաւորին աղուոր ճաշէն շատ մը պատառներ արտորնօք ուտելէն ետև։

— Երկու ամէ վեր — պատասխանեց տուրբ հայրը շտապաւ։

— Ասուած վկայ — ըսաւ ասպետն — ամէն բան հրաշալի է քու Ճգնարանիդ մէջ, տուրբ մարդ, վասն զի կրնամ երդնուլ որ այս երէն հայթայթող այծեամը դեռ շաբթուս մէջ ուղի վրայ էր։

Ճգնաւորն այս դիտողութեան վրայ շփոթեցաւ, և ասկէ զատ՝ ապուշ կերպարան մը կ՚ցուցնէր, գիտելով որ իր հիւրն անխնայ կ՚ջարդէր կարկանդակն ու կ՚լափէր, և այս ալ տեսակ մը պատերազմ էր ոչ ոքուն մատնակցելու պատրուակ մը չունէր, քանի որ նախապէս իր ժուժկալութեան վրայ պարծեր էր։

— Ես Պալէստին գացած եմ, հայր տուրբ — ըսաւ ասպետը յանկարծ կանգ առնելով — և կ՚յիշեմ որ՝ տանուտէրը սովորութիւն ունի այն տեղ իր ընդունած հիւրին մեծարած կերակրին լաւութիւնը ցոյց տալու համար՝ անոր սեղանակից լինիլ։ Երբէք չեմ կասկածիր քեզի պէս բարեպաշտ մարդու մը հիւրասիրութեան վրայ, սակայն շատ շնորհապարտ պիտի լինիմ քեզի եթէ այս արևելեան սովորութեան հետևիս։

— Քու անհիմն կասկածներդ փարատելու համար, ազնիւ ասպետ, պիտի հաճիմ, դէթ մի անգամ, իմ կանոնէս շեղիլ — պատասխանեց մենաւորն։ Եւ որովհետև այն առենը պատառաքաղ չկար, իր մատերը խօթեց կարկանդակին խորերը։

Մարդավարական սառն ձևերն անգամ մ՚որ վերցան՝ կարծես թէ Ճգնաւորին և հիւրին մէջ մրցում մ՚է մնաց ցոյց տալու համար թէ ով աւելի ախորժակ ունի, և թէև հաւանօրէն վերջինն երկար առեն ծոմ պահեր էր, սակայն Ճգնաւորն այս մասին անորմէ աւելի Ճարպիկ բրգաւ։

— Տուրբ հայր — ըսաւ ասպետն երբ իր անօթութիւնը քիչ մ՚ան-

ցաւ — գրաւ կ՚դնեմ իմ ընտիր երիվարս ոսկիի մը փոխարէն, թէ՝ այն բարեսէր անտառի պահակն՝ որուն պարտաւոր ենք այս երէն՝ փոքրիկ տակառ մը Քանարեան գինի, կամ՝ ասոր նման բան մը ձգած է քեզի, այս ընտիր կարկանդակին ընկերակից ընելու։ Ի հարկէ այսպիսի պարապայ մը՝ քեզի պէս արժանաւոր մենաւոր մ՚իր յիշատակին մէջ պահելու անվայել կ՚համարի, սակայն՝ հաւատի եմ, որ եթէ ծածուկ մառանիդ մէջ անգամ մ՚ևս փնտուես, պիտի նայիս որ իմ ենթադրութիւնս անհիմն չպիտի ելնէ։

Ճգնաւորը ծիծաղ մ՚ընելով պատասխանեց, և նորէն մառանին կողմն երթալով՝ կաշիէ տաշտ մը հանեց որ շուրջ վեց լիտր գինի կրնար պարունակել։ Նոյնպէս արծաթէ շրջանակով եղջիւրէ շինուած երկու մեծ դաւաթներ բերաւ։ Ճաշը մարսել տալու համար այս պատուական ըմպելին բերելէն ետև՝ կարծես թէ ամէն խղճի խայթ անօգուտ սեպեց, և երկու դաւաթները լցնելով՝ սաքսօնեան կերպով ըսաւ։

— Waës haël, պարոն Դանդաղկոտ ասպետ — և միւսմ պարպեց դաւաթը։

— Drink haël (քու կենացդ) Գոբմէնհըրստի սուրբ մենաւոր — պատասխանեց ասպետն, և նոյն չափով դաւաթը կլլեց։

— Սուրբ հայր — ըսաւ օտարականն՝ երբ այս առաջին բաժակը կլլեցին — Հզարմանամ որ քու ջիղերդ և կաղմածդ ունեցող, և մանաւանդ քեզի պէս կեր ու խում ընող մարդ մը, յանձն առնու այսպէս միայնակ ապրիլ անապատի մը մէջ։ Ըստ իս, դու աւելի յարմար ես դղեակ մը կամ ամրոց մը պահպանելու, ամէն օր լաւ ուտելու և խմելու, քան թէ այս տեղ հնդեղէնով և ջրով, և նոյն իսկ պահակի մը ողորմասիրութեամբ կերակրելու։ Ի վերջէ՝ եթէ քու տեղդ լինէի, թագաւորին երէն որսալով՝ թէ սիրտիս մէջ և թէ առատութիւն պիտի գտնէի։ Այս անտառներուն մէջ՝ շատ հօտեր կան և եթէ սուրբ Ցընդանի մատրանապետին սեղանին համար նոխազ մը պակսի՝ ոչ ոք այս բանս պիտի դիտէ։

— Պարոն Դանդաղկոտ ասպետ — պատասխանեց Ճգնաւորն — այդ խօսքերդ վտանգաւոր են, և խնդրեմ՝ նորէն մի կրկներ։ Ես Ճշմարիտ Ճգնաւոր եմ, թագաւորիս և օրինաց հնազանդ, և եթէ իմ վեհապետիս երէն գողնամ՝ իրաւամբ բանտ պիտի մնանեմ, իսկ եթէ խաչս գիս շաղատէ՝ կախաղան պիտի ելնեմ։

— Իսկ եթէ ես քու տեղդ լինէի — շարունակեց ասպետը — ամենայն պիտի պտըտէի, մինչեւ անդէորտ և պահակ իրենց տա-

ջուկ անկողիններու մէջ կ՚ննջեն, և ասեն ասեն՝ աղօթքս մրմնջելով, ալուրներու մէջ արածական վայրի այծերի հօտերուն նետ մը պիտի նետէի։ Ըսէ ինձ, ճկնաւոր, արդեօք այսպիսի զուարճալի ժամեր չեմ անցներ։

— Դանդաղկոտ բարեկամ — պատասխանեց ճկնաւորը — դու իմ տանս ամէն բաները տեսար, տեսար նաև ինչ որ արժանի չէր տեսնել այն որ բունի կ՚մտնէ բնակարան մը և կ՚նստի. սակայն՝ հաւատի է-ղիր՝ որ լաւագոյն է Աստուծոյ ղրկած բաները վայելել, քան թէ ե-ղած տեղը փնտռել։ Գաւաթդ լեցուր, դարձեալ բարի առաքեցար կ՚ըսեմ քեզի, աղաչելով որ ժպիրհ հարցումներ չրնես ինձ որպէս զի չստիպուիմ քեզի փորձով ցոյց տալու որ տունս այդպէս դիւրաւ չէիր կարող մտնել, եթէ միտքս դնէի իրօք քեզի դիմադրել։

— Հաւատս վկայ — ըսաւ ասպետն — որ առաջուանէ աւելի հե-տաքրքրութիւնս կ՚շարժես. քեզի պէս խորհրդաւոր ճգնաւոր մը բնա-տեսած չունէի, և մեկնելէս առաջ՝ կ՚փափաքիմ լաւ ևս ճանչել քեզ։ Իսկ սպառնալիքիդ գալով՝ քաջդիտցիր, սուրբ մարդ, որ դիմացդ կե-ցող մարդուն արհեստն է վտանգ փնտռել և անոր դէմ խիզախել։

— Դանդաղկոտ ասպետդ, ահա կենացդ կ՚խմեմ — ըսաւ մենաւորը — քու արիութիւնդ շատ կ՚յարգեմ, այլ խոհեմութեանդ վրայ խիստ թեթև կարծիք մ՚ունիմ։ Եթէ հաւասար զինուք ինձի հետ մենամար-տիլ կ՚ուզես, պատրաստ եմ կամքդ կատարելու, իբրև եղբայր և բա-րեկամ՝ այնպիսի ապաշխարանք և քաւում պիտի տամ քեզի, որ յու-սամ թէ ամբողջ տարի մը հետաքրքրութեան և գուռզութեան մեղք չպիտի գործես։

Ասպետը հաւանութիւն ցցուց և խնդրեց որ իր ընտրած զէնքն ա-նուանէ։

— Ձկայ զէնք մը — պատասխանեց մենաւորը — Գալիլայի մկրատ-ներէն և Հայէլի դամբէն սկսեալ՝ մինչև Գողիաթի դաշոյնն՝ որով քեզի հետ 'ի պայքար գալու պատրաստ չլինիմ։ Բայց եթէ ընտրու-թիւնն ինձ կ՚թողուս, ի՞նչ կարծիք ունիս, ազնիւ բարեկամ, սա խա-ղալիկներուն վրայ։

Այս ըսելով՝ մենաւորն ուրիշ պահարան մը բացաւ, և զոյգ մը վաղը ու վահան հանեց, որ նոյն ժամանակի զեղջային զինուորաց յա-տուկ էին։ Ասպետն՝ որ ճկնաւորին բոլոր շարժումներն ուշի ուշով դիտէր, տեսաւ որ այն պահարանին մէջ երկու երեք ընտիր աղեղնի մէկ նետակալ, նոյնպէս ծրար մը փքին և վեց հատ նետերու տրցակ

կային։ Իսկ տաւիղ մը և ուրիշ նուագ կրօնական երևոյթով առարկաներ ևս աչքին ղարկին դարանին մութ խորշին մէջ։

— Հայր սուրբ, խօսք կ'սամ քեզի — ըսաւ ասպետն — անխոհեմ հարցումներ չուղղել այսուհետև։ Սա պահարանին բաներն իմ ամէն հարցումներուս կ'պատասխանեն և անոնց մէջ կ'տեսնեմ զէնք մը (և նոյն պահուն ծռելով տաւիղն առաւ) որով լաւ ևս ունիմ մրցիլ քեզի հետ քան սրով և վահանով։

— Ցուսամ, պարոն ասպետ — ըսաւ մենաւորն — որ քեզի այդ դանդալկոտ տիտղոսն իրաւամբ տուած չեն։ Հաւատի եղիր որ այդ մասին քու վրադ մեծ կասկածներ ունիմ։ Այլ սակայն իմ հիւրս ես, և չեմ կամիր՝ կամացդ հակառակ, քու արիութիւնդ փորձել։ Ուստի, նստիր, և բաժակդ լեցուր. խմենք, երգենք և ուրախանանք։ Եթէ աղուր երգ մը գիտես, երջանիկ պիտի համարիմ ինքզինքս որ քեզի ասպնջականութիւն տուի 'ի Քօրմէնհրատա, և պիտի տամ միշտ որչափ որ սուրբ Տընոդանի մատրան մէջ պաշտօն վարեմ, և Աստուծոյ կամքը, այս պաշտօնը պիտի վարեմ մինչև որ իմ մոխրաղոյն պարեղօտս փոխեմ և դալարաւէտ պատանք մ'առնում։ Բայց արի, լիր բաժակդ, վասն զի տաւիղս յարելու համար քիչ մը ժամանակի կարօտ եմ, և չկայ բան մ'որ այնքան ձայնը շտկէ և ականջ սրէ, որքան բաժակ մը լաւ գինի։ Իմ մասիս՝ տաւիղս լարելը հնչելէն առաջ կ'փափաքիմ խաղողին աւիշը մատերուս ծայրը տեսնել։

ԳԼՈՒԽ ԺԷ

Ընդ երեկոյ անդ՝ յանշուք ճգնարան
Պղնձազարդ գիրքիս թերթերը բանամ,
Ուր դրոյցներ կան շատ սուրբ զօրծերու
Երկնատուր վարձքով լի վկաներու։
Սակայն երբ իմ մոմ կը վառի մութին
Կ'երգեմ՝ քուն չեղած՝ տաղս շափագին։
Ո՞վ կընայ 'ի բաց թողուլ պերճ մուշտակ,
Եւ գալ առնուլ ցուպ և դորշ իմ վարշմակ
Ո՞վ պիտի թողու աղմուկ, տեսարան,
Եւ գայ ընակի անդորը ՄԵՆԱՐԱՆ։

ՎԱՐԴՆ

Թէև ասպետը մտադիր ընդունեց մենաւորին հրաւէրը, սակայն՝ ինքն՝ իր տաւիղը լարելու գործը շատ հեշտ չգտաւ։

— Կ'թուի ինձ, սրբակրօն հայր — ըսաւ ասպետն — որ նուագաբանիդ լարին մէկը պակաս է, և միւսներն ևս փոքր ինչ խանդարեր են։

— Ա՛հ, ինչպէս քաջ կ՚դիտես — պատասխան տուաւ մենաւորն — այդ դիտողութենէդ սա կ՚իմանամ որ այս արհեստին վարժ ես։ Ցանցանքն իմն չէ — յարեց նա աչերը վեր ածելով — այլ գինիին և ցորեանի։ Արդէն ըսեր էի ես Ալան-Տէլ՝ հիւսիսաբնակ նուագածուին՝ որ տաւիղս պիտի աւրէ՝ եթէ եօթնեերորդ գաւաթը պարպելէն ետեւ՝ զայն ածելու ձեռք առնու։ Բայց իմ խօսքս մոռիկ չըրաւ։ Բարեկամ, այս բաժակը քու երաժշտական ճարտարութեանդ համար պիտի խմեմ։

Այս ըսելով գաւաթը խորին ծանրութեամբ մը պարպեց, նոյն պահուն սկսաւ երաժշտին անժուժկալութեան համար իր գլուխը ցնցելով, մինչդեռ ասպետը՝ տաւիղը շոկելէն ետեւ՝ կարճ փորձ մ՚ըրաւ և ապա մենաւորին հարցուց եթէ sirvente (երգ) մը կ՚ընարէ օք (oc) լեզուաւ,* թէ ոչ lai (եղերգ) մը oui լեզուաւ կամ սիրերգ մ՚անկլիարէն գուեհիկ ոճով։

— Սիրերգ մը, սիրերգ մը — ըսաւ մենաւորը — զոր Ֆրանսայի ամէն օֆերէն և ռէնեերէն նախադաս կ՚համարիմ։ Ես բացարձակ անկլիացի եմ, արի ասպետ, և իմ պաշտպան տուրբս, Տրնոգան ևս բացարձակ անկլիացի էր, և օֆ և ռէ կ՚ատէր նա, ինչպէս որ սաղանին ճիրանին կտրօնները կ՚ատէր. իմ մենարանիս մէջ կ՚ուզեմ որ բացարձակ անկլիարէն երգ երգես։

— Ուրեմն — պատասխանեց ասպետը — փորձ պիտի փորձեմ սիրերգ մը նուագել, յօրինեալ սաքսօն գուսանէ մը զոր յԵրուսաղէմ ճանչցայ։

Թէպէտև ասպետն երաժշտական արհեստին մէջ կատարուն վարպետ մը չէր, սակայն իսկոյն յայտնի եղաւ որ իր տաղանդն ընտիր գաստատուներու ձեռօք մշակուեր էր. արհեստը գէթ վարժեր էր զինքն ամոքելու իր ձայնին թերութիւններն որ բարձր չէր, և բնապէս կոշտ էր քան անուշ։ Մէկ խօսքով՝ իր ընդարձակ պակսութիւնները պարտուկելու համար վարժութեամբ ձեռքէն եկածն ըրեր էր։ Ուստի իր նուագածութիւնը բաւական լաւ պիտի դտնէին ձեռնհաս դատաւորներ իսկ, ուր մնաց ճգնաւորը, մանաւանդ թէ ասպետն իր ձայնարկութեան ժամանակ մերթ վաւվռուն՝ մերթ ոզոքալի կ՚դեղդեղէր, և իր երգած տաղին զօրութիւն և ազդուութիւն կ՚տար։

*Ֆրանսա՝ Նորման և Տեւոնեան ցեղերու մէջ բաժնուած էր, որոնք երկու գլխաւոր բարբառ ունէին. այս է oui կամ oil, զոր հարաւայինք oc կ՚արտասանէին, ուստի և Լանկուոք գաւառը։ Նորման ցեղին վիպասանները ֆինոդրէլ, Տեւոնեերունը դրուպատուր կ՚կոչուէին։

ԽԱՉԱԿՐԻՆ ՎԵՐԱԴԱՐՁԸ

1

Դարձաւ ապպետ Պաղէստինէն,
Ելի գործեր ըրած անդէն,
Խաչ կրելով՝ վրայ ուսին,
Գոռ ու մարտէն՝ թերմաշ մթին։
Կոփ վահանին՝ ամէն մէկ ուռ
Նշան է մի ճակատի բուռ.
Իսկ սիրելոյն տանը ներքև
Երգեց նա երբ մարէր արև։

2

Խնդա՛, աղջիկս, տես քու ապպետ,
Գայ 'ի հեռուստ ոսկի երկրէդ.
Զբերէ ինչք, նա պէտք չունի,
Բաց զէն ու զարդ և ձին մարտի,
Բաց և մտրակ յոտին վարսել,
Բաց տէգ և սուր՝ տապաստ նետել.
Այս է տրիտուր իմ վաստակիս,
Ասով յուսամ ժպտին թէկլիս։

3

Խնդա՛, աղջիկ, միշտ եմ հաստատ
Քու կրակով մղեցի մարտ.
Ազնիւ շողուն մէջ ամբոխին
Զճնաս պիտի անտես, ատրին.
Գուսան տ'երդէ, հերոսն ըսէ,
«Տես սա աղջիկ դեղանի է.
«Փալփլուն աչերն են մրցանակ
«Ասկալոնի մեծ յաղթանակ։

4

Տես իր ծիծաղ, սրեց սուրն այն
Որով շատ հարս այրի դարձան,

Երբ ուժաթափ Մահմոնդ անհաշտ ։
Ընկաւ տապաստ յԻկոնեան դաշտ ։
Արևադոյն իր զանգուրներ
Կէս բաց՝ կէս գոց՝ պէս ձեան ուսեր
Կը պահպանեն , և մէն մի թել
Հեթանոսի կեանք է արժել ։

Ե

Խնդա , աղջիկ , անունս է մուրթ ,
Բայց քաջութեանս գովեստ է քոյդ ։
Ո՛հ , բայց հիմիկ , սա դուռ գաժան
Զի ցօղ կը գայ , օր է տարժամ ։
Սիրոյի տանջով միշտ վառ
Հիւսիսի հով՝ մահ է ինձ սառ ։
Սէրդ շնորհպարտ մեղմէ թող ահ
Եւ տայ շնորհ այնմ որ բերէ գահ ։

Երբ ասպետը կ՚երդէր՝ Ճգնաւորն՝ իբր մեր օրուան նոր թատերախաղի մը քննադատ կ՚սեպէր ինքզինքն ։ Իր բաղմոցին վրայ երկնցած , աչերը կէս գոցեր էր , մերթ ձեռներն իրարու կ՚կցէր , բթամատերը կը դարձնէր և կարծես թէ խորին ուշադրութեամբ մտիկ կ՚ընէր , մերթ՝ իր ձեռքն օրելով՝ ուշիկ եղանակին չափը կ՚նշանակէր ։ Իր սիրած մէկ քանի գեղգեղանաց ժամանակ՝ ասպետին ձայնակից եղաւ , մինչդեռ ասոր ձայնը տկար լինելուն չէր կարող Ճգնաւորին նուրբ Ճաշակին պահանջածին չափ եղանակը բարձրաձայն երգել ։ Երբ երգը լմնցուց , Ճգնաւորը յայտնեց ազգու խօսքերով որ շատ լաւ էր և գեղեցիկ երգեց ։

— Եւ տակոյն — յարեց նա — կարծեմ թէ իմ սաքսոն հայրենակիցս նօրմաններու հետ ընդ երկար կենակցելուն՝ անոնց մելամաղձոտ եղանակները սորվեր է ։ Ով կ՚բռնադատէր այն բարեկիր ասպետն իր բնիկ երկրէն հեռանալու . և հեռանալովն ի՞նչ կրնար յուսալ , բայց եթէ 'ի դարձին տեսնել որ իր սիրուհին ուրիշի մը հետ կապուեր է , և իր գիշերային նուագը մտիկ չըներ՝ որպէս թէ կասուն խողովակին մէջ մլաւէր ։ Բայց դարձեալ , քաջ ասպետ , այս բաժակը քու կենաց և ամէն Ճշմարիտ սիրահարներու յաջողութեան համար պիտի խմեմ ։ Վախնամ որ դու ասոնց կարդէն չես — յարեց նա՝ դիտելով որ ասպետն (որուն գլուխը՝ ստէպ պարպած բաժակներէն՝ սկսեր էր տաքնալ) կոյժէն իր գինին մէջ ջուր կ՚դնէր ։

— Ինչ — հարցուց ասպետը — միթէ չըսի՞ր ինձ որ այս ջուրը քու եպատկառելի պաշտպան սուրբ Տրնպանի աղբիւրէն կ՚բղխի։

— Անշուշտ — պատասխանեց Ճղնաւորն — և անոր մէջ հարիւրաւոր հեթանոսներ մկրտեց. բայց երբէք լսած չեմ որ այն ջրէն խմած լինի։ Աշխարհիս մէջ՝ պէտք է ամէն բան իր յատուկ նպատակին համեմատ գործածել։ Սուրբ Տրնպան՝ ուրիշին չափ քաջ գիտէր զուարթ վանականի մը արտօնութիւնները։

Այս ըսելով՝ իր ձեռքը տաւիղին երկնցուց և իր հիւրը զուարճացուց հետևեալ նշանական երգով, որ տեսակ մը derry-down* եղանակի մը վրայ յօրինուած և անկլիական հին երգի մը մէջ յիշուած է։

ԲՈԿՈՏՆ ԿՐՕՆԱՒՈՐ

1

Տամ պիտի քեզ, ընկեր, երկու երեք տարի
Պիզանսէն Սպանիա, յԵրուսաղեմ այցի,
Բայց թէ յոգնիս գաղրիս, ոչ մի մարդ բաղդաւոր
Տի չգտնես ուրեք՝ քան զԲոկոտն կրօնաւոր։

2

Ասպետ վազէ՝ ի մարտ իր տիրուհւոյն համար՝
Եւ իրկուն գառնայ տուն՝ թշուառ նիզակահար.
Իսկոյն հաղորդ կու տամ, զի կին իւր մենաւոր
Ցցանկայ այլ սփոփանք՝ քան զԲոկոտն կրօնաւոր։

3

Թագաւոր, վաշ, գիտենք, շատ իշխաններ արդէն,
Հաներ են պատմուճան՝ շուրջառի փոխարէն.
Բայց մեզնէ որ երբէք՝ յայտներ է սին խղճ որ
Պիտակ խոյրի տեղ թաղ առնու՝ մի կրօնաւոր։

4

Դուրս ելաւ կրօնաւոր և ամէն ուր որ գնաց,
Հողն ու իր պտղին ամէն տեղ գտաւ բաց.

*Դէրրի-Դաուն։ Պէտք է դիտնայ ընթերցողն որ Դէրրի-Դաունի հայերդը շատ հին կը նեպուի, և ոչ միայն Եօթնապետութեան այլ Տրուխաներու ժամանակին կ՚հասնի, և կ՚ըսեն թէ այս հայերդն այն պատկառելի մարդիկ կ՚գործածէին երբ Նուիրական ոսոը հաւաքելու կ՚երթային։

Ուզած տեղ մեն կը գայ, երբ յոգնի դաղարի ;
Զի ամէն մարդու տուն՝ է մեր կրօնաւորի :

5

Կէսօրին կ՚սպասուի և դեղջուկն չժտի
Մինչ դալը ուտել հայ կամ ապուր սալորի.
Զի լաւագոյն ուտեստ և կրակին մօտ աթոռ
Ունի իւր սեպհական բոկոտն կրօնաւոր :

6

Իրիկուն կ՚ըսպասեն՝ խմորը. կ՚տապկեն
Գորշ. գարեջրին տակառ բանան՝ ամեն պարպեն
Տան տիկին լաւ սեպէ էրկանը մնալ մառանի՝
Քան մերժել գիրդ մահիճ բոկոտն կրօնաւորի :

7

Ընդ երկար կ՚պաշտեն տանտալ, գդակ, չուան
Սաղանէն կ՚երկնչին՝ Բաբին կը հաւատան
Զի կենաց վարդ ժողվել՝ կալով անմաս փուշին
Է մի միայն բաժին՝ բոկոտն կրօնաւորին :

— Ճշմարիտը — գոչեց ասպետը — Ճշտիւ և հեշտօրէն երգեցիր քու ուխտդ չափէ դուրս գովելով : Արքակրօն հայը, դու սաղանին վրայ խօսեցար, բայց միթէ չես վախնար որ օր մ՚ուխտիդ հակառակ ըրօնելու ժամանակ քեզի այցելութեան գայ :

— Ես ուխտիս հակառակ վարուիմ — պատասխանեց Ճգնաւորն : — Այդ ամբաստանութիւնդ կ՚հերքեմ, արաթուր կ՚կոխեմ. ես իմ քահանայական պաշտօնս ըստ օրինի և անկեղծօրէն կ՚կատարեմ. օրն երկու պատարագ կ՚ընեմ՝ մին առտու և միւսն իրիկուն, առաւօտեան, կէսօրուան և երեկոյեան ժամերգութեամբ ; նոյնպէս Հառաջամտ և Հայր Մեր կ՚ըսեմ :

— Բայց ՝ի այն գիշերներէն որ լուսին կայ երէոսի ժամանակ, ՝է քաց առէալ ոչ գոյ կրկին պարտքանէր — պատասխանեց Ճգնաւորն — ինչպէս որ մեր ծերունի վանահայրն ինձ սորվեցուց ըսել՝ երբ յանդուգն աշխարհականներ եկնեն հարցնեն ինձ եթէ իմ ուխտիս բոլոր մանր պարտաւորութիւնները կ՚կատարեմ :

— Իրաւ է, հայր սուրբ — պատասխանեց ասպետը — բայց սա-

տանան այսպիսի մուացումներ դիտելու տրամադիր է. ամէն տեղ կ'երթայ, ինչպէս որ դիտես մունչող առիւծի պէս։

— Եթէ կ'յանդգնի թողայս տեղ մունչէ — ըսաւ կրօնաւորն — և իմ պարանիս մէկ ծայրը բաւական է զանի աւելի բարձր մունչել տալ քան սուրբ Տընսդանի ունելիներն. ես երբէք մարդէ չեմ վախցած և նոյնչափ անվախ եմ սատանային և իր կորիւններուն առջև։ Սուրբ Տընսդան, սուրբ Տիւպրիք, սուրբ Վայնպալտ, սուրբ Վայնֆրէտ, սուրբ Սվիսպերտ, սուրբ Վիլիք, առանց մուռնալու և սուրբ Թոմլասան՝ երբ իմ օգնականներս են, իմ անձնական արժանիքիս ուժով բոլոր այն սատանաներուն դիմադրաւ կ'կենամ, թող գան իրենց կարճ ու երկար պոչերով, բայց իբրև գաղտնիք ահա կ'ըսեմ քեզ, որ երբէք չեմ խօսիր այս տեսակ բաներու վրայ, բարեկամ, բայց միայն ուուաւոտեան աղօթքս ընելէն ետև։

Հետևապէս խօսակցութիւնը փոխեց. Ճգնաւորին և ասպետին խնդութիւնը մինչև խենդութեան հասաւ, և հետզհետէ շատ մ'երգեր երգեցին, երբ յանկարծ եկան դրան քանի մ'ուժգին հարուածներ տուին և իրենց խրախճանն ընդմիջեցին։

Այս ընդմիջման պատճառը բացատրելու համար հարկ է ուրիշ խմբի մ'արկածները պատմել. վասն զի, վաղեմի Արիոսդին նման՝ չեմ կամիր մեր վէպին անձերէն միոյն վրայ շարունակ խօսիլ։

ՖԼՈՒԽ ԾԸ

Օ՜ն անդր, մեր շաւիղ՝ կայ ընդ ձոր, ընդ փապար,
Ո՛ւր առ իր երկչոտ մոր գթէ այծեամ կայտառ,
Ո՛ւր և ատուար կաղնին՝ ոստերով բազմաճղի,
Արփւոյն ճառագայթներ կ'արգելու ընդ ուղի։
Օ՜ն ընդ առաջ, ասոնք են ճանբաներ սիրուն
Ի ճեմել՝ երբ զուարթուն արև կայ 'ի գահուն.
Անախորժ, անատոյգ է կինթիոյ լամպար
Երբ իր աղօտ լուսով լուսէ զահեղ անտառ։

ԷՍՐԻԿ ՖՕՐԸՍԹ

Երբ սաքսօն Սէտրիկ՝ իր որդւոյն նուաղիլը տեսաւ Էշպիի մրցարանին մէջ՝ իր առաջին շարժումն եղաւ հրաման տալ որպէս զի իր սպասաւորներն առնուն զանի խնամն, բայց իր խօսքը բերնին մէջ մնաց. անկարող եղաւ, այն բազմութեան առջև՝ իր մերժած և ժառանգութե-

նէ զրկած որդին Ճանչել։ Սակայն Օսվալտի ապսպրեց որ զանի աչքէն չհեռացնէ, և մէկ քանի ստրուկներու հետ Իվանոէն տունը տանի՝ երբոր ամբոխն սկսի ցրուիլ։ Բայց Օսվալտի տրուած յանձնարարութիւնն՝ ուրիշներն արդէն կատարեր էին. ամբոխը ցրուեցաւ, արդարև, այլ ասպետն աներևոյթ եղեր էր։

Սէտրիկի մատուռաւոր ընդունայն չորս կողմը փնտռեց իր նորատի տէրը գտնելու համար. տեսաւ այն արիւնալի վայրն ուր քիչ մ՚առաջ Իվանոէ ընկեր էր, բայց ինքն անհետ եղեր էր։ Կարծես թէ պարիկներն առեր տարեր էին զինքը։ Կարելի է Օսվալտ (վասն զի սաքսօնները աւելորդապաշտ են) Իվանոէի կորուստը բացատրելու համար այսպիսի կարծիք մը տածէր, եթէ յանկարծ ձիապանի պէս հագուած անձ մ՚աչքին զարնելով՝ իր Կիւրթ ընկերին կերպարանը չճանչեր։ Իր տիրոջը վիճակին վրայ անհանգիստ և անոր յանկարծական կորուստին վրայ յուսահատ՝ ծպտեալ խոզապանը ամէն տեղ զանի կ՚փնտռէր, և այս խուզարկութեան ժամանակ մոռցեր էր իսկ թէ իր պարտքն է Կիւրթը ձերբակալ ընել՝ իրրև փախստական մ՚որուն վճիռն իր տէրը պիտի տար։

Մատուռին իր հարցումները կրկնելով՝ Իվանոէի անհետանալու մասին՝ այուչափ միայն իմացաւ հանդիսականներէն որ ասպետը խնամով վերուցեր են լաւ հագուած սպասաւորներ՝ և հանդիսին ներկայ գտնուող տիկնոջ մը գահաւորակը դրեր՝ և անմիջապէս մրցարանէն հաներ են։ Այս տեղեկութիւնն առնելով՝ Օսվալտ միտքը դրաւ իր տիրոջ մօտ գառնալ ուրիշ հրահանգներ ստանալու համար, իր հետը տանելով Կիւրթը, զոր կերպով մ՚իրրև դասալիք կ՚նկատէր և Սէտրիկին տունէն փախչող սպասաւոր մը։

Իսկ Սէտրիկ՝ իր որդւոյն վիճակին վրայ սրտամաշ և կսկծալի վախեր ունէր. վասն զի բնութիւնն իր ազդեցութիւնը կ՚ներգործէր, թէև Սէտրիկ ստոյիկեան հայրենասիրութեամբ անոր կ՚անսասանէր։ Բայց այն ինչ իմացաւ որ Իվանոէ խնամատար, և թերևս բարեսէր բարեկամներու ձեռքը կ՚զանուի, որ իր որդւոյն վիճակին առթիւ զգացած հայրական մտատանջութիւնը նորէն զոռոզութեան և բարկութեան զգայման տեղի տուաւ, զգացում մ՚որ, ինչպէս կ՚ըսէր, Վիլֆրիտի որդիական անհնազանդութենէ վիրաւորեալ կ՚ելպէր։

— Թող իր ընտրած ճանբան շարունակէ նա — կ՚ըսէր — թող անանք որոց համար ստացաւ իր վերքը բուժեն զինքն։ Ասելի յաջողակ է նօրման ձեռնածուի մը խաղերը խաղալ՝ քան թէ իր անկլխացի նախ-

նեաց համբաւն ու պատիւը պաշտպանել թրով և տապարով, որոնք իր բնիկ երկրին ընտիր և հին զէնքն են։

— Եթէ իր նախնեաց պատիւը պահպանելու համար — ըսաւ Ռոմէնա՝ որ ներկայ էր — բաւական է խորհրդի մէջ իմաստուն և գործադրութեան մէջ քաջ լինիլ, եթէ բաւական է արեաց մէջ քաջարի և ընարելոց մէջ քաջընտիր լինիլ, իր հօրը ձայնէն զատ ձայն մը չկայ որ անոր զլանայ . . . ։

— Դու լռութիւն պահէ, օրիորդ Ռոմէնա, այդ կիսին վրայ քու խօսքդ մտիկ չեմ ըներ — ըսաւ Սէտրիկ։ — Իշխանին կոչունքին համար պատրաստուէ. անտվոր քաղաքավարութեամբ և պատուաւոր պարագաներու մէջ հասաւ մեզի այս հրաւէրը, քաղաքավարութիւն մը՝ զոր՝ Հէատֆիլդի աղէտաբեր օրէն վեր՝ հազիւ ուրեմն ցոյց տուած են մեզ զուռոզ Նորմաններն։ Այս խնջոյքին երթալ կ'ուզեմ, զէթ այն հպարտ Նորմաններուն յայտնելու համար թէ ոչչափ անկարելիր է սաքսոն սիրտ մ'որդւոյ մ'որ իրենց արիապոյն ասպետներն ընկեր էր։

— Խակ ես — ըսաւ Ռոմէնա — անդ ՁՊԻՏԻ երթամ. զոյշ եղիր, հաւատա ինձ, որ քու արիութիւն և հաստատամտութիւն կարծածդ, սրտի խստութիւն չհամարուի։

— Ուրեմն տունը մնայիր, ապաշնորհ օրիորդ — պատասխանեց Սէտրիկ — քու սիրտդ է միայն խիստ, քանի որ ճնշեալ ժողովրդեան մը բարօրութիւնն ապօրինի սիրոյ մը կ'զոհես։ Երթամ՝ պիտի ասենք Աթէլստէյնն առնլու և անոր հետ ճօհն տ'Անժուի խնջոյքը դնալու։

Հետևապէս Սէտրիկ դնաց այն խնջոյքն, որուն կարևոր պարագաներն արդէն յիշեցինք։ Դղեկէն ելնելով՝ սաքսոն հողատէրներ ձի հեծան, նոյնպէս իրենց ապատաւորներն, և այս չուին ժամանակ պատահած խառնակութեան մէջ՝ Սէտրիկ առաջին անգամ դատալիք Կիւրթին վրայ աչք նետեց։ Ազնիւ սաքսոնն, ինչպէս որ արդէն տեսանք, մեծ սրտանեղութեամբ ելեր էր, և պատրուակ մը կ'փնտռէր իր բարկութիւնը մէկուն զլխին թափելու համար։ — Շղթաներ, շղթաներ քերէք — ըսաւ։ — Օսվալտ, Հինտիպէրդ, շներ, ստրուկներ, ինչու համար այս ապիրատն ազատ թողեր էք։

Կիւրթի ընկերներն՝ առանց որ և է ընդդիմութեան՝ զինքը պախուրցով մը կապեցին իրրև պատրաստապոյն կապով մը։ Այս գործողութեան անմուռջկլուխ ծռեց Կիւրթ, միայն՝ իր տիրոջ յանդիմանական ակնարկ մը նետելով՝ ըսաւ. — Այս պատիժը կ'կրեմ, վասն զի քու մարմինդ ու արիւնդ աւելի սիրեցի քան թէ իմս։

— Զի հեծիր, և շուտ ճանբայ ելիր — ըսաւ Սէտրիկ։

— Իրաւի, արտորալու հարկ կայ — ըսաւ ազնիւ Ամէլատէն — վասն զի թէ որ չվուրթանք՝ արժանի Վալտոֆ աբբային պատրաստութիւններն երկրորդ ընթրիքին համար, ըոլորսին՝ ի զուր պիտի երթան։

Սակայն ուղևորներն այնքան արտորացին որ ստրբ Վիմզլտի մենաստանը հասան ակնարկեալ աղէտը պատահելէն առաջ։ Նոյն իսկ աբբան՝ որ հին սաքսօն ցեղէ մը կ՚սերէր, իր ազգին յատուկ առատաձեռն հիւրասիրութեամբ ընդունեց ազնիւ հայրենակիցներն, և երկայն ժամանակ մեծարեց, կամ լաւ ևս ըսեմ, մինչև տուաւօտեան դէմ, իսկ հետևեալ օրն՝ իրենց կրօնաւորէն չբաժնուեցան՝ փառաւոր նախաճաշիկ մ՚ընելէն առաջ։

Ձիաւորները մենաստանին բակէն ելնելու ատեն՝ դիպուած մը պատահեցաւ որ փոքր ինչ վրդովեց սաքսօններն, որ՝ քան ամէն ժողովուրդ Եւրոպիոյ՝ աւելորդապաշտ էին, և գուշակներու կ՚հաւատային, այնպէս որ մինչև այսօր մեր ժողովրդային աւանդութեանց մէջ այս մասին եղած կարծեաց մեծ մասը կրնանք անոնց վերաբերել։ Վասն զի նորմանները խառն ժողովուրդ մը ըլնելով, և այն ժամանակի ուսմանց աւելի հմուտ՝ մուցեր էին իրենց նախնեաց Աքանտինաւիայէն բերած շատ մ՚աւելորդապաշտութիւններն, և կ՚գովուէին թէ այս մասին ազատօրէն կ՚մտածեն։

Այս պարագային մէջ՝ վերահաս դժբաղդութեան մ՚երկիւղ ազդող յարգելի գուշակն եղաւ մեծկակ, նիհար, սև շուն մը, որ շիտակ նստած՝ ոգբագին ունաց այն միջոցին որ առաջին ձիաւորները մենաստանին մեծ դռնէն դուրս ելան, և ապա վայրագ կերպով հաջեց ապդեանդին ոստոստելով, և կարծես թէ ձիաւորներու խումբէն զատուիլ չէր ուզեր։

— Այս երաժշտութիւնը չեմ սիրեր, հայր Սէտրիկ — ըսաւ Ամէլատէն, վասն զի այս յարգական անուամբ անոր հետ խօսելու սովոր էր։

— Նոյնպէս ես, եղբայր — ըսաւ Վամպա — վասն զի շատ կը վախնամ՝ որ այս երաժիշտը մեզի սուզի պիտի նստի։

— Ըստ իս — ըսաւ Ամէլատէն՝ որուն յիշողութեան վրայ աբբային լաւ գարեջուրն (որովհետև Պրոֆն արդէն երևելի էր այս ընտիր ըմպելիին կողմէն) նպաստաւոր տպաւորութիւն մ՚ըրեր էր — կարծեմ աւելի աղէկ կ՚ընենք եթէ ետ դառնանք և վանահօր հետ մինչև կէսօր անցնենք։ Ուղևորութիւն մ՚երբէք յաջող չլինիր՝ երբ ուղևորին ճան-

բան վրայէն, ճագար կամ հաջող շուն մ՚անցնի, մինչև որ ուրիշ ճաշ մը չընէ։

— Օն առաջ — ըսաւ Սէտրիկ անհամբեր — արդէն մեր ուղևորութեան համար օրը շատ կարճ է։ Իսկ այս կենդանին կ՚ճանչեմ, փախստական Կիւթ ստրուկին շունն է, իր տիրոջ պէս անօգուտ դասալիք մը։

Այս ըսելով Սէտրիկ՝ երասաններուն վրայ ելաւ, և ուղևորութեանը խոչընդոտ եղող շան վրայ զայրանալով՝ Գանկոին նետեց իր նետը, վասն զի իրօք Գանկոն շունն էր այն, որ իր տիրոջ աստանդական շաւղին հետևելով՝ զայն կորուսեր էր, և այժմ իր անախորժ կերպով կ՚ուրախանար Կիւրթը գտնելուն։ Նետը շան ուսը զարկաւ և քիչ մնաց զայն գետինը պիտի դամէր։ և Գանկոն զայրագին Սէտրիկին երեսէն խոյս տուաւ ոռնալով։ Կիւրթին տիրտն ելաւ, վասն զի իր հաւատարիմ ընկերին դէմ այս սպաննութեան փորձն աւելի տաժանելի դտաւ քան թէ իր ընդունած դառն պատիժը։ Իր ձեռքն ընդունայն աչացը տանելու աշխատելէն ետև՝ ըսաւ Վամպային, որ իր տիրոջ զայրոյթը դիտելով՝ խոհեմութեամբ ետևի կողմը քաշուեր էր։ — Կ՚աղաչեմ քեզ, շնորհ ըրէ աչերս սրբել վերարկուիս քղանցքով, փոշին կ՚նեղէ զիս, և այս կապերս չեն թողուր որ ես ինքնին սրբեմ։

Վամպա խնդիրը կատարեց, բաւական ատեն քովէ քով արշաւեցին և նոյն պահուն Կիւրթ տխրագին լռութիւն մը կ՚պահէր։ Ի վերջէ իր զգացումներն աւելի զսպել չկարենալով, ըսաւ,

— Վամպա բարեկամ, Սէտրիկի ծառայող յիմարներէն դու միայն քու յիմարութիւնդ ընդունելի ընելու ճարպիկութիւնն ունիս։ Ուստի, գնա անոր մօտ և ըսէ թէ ոչ սէրն ու ոչ երկիւղը կարող են ստիպել զիս անոր ծառայել այսուհետև։ Իմ գլուխս կրնայ կտրել, կրնայ զիս գանակոծ ընել, կրնայ զիս շղթայակապ բանտարկել, բայց այսուհետև կարող չէ բռնադատել որ զինքը սիրեմ կամ իրեն հնազանդիմ։ Ուստի, գնա, իմ կողմէս ըսէ որ Կիւրթ՝ Պիվուլֆի որդին՝ իր պաշտօնէն կ՚հրաժարի։

— Իրաւի — ըսաւ Վամպա — որչափ որ յիմար եմ, այդ յիմարական պատգամաւորութիւնը չպիտի կատարեմ։ Սէտրիկ ուրիշ նետ մը ալ ունի գօտիէն անցած, և գիտես արդէն որ քաջ հշան կ՚առնու։

— Փոյթս չէ — պատասխանեց Կիւրթ — եթէ ինձի հշան առնու։ Երէկ՝ իմ նորատի տէրս, Ալֆրիան՝ արիւնլուայ թողուց անխնամ. այսօր փորձ փորձեց սպաննելու իմ աչքիս առջև՝ այն կենդանին որմէ

ելատ մէկը սիրած չէ զիս։ Ս. Էտմօնտ, Ս. Տրնոդան, Ս. Վիթոլտ և Ս. Էտվարտ Խոստովանող, և սաքսն օրացուցին բոլոր սուրբերը վկայ (վասն զի Սէտրիկ սաքսօն չեղող սուրբի վրայ երդում չէր ըներ, և բոլոր տնեցիք ալ նոյն ջերմեռանդութիւնն ունէին) որ երբէք անոր չպիտի ներեմ։

— Ես այսպէս կարծեմ — ըսաւ միմոն, որ սաէտ տան մէջ հաշտարար պաշտօն կ'վարէր — թէ մեր տանտէրը Ֆրանկը վկրատորելու միտք չունէր, այլ միայն վախցնելու։ Վասն զի դու ալ դիտեցիր անշուշտ որ երասանին վրայ ելաւ, որպէս թէ նետը շան վրայէն նետել կ'ուզէր, և իրօք նետն առանց դպելու պիտի անցնէր, բայց Ֆրանկը յանկարծ ոստում մ'ընելուն նոյն միջոցին, թեթև վէրք մ'առաւ։ այս վէրքը բուժելու ես վրաս կ'առնում մէկ բէննիի կուպրով։

— Եթէ ըսածդ հաւատալի լինէր — ըսաւ Կիւրթ — եթէ իրօք կարենայի հաւատալ ըսածիդ։ բայց ոչ, ես դիտեցի որ լաւ նշան առաւ, լսեցի թէ ինչպէս կ'սուլէր նետն օդին մէջ՝ նետողին զայրալիր չարակամութեամբն։ Եւ երբ գնաց նետը գետին մխուեցաւ՝ դողդողաց և կարծես թէ նշանը վրիպելուն կ'ցաւէր։ Սուրբ Անտոնինոսի սիրելեան շան վրայ կ'երդնում, որ Սէտրիկի ծառայութենէն կ'հրաժարիմ։

Եւ սրտմտած խոզաբածը նորէն լռութիւն պահեց և միմոն 'ի զուր ջանաց անոր տրտմութիւնը փարատելու։

Նոյն պահուն՝ Սէտրիկ և Ամէլստէյն՝ խմբին պարագլուխներն՝ երկրին վիճակին, արքայական գերդաստանին երկպառակութեանց, նորման իշխաններուն վէճերուն և կռիւներուն վրայ կ'խօսէին առանձին, և կ'յուսային որ ճնշեալ սաքսօնները նորմաններու լուծը թօթուեն, կամ գէթ՝ ըստ երևոյթին ծպտելիք քաղաքային պատերազմներէն օգուտ քաղելով՝ ազգային կարևորութիւն և անկախութիւն ձեռք ձգեն։ Այս խնդրոյն վրայ Սէտրիկ շատ բորբոքած կ'երևէր։ Իր ազգին անկախութեան վերահաստատութիւնը սրտին միակ փափաքն էր, փափաք մ'որուն կամովին զոհեր էր իր առտնին երջանկութիւնն և իր որդւոյն շահերը։ Բայց այս մեծ յեղափոխութիւնը՝ ընիկ անկլիացւոց 'ի նպաստ՝ կատարելու համար պէտք էր որ իրենց մէջ միացած լինէին և որոշ պարագլխի մը ներքև գործէին։ Ոչ միայն անհրաժեշտ էր սաքսօն արքունի ցեղէն գլուխ մ'ընտրել, այլ նաև իբրև հանդիսաւոր պայման կ'պահանջուէր այն անձանց կողմէն որոց Սէտրիկ իր գաղտնի խորհուրդներն և յոյսերը յայտներ էր։ Գէթ Ամէլստէյն այս յատկութիւնն ունէր, և թէպէտ իբր պարագլուխ կանգնելու մտադիր

Ինչպէս կամ տաղանդէ զուրկ էր, բայց հաճելի կերպարան մ՚ունէր։ Վատասիրտ չէր, զինուորական կրթութիւններու վարժ, և տրամադիր ի՛ներևէր իրմէ աւելի խոհեմ խորհրդականներու կարծեաց անսալ։ Նա մանաւանդ՝ ամէն մարդ գիտէր թէ Ամէլսաէին առատասիրտ էր ու հիւրասէր և կարծէր թէ բարեբարոյ էր։ Սակայն որչափ որ սաքսոնեան դաշնակցութեան դէմ սեպուելու իրաւունքներ ունէր Ամէլսաէին, իր հայրենակիցներուն մեծ մասը տրամադիր էր օրիորդ Ռովէնային տիտղոսը նախադաս համարիլ, որ ուղղակի Ալֆրէտէն կ՚ինջնէր և որուն հայրն իր իմաստութեան, քաջութեան և վեհանձնութեան կողմէ նշանաւոր պարագլուխ մը լինելուն, յիշատակը մեծ պատիւ ունէր հարստահարեալ հայրենակցացը մէջ։

Եթէ Սէտրիկ փափաքէր՝ իրեն համար դժուարին բան մը չէր, գէթ միւսներուն չափ զօրաւոր կուսակցութեան մը գլուխն անցնիլ։ Երկու հեռամուտներուն արքայական իրաւանց դիմադրելու համար Սէտրիկ արիութիւն, դորձունէութիւն, աղգեցութիւն, և մանաւանդ անձնուէր եռանդ մ՚ունէր այն դատին համար որով ՍԱՔՍՕՆ մականունը ստացեր էր, իսկ իր ծնունդն Ամէլսաէինի և իր սանուհիէն միայն աւելի ստորին էր։ Բայց այս յատկութիւններն եսութեան ամենաթեթև արատը չունէին, և՝ փոխանակ իր տկարացած ազգը նոր կուսակցութիւն մը կազմելով աւելի ևս բաժնելու՝ իր յատակագծին էական մէկ նպատակն էր արդէն գանուած կուսակցութիւնը ցրուել՝ Ռովէնան Ամէլսաէինի հետ կարդելով։ Սակայն իր սանուհւոյն և որդւոյն փոխադարձ սէրն այս սիրական նպատակին արդելք մը լինելուն, ստիպուեր էր Վիլֆրիտը տունէն արտաքսելու։

Սէտրիկ այս խիստ միջոցն 'ի գործ դրեր էր՝ այն յուսով որ Վիլֆրիտի տարակայութեան ժամանակ, Ռովէնա թերևս իր սէրը մոռնար, բայց այս յոյսն 'ի դերև ելաւ և ատոր պատճառն ըստ մասին Ռովէնայի դատարակութեան կերպն էր։ Սէտրիկ, որուն համար Ալֆրէտի անունը դերագոյն էակի մը անուան չափ մեծ էր, այս նշանաւոր թագաւորին յետին շառաւիղն այնչափ յարգանօք խնամեր էր որ թերևս այն ժամանակները Ճշմարիտ իշխանուհի մը հպիւ ուրեմն տեսած պիտի լինէր։ Ամէն պարագաներու մէջ՝ Ռովէնայի կամքը տան օրէնքն եղած էր, և նոյն իսկ Սէտրիկ, որպէս թէ այն փոքրիկ շրջանին մէջ անոր վեհապետութիւնը լիովին ճանչելու որոշած լինէր, կարծես թէ իրը առաջին հպատակներէն մին անոր հնազանդելու իրեն պարծանք կ՚համարէր։

Այսպէս իր նախորդ դաստիարակութեամբը Ռովէնա՝ ոչ միայն իր ազատ կամքն այլ բռնական իշխանութիւն մը վարելու սովորած լինելով՝ պատրաստ էր իր սիրան ու սէրը սեղմելու համար եղած փորձերը մերժելու. մանաւանդ թէ ամուսնական խնդրոյն մէջ իր անկախութիւնը յայտնել կ'ուզէր, քանի որ հնազանդութեան և հլութեան վարժ օրիորդներն անդամ, ստէպ իրենց ծնողաց և դաստիարակաց իշխանութեան դէմ շարժելու տրամադիր կ'գտնուին։ Ռովէնա ուժգնապէս ղգացած բաները բացարձակապէս կ'յայտնէր, և Սէտրիկ՝ որ չէր ուզեր իր ամուսնոյն կարծեաց նկատմամբ ունեցած յարգանքը թողուլ, չգիտէր ինչ միջոցաւ իր դաստիարակի իշխանութիւնը յարգելտալ։ Սէտրիկ ընդունայն ջանաց հրապուրել Ռովէնայի միտքն երևակայական գահոյք մը։ Օրիորդն որ կորովի միտք մ'ունէր, Սէտրիկին խորհուրդն անդործադրելի և իրեն դոյզն փափաքելի կ'համարէր եթէ գործադրէր անդամ։ Առանց Վիլֆրիտ Իվանոէի ունեցած սէրը պահելու յայտնեց որ՝ եթէ իր ընտրած ասպետը չդանուէր, լաւագոյն պիտի համարէր վանք մը քաշուիլ քան թէ Ամէլատէյնի հետ դահակից դանուիլ, քանի որ զանի միշտ արհամարհեր էր և թէ այժմ անոր պատճառաւ կրած նեղութեան համար զանի բոլորովին կ'ատէր։

Սակայն Սէտրիկ, որ կանանց հաւատարմութեան վրայ թեթև դաղափար մ'ունէր, ամէն կարելի եղած ճիգը թափեց ամուսնութիւնն 'ի կատար հանելու, որով կ'կարծէր թէ սաքսօնեան անկախութեան կարևոր ծառայութիւն մը պիտի մատուցանէ։ Էշպիի մրցարանին մէջ իր որդւոյն անակնկալ և ասպետական երևոյթն իր յոյսերուն մահատու հարուած մը տուեր էր, ինչպէս որ ինքն ալ կ'կարծէր։ Իրաւ է որ իր հայրական սէրը պահ մը յաղթանակեր էր իր գոռոզութեան և հայրենասիրութեան վրայ, բայց դարձեալ այս երկու զգացումներն աւելի ուժգին վերադառնալով իր սրտին մէջ՝ որոշեր էր յետին ճիգը թափել Ամէլատէյնը Ռովէնային հետ միացնելու և ազգային անկախութեան համար ամէն անհրաժեշտ միջոցներն 'ի գործ դնելու։

Հետևապէս Ամէլատէյնի հետ կ'վիճաբանէր այս խնդրոյն վրայ և ատեն ատեն կ'ցաւէր իրաւամբ Հօրաբուրին պէս որ այսպիսի պատուաւոր խորհրդի մը գործադրութեան համար իր առջևը գանուող մարդը տկար էր և որպէս թէ ջուրը ամանի մէջ գրած կ'ծեծէր։ Արդարև՝ Ամէլատէյն անտիաւ էր և կ'ախորժէր որ իր բարձր տոհմին և ժառանգական իրաւամբ վեհապետութեան և ակնածութեան արժանի լինելուն վրայ պատմութիւններ պատմելով գինքը շոյեն, բայց այս ու-

հայնասիրութիւնն ըստ կարի զոհ կ՚ընէր այս մեծարանքն իր յատուկ սպասաւորներուն և իրեն մօտեցող սաքսօններուն կողմէն ընդունելով։ Վտանգի դէմ դնելու արիութիւն ունէր Ամէլստէյն, բայց զայն փնտռելու կ՚խորշէր և մինչդեռ՝ սաքսօններու անկախութեան իրաւանց մասին Սէտրիկի մէջ բերած ընդհանուր սկզբունքը կ՚ընդունէր, և այս անկախութեան հասնելէն ետև՝ անոնց վրայ սիրելու արժանիքը դիւրաւ կ՚ճանչէր, սակայն երբ պէտք լինէր այս իրաւունքը պաշտպանելու միջոցներուն վրայ խորհիլ՝ միշտ դանդաղկոտ, ծանրաշարժ, տարտամ, թոյլ և երկարաձգող Ամէլստէյն էր։ Սէտրիկի եռանդուն և խանդաղին յորդորներն իր անպգայ բնաւորութեան վրայ չէին ներգործեր և կարծես թէ հրաշէկ զունդերու պէս ջրի մէջ կ՚ընկնէին, որոնք քիչ մը ձայն ու մուխ կ՚արտադրեն և իսկոյն կ՚մարին։

Եթէ Սէտրիկ՝ այս պաշտօնը թողուր, որ յոգնած երիվար մը մտրակելու կ՚նմանէր, կամ ցուրտ երկաթի վրայ կռան կոփել, և զար Ռովէնայի քով խորհրդակցելու, անորմէ ևս զոհ սրտով չէր հեռանար։ Վասն զի իր ներկայութեամբը Ռովէնայի և իր սիրական Էլկիդա նաժիշտին խօսակցութիւնն ընդմիջելուն՝ որ Վիլֆրիտի արիութեան և վիճակին վրայ կ՚դառնար, Էլկիդա իր և սիրուհւոյն վրէժը կ՚լուծէր՝ Ամէլստէյնի անկումը յիշելով մրցարանին մէջ, այսինքն Սէտրիկի ականջներուն ամենէն անախորժ նիւթն։ Ուստի այս դէպ սաքսօնին համար ուղևորութիւնը շատ անհաճոյ և նեղիչ երևցաւ, այնպէս որ հազար անգամ՝ անիծեց ինքն իրեն թէ նիզակախաղ հանդէսը, թէ զայն կարգադրողն և թէ անոր ներկայ գտնուելու յիմարութիւնը։

Աէսօրին՝ Ամէլստէյնի առաջարկութեան վրայ՝ ուղևորներն աղբիւրի մօտ՝ անտառի մը շուքին տակ դադար տուին, որպէս զի իրենց ձիերուն հանգիստ տան և քիչ մը կերակուր առնեն, որով Հիւրասէր աբքան ջրի մը բեռնաւորեր էր։ Այս ճաշը բաւական երկայն տևեց, և այս արգելքներով հնարին չէր յուսալ Ռօթէրվուտ հասնելու, եթէ դիշերով ճանբայ չընեն, և այս պատճառաւ առաջինէն աւելի շուտով յառաջ քշելու ստիպուեցան։

ԳԼՈՒԽ ԺԹ

Մի խումբ զինեալ մարդիկ, քանի մ՝ազնիւ կանանց
Ուղեկցելով, (ինչպէս Ծանեայ իրենց խօսքէն,
Մինչդեռ անտես անոնց կ՝երթայի եւեւէն)
Մեղի են մօտ, և միտք ունին անցընել գիշերը
Մէջ դղեկին։ ՕՐԱ, ՈՂԲԷՐԳՈՒԻՆ մը։

Արդէն ուղևորները թաւուտներու ճանբան հանելով կ՝պատրաստուէին անտառին խորերը մտնել, թէև այն ժամանակ վտանգաւոր կը սեպուէին, վասն զի՝ շատ վտարակներ՝ որ բռնութենէ և թշուառութենէ յուսահատութեան ծայրը հասած՝ գունդ գունդ անտառները բնակութիւն ընտրեր և ոստիկանութեան տկար գործակալներու դէմ դնելու կարողէին։ Սակայն՝ թէև օրը տարաժամ էր, Սէտրիկ և Ամթէլստէյն՝ այն թափառական աւազակներէն աներկիւղ կ՝երևէին, քանի որ տաս սպասաւոր իրենց ուղեկից ունէին, Վամբայէն և Կիւրթէն զատ՝ որոց աջակցութեան վրայ չէին կրնար յուսալ, մին միմոս, միւսը դերի լինելով։ Հարկ է նաև ըսել որ Սէտրիկ և Ամթէլստէյն՝ այնպէս ուշ ատեն անտառին մէջէն ուղևորելով, ոչ միայն իրենց քաջութեան՝ այլև ազնուականութեան վրայ կ՝վստահէին։ Վտարակներն՝ որ անտառային օրինաց խստութենէ դրդեալ այն տեսակ դատարկաշրջիկ և յուսահատ կեանք մը կ՝վարէին, ըստ մեծի մասին Սաքսօնեան տոհմէ գեղացիներ և հողատէրներ էին, և առ հասարակ՝ իրենց հայրենակիցներու անձն ու ստացուածքը յարգելու տրամադիր կ՝համարուէին։

Մինչդեռ ուղևորներն ընդ առաջ կ՝քալէին, յանկարծ վրդովեցան կրկնակի աղաղակներ լսելով՝ որ օգնութեան կ՝կոչէին, և երբ այն ձայներուն կողմը դիմեցին՝ զարմացան դեռևին դրուած դեսպակ մը տեսնելով, որուն մօտ՝ հրէական ոճով պերճօրէն հագուած նորատի կին մը նստեր էր, և ծերունի մարդ մ՝որուն դեղնապոյտ գլխանոցէն կ՝երևէր թէ նոյն ազգէն է, վեր վար կ՝պտտէր այնպիսի շարժումներով որով խորունկ յուսահատութիւն կ՝յայտնէր և իր ձեռները կ՝ոլորէր՝ որպէս թէ տարօրինակ աղէտից ենթակայ կ՝գտնուէր։

Ծերունի Հրէայն՝ ասեն մը Ամթէլստէյնի և Սէտրիկի ուղղած հարցումներուն՝ իբր պատասխան հետևեալ Հին Կտակարանի բոլոր նահապետաց պաշտպանութիւնը կ՝հայցէր Իսմայէլի որդւոց դէմ՝ որ իր ձեռին պիտի գային զինքն ու իրենները կատր կտոր ընելու։ Երբ Եօրքցի Իսահակին (վասն զի նոյն ինք մեր վաղեմի բարեկամն էր) իսկական երկիւղն անցաւ, կարող եղաւ եղելութիւնը բացատրել ըսելով

թէ՝ Էշպիէն վեց պահապան ուղեկիցներ վարձու բռներ էր, նոյնպէս ջորիներ, հիւանդ բարեկամի մը դեսպակը փոխադրելու համար։ Այս պահապանները մինչև Տօնքասար իրեն ուղեկից գտնուելու խօսք տուեր էին, և անվնաս հասեր էին այն տեղ, երբ փայտահատէ մ՝իմանալով որ դիմացի անտառին մէջ դունդ մը վտարականներ դարանամուտ կ՝սպասեն, — Այն վարձկաններն — ըսաւ Խսահակ — ոչ միայն խոյս տուին՝ այլ նաև դեսպակը քաշող ձիերն առին, գիս իմ՝ աղջկան հետ անցէն և անօգնական թողլով, այնպէս որ կողոպտուելու և թերևս սպանուելու վտանգի մէջ կ՝գտնուինք այն ասպաներուն ձեռքը՝ որոց յարձակումը ժամէ ժամ յուսալի է։ Եթէ ձեր արժանաւորութիւնները հաճին — յարեց Խսահակ խորին հլութեան ձայնով — ներել հէք հրէս ձեր պաշտպանութեան ներքև ուզեորիլ, կ՝երդնում մեր օրինաց տախտակներուն վրայ, որ՝ մեր գերութեան օրերէն վեր՝ երբէք Իսրայէլի զաւակաց տրուած շնորհ մ՝այնքան երախտապէտ սրտով ընդունուած պիտի չլինի՝ որչափ մենք պիտի ընդունինք ձերինը։

— Շնորհ հրէայ — ըսաւ Ամէլատէին՝ որուն յիշողութիւնն այն փոծուն տեսակէն էր որ պէս պէս չնչին բաներ կ՝կուտակէ, բայց մանաւանդ մանր մունր դասատինքներ — չեմ յիշեր թէ ինչպէս մեզ դիմադրելիցիր մրցարանին պատշգամին վրայ։ Կռուէ կամ փախիր, և վտարականներուն հետ՝ եթէ կամիս՝ միայիր, բայց մեղմէ օգնութիւն մի խնդրեր. և եթէ քեզի պէս մարդիկը թալլեն, դու որ ամէն աշխարհ կ՝թալլես, ես՝ իմ մասս կ՝ներեմ անոնց իրրև բարեսէր անձինք։

Սէարիկ՝ իր ընկերին այս խիստ վարմունքը չհաւնեցաւ։ — Միթէ լաւ չէ՞ինիր — ըսաւ նա — եթէ մեր ոտաստանները՝ երկու հոգի և երկու ձի տանք անոնց որ մօտակայ գեղն առաջնորդեն։ Ասով մեր զօրութիւնը քիչ մը կ՝պակսի, և քու ընտիր սրտով, աղնիւ Ամէլատէին, և միւս ուղեկիցներուն օգնութեամբը քանի՞ չափ ասպաներու դիմադրաւ կենալ շատ դիւրին պիտի լինի մեզ։

Բուլէնա՝ լսելով որ շատ մ՝ասպաներ դարանամուտ կ՝գտնուին իրենց մօտ՝ վրդովեցաւ և իր խնամակալին ասպաջարկութիւնն ուժգին երկրորդեց. բայց Ռէպէկա՝ իր վհատ դիրքը փոխելով՝ և մինչև սաքսոն օրիորդին երիսարը՝ սպասաւորներու մէջէն ճանրայ բանալով, արևելեան կերպովծունր դրաւ՝ երբ մեծաւորներու առջև եղեն, և Բուվէնայի պարեղօսին քղանցքը համբուրեց. վերջն՝ ոտք ելաւ և իր քոյն Եանի ձգելով՝ աղաչեց յանուն այն Աստուծոյն զոր երկուքնին ալ կ՝պաշտէին, և յանուն այն օրինաց որ Սինա լեռան վրայ տրուեցան,

և որոց երկու քնին ալ կ՝հաւատան, աղէտները կարեկից դանուիլ և թողուլ որ ուղևորին իրենց պաշտպանութեան ներքև։ — Այս շնորհն ոչ ինձի և ոչ այս հէք ծերունիին համար կ՝խնդրեմ — ըսաւ Ռէպէկա։ — Գիտեմ որ՝ եթէ ոչ արժանիք մը քրիստոնէից աչքին, թեթև յանցանք մ՝է մեր ազգը նախատել և կողոպտելն, և ինչ փոյթ եթէ այս բանս քաղքի, անապատի կամ դաշտի մէջ կատարուի, այլ միայն կ՝հայցեմ այնպիսի անձի մը համար որ շատերուն սիրելի է, քեզի անգամ սիրելի է, ուստի կ՝աղերսեմ քեզ հրամայել որ այս հիւանդն քու պաշտպանութեանդ ներքև ինամոք և հոգասիրութեամբ փոխադրեն, վասն զի, եթէ դժբաղդութիւն մ՝անոր պատահի, կենացդ վերջին օրերը պիտի դառն դառնան իմ առաջարկութիւնս մերժելուդ համար։

Ռէպէկա՝ այս աղաչանքն այնպիսի ազնիւ և հանդիսաւոր կերպով ըրաւ՝ որ գեղանի սաքսօնուհիին առջև կրկնապատիկ կարևորութիւն մը առաւ։

— Այս մարդը տկար ու ծեր է — ըսաւ խնամակալին — դուստրը նորատի և սիրուն, իրենց բարեկամը հիւանդ և մահուան վտանգի մէջ, թէև հրէայ են, չենք կարող՝ իբրև քրիստոնեայ՝ այս ձախորդ վիճակին մէջ զանոնք թողուլ։ Թող մեր երկու ջորիներուն բեռը վար առնուն և անոնց ինչքը մեր երկու ստրուկներուն դաւակը դնեն. ջորիները կրնան դեսպակը քաշել, և փոխնորդ ձիեր ունինք ծերին և աղջկան համար։

Սէտրիկ այս առաջարկութեան սրտովին հաւանեցաւ, և Ամէլստէյն սա պայմանը միայն դրաւ որ խմբին ետևէն քալեն, և Վամպա — կ՝ըսէր նա — խողի մաշկէ վահանովը կարող է զանոնք պաշտպանել։

— Իմ վահանս մոցարանը թողուցի — պատասխանեց միմոն — ինչպէս որ իսկնէ քաջագոյն ասպետներ ալ իմ բաղդիս վիճակեցան։

Ամէլստէյն սաստիկ կարմրեցաւ, վասն զի՝ նիզակախաղ հանդիսին վերջին օրն՝ այս բաղդն ինքն ալ ունեցեր էր, մինչդեռ Ռովէնա, որ նոյնպէս գոհ էր, իր անզգայ տարփաւորին կոշտ կատակը ջրելու համար, խնդրեց որ Ռէպէկա իր ձին քովէն քալեցընէ։

— Անվայել է ինձ խնդիրդ կատարել — պատասխանեց Ռեպեկա վէս հլութեամբ մը — վասն զի իմ ընկերութիւնս թերևս իմ պաշտպանուհւոյս անպատիւ համարուի։

Նոյն պահուն բեռներուն փոփոխութիւնը շտապաւ կատարուեր էր, վասն զի՝ լոկ վարսակ բառն ամենուն աչքը չորս բացեր էր, և գիշերա-

ժամն աւելի ահաւոր կ'գործէր զայն։ Այն շփոթութեան ատեն՝ Կիւրթը ձիէն վար առին, և այս գործողութեան միջոցին՝ խոզպաները յորդորեց միմոն որ իր թևերը կապող կապերը թուլցընէ, հետևապէս այս կապերն այնքան թոյլ կապեցին՝ թերևս Վամպայի յատուկ դիտմամբ, որ Կիւրթ դիւրաւ ազատեց զինքն իր կապանքէն, և յետոյ՝ անտառին մէջ սահելով՝ փախաւ գնաց։

Բաւական մեծ էր խառնակութիւնն, և շատ ատեն անցնելէն ետև՝ դիտեցին որ Կիւրթ բացակայ էր, վասն զի՝ ըստ որում մնացած ճանբան սպասաւորի մը ձիուն գաւակը հեծած ալիտի ընէր Կիւրթ՝ ամէն մարդ կարծէր թէ մէկուն հսկողութեան ներքև կ'գտնուի, և երբ սկսան իրարու ականջին փսփսալ թէ Կիւրթ իրօք փախուստ տուեր է, վտարականերու կողմէ այնպիսի մօտալուտ յարձակման մը կ'սպասէին, որ արժան չդատեցին այս պարագային մեծ կարևորութիւն մը տալ։

Նոյն պահուն ուղևորները այնպիսի նեղ ճանբէ մը կ'անցնէին որ հազիւ երկու ձիաւոր կարողէին քովէ քով անցնիլ։ Այս ճանբան ձորակ մը կ'տանէր, մէջէն գետակ մը կ'անցնէր որուն ափունքը խորթ ու քարտ, մօլուտ էր և մանր ուռիներով ծածկուած։ Սէտրիկ և Ամէլատէն, որ խմբին գլուխն անցեր էին, դիտեցին այն կրճին մէջ վարնուելու վտանգը, սակայն և ոչ մին պատերազմի փորձ չլինելով՝ չմտածեցին որ վտանգին առաջն առնլու միակ միջոցն էր կիրճէն ըստ կարի շուտով անցնիլ։ Ուստի անկարգ կերպով ընդ առաջ գնալով՝ այն ինչ քանի մը սպասաւորներով գետակէն անցեր էին, երբ առջևէն, ետևէն և քովնտի յարձակում մը կրեցին այնչափ ուժգին որ իրենց խառն և անպատրաստ դիրքով՝ կարելի չէր աղդու դիմադրութիւն մ'ընել։ «Սպիտակ վիշապ մը, սպիտակ վիշապ մը, սուրբ Գէորգ զուարթուն Անկլիոյ համար» պատերազմի այս աղաղակը՝ զոր ելուզակները կ'արձակէին, իրրև սաքսօն վտարականերու յատուկ աղաղակ մը, ամէն կողմէն կ'թնտար, և ամէն կողմէն այնպիսի արագութեամբ յարձակումներ կ'ընէին որ կարծես թէ իրենց թիւը հեղհեղէ կ'աւելնար։

Երկու սաքսօն պարագլուխները միանգամայն դերի ընկան, և իրաքանչիւրն իր բնաւորութեան յատուկ պարագաներով։ Սէտրիկ՝ այն միջոցին որ թշնամին առջևն ելաւ, իր մնացած նետը նետեց, որ Ֆանկսին ուղղած նետէն աւելի շիտակ նշանին թռելով՝ մարդն՝ իր ետևը դիպուածով գտնուած՝ կաղնիին զամեց։ Այս յաջողութեան վրայ՝ Սէտրիկ իր ձին երկրորդ թշնամի մը վրայ քշեց՝ իր սուրը քաշելով, բայց այնպէս անխոհեմ կատաղութեամբ զարկաւ որ իր թուրը գլխին

վերևը կախուած հաստ ձիւղի մ'եկաւ և այսպէս իր բուռն զօրութեամբն իսկ զինաթափ մնաց։ Քանի մ'աւազակներ իր վրայ վազեցին և ձիէն վար առնելով գերի ըրին. Ամէնատէյն նոյն բաղդն ունեցաւ, վասն զի իր ձիուն սանձէն բռնելով՝ եղուզակները բռնի վար իջեցուցին զինքը՝ դեռ սուրը հանելով ինքզինքը պաշտպանելու չատիկած։

Իսկ սպասաւորներն՝ որ կահերու մէջ շփոթեր և իրենց մեծաւորներուն վիճակէն ապշեր՝ ահաբեկեր էին, եղուզակներուն ձեռքը դիւրին որս մը դարձան, մինչդեռ օրիորդ Ռովէնա՝ որ ձիաւոր խմբին կեդրոնը կ'գտնուէր, և հրէայն իր աղջկովն ետևի կողմը, նոյն դժբաղդութեան վիճակակից եղան։

Սպասաւորներու դասէն Վամպա միայն փախուստ տուաւ, որ այս պարագայիս մէջ աւելի արիութիւնցդուց քան անոնք որ մեծագոյն խոհեմութեամբ կ'պարծենային։ Սպասաւորի մը սուրը ձեռք ձգեց, մինչդեռ սա ծանր ու վեհերոտ կերպով զայն պատենէն կ'հանէր, առիւծի պէս չորս կողմը շարժեց սուրն, իրեն մօտեցող շատերը վանեց, և արիական՝ թէև ապարդիւն փորձ մ'ըրաւ իր տանտիրոջ օգնելու։ Սակայն երբ միմոն ուժաթափ մնաց՝ իր ձիէն վար իջաւ, անտառին խորը մտաւ, և ընդհանուր խառնակութենէն օգտելով՝ պատերազմի դաշտէն հեռացաւ։

Բայց այն ինչ արի միմոն ապահովութիւն գտաւ, քանի մ'անգամ ինքնովի հարցուց թէ արդեօք պէտք չէ՞ ետ դառնալ և մասնակից լինիլ տիրոջ մը գերութեան որուն հաւատարմօրէն կապուած էր։

— Ստէպ ազատութեան գովեստն ու բարիքը լսած եմ — ըսաւ իւրովի — բայց կ'փափաքէի որ իմաստուն մարդ մը գար ինձի սորվեցընէր թէ իմ ազատութիւնս ի՞նչպէս գործածեմ, քանի որ այժմ ձեռք ձգեր եմ։

Մինչդեռ այս խօսքերը բարձր կ'արտասանէր՝ իրեն խիստ մօտէն ձայն մը մեղմիկ և զգուշաւոր կերպով կոչեց. «Վամպա» և նոյն պահուն շուն մը, որ իրեն ֆանկան երևցաւ, ցատկեց և եկաւ գինքը գգուեց։ «Կիւրթ» պատասխանեց Վամպա՝ նոյն զգուշութեամբ, և խոզպանն իսկոյն իր առջևն ելաւ։

— Ի՞նչ կայ — հարցուց վերջինը շտապաւ։ — Ի՞նչ կ'նշանակեն այս աղաղակներն ու սուրերու շաչիւնը։

— Բաղդին մէկ խաղն է միայն — ըսաւ Վամպա — ամէնքն ալ գերի են։

— Որոնք գերի են — գոչեց Կիւրթ անհամբեր։

— Իմ տէրս, սիկինն և Ամէլստէյն, Հընդիպէրտ և Օսվալտ։

— Ցանուն Աստուծոյ — ըսաւ Պիւրթ — ի՞նչպէս գերի ընկան, և որո՞ւ ձեռօք։

— Մեր տէրը կռուելու շատ դիմագրաւ էր — ըսաւ միմոն — Ամէլստէյն բաւական չէր, իսկ միւսները բոլորովին անպատրաստ էին, այնպէս որ կանաչ Հաղուստով և սև դիմակով մարդերու գերիներն են այժմ, և ամէնքն ալ խաուն 'ի խուռն պահված են գալարի խոտին վրայ՝ վայրի խնձորներու պէս՝ զոր քու խոզերուդ համար ծառերէն վար կ'թոթռուես։ Եւ արդարև սրտովին պիտի ծիծաղէի — յարեց բարեկիր միմոն — եթէ լացս կարենայի զսպել։» Եւ այս ըսելով անկեղծ տրտմութեան արտասուք թափեց։

Պիւրթին դէմքը վառեցաւ, Վամպա — ըսաւ — դու զէնք ունիս, և սիրտդ միշտ գլխէդ զօրեղ եղած է, թէև մինակ երկու հոգի ենք, բայց երկու անվեհեր մարդոց կողմէ յանկարծական յարձակումմը շատ բան կրնայ ընել, ուստի ետևէս եկուր։

— Ո՞ւր, և ի՞նչ մտօք — ըսաւ միմոնը։

— Սէտրիկն ազատելու համար։

— Բայց քիչ մ'առաջանոր ծառայութենէ հրաժարեցար — ըսաւ Վամպա։

— Վասն զի — ըսաւ Պիւրթ — այն ատեն երջանիկ էր։ Ետևէս եկուր։

Եւ միմոնը հեռանալու վրայ էր, երբ յանկարծ երրորդ անձ մ'երևեցաւ և հրամայեց որ կանգ առնուն։ Վամպա՝ անոր հագուստէն և զէնքէն ենթադրեց թէ այն իր տիրոջ վրայ յարձակող վտարականներէն մին է, բայց՝ թէև դիմակ չունէր նա, ուսէն անցուցած շողուն կամարն՝ որմէ կախուեր էր սերձ շեփորը, նոյնպէս իր ձայնին և դնացքին հանդարտ և փառաւոր եղանակը դիտելով հասկըցաւ, որչափ որ մութ էր, որ նոյն ինքն Լոքսլէյ գիւղականն էր, որ նետաձգութեան մրցման մէջ յաղթական ելեր էր, ծանր ծանր պայմաններու չնայելով։

— Ի՞նչ կ'նշանակեն այս բաներն — ըսաւ նա — և ո՞վ կ'յանդգնի այս անտառին մէջ կողոպտել, փրկանք դնել և գերիներ առնուլ։

— Դու կրնաս անոնց հագուստը տեսնել — ըսաւ Վամպա — և հասկրնալ թէ արդեօք քու զաւակներդ են թէ ոչ, վասն զի քեզի կը նմանին, ինչպէս կաթիլ մը ջուր ուրիշ կաթիլի կ'նմանի։

— Հիմակ իսկոյն պիտի ստուգեմ — պատասխանեց Լոքսլէյ — և ձեզ կ'հրամայեմ, եթէ չէք ուզեր մեռնիլ, որ ձեր տեղէն չշարժիք

մինչև վերադարձս։ Հնազանդեցէք, ասովթէ դուք և թէ ձեր տէրերը կ'շահիք։ Կեցէք, պէտք է որ այն մարդոց ըստ կարի նմանիմ։

Այս ըսելով իր կամարը շեփորին հետ հանեց, նոյնպէս դպակէն վիտուր մը և ամէնը Վանպային տուաւ, յետոյ սև դիմակ մը դրպանէն հանեց, և անոնց հանդարտ կենալու հրամանը կրկնելով՝ ելաւ գնաց, որպէս զի անցած դարձածն իմանայ։

— Մթթէ սպասել պէտք է, Կիւրթ — ըսաւ Վանպա — թէ ոչ կծիկը դնել։ Իմ յիմար գլխովս կ'մտածեմ որ այնչափ գողի կերպարան մ'ունէր նա որ ուղիղ մարդ մը չկրնար լինել։

— Թող նոյն ինք սատանան լինի — ըսաւ Կիւրթ — եթէ կամի, ինչ կորուստ կ'ընենք անոր վերադարձին սպասելով։ Եթէ այն աւազակաց դասէն է, արդէն անոնց ձայն տուած պիտի լինի, և բան մը չպիտի շահինք կուռելով կամ խոյս տալով։ Ասկէ զատ՝ այս օրերս 'ի փարձ տեսայ որ թափառող գողեր ամենաչար մարդիկ չեն, որոց հետ վարուիլ դժուարին լինի։

Անտառորդը քանի մը վայրկենէ ետ դարձաւ։

— Կիւրթ բարեկամ — ըսաւ նա — ես այն վարի մարդոց մէջ մտայ և խմացայ թէ ոյք են և ուր կ'երթան։ Կարծեմ թէ իրենց գերիներուն դէմ ասա այժմ բունոթիւն մը գործելու միտք չունին։ Այս պահուս յիմարական գործ մը կ'լինէր եթէ մենք երեք հոգի անոնց վրայ յարձակելու ելնենք, վասն զի քաջ մարտիկներ են, և հետեւապէս՝ ասդին անդին պահակներ դրեր են որ եթէ թշնամին վրայ հասնի ձայն տան։ Բայց քիչ ատենէն կ'յուսամ բաւական զօրք ժողվել և աներկիւղ անոնց դէմ մարտիլ. դուք երկուքնիդ ալ սպասաւորներ էք, և կարծեմ թէ Սաքսոն Սէորիկին, Անկլիացւոց իրաւանց բարեկամին հաւատարիմ սպասաւորներն էք։ Այս ծանր պարապայիս մէջ՝ Անկլիացւոց բազուկներ չպիտի պակսին անոր օգնելու, ուստի ինձի հետ եկէք մինչև որ իմ խումբս ժողվեմ։

Այս ըսելով՝ անտառին մէջէն անցան արտորնօք. միմոն ու խոզապուծն ետևէն կ'երթային։ Վանպա սովորութիւն չունէր լուիկ ճնչիկ ուղևորիլ։

— Կարծեմ թէ — ըսաւ՝ նայելով այն կամարն ու շեփորը զոր տակաւին կ'կրէր — տեսայ ես այն սրացողնեան որ այս մրցանակը շահեցաւ, և այս բանս ալ ծնունդէն վեր տեղի ունեցաւ։

— Եւ ես — ըսաւ Կիւրթ — կրնամ Աստուծոյ վրայ երդնուլ՝ որ գիշերայն ու ցերեկով լսեցի այն բարի կիւղականին ձայնն որ զայն շա-

հեցաւ և այն ատենէն վեր լուսինը վաթսուն երկու ժամու չափ հազիւ ծերացած է։

— Իմ բարեմիտ բարեկամներս — պատասխանեց Լոքսլէյ — փոյթ չէ թէ ես ովքեմ և ինչ կ'ընեմ, այդ հետաքրքրութիւնը մեր խորհրդին հետ յարաբերութիւն չունի։ Եթէ ձեր տէրն ազատեմ՝ իրաւունք պիտի ունենաք զիս ձեր լաւագոյն բարեկամը համարիլ։ Բայց թէ ես այս կամ այն անուամբ ծանօթ եմ, թէ եկարածի մը չափ կամ անորմէ աւելի լաւ աղեղ կ'լարեմ, կամ թէ կ'հաճիմ լուսնկային կամ արևուն մանղալ, ասոնք այնպիսի խնդիրներ են որ ձեզի չեն վերաբերիր, և հետևապէս պէտք չունիք անոնց վրայ մտածելու։

— Մեր գլուխներն առիւծին կոկորդին մէջն են — ըսաւ Վամպա Պիւրթին փսփսալով — եթէ կարող ենք անկից հանենք։

— Լռութիւն, ձայն մի հաներ — ըսաւ Պիւրթ — խենդութեամբդ մի նախատեր զանի, և հաստատապէս կարծեմ թէ ամէն բան յաջող ելք մը պիտի ունենայ։

ԳԼՈՒԽ Ի

Երբ աշնան գիշերներ՝ ահեղ են ու երկար,
Եւ ճեմելիք թաւուտ՝ տխրագին ու խաւար,
Քանի՛ անուշ՝ ուխտաւորին սուր ունկան
Հնչէ հեռուստ մենաւորին շարական։
Ջերմեռանդ սիրտ ձայն առնու Երաժիշտէն,
Եւ երաժշտութիւն ջերմ սրտէ ըստանայ թև.
Է նման թռչնոյն որ արեգին տայ բարև,
Պլանան յերկին և սլանալով երգեն։

ՍՈՒՐԲ ՔԼԷՄԱՆԴ ՀՈՐԻՆ ՃԳՆԱՒՈՐԸ

Երեք ժամ քալելէն ետև՝ Սէտրիկի սպասաւորներն իրենց խորհրդաւոր ուղեցոյցով՝ անտառին մէկ ցանցառ վայրը հասան, որուն մէջ տեղը հսկայաձև կաղնի մը կար, որ իր ոլորուտ ճիւղերն ամէն կողմ կ'տարածէր։ Այս ծառին ստորոտը չորս հինգ դեղացիներ դեռինը պառկեր էին, մինչդեռ ուրիշ մ'իրրև գիշերապահ ասդիս անդին կ'պտըտէր լուսնկային։

Գիշերապահն ոտքի մօտաւոր աղմուկ լսելով՝ աղաղակ մ'արձակեց և քնացողներն իսկոյն կանգնեցան և իրենց աղեղները լարեցին։ Վեց նետ լարերուն վրայ՝ շիտակ ուղևորներուն կողմն ուղղեր էին, երբ իրենց առաջնորդը ճանչցուելով՝ աղեղնաւորները բարև տուին անոր ա-

մէն յարդական և սիրալիր նշաններով, այնպէս որ վտանգաւոր ընդունելութեան մ'երկիւղն իսկոյն փարատեցաւ։

— Ո՞ւր է Միլը (աղօրեպան) — այս եղաւ Լօքսլէյի առաջին հարցումը։

— Ռոթէրհէմի Ճանբուն վրայ։

— Քանի՞ հոգիով — հարցուց պարապլուխը, վասն զի իրօք անոնց պարապլուխը կ'երևէր։

— Վեց հոգիովաւ ու աւար առնլու յուսով, եթէ սուրբ Նիզօլաս յաջողէ։

— Ջերմեռանդ պատասխան մ'է այդ — ըսաւ Լօքսլէյ — բայց Ա-թէն-է-Տէլ ո՞ւր է։

— Դէպ 'ի Վադլին փողոցը գնաց Ժօրվօյի վանահօր վրայ հսկելու համար։

— Այդ բանը լաւ խորհեր էք — պատասխան տուաւ հրամանատարը — հապա եղբայրն ո՞ւր է։

— Իր մենարանն է։

— Անդ պիտի երթամ — ըսաւ Լօքսլէյ։ — Ցրուեցէք և ձեր ընկերները գումարեցէք։ Որչափ կարելի է շատ մարդիկ ժողովեցէք, վասն զի պատրաստ ոուս կայ որսալու, թէ ոչ ակռաները պիտի ցուցնէ։ Այդուն այս տեղ ինձի սպասեցէք։ Բայց կեցիք — յարեց նա — ամենէն կարևորը մոռցայ։ Ձեզմէ երկու հոգի պէտք է որ շուտ մը Գրօն-տը-Պէօյի գղեկին Ճանբան՝ դէպ 'ի Գօրբիլսդօն երթան։ Խումբ մը կնամարդիներ՝ որ մեզի պէս հապուեր են, այն տեղ գունդ մը պերիներ կ'տանին։ Ի մօտուստ անոնց վրայ հսկեցէք, վասն զի եթէ մեր զօրքը գումարելէն առաջ գղեակին իսկ հասնին, մեր պատիւը կ'պահանջէ զանոնք պատժել, և այս բանս ընելու միջոցներ կրնանք գտնել։ Ուստի չորս աչքով անոնց ընթացքը դիտեցէք, և ձեր ընկերներէն մին՝ ամենէն արագաշարժը՝ Ճանբայ հանեցէք որ մեզի շրջակաները գտնուող գեղացւոց վրայ լուր բերեն։

Ամէնքը լիովին հնազանդելու խոստացան և իրենց յատուկ յատուկ պաշտօնը կատարելու համար Ճամբայ ելան։ Նոյն պահուն՝ իրենց պարապլուխն՝ և երկու ընկերներն՝ որ այժմ անոր ակնածութեամբ կը նայէին, իրենց Ճանբան շարունակեցին դէպ 'ի Գօրմէնհրըսլի մատուռը։

Երբ լուսնափայլ ցանցառ վայրը հասան՝ իրենց առջև ելաւ պաշտեալի, թէև աւերակ մատուռն, և այն անշուք մենաստանն որ այնքան յարմար էր հոգևոր ջերմեռանդութեան, այն ատեն Ղամպա Կիւրթին

ականջին փսփսաց. — Եթէ գողին բնակարանն այս է, հին առածը կ'արդարանայ, այս է. «Որչափ մարդ եկեղեցի մօտ է, այնքան հեռու է Աստուծմէ։» Եւ իմ բբուկիս վրայ կ'երդնում — յարեց նա — որ ստոյգն ալ այս է։ Մարիկ ըրէ մի անգամ մենաստանին մէջ երդուած սև սուրբ սուրբը։

Եւ իրաւի, մենաւորն ու իր հիւրն՝ իրենց բոլոր ուժով ներսէին վաստշուէր հին երգ մ'որուն հագնելոյն էր այս.

Արի՛, անցուր ինձ կարմիր բաժակը,
Զուարթ ծառայ, զուարթ ծառայ։
Արի՛, անցուր ինձ կարմիր բաժակը,
Ո՛ ուրախ ծէնքին, կ'դիտեմ դինարբու սառակը.
Արի՛, անցուր ինձ կարմիր բաժակը։

— Իրաւ է որ դէշ չեն երգեր — ըսաւ Վ. ամնա, որ քանի մ'ամիս դամ ձայներ հաներ էր անոնց ձայնակից դառնալու մտօք։ Բայց՝ յանուն սրբոյ՝ ոչ արդեւք կրնար յուսալ որ այսպիսի զուարթուն երգ մը պիտի լսէր կէս գիշերին ճղնաւորի մը մենաստանին մէջ։

— Ճշմարիտ վկայ, ես կ'յուսայի — ըսաւ Կիւրթ — վասն զի Գօրմէնհըրսդի զուարթ դպիրն ամենուն ծանօթ մարդ մ'է. սա է այս կողմերը պտըտող այծեամներու կէսը սպաննողը։ Կ'ըսեն թէ պահնորդը մեծաւորին դանդատեր է, և թէ այս կրօնաւորին կնոջն ու զգալը պիտի առնուն՝ եթէ իր ընթացքը չշտկէ։

Երբ այսպէս կ'խօսէին՝ Լօքսէյի ուժգին ու կրկնակի հարուածներն 'ի վերջէ վրդովեցին մենաւորն ու իր հիւրը։

— Վարդապետիս հատիններուն վրայ կ'երդնում — ըսաւ մենաւորն՝ որոտընդոստ ձայնը յանկարծ կտրելով — որ նորէն յեռամեայ ուղևորներ դուռս ձեռք տային. 'ի պատիւ իմ կնոջս՝ չեմ ուզեր բնաւ որ այս աղուոր կրթութեան մէջ զիս տեսանեն։ Ամէն մարդիկ իրենց յատուկ թշնամիներն ունին, քաջդ Դատարկապորտ ասպետ, և կան այնպիսի չարամիտներ որ՝ քեզի պէս վաստակաբեկ ուղևորի մը տուած ապնջականութիւնս, երբ փոքրիկ ժամու մէջ՝ կրնան գինովութիւն և ցոփութիւն անուանել, և ասոնք իմ վիճակիս և բնաւորութեանս հակառակ մղութիւններ են։

— Անօրէն գրպարտիչներ — պատասխանեց ասպետը — կ'փափաքէի զանոնք պատժել։ Սակայն, տուրբ հայր, իրաւ է որ ամէն մարդ իր թշնամին ունի, և այս երկրիս մէջ այնպիսիներ կան՝ որոց գիտակիս պահնակին տակէն խօսիլ լաւագոյն կ'համարիմ՝ քան թէ բացերես։

— Ուրեմն երկաթի գլխանոցդ գլուխդ անցուր, Դատարկապորտ բաբեկամ, որչափ կարելի է շուտով — ըսաւ մենաւորը — մինչդեռ ես սա անագէ սրուակները պիտի ժողվեմ, որոց պարունակն իմ գլուխս կ'դարձրնէ, և որպէս զի աղմուկը չլսուի, վասն զի՝ ճշմարիտը՝ քիչ մը գինով եմ, իմ երգած երգիս եղանակն ածէ, առանց բառերուն հոդ տանելու, քանի որ ես անդամ հաղիւ թէ գիտեմ:

Այս ըսելէն ետև՝ որոտալիր ձայնով խորհուրդ խորին մ'սկսաւ, և այս աղաղակին շնորհիւ կարող եղաւ խնջոյքին մնացորդները հաւաքել, մինչդեռ ասպետը սրտովին խնդալով և նոյն պահուն գինուելով՝ տեղն տեղն՝ քանի ծիծաղը ներէր՝ իր հիւրընկալին ձայնակցելով կ'օգնէր:

— Այս ինչդիւական ժամերգութիւն է այս ժամուս — ըսաւ ձայն մը դրսէն:

— Պարոն ուղևոր, Աստուած ողորմի քեզ — ըսաւ մենաւորն, որուն յատուկ ձայնն ու թերևս իր գիշերային գինարբութիւնն իրեն բաւական ընտանի եղած ձայնը ճանչելու կ'արդիլէին: — Քու ճանբադ շարունակէ, յանուն Աստուծոյ և սուրբ Տրնդանի, և մի վրդովեր իմ և եղբօրս ջերմեռանդ աղօթքը:

— Ցիմար քահանայ — պատասխանեց ձայնը դրսէն — բաց դուռդ Լաքսէյի:

— Ամէն ինչ կարգին է, բան մը չկայ — ըսաւ մենաւորն իր ընկերին:

— Բայց ո՞վ է այն — ըսաւ Սև ասպետը — շատ կ'փափաքիմ գիտնալ:

— Ո՞վ է մի — պատասխանեց մենաւորն: — Ըսի քեզի որ բարեկամ մ'է:

— Բայց ինչ բարեկամ — պատասխանեց ասպետը: — Կրնայ քու՝ այլ ոչ իմ բարեկամն լինիլ:

— Ի՞նչ բարեկամ — պատասխանեց մենաւորն — այդ այնպիսի հարցում մ'է զոր ընել դիւրագոյն է, քան լուծել: Ի՞նչ բարեկամ: Լա՛ւ, կ'մտածեմ, Էտմոնտն է, այն պահին որուն վրայ քիչ մ'առաջ քեզի խօսեցայ:

— Լա՛ւ, որչափ դու բարեպաշտօն՝ նոյնքան պահակդ բարեբարոյ կ'երևի — պատասխանեց ասպետն: Այդ մասին կասկած չունիմ. բայց գնա դուռը բաց, թէ ոչ հիմակ պիտի խորտակէ:

Նոյն պահուն շուներն՝ որ դրսի աղմուկը լսելով սկսեր էին սոսկալի կերպով հաչել՝ կարծես թէ նորեկ մարդուն ձայնը ճանչեցին, վասն զի իրենց ընթացքը լիովին փոխելով՝ դուռը կ'ճանկռտէին և կ'հեծէ-

ին՝ իբր թէ կ՚աղաչէին որ ներս ընդունուի։ Մենաւորն իսկոյն դրան կամարը վար առաւ և Լօքսլէյն իր երկու ընկերներովներս հրամցուց։

— Ի՞նչ, մենաւոր — հարցուց ամենէն առաջ շինականն ասպետը տեսնելուն — ի՞նչ լաւ ընկեր ունիս այս տեղ։

— Մեր ուխտին մէկ եղբայրն է — պատասխան տուաւ կրօնաւորը գլուխն օրհելով. բոլոր գիշեր աղօթք ընելով անցուց։

— Կարծեմ թէ մարտնչող եկեղեցւոյն մէկ կրօնաւորն է — պատասխանեց Լօքսլէյ — և դուրսն ալ իրեն պէս շատեր կան։ Հիմակ կ՚ըսեմ քեզ, եղբայր, որ պարտաւոր ես վարդարանը մէկդի թողուլ և մանկլաւը ձեռք առնուլ, մեր արի ընկերներէն պէտք ունինք՝ թէ կրօնական և թէ աշխարհական։ Բայց — ըսաւ քայլ մը մեկուսի առնելով — միթէ դուքիմաը ես, ինչպէս մենաստանդ կ՚ընդունիս քեզի անծանօթ ասպետ մը. միթէ մեր ներքին կանոնները մոռցար։

— Անծանօթ — պատասխանեց Ճգնաւորը համարձակ։ — Ես զանի այնպէս լաւ կ՚ճանչեմ, ինչպէս կ՚ճանչէ մուրացկանն իր տոպրակը։

— Եւ ի՞նչ է անունն, ուրեմն — հարցուց Լօքսլէյ։

— Իր անունն — ըսաւ մենաւորն — իր անունն Էնդօնի Աքրէպլսդօն է. ի՞նչպէս հնարին է դինի խմել ինձ անծանօթ մարդու մը հետ։

— Դու չափէն աւելի խմեր ես, եղբայր — ըսաւ անտառապահն — և կ՚վախնամ որ պէտք եղածէն աւելի ալ խօսած չլինիս։

— Քաջ գինւոր — ըսաւ ասպետն ընդ առաջ գալով — մի՛ բարկանար իմ զուարթ հիւրընկալիս դէմ. ինքը միայն ասպնջականութիւն շնորհեց ինձ և այս շնորհը բռնի պիտի պահանջէի եթէ մերժէր։

— Դո՛ւ պիտի բռնի պահանջէիր — ըսաւ մենաւորն։ — Ուրեմն սպասէ որ սա մոխրագոյն պարեգօտս փոխեմ և կանաչ հագուստ մը հագնիմ, և եթէ իմ մանկլաւս տասն երկու անգամ գանկիդ վրայ չիջեցընեմ, ես ալ ոչ ճշմարիտ կրօնաւոր և ոչ քաջ անտառապահ մ՚եմ։

Երբ այսպէս կ՚խօսէր՝ իր պարեգօտը հանեց, և հուզոտ հաստ կտաւէ (buckram) բաճկոնով և տափատով երևցաւ, որուն վրայէն շուտ մը կանաչ թիկնոց մ՚անցուց և նոյն գոյն գդակ մը հագաւ։

— Խնդրեմ օգնէ ինձ սա լարերը կապելու — ըսաւ Վամպային — և աշխատութեանդ փոխարէն գաւաթ մը գինի պիտի ունենաս։

— Շնորհակալ եմ — ըսաւ Վամպա — բայց միթէ կարծես թէ դիւրի՞ն է ինձ օգնել քեզ՝ սուրբ ճգնաւոր մը մեղաւոր անտառապահի մը դարձընելու։

— Հոգ մի ըներ — ըսաւ ճգնաւորը — բաւական է ինձ իմ կանաչ

հաղուստիս մեղքը՝ կրօնաւորի մոխրագոյն պարեզօտիս խոստովանիլ, և ամէն ինչ կարգի կ՚մտնէ։

— Ամէ՛ն — պատասխանեց միմոսը — բարակ ասուէ մեղաւոր մը՝ պարտի հաստ ասուէ խոստովանահայր մ՚ունենալ, և քու պարեզօտդ կրնայ ձրիապէս իմ պիտակ բաճկոնս քաւել։

Այս ըսելով՝ միմոսը կրօնաւորին օգնեց որպէս զի իր անվերջանալի լարերը կապէ, ինչպէս որ կ՚անուանէին այն ատենները՝ վարտիքը բաճկոնին միացընող կապերը։

Մինչդեռ այս գործով զբաղած էին, Լոքսլէյ՝ ասպետը մեկուսի կանչեց և անոր ըսաւ. — Մի՛ ուրանար, պարոն ասպետ, դու այն անձն ես որ Էշպիի հանդէսին երկրորդ օրն անկլիացւոց նպաստեցիր յաղթանակելու օտարներուն դէմ։

— Եւ ի՞նչ կ՚հետևի այդ բանէն, ենթադրելով որ ճշմարիտ է գուշակութիւնդ — վրայ բերաւ ասպետը։

— Սա կ՚հետևի որ քեզ տկար կուսակցութեան մը կողմնակից կրնամ սեպել — պատասխանեց անտառորդը։

— Գէթ ճշմարիտ ասպետի մը պարտքն այդ է — պատասխանեց Սև դատարկապորտն — և չեմ ուզեր տարբեր կերպով խորհելու առիթ մը տալ քեզի։

— Բայց միտքս դրած խորհրդիս համար — ըսաւ անտառորդն — որչափ քաջ անկլիացի նոյնքան քաջ ասպետ պիտի լինիս, վասն զի իմ ըսելիք գործս պէտք է որ ամէն բարեկիր մարդու սիրտ շարժէ, նա մանաւանդ Անկլիոյ ճշմարիտ զաւկի մը սիրտը։

— Ձկայ մարդ մը — վրայ բերաւ ասպետն — որուն Անկլիան և բոլոր անկլիացւոց կեանքն այնքան սիրելի լինի որչափ ինձ։

— Ցօժարակամ կ՚հաւատամ խօսքիդ — ըսաւ Լոքսլէյ — վասն զի երբէք երկիր մ՚իր սիրականներուն պաշտպանութեան այնքան կարօտ չէ եղած որչափ այժմ։ Միտ դիր ինձ, և քեզի ձեռնարկութիւն մը պիտի հաղորդեմ, որուն մէջ, եթէ իրօք երևցածիդ պէս անձ մ՚ես, պատուաւոր դեր մը կրնաս խաղալ։ Անօրէն խումբ մը՝ իրենցմէ լաւագոյն մարդերու պէս ծպտեալ՝ ազնիւ անկլիացի մը, Սաքսօն Սէտրիկ անուն՝ դերի բռնեցին, նոյնպէս իր սանուհին և Գոնինկսպըրկի Ամէլստէյն բարեկամն, և այս անտառիս մէջ Դոնքիլսդրն անուն դղեակն փոխադրեցին։ Արդ՝ կ՚հարցընեմ քեզ թէ արդեօք՝ իբրև բարի ասպետ և անկլիացի՝ չե՞ս օգներ մեզ զանոնք ազատելու համար։

— Ուխտս պարտ կ՚դնէ իմ վրայ օգնելու — պատասխանեց — բայց

կ'փափաքէի գիտնալ թէ դու ո՞վ ես, որ 'ի նպաստ անոնց իմ օգնութիւնս կ'խնդրես։

— Ես — ըսաւ անտառորդն — անանուն մարդ մ'եմ, բայց Հայրենիքիս և զայն սիրողներուն բարեկամն եմ։ Ու այժմ այսչափ բացատրութեամբ գոհ պիտի լինիս անշուշտ, քանի որ դու ալ անծանօթ մնալու կ'փափաքիս։ Բայց Հաւատա ինձ որ երբ անպամ մը խօսք տամ, խօսքս անդրժելի է, որպէս թէ ոսկի խթաններ ունենայի։

— Կ'Հաւատամ մտադիւր — ըսաւ ասպետը — սովոր եմ մարդկան ընթացքը դիտելու, և քու ձակտիդ վրայ կ'նշմարեմ ուղղութիւն և ազնիւթիւն։ Հետևապէս այլ ևս հարցումներ չպիտի ընեմ քեզի, այլ այն ճնշեալ կերպիներու ազատութիւնը ձեռք ձգելու պիտի օգնեմ քեզ, և այս ընելէն ետև՝ յուսամ որ իրարմէ գոհ պիտի բաժնուինք՝ զիրար լաւ ևս ճանչնալով։

— Այսպէս — ըսաւ Վամպա Կիւրթին, վասն զի կրօնաւորը բոլորովին հպատակելէն ետև՝ միմոյն սրահին մէջ ծայրը դնաց և խօսակցութեան վախճանը լսեր էր — այսպէս ուրեմն նոր դաշնակից մը գտանք։ Յուսամ որ ասպետին արժէքն լուսապոյն մեռաղէ պիտի լինի քան ճգնաւորին կրօնն կամ անտառորդին ուղղութիւնը, վասն զի այս Լօքսլէյն 'ի ծնէ այծեամներու աւազակի մը և քահանայն ալ անպատկառ կեղծաւորի մը կերպարանն ունին։

— Լեղուդ քեզի քաշէ, Վամպա — մրմնաց Կիւրթ — թերևս ըսածդ ճիշտ է, բայց եթէ եղջերաւոր սատանան անպամ գար ինձի իր օգնութիւնն առաջարկէր Սէքսին ու օրիորդ Ռովէնան ազատելու, կը վախնամ որ բաւական թերահաւատ լինիմ սատանային աջակցութիւնը մերժելու և զանի վռնտելու։

Այն պահուն ճգնաւորը բոլորովին զինուորականի հպարտ մը հագեր էր, սրով և վահանով, աղեղով և կապարճով և ուսին վրայ երկար գեղարդ մը դրած։ Իր մնարանէն դուրս ելաւ ամենէն առաջ և ուշի ուշով դուռը գոցելով՝ բանալին սեմին տակ դրաւ։

— Մինթէ լաւ ծառայութիւն մ'ընելու վիճակի մէջ ես, ճգնաւոր — ըսաւ Լօքսլէյ — թէ ոչ սակաւին կարմիր բաժակը գլխիդ մէջ կը պտըտի։

— Բոլորովին սթափիլու համար սուրբ Տընդանի աղբիւրին ջրէն փոքր ինչ ճակտիս եթէ զարնեմ բաւական է — պատասխանեց ճգնաւորը — միայն գլխիս մէջ պտոյտ մը կայ և սրունքիս մէջ անհաստատութիւն մը, բայց պիտի տեսնես թէ քիչ առենէն այս տկարութիւնը պիտի անցնի։

Այս ըսելով՝ վիմաշէն աւազանին մօտեցաւ, որուն մէջ աղբիւրին ջուրը հոսելով՝ պղպջակներ կ՚յօրինէր որ լուսնկային կ՚շողշողային, և այնչափ խմեց որ կարծես թէ աղբիւրը չորցընելու միտք ունէր։

— Գօրմանհըրսդի հայր սուրբ, ե՞րբ արդեօք այսչափ ջուր խմեցիր — հարցուց Սև ասպետը։

— Այն օրէն վեր որ իմ դինիի մարս՝ ծակուելով անօրէնի մը ձեռօք՝ այն ծակէն սկսաւ կաթիլ — պատասխանեց կրօնաւորն — և այսպէս ուրիշբան չմնայ ինձ ըմպելու՝ բայց եթէ իմ պաշտպան սուրբիս աղբիւրը։

Ցետոյ իր ձեռներն ու գլուխն աւազանին մէջ թաթխելով՝ գիշերային զեղխութիւնը լուաց։ Զուարթուն կրօնաւորն՝ այսպէս զովանալով՝ երեք մատով իր ծանր գեղարդը գլխին վրայ դարձուց, որպէս թէ եղէգ մը կ՚դարձընէր, և նոյն ժամուն պոռաց.

— Ո՞ւր են ուրեմն այն ապիրատ առևանդիչներն որ՝ իրենց կամաց հակառակ՝ օրիորդներ կ՚դողնան։ Սատանան զիս թող տանի, եթէ այս տեսակ ապիրատներ տաներիկուքը մէկէն չսատակեմ։

— Ուրեմն կ՚հայհոյես, սուրբ հայր — հարցուց Սև ասպետը։

— Սուրբ հայր մի՛ կոչեր զիս — պատասխանեց այլափոխեալ կրօնաւորը. սուրբ Գէորգի և Վիշապի վրայ կ՚երդնում որ այն ատեն միայն դերծեալ կրօնաւոր մ՚եմ երբ կնդուղս գլխիս վրայ է. իսկ երբ կանաչ հագուստս հագնիմ, կ՚խմեմ, կ՚հայհոյեմ և Վէստ-Ռայտնի ամենէն ժպիրհ անտառորդին պէս աղջկանց հետ կ՚սիրաբանեմ։

— Ուրեմն եկուր, լեզուանի եղբայր — ըսաւ Լոքսլէյ — և լուռ կեցիր, դու մինակդ այնչափ աղմուկ կ՚հանես որչափ վանք մը հսկումի ատեն՝ երբ վանահայրը քնանալու կ՚երթայ. դուք ալ եկէք, վարպետներս, և խօսելով ժամանակ մ՚անցընէք, եկէք, կ՚ըսեմ ձեզ. պէտք է մեր բոլոր զօրքը ժողվել, և եթէ Ռէժինալտ Ֆրոն-տը-Պէօյի դղեկին վրայ յարձակելու ստիպուինք՝ որչափ զօրք ժողվենք քիչ է։

— Ի՞նչ, միթէ Ֆրոն-տը-Պէօն է — ըսաւ Սև ասպետն — որ այսպէս Ճամբու վրայ յափշտակեց թագաւորին հաւատարիմ հպատակները։ Միթէ գո՞ղ թէ ոչ բռնաւոր դարձեր է։

— Բռնաւոր է միշտ — ըսաւ Լոքսլէյ։

— Իսկ գո՞ղ — ըսաւ կրօնաւորը — կ՚տարակուսիմ որ ինձի ծանօթ գողերուն չափ բարեկիր եղած լինի։

— Ուրեմն առաջանցիր, կրօնաւոր, և լուէ — ըսաւ Լոքսլէյ։ — Աւելի լաւ կ՚ընես եթէ մեզ ժամադրութեան տեղն առաջնորդես, փոխանակ չլսուելու բաներ խօսելու, խոհեմութիւն և պատշաճութիւն պահելու համար։

ԳԼՈՒԽ ԻԱ

Ա՜ուշ, քանի քանի անցան ժամեր, տարիներ,
Շուրջ սեղանիս մարդիկ խնդում բաղմելէն վեր,
Կամ լապտեր, մամ, ճրագ՝ անոր վրայ վառելէն,
Կարծեմ լսել 'ի Հեռուստ՝ անցեալ դարուց մեղմ ձայն՝
Որ մրմնջէ մեր վերև յանջրպետն այս ունայն
Մթին կամարներու, իբրև նուաղուն մրմունջ
Այն մարդկան՝ որ վաղուց սև հող ննջեն անմռունչ։

ՕՐԱ, ՈՂԲԷՐՓ–ՐԻ–Ն։

Սէտրիկի և իր ուղեկիցներուն 'ի նպաստ՝ այս անօրէնութիւնները լինելու առեն՝ զինեալ մարդիկ իրենց պերիները կ'քշէին կ'տանէին ամուր տեղ մը՝ որպէս զի զանոնք բանտարկեն։ Սակայն մութը շուտով վրայ կ'հասնէր, և կ'երևի թէ անտառին ուղիները լիովին ծանօթ չէին այն ասպատակիներուն։ Ուստի ստիպուեցան ստէպ դադար առնել և մէկ երկու անգամ իսկ դառնալ որպէս զի իրենց փնտռած Ճանապարհն գտնեն։ Արդէն առաւոտեան արշալոյսը ծագեր էր և տակաւին վստահ չէին թէ իրենց բռնած շաւիղն ուղիղն էր. բայց արևուն հետ վստահութիւն առին և այնուհետև ձիաւորները շուտ ընդ փոյթ քալել սկսան։ Նոյն պահուն՝ ասպատակներն երկու պարապլուխներուն այսպէս կ'խօսէին.

— Ժամէ, Պ. Մօրիս, որ մեզնէ հեռանաս — ըսաւ Տաճարականը ցը Պրէսիին — որպէս զի այս դարանակալութեան միւս մասը կատարես։ Ինչպէս որ արդէն գիտես, ազատարար ասպետի դերն ունիս գեր խաղալու։

— Միայն փոխեցէք — ըսաւ ցը Պրէսի — քեզնէ չպիտի հեռանամ մինչև որ մեր որսը Գրօն–ցը–Պէօին դղեակը չտանիմ չձգեմ։ Անոր պիտի երթիմ օրիորդ Բոլէնային իմ բնիկ կերպարանքս, և յուսամ որ իմ ուժգին սիրոյս պիտի վերապրի իմ ընթացքիս բռնութիւնը։

— Եւ ամէն դրդեց քեզ խորհուրդդ փոխելու, ցը Պրէսի — հարցուց Տաճարականը։

— Այս կէտը քեզի չվերաբերիր բնաւ — պատասխանեց իր ընկերը։

— Սակայն կ'յուսամ, ասպետ — ըսաւ Տաճարականն — որ այդ փո-

գիսխութիւնն իմ պատուոյս ներհակ կասկածէ մ՝եկած չէ, ինչպէս որ Գիլբուրս Ջանայ այդպիսի կասկած մը քեզ շնթելու։

— Իմ խորհուրդներս իմն են — պատասխանեց տը Գրէսի։ — Խօսք մը կայ թէ՝ գողը գողէն կ՝գողնայ սատանան կ՝զարմանայ, և գիտենք որ եթէ հուր ու ծծումբ փչէ անգամ, չկրնար արգիլել սատանան մ՝իր փափաքը կատարելու . . .։

— Կամ աղատ ուխտ, մը գլուխը — պատասխանեց — Տաճարականն որ աներկիւղ մնայ բարեգամի և ընկերի մ՝անիրաւութեան առջև, զոր բոլոր մարդկային սեռի դէմ կ՝գործածէ։

— Այդ ըսածդ անօգուտ և վտանգաւոր ամբաստանութիւն մ՝է — պատասխանեց տը Գրէսի — բաւական է ըսել թէ ես քաջ կ՝ճանչեմ Տաճարական ուխտին վարքն ու բարքն, և քեզ առիթ չպիտի տամ այս-չափ վտանգով ձեռք ձգած որսս իրենէ կորզելու։

— Ա՛հ — պատասխանեց Տաճարականը — վախնալու ի՞նչ ունիս — դու արդէն գիտես մեր ուխտին կանոնները։

— Քաջ գիտեմ — պատասխանեց տը Գրէսի — նոյնպէս գիտեմ թէ զանոնք ի՞նչպէս կ՝պահէք։ Համարձակ խօսէ, Տաճարական ասպետ, Պալէստինի մէջ մարդասպանութեան օրէնքը խիստ աղատ կերպով կ՝մեկնուին, և այս պարագայիս մէջ քու խղճիդ բան մը չեմ կրնար վստահիլ։

— Ուրեմն իմացիր ճշմարտութիւնն — ըսաւ Տաճարականը — քու կապուտակն օրիորդիդ աչք չունիմ բնաւ, այս գերիներուն մէջ մէկը կայ որ ինձ լաւագոյն ընկերուհի կրնայ լինիլ։

— Ո՞նչ, մինթէ նաժիշտին խոնարհելու միտք ունիս — ըսաւ Գրէսի։

— Ո՛չ, ապնիւ ասպետ — ըսաւ Տաճարականը գոռոզութեամբ — ես մինչև նաժիշտին չպիտի խոնարհիմ։ Ես գերի կիներու մէջ քուկիդ-նիդ չափ սիրուն էակ մը տեսայ։

— Խաչ վկայ, հրէայ աղջիկն ակնարկել կ՝ուզես — ըսաւ Գրէսի։

— Եւ եթէ ակնարկեմ — պատասխանեց Գոտա-Կիլսէր — ո՞վ կրնայ դիմադրել։

— Ո՛չ ոք, կարծեմ — ըսաւ Գրէսի — բայց եթէ ազատ մնալու համար ըրած ուխտդ, կամ խղճիդ վկայութիւնն՝ որ կ՝արգիլէ քեզ հրէայ աղջկան մը հետ յարաբերութիւն ունենալ։

— Իմ ուխտիս գալով — գոչեց Տաճարականը — մեր մեծ Վարպետն ինձ ներողութիւն մը շնորհեց . իսկ խղճս ալ, որ երբեք հարիւր մարիտանացի սպանող մարդու մը խղճն է, այնպէս չունի մանր մունր

վրիպակները համբել՝ աւաղ ուրբաթ իրիկուն առաջին անգամ խոստովանող գեղացի աղջկան մը պէս։

— Դու ամենէն լաւ կ՚ճանչես քու յատուկ արտօնութիւններդ — ըսաւ տը Պրէսի։ — Սակայն՝ ի հարկին երդում կրնայի ընել որ քու փափաքդ գրդռողն աւելի վաշխառու հրէին ստակի տոպրակներն են քան թէ անոր աղջկան սև աչերը։

— Կրնամ զմայլիլ երկուքին վրայ ալ — ըսաւ Տաճարականը — սակայն ծեր հրէային կէս շահ մ՚է։ Պէտք է որ աւարը Ֆրօն-տը-Պէօյին հետ բաժնեմ, քանի որ իր ղղեկին բնակութիւնն անվարձ չպիտի տայ մեզ։ Ո՛չ, այս ասպատակութեան մէջ կ՚ուզեմ որ մի միայն ինձի յատուկ բան մ՚ունենամ, և գեղանի հրէայ օրիորդն իրը իմ կողոպուտս ընտրեցի։ Ուստի, հիմակ որ իմ խորհուրդս գիտես, պիտի կատարէս քու նախկին որոշումդ թէ ոչ։ Ա՚դիտես որ իմ միջամտութենէ վախնալու բան մը չունիս։

— Ո՛չ — պատասխանեց տը Պրէսի — իմ գերիս մօտ կ՚ուզեմ մնալ։ Քու ըսածդ բոլորովին ճշմարիտ է, սակայն մեծ Ղարպետին ներողութեամբ ձեռք ձգուած արտօնութիւններդ չեմ՚սիրեր, և ոչ երբեք հարիւր մարիտանացի սպաններէն ստացած արժանիքդ։ Ազատ ներողութեան այնչափ մեծ իրաւունք ունիս, որ հարկաւ մանր մունր վրիպակները բանի աեղ չես դներ։

Մինչդեռ այս խօսակցութիւնը կ՚շարունակուէր՝ Սէարիկ կ՚աշխատէր զինքը բռնող անձերուն բնաւորութեան և դիտաւորութեան վրայ տեղեկութիւններ քաղել։

— Դուք անշուշտ անկլիացիներ էք կ՚ըսէր նա — և սակայն, տէր Աստուած, ձեր հայրենակիցներն աւ ու աւար կ՚ընէք որպէս թէ նօրմաններ լինէիք։ Դուք իմ դրացիներս պիտի լինիք, և հետևապէս բարեկամներս. վասն զի իմ անկլիացի որ դրացին կրնայ իմ թշնամիս լինիլ։ Զեզի կ՚ըսեմ, գեղացիք, որ ձեզնէ նոյն իսկ այն մարդիկն որ իրրև վտարակ կ՚հալածուէին, իմ պաշտպանութիւնս վայելած են։ Վասն զի անոնց թշուառութեան վշտակից և ազնուական բնաւորներն անիծած եմ։ Ինչ կ՚ուզէք իրնէ, կամ այս բռնութեամբ ի՞նչ պիտի շահիք։ Դուք անբան կենդանիներէն վատագոյն էք ձեր գործով, և ահա ձեր համբութեամբ իսկ անոնց կ՚հետևիք։

Բայց Սէարիկ ընդունայն այս հարցումները կ՚ուղղէր ասպատակներուն, որ շատ պատճառներ ունէին լռութիւն պահելու և իրենց գերիներուն բարկութենէ կամ փաստերէն յորդորուելով բերան չբանալու։

Ուստի շտապաւ իրենց ընթացքը Սէտրիկի հետ շարունակեցին, մինչև որ ծառերու անցքի մը ծայրը հասնելով՝ Դօրքիլսդօն երևան եկաւ, որ Ռէժինալտ Ֆրօն-տը-Պէօյին փոշելից և հինօրեայ գղեակն էր։ Մինչև մեծութեամբ ամրոց մ՚էր՝ որ մինակ գիտանոց կամ քառակուսի աշտարակ մ՚ունէր, մեծ ու բարձր, որուն չորս գին ատորին շէնքեր կային ներքին գաւիթով շրջապատեալ։ Արտաքին պարիսպին բոլորտիքը խորունկ փոս մը կ՚գտնուէր մնտակայ գետակի մը ջրով լի։ Ֆրօն-տը-Պէօ՝ որ իր բնաւորութեամբը ատէպ թշնամիներուն հետ կռուի կը բռնուէր, շատ ամրացուցեր էր իր գղեակն՝ արտաքին պատին վրայ աշտարակներ շինելտալով, այնպէս որ մէն մի անկեան վրայ ամբարտակ մը կ՚գտնուէր։ Ինչպէս ժամանակին գղեակներուն մէջ սովորական էր, դուռը բարձր աշտարակի մը վրայ էր, որուն մէն մի անկիւնը փոքրիկ աշտարակով մը պատած և պաշտպանուած էր։

Այն ինչ Սէտրիկ տեսաւ Ֆրօն-տը-Պէօի գղեկին փոքրիկ աշտարակներն, որոց սպիտակ և լուռուտ ատամունքը շրջակայ անտառներուն վրայէն երևող արևէն կ՚փայլէին, իսկոյն վերահասաւ եղաւ իր թշուառ վիճակին ծանրութեան։

— Ես յանիրաւի մեղադրեցի — ըսաւ նա — այս անտառներուն գողերն ու վտարականները, կարծելով թէ այս աւազակներն անոնց դասէն են։ Այս մացառներուն աղուէսները Ֆրանսայի գիշատիչ գայլերու հետ շփոթեցի։ Ըսէք ինձ, շուներ, միթէ ձեր տէրն իմ կեանքիս և հարստութեանս աչք ունի, միթէ շատ կ՚գտնէ որ երկու սաքսօն՝ ես և աղնիւ Ամէլստէյն՝ հողի տէր լինին այս երկրին մէջ, որ երբեմն մերցեղին յատուկ կալուածն էր։ Ուրեմն սպաննեցէք մեզ և ձեր բռնասիրութեան չափը լցէք մեր կեանքն առնելով, ինչպէս որ արդէն մեր բոլոր ազատութիւնն ու իրաւունքը յափշտակեցիք։ Եթէ սաքսօն Սէտրիկ չէ կարող Անկլիան ազատել, անոր համար մեռնելու պատրաստ է։ Ըսէք միայն ձեր բռնաւոր տիրոջ որ՝ կ՚աղաչեմ՝ զինքը Բովէնան պատուով և ապահովի իր բնակարանը դարձնելու։ Նա կին մ՚է, և անորմէ վախնալու տեղի չունի, վասն զի մեզի հետ վախճան պիտի առնուն անոր դատին համար պատերազմելու յանդգնող մարդիկ։

Աւարառու ասպատակներն այս կշտամբանքին առաջուան պէս պատասխան մը չտուին, և արդէն գղեկին դրան առջև հասեր էին։ Պրէսի երեք անգամ շեփորը փչեց և աղեղնաւոր ու նետաձիգ՝ որ հեռուէն խումբը տեսնելով պատին վրայ ելեր էին, իսկոյն շարժական կամուրջն իջեցուցին՝ Պրէսին ներս առնելու համար։

Պահապանները ձիերէն վար իջեցուցին զերիներն և սենեակ մը տարին՝ ուր արտօրնաք կերակուր բերին, բայց ոչ ոք ուտելու փափաք ունէր Ամէլստէնէն զատ։ Սակայն Խոստովանող Թագաւորին Թոռն իսկ սեղանին վրայ դրուած կերակուրը Ճաշակելու ժամանակ չունեցաւ, վասն զի պահապաններն իմաց տուին անոր և Սէարիկին թէ Բոլէնայի սենեկէն հեռու սենեկի մը մէջ պիտի փակուին։ Անկարելի էր դիմադրել, և ստիպուեցան ընդարձակ սենեակ մ՚երթալ՝ որ սաքսօնեան կոշտ սիւներու վրայ կեցած՝ կրօնաւորներու խորհրդարանի կ՚նմանէր, որոց տեսակէն դեռ ևս մինչև յայսօր կ՚տեսնենք մեր հին վենաստաններուն ամենէն հին մասերուն մէջ։

Ղերջն օրիորդ Բոլէնան իր սպասաւորներէն զատեցին՝ և մարդավար կերպով իրաւ, բայց առանց անոր բան մը հարցընելու, հեռաւոր սենեակ մը տարին։ Մի և նոյն տաղնապելի քաղաքավարութեամբ վարուեցան նաև Ռոպերկայի հետ, առանց հօրն աղաչանաց միտ դնելու, որ այն աղէտալի վայրկենին՝ ստակ տալու կ՚խոստանար իսկ, եթէ իր աղջիկը քովը ձգեն։

— Անպիտան անհաւատ — պատասխանեց անոր պահապանին մէկն — երբ ինքդ տեսանես չպիտի բաղձաս անշուշտ որ աղջիկդ քեզի հետ մնայ։ Եւ առանց աւելի խօսք ընելու, ծեր հրէայն բռնի առին տարին միւս գերիներուն բռնած ներքակ կողմն։ Իսկ սպասաւորներուն վրան գլուխն ուշի ուշով քննելէն և անոնց զէնքն առնելէն ետև՝ դղեկին մէկ ուրիշ կողմը տարին, և Բոլէնա զրկուեցաւ իսկ այն միխիթարութենէն զոր կրնար ունենալ իր նաժիշտ Էլկիթայի հետ մնալով։

Այն սենեակին որուն մէջ փակուեցան սաքսօն հողատէրները՝ (վասն զի նախ անոնք մեր ուշադրութիւնը կ՚գրաւեն) թէև այժմ տեսակ մը պահանոց դարձած է, այն ատեն դղեկին մեծ սրահն էր։ Այս սենեակին աւելի ստորին բաներու յատկացուցած են այժմ, վասն զի արդի տէրն՝ իր պարոնական ապարանին հանդստութեան, ապահովութեան և գեղեցկութեան համար աւելցուցած շատ մը բաներուն մէջ, նոր և հոյակապ սրահ մ՚աշխներ էր՝ որուն գմբեթաւոր ձեղունն աւելի թեթև և վայելուչ սիւներու վրայ զետեղուած, բարձրաղոյն ատիճանի զարդերով յարդարուած էր, ինչպէս որ այս տեսակ զարդեր նօրմանները արդէն կ՚գործածէին իրենց Ճարտարապետութեան մէջ։

Սէարիկ վեր վար կ՚պտըտէր սենեկին մէջ՝ անցեալին և ներկային վրայ խորհելով զայրոյթին, մինչդեռ իր ընկերին դանդաղութիւնը, համբերութեան և փիլիսոփայութեան տեղ, իրեն կ՚օգնէր հանդուր-

ժելու ամէն բանի, նոյն իսկ ներկայ աղէտից, և այս աղէտքն անդամ այնչափ քիչ կ'զգար որ մինակ Սէտրիկի դառն ու վառվռուն դանդատներէն շարժեալ՝ անոր պատասխան մը տալու կ'դրդռուէր։

— Այո — ըսաւ Սէտրիկ կէս մ'ինքն իրեն և կէս մ'Ամէլատէյնի խօսելով — ճիշտ այս սրահին մէջ հայրս Դօրքիլ Վօլֆիկէնկլի խնջոյքին ներկայ գտնուեցաւ, երբ արիասիրտ և դժբաղդ Հարօլտը հիւրընկալեց, այն միջոցին որ Նորմէկիացւոց դէմ կ'քալէր, որոնք Դօսաի ապստամբին միացեր էին։ Այս սրահին մէջն էր որ Հարօլտ իր վեհանձն պատասխանն ուղղեց իր ապստամբ եղբօրը դեսպանին։ Ամէն այս պատմութիւնը պատմելու ատեն հօրս խանդը տեսեր եմ։ Դօսաի դեսպանը ներս այս սրահը մտաւ, մինչդեռ այս ընդարձակ վայրս հուղիւ թէ ազնիւ ազգոն հրամանատարներու ամբոխը կարող էր պարունակել, որոնք իրենց թագաւորին բոլորտիքն արեան պէս կարմիր դինին կ'խմէին։

— Ցուսամ — ըսաւ Ամէլատէյն՝ իր բարեկամին այս վերջին խօսքէն փոքր ինչ շարժելով — որ չպիտի մոռնան կէսօրին մեզի դինի և ուտելիք ղրկելու։ Հաղիւ թէ առտու նախաճաշին շունչ առնելու ժամանակ տուին մեզ, և երբէք օղուտ մը չեմ քաղեր կերածէս երբ ձիէն անմիջապէս իջնելուս սեղան նստիմ, թէև բժիշկներն այսպէս կ'պատուիրեն։

Սէտրիկ իր պատմութիւնը շարունակեց առանց իր բարեկամին այս միջանկեալ դիտողութեան ուշ դնելու։

Դօսաի դեսպանն — ըսաւ նա — դէպ յառաջանցաւ սրահին մէջ, առանց իր շորս դին կեցող սպառնալից դէմքերէն ահաբեկելու, և եկաւ իր յարգանքը մատոյց Հարօլտ թագաւորին աթոռին առջև։

«— Մեծդ թագաւոր — ըսաւ նա — ինչ պայմաններ պիտի առաջարկես Դօսաի եղբօրդ, եթէ հաշտուիլ ուզէ և զէնքերը վար դնէ։

«— Եղբօր մը սէրը — դոչեց վեհանձն Հարօլտ — և Նորմանդիոյ պէրլէնտի գեղեցիկ դքսութիւնը։

«— Բայց եթէ այդ պայմաններն ընդունի Դօսաի — շարունակեց դեսպանն — իր հաւատարիմ դաշնակցին, Նորվէկիոյ թագաւոր՝ Հարտրատայի ինչ հողեր պիտի տրուին։

«— Եօթն ոտք անկլիական հող — պատասխանեց Հարօլտ վէսօրէն — կամ, ըստ որում կ'ըսեն թէ Հարտրատա հսկայ մ'է, թերևս տան երկու բթամատ աւելի շնորհ մ'ընենք։

«Սրահը կայթիւններով թնտաց, և 'ի պատիւ Նորվէկիացիին՝ եղ-

ջիւրներն եւ գաւաթները դինիով լցան, մաղթելով որ շուտ մ՚իր անկ-
լեական հողին տիրանայ։

— Նոյն գաւաթ դինին ես ալ ամենայն սիրով կ՚խմէի — ըսաւ
Ամէլստէին — վասն զի լեղուս քմայս կ՚փակի։

— Յուսակտուր դեսպանն — ըսաւ Սէտրիկ իր պատմութիւնն աշ-
խուժիւ շարունակելով, թէեւ իր խօսակցին հետաքրքրութիւնը չէր
շարժեր — քաշուեցաւ գնաց որպէս զի Դօսդիին և իր նիզակակցին
տանի նախատեալ եղբօր սպաւնալից պատասխանն։ Ահա այն ատեն
Նօրքի պարսպապատ գղեակներն և Տէվէնտի արիւնալի ափունքը տես-
սան այն տոկալի կռիւն՝ ուր Նորվէկիոյ թագաւորն ու Դօսսի ան-
վիանդ արիութեան գործեր ընելէն ետեւ՝ միասին ընկան, իրենց տաս
հազար ամենէն քաջարի մարտիկներու հետ։ Ո՞վ կրնար երեւակայել որ
այս պատերազմին գերասանծ օրն իսկ, նոյն հոգին որ սաքսօններու
յաղթական դրօշակը կ՚տատանէր, նորմաններու առագաստներն ալ կը
լեցնէր և Սիւսէքսի աղէտալի եզերքը կ՚քշէր։ Ո՞վ կրնար կասկածիլ
որ նոյն ինք Հարօլտ՝ քանի մ՚օրէն ետքն՝ իր տէրութեան մէջ ուրիշ
հողի կտոր մը չպիտի ունենար, քան թէ այն զոր բարկանալով Նոր-
վէկիացի ասպատակին սահմաներ էր։ Ո՞վ կրնար մտածել, աղնիւ
Ամէլստէին, որ դու, դու Հարօլտի արենակից, և ես, որուն հայրը
սաքսօնեան թագին արի պաշտպաններէն մին էր, ապիրատ նորմանի
մը ձեռքը գերի պիտի մնանք, Ճիշտ այն սրահին մէջ՝ ուր մեր նախ-
նիքն նշանաւոր խնջոյք մը տուին։

— Տխուր է մեր վիճակն — ըսաւ Ամէլստէին — բայց յուսամ որ
մեզնէ չափաւոր տուգանք մը պիտի պահանջեն։ Տարակոյս չկայ որ
մեզ բոլորովին անօթութենէ չեն ապաններ։ Սակայն՝ թէեւ կէսօր է,
մեր Ճաշին պատրաստութիւնը չեմ տեսներ։ Պատուհանը նայէ, աղնիւ
Սէտրիկ, և արեւուն Ճառագայթներէն դատէ եթէ կէսօր չէ։

— Թերեւս կէսօր է — պատասխանեց Սէտրիկ — բայց չեմ կրնար
դիտել այս դունաւոր ապակիներն առանց դրդռելու սրտիս մէջ այնպիսի
մտածութիւններ որ մեր ներկայ վիճակին և զրկանաց չեն պատկանիր։
Աղնիւ բարեկամ, երբ այս պատուհանը շինուեցաւ, մեր սրտոտ նախ-
նիքը չպիտէին ոչ ապակի շինել և ոչ զայն դունաւորել։ Վօլֆիկէնկրի
հայրը՝ հպարտութենէ շարժեալ՝ Նորմանիայէն արուեստագէտ մը
կանչեց, որպէս զի այս սրահը ներկեալ տայ այն գինապրոշմական նկար-
ներով՝ որ Աստուծոյ արեւուն օրհնած լոյսն անթիւ այլանդակ գոյներ-
ու բաժնեցին։ Օտարականն եկաւ ասա՝ աղբատ, մուրացիկ, փաղա-

քուշ, սողայող, և իր գլխարկը տանյետին սպասաւորին առջև հանելու պատրաստ, և դարձաւ գիրցած ու գոռող, և իր աչքծակ հայրենակիցներուն պատմելու աղնուական սաքսօններու հարստութիւնն ու պարզասիրութիւնն։ Ամէնստէյն, յիմարութիւն մ՝էր այս, զոր երբեմն գուշակեր էին Հէնկիստի յաջորդներն և իր յանդուգն ցեղերն որ մեր բարուց մաքրութիւնը պահեցին։ Մենք այս օտարականները մեր սրտակից բարեկամները, մեր սպասաւորները, մեր մտերիմներն ըրինք. մենք իրենց աչուեստապէտներն ու գիտութիւնները փոխ առինք, և քամահեցինք այն բարեմոյն պարզութիւնն ու քաջասրտութիւնն որով մեր արի նախնիք զարդացան, և նօրմանեան ճոխութեամբ վատթարացանք նօրմանեան գինուց ներքև ընկճելէն առաջ։ Շատ աւելի լաւ էին մեր տնային կերակուրները, զոր անդորրութեամբ և ազատութեամբ կ՝վայելէինք, քան այն շռայլ և գիրգ ուտելիքներն, որոց համար մեր ունեցած սէրն մեզ իբրև ստրուկներ օտար աշխարհակալներու ձեռքը մատնեց։

— Այս պահուս — պատասխանեց Ամէնստէյն — ամենէն պարզ կերակուրն իմ աչքիս ճոխ պիտի երևի, և կ՝զարմանամ, ազնիւ Սէտրիկ, թէ ինչպէս անցեալ դէպքերն այդպէս լաւ կ՝յիշես, և մինչև անգամ ճաշի ժամանակը կ՝մոռնաս։

— Անօգուտ վաստակ մ՝է — մրմռաց Սէտրիկ մեկուսի և անհամբեր — իր ստամոքսին չպատկանող բանի մը վրայ խօսիլ այս մարդուն։ Ցանդուգն Քանիւտի հոգին գրաւեր է զինքն, և ուրիշ բերկրանք չգիտէր բայց միայն ուտել, ուռիլ, գինոքնալ և շարունակ պահանջել։ Ափսոս — յարեց նա Ամէնստէյնի նայելով կարեկցութեամբ — որ այսպիսի անշարժ հոգի մը զացեր այդպիսի գեղանի մարմնոյ մը մէջ փակուեր է։ Աւաղ, ինչո՞ւ համար Անկլիոյ վերաշինութեան պէս մեծ գործ մ՝ասոր պէս թերակատար առանցքի մը վրայ կայանայ։ Իրաւի, եթէ Ռովէնայի միանայ՝ թերևս ասոր հոգին՝ որ աւելի ազնիւ է և վեհ, անոր սրտին մէջ լաւագոյն զգացումներ զրդռէ, բայց այս բանս ինչպէս հնարին է 'ի կատար հանել, մինչդեռ Ռովէնա, Ամէնստէյն և ես այս անօրէն աւազակին ձեռքը գերի մնայինք։ Եւ կարելի է զգալով որ եթէ ազատ լինինք անկլիական ազգէն իրենց գրաւած իշխանութեան դէմ արդելքներ կրնանք յարուցանել, մեզ այսպէս բանտարկեցին։

Մինչդեռ սաքսոնն այս տաժանելի մտածութեանց մէջ ընկղմեր էր, բանտին դուռը բացուեցաւ, և սեղանապետ մը ներս մտաւ որ իր պաշ-

ուսական սալիտակ գաւազանը ձեռքը բռներ էր։ Այս կարևոր անձը ծանրաքայլ սենեկին մէջ տեղը հասաւ, իր եռևէն ունենալով շորս սպասաւորներ որ կերակուրներով լի սեղան մը կ՚բերէին, որուն տեսքն ու հոտն Ամէլստէյնի կրած ամէն ղրկանաց անմիջական փոխարինութիւն մ՚երևցաւ։ Սեղանին ծառայող մարդիկ գիմակաւոր էին և վերարկուներով վաթթուած։

— Այս ինչ ճնչկատակութիւն է — ըսաւ Սէտրիկ։ — Մինթէ կարծէք որ չգիտենք՝ երբ ձեր տիրոջ գղեկին մէջ կ՚գտնուինք՝ թէ անոր գերիներն ենք։ Ըսէք ձեր տիրոջ — շարունակեց նա, որ այս առթէն օգտուելով կ՚փափաքէր իր ազատութեան մասին բանակցութիւն մը բանալ — ըսէք անոր, Ռէժինալտ Գրօն-տը-Պէօին, չգիտենք, ինչ պատճառ կրնայ ունենալ մեզ ազատութենէ զրկելու, եթէ ոչ իր միակ ապօրէն փափաքն է մեզ ինքնելով հարստանալ։ Ըսէք անոր որ յափշտակիչ քնութեան առջև գլուխ ծռելու յանձն կ՚առնունք, ինչպէս որ յար և նման պարագայի մէջ պիտի խոնարհէինք ճշմարիտ աւազակի մ՚առջև։ Թող մեր ազատութեան փոխարէն փրկանք մ՚որոշէ, և ստակն խակոյն պիտի վճարուի, բաւական է որ մեր կարողութենէ վեր բան մը չպահանջէ։

Սեղանապետը պատասխան չտուաւ, այլ իր գլուխը ծռեց։

— Այո, ըսէ Ռէժինալտ Գրօն-տը-Պէօի — յարեց Ամէլստէյն — որ իմ մահաբեր մենամարտս կ՚ղրկեմ և կ՚հրաւիրեմ զինքն որ իմ հետ կռուի, հետիոտն կամ ձիով, որ և է ապահով տեղ մը, ազատութենէս ուզածդ ետքն, և այս մենամարտս՝ եթէ իրօք ասպետ է, չպիտի յանդգնի մերժելու կամ յապաղելու։

— Մենամարտդ պիտի յայտնեմ ասպետին — պատասխանեց սեղանապետը — բայց առ այժմ կ՚թողում ձեզ որ ձեր ճաշն ընէք։

Սակայն Ամէլստէյն այս մենամարտն անշնորհ կերպով արտասանեց, վասն զի մեծ պատառ մ՚որ իր երկու ծնօտներուն օդնութիւնը կ՚պահանջէին, իր սովորական տատամնութեան վիճակով չսփիալանց տկարացուց իր յանդուգն մենամարտի հրաւէրին ազդեցութիւնը։ Սակայն դարձեալ Սէտրիկ այս խօսքն իրրև անդրժելի ապացոյց նկատեց թէ իր ընկերին արիութիւնը կ՚գրգռէր, վասն զի անոր նախորդ անտարբերութիւնը, տոհմիկ ծննդեան համար ունեցած յարգանաց չնայելով, սկսեր էր իր համբերութիւնը հատցընել։ Ուստի նոյն պահուն անոր ձեռքը թոթուեց ջերմագին իրրև նշան գոհունակութեան, և փոքր ինչ վշտացաւ երբ լսեց Ամէլստէյնի սա դիտողութիւնը՝ թէ

Քրիստոս ալ — ոչէօր պէս տասս մարդու դէմ դնելու պատրաստ է, եթէ՝ այս ընելով՝ կարող լինի շուտով աղատիլ ընդանէ մ՝ուր այնչափ սխտոր կ՝դնեն թանին մէջ։ Սէտրիկ՝ այս անզգայութեան վերադարձը բանի տեղ չդնելով՝ Ամէյլսուէյնի դիմացը նստաւ և իսկոյն անոր հասկըցուց որ եթէ իր հայրենեաց թշուառութիւնները կարող են կերակուրի յիշատակն անոր միտքէն վանել որչափ ատեն որ սեղանը պարապ էր, երբ ուտելիք նորէն երևէին՝ անոնց հետ կ՝վերադառնար ախորժակը՝ զոր իր սաքսոն նախնիքն իրենց միւս յատկութեանց հետ անոր աւանդեր էին։

Շատ առեն չկար որ գերիները սեղանը նստեր էին, երբ իրենց ուշադրութիւնն այս ծանր գրաղմունքէն դարձաւ շեփորի մը շունդէն, որ կ՝թնդար դրան առջև։ Այս փողն հնչեց երեք անգամ այնպիսի ուժգնութեամբ որ կարծես թէ հմայեալ դղեկի մ՝առջև կ՝որոտար նախատահմանեալ ատպեռի մը բերնով՝ որուն հրամանին՝ առաւօտեան մշուշի պէս՝ պիտի ցրուէին նոյն դղեկին սրահները, աշտարակները և ամրամեաւոր պարիսպները։ Սաքսոնները շուտ մը սեղանէն ելան և պատուհանը վազեցին. բայց իրենց հետաքրքրութիւնը չկրցան գոհ ընել, վասն զի այն պատուհանը դղեկին բակին վրայ կ՝նայէր, մինչդեռ ձայնը շրջապատին դրսի կողմէն կ՝գար։ Սակայն այս փողային գոչումը կ՝երևէր թէ կարևորութիւն ունէր, որովհետև նոյն միջոցին մեծ շփոթութիւն ծագեցաւ դղեկին մէջ։

ԳԼՈՒԽ ԻԲ

Իմ աղջիկս — ո՛ իմ տուկատներս — ո՛ իմ աղջիկս
— Ո՛ իմ քրիստոնեայ տուկատնե՛ր։
Արդարութի՛ւն — օրէ՛նք — իմ տուկատներս և իմ աղջի՛կս։

ՎԵՆԵՏԿԻ ՎԱՃԱՌԱԿԱՆԸ

Թողլով որ սաքսոն տանտէրներ իրենց սեղանը դատնան, երբ իրենց հետաքրքրութիւնն 'ի գերև ելած տեսնելով իրենց կիսովին կշտացած սատամքսին ձայնը լսեն, մենք Եօրքցի Իսահակին աւելի տաժանելի բանտը մտնենք։

Հէք հրէայն արտորնաք բերդին մէկ զնդանը նետեր էին, որուն յատակը շատ խոր էր և տամուկ, վասն զի փոսէն աւելի ցած էր։ Մէկ երկու ծակեր կային միայն որմէ լոյս կ՝մտնէր բանտն և բանտաւորին

ձեռքն անոնց չէր հասնէր։ Կէսօրին իսկ՝ այս լուսամուտներէն աղօտ և անորոշ նշոյլ մը կ՚ապրդէր զնդանին մէջ՝ որ յետոյ կատարեալ մթութեան կ՚փոխուէր՝ դեռ դղեկին միւս մասերն արևուն ճառագայթներէն չզրկուած։ Շղթաներ և երկաթներ՝ որ նախկին դերիներու ծառայեր էին, վախնալով որ խոյս տալու ճիգ կ՚ընեն, բանտին պատերուն վրայ ժանգոտ և պարապ կախուած էին. իսկ սոյն երկաթներուն մէջ օղակ մը կար՝ որուն մէջ երկու փոշելի ոսկրներ կ՚գտնուէին, որոնք կարծես թէ ատեն մը մարդու սրունք էին, այնպէս որ բանտաւորն այն տեղ ձգուեր էր ոչ միայն կորսուելու այլև կմախք մը դառնալու։

Այն սոսկալի զնդանին մէկ անկիւնը կրակարան մը կար՝ որուն վերևը շատ մը խաչաձև դրուած երկաթէ ձողեր կ՚տեսնուէին՝ կիսովին ժանգէն մաշած։

Անտառին բոլոր տեսքը կրնար ահ ու սարսափ ազդեցուցիչ կորովի մարդու մը քան Իսահակին, որ՝ դարձեալ, աւելի հանդարտ կ՚երևէր մօտալուտ վտանգին առջև, քան երբ արհաւրօք պաշարած էր, որոց պատճառը հեռաւոր և անստոյգ էր։ Որսորդութեան հետամուտ մարդիկ կ՚ըսեն թէ այծեամն աւելի մեծ տանջանք կ՚կրէ՝ երբ որսական բարակներ զինքը հալածեն, քան երբ անոնց ճանկին ներքև մնար։ Եւ այսպէս հաւանական է որ հրէաներն՝ ամէն առթիւ ահ ու դողի մէջ գտնուելով, կերպով մ՚իրենց միտքն ամէն տեսակ վերահասութեան պատրաստած կ՚երևին, այնպէս որ երբ հարստահարութեան մ՚իրապէս ենթարկէին բնաւ զարմանք չէին յայտներ, զարմանք մ՚որ երկիւղին ամենէն վհատեցուցիչ յատկութիւնն է։ Ակէ զատ՝ առաջին անգամը չէր որ Իսահակ այսպիսի վտանգաւոր վիճակի մը մէջ կ՚գտնուէր։ Հետևապէս փորձառութիւն ունէր ինքզինքն առաջնորդելու, նոյնպէս կ՚յուսար որ առաջուան պէս կրնար ազատիլ իր ճարակ հաւրսին ճանկէն։ Նա մանաւանդ՝ իր ազգին յատուկ անդրդուելի կամակորութիւնն ունէր Իսահակ և այն հաստատամտութիւնն որով իսրայելացիք նախադաս համարած են բռնակալութեան և հարստահարութեան հաստացած ամէն ազէտից ստէպ տոկալ քան թէ բռնաւորներուն զօշաքաղութիւնը զոհ ընել՝ անոնց անիրաւ պահանջումներուն հաւանելով։

Այսպէս անմեղունչ դիմադրելու տրամադրութեամբ՝ Իսահակ մարմինը խոնաւութենէ պատսպարելու համար իր լաթերը տակն ամփոփած և զնդանին մէկ անկիւնը նստած՝ ուր, ձեռները խաչաձև բռներ, մազերն ու մօրուան անկարգ, մուշտակապատ վերարկուով և լուսամտին

աղօտ լուսէն գլխանոցը լուսաւորուած, Ռամպլանդի նկարչութեան նիւթ մը կրնար հայհայթել, եթէ այս անուանի պատկերհանը նոյն ժամանակն ապրէր։ Հրէայն նոյն գիրքին մէջ երեք ժամ մնաց անշարժ, և այնուհետև զնդանը տանող սանդղին վրայ ոտքի ձայներ լսեց։ Պարզունակները հնչեցին, ծխնիները կռնչեցին երբ դռնակը բացուեցաւ, և Ռէժինալտ Ֆրօն–տը–Պէօ՝ երկու սարակինացի զերիներու ուղեկցութեամբ՝ բանտը մտաւ։

Ֆրօն–տը–Պէօ՝ խաշոր և ուժեղ մարդ մը, որ հասարակաց կուիներու կամ մասնաւոր վէճերու մէջ անպուցեր էր իր կեանքն, և ամէն միջոց 'ի գործ դրեր էր իր աւատական իշխանութիւնը տարածելու համար, 'ի ծնէ բնաւորութեանը յարմար կերմարան մ'ունէր որ իր սրտին վայրագ և դիւային կիրքն ուժգնապէս կ'բացատրէր։ Այն սպիներն՝ որով դէմքը փոսոր են, թերևս գեղազոյն դէմքի մը վրայ՝ համակրութիւն և յարգանք դրաւէին, բայց Ֆրօն–տը–Պէօի պէս մարդու մը վրայ՝ իր կերպարանին վայրագութիւնը կ'աւելցընէին, նոյնպէս իր ներկայութեան ներշնչած սարսափն։ Այս ահարկու ասպետը մարմնոյն փակող կաշիէ բաճկոն մը հագեր էր, և այս բաճկոնը զրահին շփմամբ աղտոտեր ու մաշեր էր։ Գօտիէն կախուած դաշոյնէն զատ ուրիշ զէնք մը չունէր, որուն իբրև զուգականն էր միւս կողմէ կախուած ժանդոտ բանալիներու տրցակ մը։ Սև զերիներն՝ որ Ֆրօն–տը–Պէօին կ'ընկերանային՝ իրենց փառաւոր զգեստը հաներ և կոշտ կտաւէ շինուած վառակներ և տափասներ դրեր էին։ Իրենց թևերը մինչև արմուկը սոթեր էին, իբրև մսավաճառներ որ իրենց պաշտօնը վարելու համար սպանդարանը կ'մտնէին. ամէն մէկը սասլատ մը բռներ էր ձեռքն, և երբ զնդանը հասան՝ դրան վրայ կանգ առին մինչև որ Ֆրօն–տը–Պէօ կրկին կղպակով զայն զգուշութեամբ գոցեց։

Այս զգուշութիւնն ընելէն ետև՝ Ֆրօն–տը–Պէօ՝ ծանր ծանր զնդանին մէջ քալեց դէպ 'ի հրէայն, աչքերն անոր վրայ սևեռեց, որպէս թէ իր ակնարկովը զանի ջլատել կ'ուզէր, ինչպէս որ տեսակ մը կենդանիներ իրենց որսը կ'դիւթեն, կ'ըսեն։ Արդարև՝ կ'երևէր թէ Ֆրօն–տը–Պէօի մթին և չարանիշ աչքը սարսափազդ հրէին վրայ կը գործէր այն հմայական զօրութիւնը։ Հրէայն բերանաբաց նստեր ակնապիշ կ'նայէր վայրենի ասպետին վրայ այնչափ սարսափով՝ որ կարծես թէ իր բոլոր մարմինը կ'կորանար և կ'նուազէր՝ վայրագ նօրմանին անթարթ և դժնդակ նայուածքին ներքև։ Հէք հրէայն՝ կորոյս ոչ միայն ուղք ելնելու և առ ահի բարև տալու զօրութիւնն, այլև իր գլխարկը

հանել կամ աղերս մ՝ուղղել անկարող եղաւ, որմէ կ՝յայտնուի թէ որչափ յուզուած էր հանգուած լինելով թէ իր դլխին վրայ տանջանք և մահ ալիսի իջնէին։

Միւս կողմէն նորմանին ահարկու հասակը կարծես թէ կ՝երկրնար և կ՝լայնար, արծուին նման, որուն փետուրները կ՝ուռին երբ իր անձէն որսին վրայ յարձակելու կ՝պատրաստուի։ Ասպետն երեք քայլի չափ հեռի կանգ առաւ այն անկիւնէն՝ ուր թշուառ հրէայն կերրորդմը կծկեր սքլեր էր որ կարելի եղածին չափ քիչ տեղ բռնէ, և իր սարսակին մէկուն նշմայը ըրաւ որ մօտենայ։ Սև արքանեակն առաջ անցաւ, և իր սապատէն մեծ կշիռ մ՝ու շատ չափեր հանելով Ֆրօն-տը-Պէօի ոտից առջև դրաւ։ Ցեռոյ նորէն դնաց կեցաւ նոյն յարդանօք այն տեղն ուր իր միւս ընկերները կեցեր էին։

Այս սարսակներու շարժումները ծանր ու հանդիսաւոր էին, որպէս թէ իրենց հոգին անդթութեան սոսկալի գործի մը նախապատրաստմամբ կ՝վրդովէր։ Ֆրօն-տը-Պէօ՝ լինքն իսկ այս թատերական տեսարանս քացաւ իր գերին այսպէս ուղղելով խօսքը.

— Ամենանիծեալ շուն, անիծեալ ցեղի մը — ըսաւ՝ իր խոր և սխուր ձայնով զնդանին կամարին արձագանքը դրգռելով — կ՝տեսնե՞ս այս կշեռքը։

Թշուառ հրէայն սոսրասական պարզ ձևով մը պատասխանեց.

— Այս կշեռքին միջոցաւ պիտի կշռես ինձի համար — ըսաւ անհաշտ ասպետը — հազար արծաթ լիտր՝ Լոնտօնի աշտարակին ճիշտ չափին համեմատ։

— Հայր Աբրահամ — պատասխանեց հրէայն՝ վառնդին ծանրութիւնէն իսկ իր ձայնը դժնելով — ոմ արդեօք այսպիսի խնդիր մը լսած է։ Ո՞վ երբէք լսած է, նոյն իսկ քերթողի մը վէպին մէջ, հազար արծաթ լիտր գումարի մ՝անուն. որ մարդկային աչքն երբէք բերկրեր է այսչափ ահագին դանձի մը տեսքով։ Եօրքի պատերուն մէջ չպիտի գտնես, եթէ իմ տունս և բոլոր ապրիսն իսկ առ ու աւարի տաս, քու ուզած ահագին գումարիդ տասներորդ մասն անգամ։

— Իմ խնդիրս չափաւոր է — պատասխանեց Ֆրօն-տը-Պէօ — և եթէ արծաթդ հպատակութիւն է, չեմ մերժեր եթէ ամէն մէկ վրայ լիտր արծաթի փոխարէն մարդ մ՝ոսկի տաս. և եթէ այս իմ խնդիրս կատարես քու անհաւատի մարմնոդ պիտի ազատես այնպիսի տանջանքէ մ՝որ երբէք մարդէդ անցած չէ։

— Դիմա՛ իմ վրայ, աղնիւ ասպետ — գոչեց Իսահակ — ծեր, աղ-

քաւ եմ և անօդնական. անարժան է քեզ յաղթանակել իմ վրայ։ Ո-ղորմելի զորձ մ'է միջատ մը ճզմելը։

— Կարելի է որ ձեր ես — պատասխանեց ասպետը — ասով կ'մեղադրուին անոնք որ քեզ վաշխառութեան և խաբէութեան մէջ ծերանալու թոյլտուին. կարելի է տխար ես, վասն զի ճրը հրէայ մը սիրտ և ոյժ ունեցած է. իսկ ամէն մարդ գիտէ որ հարուստ ես։

— Կ'երդնում, ապնիւ ասպետ — ըսաւ հրէային — ամէն բանի վրայ որու կ'հաւատամ, և այն ամէն բաներու վրայ որ մէզի հաւասար հաւատալի են . . .։

— Երդմնազանց մի լինիր — ըսաւ նօրմանն՝ անոր խօսքն ընդմիջելով — և նայէ որ կամակորութեամբ բաղդդ չվճռես՝ անմտադիր լինելով քեզ սպասող դառն վիճակին։ Մի կարծեր թէ քեզ սարսափ ազդելու համար միայն այսպէս կ'խօսիմ և միտք ունիմ քու ցեղիդ յատուկ վատութենէ օգուտ քաղել. ոչ, այլ կ'երդնում քեզի այն բանին վրայ որու դու չես հաւատար, մեր եկեղեցւոյն Աւետարանին, և կապելու ու քակելու համար անոր տրուած բանալիներուն վրայ կ'երդնում, որ իմ գիտաւորութիւնս անդառնալի կերպով որոշեր եմ։ Այս գնդանը կատակի տեղ չէ։ Քեզնէ հաղարապատիկ աւելի նշանաւոր զերիներ մեռեր են այս պատերուն մէջ և անոնց բաղդն ոչ օք խմացած է։ Բայց քեզի համար երկայն ու ծանր ճգնաժամ մը պատրաստեր եմ, որուն մօտ անոնց տանջանքը հեշտութիւն մ'էր։

Այն պահուն՝ նորէն նշան ըրաւ տարուկներուն որ մօտենան և մեկուսի խօսեցաւ իրենց յատուկ լեզուաւ. վասն զի նա ևս Պալէստին պացած և թերևս այն տեղ ուսած է իր անդթութեան դասերը։ Տարակիսացիք իրենց ապատաէն հանեցին շատ մը փայտի ածուխ, զոյգ մը փքոց և շիշ մը ձէթ։ Մինչդեռ մին գայլախաղի և պոզպատի մը միջոցաւ կայծ հանելու կ'աշխատէր, միւսը մեր արդէն յիշած ժանգոտ կրակարանին վրայ ածուխները կ'տարածէր, և ապա փքոցն սկսաւ շարժել մինչև որ այրելի նիւթը հնոց մը դարձաւ։

— Մի թէ կ'ուզես՝ Իսահակ — շարայարեց Գրօն-տը-Պէօ — սա հրակէզ ածուխներու վրայ կեցած երկաթէ ձողերն։ Այս զերիներուն մին կրակը պիտի արծարծէ, մինչդեռ միւսը քու թշուառ անդամներդ խուզել պիտի օծէ, որպէս զի խորտիկդ չայրի։ Արդ՝ ընտրէ հիմակ, այս հրեղէն անկողինը կ'ուզես թէ ոչ հազար արծաթ լիտր պիտի վճարես, վասն զի հօրս գլխին վրայ կ'երդնում որ ուրիշ ճար չունիս։

— Այս անկարելի բան է — գոչեց Թշուառ Հրէային — անկարելի բան է որ խորհուրդդ 'ի կատար հանես։ Բնութեան բարի Ստեղծն երբէք այսպիսի անաղորոյն գործ մ'ընելու կարողութիւն մը չտեղծեց։

— Մի՛ վստահիր այդ բանին, Իսահակ — ըսաւ Գրօն-տը-Պէօ — վասն զի դժնդակ սխալմունք մը պիտի ընես։ Միթէ կրնաս երևակայել թէ ես, որ տեսեր եմ քաղաք մ'ուր բիւրաւոր Հայրենակից քրիստոնեաներ 'ի տուր, 'ի հուր և 'ի ջուր մատնուած են, միթէ կ'կարծես թէ ես ընկրկիմ իմ խորհուրդէս Թշուառ Հրէի մ'աղաղակներէն և վլվլուկէն շարժելով։ Միթէ կ'երևակայես թէ այս խորշակահար դերիներն, որ իրենց տիրոջ կամքէն զատ՝ օրէնք, հայրենիք, խիղճ չունին, որ իմ մէկ նշանիս վրայ՝ թոյն, խարոյկ, դաշոյն և չուան կը գործածեն, միթէ կարծես թէ գութ ունենան քու վրայ, քանի որ չեն իմանար իսկ այն լեզուն որով աղերսդ պիտի ուղղես։ Զգաստացի՛ր, ծերունի՛, քու Հարստութեան մէկ մասէն թեթևցիր, քրիստոնէի մը յանձնէ ունեցածիդ մէկ բաժինը, զոր իրեն կրօնակիցները վաշխի դնելով շահեր ես։ Քու խորամանկութեամբդ կարող ես նորէն պարպած քսակդ լնուլ, բայց ոչ բժիշկ ու գեղ կարող են բուժել այրած կաշիդ, եթէ մի անգամ սա ձողերուն վրայ պառկիս։ Համրէ փրկանքիդ գումարը, կ'ըսեմ քեզ, և ուրախ եղիր որ այս զոհողութեամբ պիտի կարող լինիս ազատիլ և ելնել զնդանէ մ'ուսկից քիչ մարդիկ կենդանի ելած են իրենց պատմութիւնն ըսելու։ Աւելի խօսք չպիտի ըսեմ քեզի, հիմակ ընտրէ քու անշահ մեռաղդ կամ կաշիդ և արիւնդ զոհելու առաջարկութիւնը։ Քու ընտրութեանդ համեմատ պիտի վարուիմ։

— Երանի՛ թէ Աբրահամ, Յակոբ և մեր ժողովրդեան բոլոր նահապետները օգնէին ինձ — ըսաւ Իսահակ — չեմ կարող ընտրութիւն մ'ընել, վասն զի քու տարապայման պահանջումդ զոհ ընելու համար ատակ չունիմ։

— Բռնեցէ՛ք զանի, գերիներ, և մերկացուցէ՛ք — ըսաւ ասպետն — և թող իր ազգին նահապետներն իրեն օգնեն եթէ կարող են։

Սարակինացի գերիներն՝ իրենց հրահանգն ասպետին ակնարկէն և շարժումէն առնելով քան թէ ձայնէն, նորէն ընդ առաջանցան, խեղճ Իսահակը բռնեցին, գետնէն վերը առին և զանի գրկելով միասին՝ քարսիրտ Գրօն-տը-Պէօին մէկ նոր հրամանին սպասեցին։ Եղկելի Հրէայն անոնց և Գրօն-տը-Պէօի դէմքը կ'նայէր՝ արդահատութեան նշան մը տեսնելու յուսով, բայց ասպետին կերպարանքը մի և նոյն սառ, տխուր, կէս հեգնական ժպիտը կ'յայտնէր՝ որ իր անողթութեան կարապետն եղեր էր։

Խոկ տարակինացուց վայրի աչերն՝ որ իրենց յօնից ներքև մահագոյժ ի՛գառնային և աւելի սպառնալից երևոյթ մը կ՚առնուին լրենց բիրը շրջապատող սպիտակ բոլորակէն, գաղտնի հաճոյք մը կ՚զգային մօտալուտ տեսարանէն. քան զժկամակութիւն որ անոր գործակատարներն են։ Այն ատեն հրէայն հրակէզ հնոցին նայեցաւ, որուն վրայ զինք պիտի տարածէին, և իր գահճին կողմէ գթութեան զգացում մը չտեսնելով՝ բոլորովին հաստատամտութիւնը կորցուց։

— Պիտի վճարեմ — ըսաւ նա — հազար արծաթ լիտրն, այսինքն — յարից նա պահ մը վարանելէն ետև — իմ եղբարցս սատարութեամբ պիտի վճարեմ. վասն զի՝ մուրացկանի պէս՝ պէտք է որ նախ մեր ժողովրդարանի դուռը կենամ խնդրած անլուր գումարդ լրացընելու համար։ Ե՞րբ և ո՞ր պէտք է յանձնել այն գումարը։

— Այս տեղ — պատասխանեց Գրօն-տը-Պէօ — պէտք է որ այս տեղ բերես և կշռես, այս ղնդանին սալարկին վրայ բերես համրես։ Մինթէ կարծես թէ պիտի ազատ թողում քեզ փրկանքդ ձեռք ձգելէն առաջ։

— Եւ ոմ պիտի երաշխաւորէ — ըսաւ Հրէայն — որ ազատութիւնս պիտի գանեմ փրկանքս վճարելէն ետև։

— Նորման ասպետի մը լոկ խօսքն, ասպիրատ վաշխառու — պատասխանեց Գրօն-տը-Պէօ։ — Նորման ազնուականի մը խօսքն աւելի մաքուր է քան թէ քու բոլոր ցեղիդ արծաթն ու ոսկին։

— Ներում կ՚խնդրեմ, ազնիւ լորտ — ըսաւ Իսահակ երկչոտութեամբ — բայց ինչու համար վստահիմ բոլորովին իմ վրայ բնաւ վստահութիւն չունեցող անձի մը։

— Վասն զի ուրիշ ճար ճարակ չունիս, Հրէայ — ըսաւ ասպետը խստիւ։ — Եթէ դու այս պահուս Եօրքի դանձատունդ լինէիր, և ես քեզնէ փոխառութիւն ա՞ռնել ուզէի, քեզի կ՚ընկնէր վճարման պայմանաժամն ու երաշխաւորութիւնն որոշել։ Այս տեղն ալ իմ դանձատունս է. այս տեղ քու վրադ առաւելութիւն ունիմ, և չպիտի խոնարհիմ ըսելու թէ ինչ պայմաններով քեզի ազատութիւնդ պիտի շնորհեմ։

Հրէայն 'ի սրտէ հառաչեց։ — Գոնէ — ըսաւ նա — իմ ազատութեան հետ շնորհէ նաև այս ընկերներուս ազատութիւնն որոց հետ կ՚ուղևորիմ։ Անոնք զիս անարդեցին իբրև Հրէայ, այլ սակայն իմ թշուառ վիճակիս կարեկից գտան, վասն զի՝ ինձ օգնելու համար ճանքան դաղար առին, իմ դժբաղդութեանս մէկ բաժինն անոնց ընկաւ, և սակից զատ՝ կրնան կերպով մ՚իմ փրկանքիս մասնակից լինիլ։

— Եթէ սա վարի գեղջուկ սաքսօններու վրայ է խօսքդ — ըսաւ Ֆրօն-տը-Պէօ — անոնց փրկանքը քուկինէդ տարբեր պայմաններու վրայ պիտի կայանայ։ Դու քու գործիդ նայէ, հրէայ, ահա քեզի կ'իմացընեմ, և ուրիշներուն գործին շատ մի խառնուիր։

— Ուրեմն — ըսաւ Իսահակ — մինակ իմ վիրաւոր բարեկամիս հետ աղատութիւնս պիտի գտնեմ։

— Մթթէ հաճոյ է երկու անգամ կրկնել Իսրայէլի որդւոյն — ըսաւ Ֆրօն-տը-Պէօ — որ մինակ իր անձնական գործերու խառնուի և միւսներունը մէկդի դնէ։ Քանի որ հաւանութիւն տուիր, կ'ենայ քեզ փրկանքդ հատուցանել, և որչափ հնար է շուտով։

— Սակայն մտիկ ըրէ — ըսաւ հրէայն — յանուն այն գումարին զոր կ'ուզես ստանալ՝ի՞նչ ես . . . ։» Այս տեղ խօսքը կտրեց, վայրագ նօրմանը զայրացընելու վախնալով։ Բայց Ֆրօն-տը-Պէօ խնդաց միայն և ինքն օգնեց որ հրէայն լեզուին տակն ունեցած խօսքն աւարտէ։

— Ի՞նչ ես իմ խղճիս, ըսել կ'ուզես անշուշտ, այնպէս չէ՞, Իսահակ։ Ազատօրէն խօսէ, ըսի քեզի որ խոհեմ մարդ եմ. կրնամ կորուստնողի մը յանդիմանութիւնները մտիկ ընել, թէև կորուստնողը հրէայ մը լինի։ Դու այդչափ համբերող չէիր, Իսահակ, երբ ծէք Ֆիցտոդրէլը դատի կոչեցիր, քեզ վաշխառու և տղրուկ անուանելուն, երբ քու անիրաւ պահանջումներդ գինքը մոխրի վրայ նստեցուցին։

— Թալմուտի վրայ կ'երդնում — ըսաւ հրէայն — որ ձեր արժանապատուութիւնը խաբեր են այս մասին։ Ֆիցտոդրէլ իր դաշոյնը քաշեր էր ինձի դէմ նոյն իսկ սենեկիս մէջ, երբ կ'աղերսէի որ իմ ստակս վճարէ։ Պայմանաժամն արդէն Զատկին վերջացեր էր։

— Իմ փոյթս չէ ըրածդ — ըսաւ Ֆրօն-տը-Պէօ — խնդիրը սա է թէ ե՞րբ պիտի ունենամ իմ վճարքս, ե՞րբ պիտի հատուցանես դրամներն, Իսահակ։

— Թոյլ տուր որ Ռեպեկա աղջիկս Եօրք երթայ, աղնիւ ասպետ, անցագրովդ — պատասխանեց Իսահակ — և որչափ որ հնար է ձիու և մարդու մը շուտով վերադառնալ, քու ստակդ . . . ։» Նոյն պահուն խորին հառաչ մ'արձակեց, բայց քանի մը բոպէ ետքը յարեց. — Ստակն այս գնդանին սալարկին վրայ պիտի համրեմ։

— Քու աղջի՞կդ — ըսաւ Ֆրօն-տը-Պէօ իբր զարմացած։ — Երկինն վկայ, Իսահակ, կ'փափաքէի որ այդ բանն առաջուց գիտնայի։ Կարծեցի թէ այն սեւայօն օրիորդը քու հարճդ է և զանի Պրայն տը Պուա Գիլպէրին տուի իբրև սպասուհի՝ հին ժամանակի նահապետանե-

քու և դիւցազուններու դրութեան համեմատ, որ այս տեսակ բաներու մէջ խիստ օգտաւէտ դասեր տուին մեզ։

Իսահակ այս անգութ լուրն իմանալով այնպիսի մռնչիւն մ՝արձակեց որ զնդանը թնռաց և երկու սարակինայուց այնչափ շփոթութիւն պատճառեց որ իրենց ձեռքէն հրէայն վար ձգեցին։ Այս ազատութենէ օգուտ քաղելով գետին ընկաւ և Ֆրօն-տը-Պէօյին ծնկաց փարելով՝ գոչեց.

— Ա՛ռ ինչ որ կ՝պահանջես, ասպետ, տաճնապատիկաւ եղի առ, եթէ կամիս, տուն տեղս փլէ, այո՛, դաշտինովդ սիրտս ծակէ, սա հնոցին մէջ տոչորէ զիս, բայց աղջիկս խնայէ, ապահովի և պատուովը յանձնէ ինձ։ Քանի որ կնիկէ ծներ ես, անզէն օրիորդի մը պատիւն անարատ պահէ։ Իմ հանգուցեալ Ռաքէլիս նկարն է, իր սիրոյն վեց գրաւականներէն յետինն է։ Միթէ այրի մարդ մ՝իր միակ մխիթարութենէ զրկել կ՝ուզէս։ Միթէ պիտի ստիպէս հայր մ՝որ իր մէկ հատիկ կենդանի գաւկին համար ուխտ ընէ որ իր հանգուցեալ մօրը քով երթայ, իր հարց գերեզմանին մէջ։

— Ի՛փափաքէի — ըսաւ նօրմանը փոքր ինչ մեղմելով — որ կանխաւ գիտնայի այդ բանը։ Կարծէի թէ քու ձեռդ իր ստակի տոպրակներէն զատ բան մը չսիրեր։

— Այդպէս զէշ մի մտածեր մեր վրայ, թէև հրէայ ենք — ըսաւ Իսահակ՝ այս երեւոյթական համակրութենէ օգուտ քաղելու շտապելով — հալածական աղուէսը, կտտահար վայրի կատուն իսկ իրենց կորիւնները կ՝սիրեն։

— Թո՛ղ այդպէս լինի — ըսաւ Ֆրօն-տը-Պէօ — այսուհետև պիտի հաւատամ, Իսահակ, քու վրադ խղճալով, թէև հիմակ օգուտ չունի, չեմ կրնար եղածն կամ հետևելիքն արգիլել. ես խօսք տուեր եմ իմ զինակից եղբօրս, և տաս հրէի և հրէուհիի համար անգամ խօսքս ետ չեմ կարող առնուլ։ Սակայն ինչո՞ւ համար կ՝կարծես թէ աղջկանդ շարիք կրնայ հասնիլ, եթէ Պուա-Կիլպէրի կողոպուտն անգամ դառնայ։

— Պիտի լինի՛, պէտք է լինի՛ — գոչեց Իսահակ ձեռներն անձկութեամբ ոլորելով — ե՞րբ արդեօք տաճարական ասպետները մարդոց անպիտութիւն և կանանց անպատուութիւն վերապահած չեն։

— Անհաւատ շուն — գոչեց Ֆրօն-տը-Պէօ շողշողուն աչերով, և թերևս ուրախանալով որ պատճառանք մը գտաւ բարկանալու — մի հայհոյեր Սիօնի տաճարականաց սուրբ ուխտն, այլ միայն խոստացած

միրկանքդ վճարելու հոգ տար, թէ ոչ քու հրէի կոկորդդ պիտի պատռեմ։

— Ապիրատ և աւազակ — ըսաւ հրէայն՝ կատղութեամբ մ'որ թէև անկոր, չէր կարող զսպել, բռնաբէր ասպետին երեսին տալով նոխատինքը — քեզի ստակ մը չպիտի տամ, ոչ, թանկ մը չպիտի վճարեմ, եթէ աղջիկս անվնաս և պատռուած ինձի չդարձընես։

— Միթէ խենդեցար, իսրայելացի — ըսաւ նորմանը վերսորէն։ — Միթէ քու միսդ և արիւնդ հրանուտ երկաթին և եռացող եղին դէմ դեղ մ'ունիս։

— Փոյթս չէ — ըսաւ հրէայն՝ իր հայրական սիրովը յուսահատ։ — Ինչ որ կ'ուզես ըրէ։ Իմ աղջիկս՝ իմ մարմինս, իմ արիւնս է, և հաղարապատիկ աւելի թանկագին է ինձի համար քան այս անդամներն որոց քու անողթութեամբդ կ'ապառնաս։ Քեզի դրամ չպիտի տամ, միայն թէ հալեցընելով կոկորդէդ վար թափեմ։ Ոչ, քեզի փուլ մ'անդամ չպիտի տամ, նաղովրեցի՛, եթէ գեհենին մէջ իսկ այրիս, որուն անապորոյն կեանքդ արժանի է։ Ու իմ կեանքս, եթէ կամիս, և դնա ըսէ թէ ինչպէս հրէայ մը տանջանաց մէջ անդամ, քրիստոնէի մը դիմադրաւ կեցաւ։

— Պիտի տեսնենք — ըսաւ Ֆրոն-տը-Պէօ — վասն զի, ահա կ'երդնումտուրը խաչին վրայ, որ քու անիծեալ ցեղիդ անպոռնելի է, որ կրակին և պողպատին վրայ պիտի տանջուիս։ Գերիներ, մերկացուցէք զանի, և երկաթէ ձողերուն կապեցէք։

Թէև ծեր մարդը տկարութեամբ կ'մաքառէր, սակայն գերիներն արդէն անոր վրայէն զգեստները հաներ էին և բոլորովին պիտի մերկացընէին, երբ շեփորի մը շունչը՝ սպարիապէն դուրս երկու անգամ լսուելով, զնդանին խորերն իսկ հնչեց, և պահ մ'ետքն ուժգին ձայներ եկան և Ռէժինալտ Ֆրոն-տը-Պէօն կոչեցին։ Ասպետն իր այս դիւական գրաղմունքին մէջ տեսնուիլ չուզելով, նշան ըրաւ գերիներուն որ Խաչակը հագուեցընեն, և իր սպասաւորներովը զնդանէն ելնելով՝ թողուց հրէայն շնորհակալ լինիլ Աստուծոյ իր ազատութեան համար՝ եթէ իր անձնական շահն աւելի կ'մտածէր, կամ լալ իր աղջկան գերութեան կամ հաւանական վիճակին վրայ, եթէ իր հայրական զգացումներն աւելի բուռն էին։

ԳԼՈՒԽ ԻԳ

Այժ, թէ ոգի սրաշարժ բանիցդ իմ անուշ
Քեզ մեղմագոյն չըգօրեն բարք ազգել քնքուշ,
Սրխս ծայրով՝ իբրև գինւոր, ա՛ռնամեմ քեզ սէր,
Սիրոյ ընդդէմ քեզ ոչ սիրեմ միշտ անհրաւէր։

ՎԵՐՈՆԱՑԻ ՍԵՊՈՒՀԸ

Օրիորդ Ռովէնայի տրուած սենեակը շքեղապարդ՝ այլ անկանոն էր. իսկ անոր այս սենեակը յատկացընելը կրնար ակնածութեան մասնաւոր նշան մը համարուիլ, որմէ միւս գերիները զուրկ մնացեր էին։ Բայց Ֆրօն-տը-Պէօյի կինն՝ որուն համար 'ի սկզբան պատրաստուած էր այս սենեակն, երկար ժամանակէ վեր մեռեր էր, և անհոգութենէ ու հնութենէ քայքայեր էին այն քանի մը զարդերն որով իր յատուկ ընտրողութիւնն նոյն խուլը յարդարեր էր։ Շատ տեղ՝ պատերուն երկայնքը կախուեր էին օթոցներն, և տեղ տեղ ալ արևուն տապէն թոշներ մաշեր էին և կամ՝ ժամանակէն աւերեր էին և պատռեր։ Սակայն որչափ որ քայքայուն՝ նոյն սենեակը սաքսօն ժառանգուհին ընդունելու՝ դղեկին ամենէն յարմարը դատուեր էր. և ահա այն տեղ առանձին թոռեր էին Ռովէնան որ իր ճակատագրին վրայ մտածէ, մինչև որ այս եղեռական գործին գերասաններն՝ իւրաքանչիւրին խաղալիք դերն՝ իրենց մէջ բաժնեն։ Այս կարդադրութիւնը՝ Ֆրօն-տը-Պէօյի, տը Պրէսլիի և տաճարականին խորհրդովը կատարուեր էր. այս խորհրդին մէջ երկար ու տաք վիճաբանութիւն մ'եղաւ, որուն նպատակն որոշել էր այն օգուտներն՝ որմէ՝ սոյն յանդուգն ձեռնարկութեան մէն մի դաւակիցն իր յատուկ շահուն համար մեծագոյն բաժին մը ստանալու կ'ձգտէր, և 'ի վերջէ իրենց հէք բանտարներուն ճակատագիրը վճռեցին։

Ուստի կէսօրի մօտ էր՝ երբ տը Պրէսլի, որուն օգտին համար նախ այս արշաւանքը կազմեր էին, ներկայացաւ, որպէս զի օրիորդ Ռովէնայի տրտին և կալուածոց վրայ ունեցած խորհուրդներն 'ի գործ դնէ։

Բոլոր ժամանակը դաւակիցներուն հետ խորհուրդ ընելով անցուց տը Պրէսլի, վասն զի բաւական պարապոյ ժամեր դատաւ նոյն ժամանակի տարած ամէն պճնասիրութեամբ զարդարուելու։ Իր կանաչ բաճկոնն ու դիմակը հաներ մէկդի նետեր էր։ Իր երկայն և առատ մազերն

այնպէս մը հիւսուած էին որ վայելչագեղ կ'ծածանէին մուշտակազարդ մերարկուին վրայ։ Իր մօրուսը նոր ածիլեր էր. իր զգեստը մինչև ծնկին մէջտեղ կ'ինջնէր, և այն գօտին որով գայն կապեր էր, և որմէ միանգամայն իր ծանր թուրը կախեր էր, ոսկի զարդերով բանուած ու քանդակուած էր։ Արդէն խօսեր ենք նոյն ատենուան մուճակներու տարակերպութեան մասին վրայ. Մօրիս տը Պրէսիին հագած մուճակներուն ծայրերն այլանդակութեան կողմէ կրնային մրցանակը շահիլ ամենէն տարօրինակ մուճակներու վրայ, վասն զի դարձած ոլորած էին խոյի մ'եղջիւրներուն պէս։ Այս էր ահա պչրասէր մարդու մը զարդարանքն այն ժամանակ, և այս պարագայիս մէջ՝ իր հագուստին նոր փայլ մը կ'տային ասպետին գեղանի կերպարանն և ազնիւ ընթացքը. վասն զի իր կերպերն ոչ միայն պալատականի մը շնորհն այլև զինուորի մը համարձակութիւնն ունէին։

Պրէսի՝ Ռովէնան բարևեց իր թաւշէ գդակը հանելով՝ ոսկի գնդասեղով մը զարդարուն՝ որ Ս. Միքայէլը կ'ներկայացրնէր Բելիարն ոտնակոխ ըրած։ Նոյն պահուն՝ զօրիորդ Ռովէնան հրաւիրեց մեղմիկ որ աթոռը նստի, և որովհետև նա կանգուն կ'կենար, ասպետն իր աջ ձեռքի թաթպանը հանեց և շարժում մ'ըրաւ որ օրիորդը դէպ 'ի աթոռն առաջնորդէ։ Բայց Ռովէնա անոր հրաւէրը շարժումով մը մերժեց և ըսաւ.

— Տէր ասպետ, եթէ ես իմ բանտապահիս առջև կ'պտուիմ, և պարագաները կ'յորդորեն զիս այսպէս խորհելու, կ'վայլէ որ իր բանտաւորը կանգուն մնայ մինչև որ իր դատապարտութեան վճիռն իմանայ։

— Աւաղ, գեղանի Ռովէնա — պատասխանեց տը Պրէսի — դու քու կալանաւորիդ առջևն ես, և չէ թէ բանտապահիդ. և քու սիրուն աչերէդ պիտի ընդունի տը Պրէսի այն դատավճիռը զոր դու իրմէ կ'սպասես։

— Քեզ չեմ ճանչեր, պարոն — ըսաւ տիկինն ընդվզելով հպարտութեամբ երբ իր ատիճանին և գեղութեան եղած նախատինքը տեսաւ — քեզ չեմ ճանչեր, և այն լրբենի ընտանութիւնն որով վիպասանի լեզու կ'բանեցրնես ինձի հետ՝ աւազակի մը բռնաբարութիւնը չէ կարող անբասիր հանել։

— Գեղանի Ռովէնա — պատասխանեց տը Պրէսի մի և նոյն ձայնով — ինքզինքիդ, քու հրապուրելի գեղեցկութեանդ պարտաւոր ես վերագրել ինչ որ ըրի, ինչ որ կատարեցի՝ իբրև իմ սրտիս վեհասպետուհին՝

իմ աչացս մագնիսն ընտրած անձիս վայել ակնածութեան սահմանէն դուրս։

— Վերսային կ'ըսեմ, պարոն ասպետ, որ քեզ չեմ ճանչեր, և երբէք՝ մարդ մ'որ շղթայ և մորակ կրելու իրաւունք ունի, պէտք չէ որ իր ներկայութեամբը թշնամանէ անպաշտպան կին մը։

— Եթէ անծանօթ եմ քեզի — ըսաւ տը Պրէսի — այս բանս իրաւի դժբաղդութիւն մ'է իմ համար, սակայն թոյլատուր ինձ յուսալ որ Պրէսիի անունն արդէն հռչակ առած է քու առջև, երբ վիսպասաններ և քարոզներ ասպետութեան արիութիւնները՝ թէ մրցարանին և թէ ճակատամարտին մէջ գովելու ելան։

— Ուրեմն, թող որ վիսպասաններն ու քարոզներն ընեն քու ներբողդ, տէր ասպետ — պատասխանեց Ռովէնա — քանի որ անոնց բերանին աւելի կ'վայլէ այն քան թէ քոյդ, և ըսէ ինձ թէ անոնցմէ ո՞վ պիտի հռչակէ իր երդերուն կամ տարեգրութեան մէջ այս գիշերուան նշանաւոր յաղթանակը, քանի մը վեհերոտ գեղացիներու հետ ուղևորող ծերունիի մը վրայ տարուած յաղթանակ մը, ո՞վ պիտի հռչակէ քու կողոպուտդ, տարաբաղդ օրիորդս, որ աւազակի մը գղեակը կ'բերուիմ իմ կամաց հակառակ։

— Դու անիրաւ ես, օրիորդ Ռովէնա — ըսաւ ասպետը՝ շփոթութենէն իր շրթերը խածնելով և այնպիսի ձայն մ'առնելով որ իրեն աւելի բնական էր քան 'ի սկզբան կեղծած մարդաւարութիւնը — դու տուփանքէ աղատ, չես ուզեր ուրիշի մը մոլեգնութեան ներողամիտ գտնուիլ, թէև այն՝ քու գեղեցկութեանդ արդիւնքն է։

— Կ'աղաչեմ քեզ, տէր ասպետ — ըսաւ Ռովէնա — չգործածել լեզու մ'որ սովորաբար թափառիկ վիսպասաններու յատուկ է. անվայելէ այդ ոճն ասպետներու և ազնուականներու բերանին մէջ։ Ի հարկէ կ'ստիպես զիս նստելու, վասն զի այնպիսի գռեհիկ խօսակցութեան նիւթ մը կ'բանաս որ յետին մարդն անգամ այդ պաշարն ունի, և մինչև Ծնունդ կրնայ տևել։

— Հպարտ օրիորդ — ըսաւ տը Պրէսի՝ բարկանալով որ իր պչրասէր ոճովը լոկ արհամարհանք կ'ընդունի — հպարտ օրիորդ, զոռոզութեանդ զոռոզութեամբ կրնամ պատասխանել. գիտցիր ուրեմն, որ քու աստիճանիդ խիստ վայելի երդով քեզի մնանալու փափաքներս մէջ բերի։ Բայց կ'երևի թէ լաւ ևս կ'համարիս որ աղեղով և տապարով սիրարանեն քու հետդ քան թէ քաղաքավար խօսքերով և մարդաւարութեան ոճով։

— Երբ մարդասիրութեան ոգին — վրայ բերաւ Բոլէնա — կոչտ գործեր աքօղելու համար կ՚գործածուի, ասպետի մը գօտին կ՚նմանի որ ասպիրատ գեղջուկի մը մէջքը կ՚կապէ։ Ձեմ զարմանար թէ եթէ բռնաբռնակ դիրքդ քեզ թերևս կ՚նեղէր, քու պատուոյդ համար լաւագոյն էր որ աւաղակի մը ձայնն ու լեզուն պահէիր, փոխանակ՝ ազնուականի մը շինուքի ոգին և կերպերուն ներքև՝ խորհուրդներդ վարագուրելու։

— Լաւ խորհուրդ մը կ՚տաս ինձ, տիկին — ըսաւ նօրմանն — և ահա՝ յանդուգն գործեր արդարացընող յանդուգն լեզուով կ՚ըսեմ քեզի որ այս գղեկէն չպիտի ելնես, կամ պիտի անկից մեկնիս իբրև Մօրիս տը Պրէսիի կինը։ Մոլոր չեմ իմ ձեռնարկութեանցս մէջ վրիպելու, և նօրման իշխան մը պէտք չունի իր ընթացքը խղճահարութեամբ ամբաստիր հանել սաքսօն կնոջ մ՚առջև՝ որուն մեծ պատիւ կ՚ընէ զինքը կնութեան ուզելովը։ Դու հպարտ ես, Բոլէնա, և իմ կինս լինելու յարմարագոյն անձ մը։ Ուրիշ ի՞նչ միջոցներով կարող պիտի լինիս հասնիլ փառաց և իշխանական աստիճանի բայց եթէ իմ միութեամբս։ Ի՞նչպէս պիտի զօրես ազատիլ սահմանափակ անշուք անուակէ մ՚ուր սաքսոնները կ՚բնակին խուզերու հետ՝ որ իրենց միակ հարստութիւնն են, որպէս զի քեզի պատկան տեղդ բռնես, որպէս զի ըստ արժանւոյն պատիւ ստանաս, ինչպէս որ պիտի ստանաս Անկլիոյ գեղեցկութեան կողմէ ազնուագոյն և զօրութեան կողմէ շքեղագոյն ընկերութեան մը մէջ։

— Պարոն ասպետ — պատասխանեց Բոլէնա, այն անուակը զոր կ՚արհամարհես, մանկութենէս վեր իմ պատսպարանս եղած է, և հաւատա ինձ, երբ անկէ հեռանամ, եթէ երբէք այս օրս հասնի, այնպիսի անձի մը հետ պիտի հեռանամ որ գիտնայ յարգել այն բնակութիւնն ու սովորութիւններն որոց մէջ կրթուեր եմ։

— Օրիորդ, խօսքիդ իմաստը կ՚դուշակեմ — պատասխանեց տը Պրէսի — թէև դու կարծես թէ քու լեզուդ շատ մութ է իմ իմացականութեանս համար։ Բայց մի երդվիր երբէք որ Առիւծասիրտն Ռիշարտ կարող պիտի լինի երբէք իր աթոռն ելնելու, և ոչ իսկ Վիլֆրիտ Իվանհօէ, իր մտերիմը, պիտի կարենայ երբէք առաջնորդել քեզ այն աթոռն՝ իբրև իր նշանածն ընդունելու համար։ Ուրիշ հետամուտ մը թերևս նախանձ ղդար այս փափուկ ինդիրը յուզելով, սակայն իմ հաստատ դիտաւորութիւնս չկրնար փոխուիլ այնպիսի տղայական և անյոյս սէրէ մը։ Ուստի քաջալերեցիր, օրիորդ, որ այն ոսոխս իմ ճանկիս ներքև է, և իմ կամքէս կախում՝ ունի Գրօն-տը-Պէօյի գղեկին

մէջ զանուիլն երևան հանելու, այն ահարկու ասպետին՝ որուն նախ անձն աւելի աղէտաբեր կրնայ լինիլ քան իմն։

— Վիլֆրիտ այս գղեկիս մէջ է — ըսաւ Ռոմէնա արհամարհոտ կերպով։ — Այս այնքան ճշմարիտ՝ որչափ ճշմարիտ է որ Ֆրօն-տը-Պէօ անոր ոսոխն է։

Տը Պրէսի պահ մ՚անոր երեսը նայեցաւ ակնապիշ։ — Միթէ իրօք անտեղեակ էիր այս բանիս — ըսաւ անոր։ — Ուրեմն չգիտէիր որ Վիլֆրիտ Իվանօէ հրէին դեսպակին մէջ կ՚ուղևորէր, արդարև յարմար կառք մ՚է խաչակրի մ՚որուն արիական բազուկը տուրք գերեզմանին պիտի տիրէր։ — Եւ տը Պրէսի քամահանօք ծիծաղիլ սկսաւ։

— Եւ եթէ այս տեղ է — հարցուց Ռոմէնա՝ անտարբերութեան ձայն մ՚առնելու ճիգնելով, թէև անկարող էր իր ներքին ահ ու դողն և յուզմունքը զսպելու — եթէ այս տեղ է, ինչպէս կրնայ Ֆրօն-տը-Պէօյի ոսոխը լինիլնա, կամ կարճառև բանտարկութենէ և պատուաւոր փրկանքէ զատ՝ ինչ բանէ կրնայ վախնալ, ասպետութեան օրինաց համեմատ։

— Ռոմէնա — ըսաւ տը Պրէսի — արդեօք դու ևս քու սեռիդ հասարակ եղած սխալմունքի մէջ ընկած ես, որ կարծէ թէ ձեր գեղեցկութենէ զատ՝ ոսոխութիւն գրգռող բան մը չկայ։ Միթէ չգիտես որ փառասիրութեան և հարստութեան նախանձ մը կայ, ինչպէս նաև սիրոյ, և այն մեր հիւրընկալ Ֆրօն-տը-Պէօն՝ իր ճանքուն վրայէն պիտի վանէ այն որ Իվանօէի գեղեցիկ պարոնութիւնն ստանալու իր առջև խոչընդոտներ կ՚հանէ, և այնքան փութով, եռանդով և անխղճութեամբ որպէս թէ այն մարդը կապուտակն օրիորդի մը կողմէ իրեն նախադաս համարուած լինէր։ Բայց ժպտէ միայն իմ սիրոյս, օրիորդ, և վիրաւոր ախոյեանն ազատ կ՚մնայ Ֆրօն-տը-Պէօյի վրէժխնդրութենէն, ապա թէ ոչ պիտի լաս Իվանօէի վրայ, վասն զի այն անձին ձեռքն է որ երբէք՝ արդահատութեան զգացում մը չէ ունեցած։

— Ազատէ զանի, Ի սէր Աստուծոյ — ըսաւ Ռոմէնա, որ իր հաստատամտութիւնը կորցոյց իր սիրահարին մօտալուտ վտանգին համար զգացած սարսափէն։

— Կարող եմ, կ՚կամիմ, այդ է իմ գիտաւորութիւնս — ըսաւ տը Պրէսի — վասն զի, եթէ Ռոմէնա կ՚հաւանի տը Պրէսիին նշանածը դառնալ, ոչ պիտի համարձակի իր ազգականին, իր խնամակալին որդւոյն, իր մանկութեան բարեկամին վրայ ձեռք երկընցընել։ Բայց քաւ սէրդ իմ պաշտպանութեանս վարձքը պիտի լինի։ Ես այնքան վի-

պատճառական յիմար մը չեմ՝ այն ուարդուն զօրավէրդ դալ կամ թշուառութիւնն արդիլել որ թերևս օրին մէկն անբնիկնելի քարոյն մը կ՝դառնայ քու և իմ բաղձանացս մէջ։ Գործածէ քու ազդեցութիւնդ իմ վրայ, 'ի նպաստ Իվանոէի, և Հաւասարի եղիր որ կ՝ազատի, մերժէ զայն գործածելու, Իվանոէ այն ատեն կ՝մեռնի, և դու ևս ազատութիւնդ չպիտի դանես։

— Քու լեզուդ — պատասխանեց Ռոմէնա — իր անտարբեր անկեղծութեան հետ այնպիսի բան մ՝ունի որ կարծես թէ կարելի չէ միաբանիլ թագուն պահած սպառնալեաց հետ։ Չեմ կարող հաւատալ որ այնքան անօրէն լինի գիտաւորութիւնդ կամ իշխանութիւնդ այնքան մեծ։

— Ուրեմն լինիցիդ խաբէ այդ կարծիքով — ըսաւ ոչ Պրէսի — մինչև որ ժամանակը սխալմունքդ վերջ հանէ։ Սիրահարդ վիրաւոր կը դանուի այս դղեկիս մէջ, քու նախասլատիւ սիրահարդ։ Պատանէշ մը կայ Գրօն–որը–Պէօյի և Գրօն–որը–Պէօյի փոտասիրութենէ և գեղեցկութենէ աւելի շատ փափաքած բանին մէջ։ Դաշոյնի հարուած մը կամ նետ մը բաւական է ամէն գիմադրութիւն 'ի սպառ ջնջելու։ Այս բաւական չէ. եթէ Գրօն–որը–Պէօ այսպիսի ակներև յանցանք մ՝արդարացնելու երևնչի, բժիշկը հակառակ ըսելի մը կ՝ասայ հիւանդին, ապաստարը կամ հիւանդապահը մի միայն անոր գլխին տակէն բարձը կ՝վերցնէ, և Ալիցիա՝ իր ներկայ ցաւագար վիճակին մէջ՝ արևանց կրոսեամբ պիտի մեռնի անշուշտ . . . Նոյնպէս Սէորիկ . . .։

— Նոյնպէս Սէորիկ — գոչեց Ռոմէնա նոյն խօսքը կրկնելով — իմ աղնիւ, վեհանձն խնամակալս. իր վիճակը մոռնալուս համար ինձ հասած աղէտից արժանի կ՝համարուիմ, նոյն իսկ իր արդարն նկատմամբ։

— Սէորիկին Ճակատագիրն ալ քու որոշումդ կախում մ՝ունի — ըսաւ ոչ Պրէսի, և կ՝թողում քեզ մտածելու։

Ռոմէնա՝ անդրդուելի արիութեամբ՝ մինչև ցայն կէտ իր դերը կատարեր էր այս տաժանելի պարագային մէջ, վասն զի չէր կարծեր որ վտանգն այնքան ծանր ու մօտալուտ լինի։ Իր բնաւորութիւնը՝ գիմադէմներու նայելով՝ յատուկ էր խարտեշ անձերու, այսինքն վեհերոտ և հանդարտ, բայց Ռոմէնայի բնաւորն այլայլեր ու կերպով մ՝իր դատապարտութեան բերմունքէն պնդացեր էր։ Որովհետև տարբեր էր տեսնել որ ամենուն կամքը, նոյն իսկ Սէորիկին (որ բաւական բռնապետ էր ուրիշներու հետ) իր կամաց առջև կ՝գլխնդրին, տեսակ մը քա-

Ջուլիան, ինքն իր վրայ վստահութիւն մը ստացեր էր, որ մեր բոլորսիրտը պտնուող անձերու կողմէ տրուած սովորական և անվրդով հպատակութենէ կ՚ծագի։ Հաղիւ կրնար երևակայել թէ մարդ մը կարող է իր կամաց հակառակիլ, նա մանաւանդ՝ կատարեալ արհամարհութեամբ հեռը վարուիլ։

Հեռևապէս իր պտուղ ու տիրապետական սովորոյթը շինովի բնաւորութիւն մ՚էր՝ որով իրեն բնականը կ՚ծածկէր, և զոր չկրցաւ պահել երբ իր աչքը բացուեցան իրեն, նոյնպէս իր սիրահարին և խնամակալին ապառնայող մեծ վտանգին վրայ, իսկ երբ նկատեց որ իր կամքն՝ որուն ամենաթեթև յայտնութիւնը յարգ և ուշադրութիւն աղդելու սովոր էր, ընդդիմութիւն կ՚գտնէ ուժեղ, վէս և անվեհեր բնաւորութեան տէր մարդու մը կողմէ որ իր գրկից առաւելութիւնները կ՚ճանչէր և անկից օգտիլ կ՚ուզէր, այն ատեն Ռոմէնա այս մարդուն առջև խոնարհեցաւ։

Իր աչերը չորս կողմն ուծելէն ետև՝ որպէս թէ օգնութիւն մը կ՚ըսպասէր որ տեղ մը չէր գտնուեր, և քանի մ՚ընդհատ բացագանչութիւններ ընելէն ետև՝ ձեռները դէպ յերկին վերուց և աւելի ևս իր գայրոյթն ու վիշտը զսպել չկարենալով՝ սկսաւ յորդ արտասուք թափել։ Անհնար էր այս գեղանի էակին այնպիսի ծանր վիճակի մը մէջ տեսնել առանց համակրութեան, և տը Պրէսի անզգայ չմնաց, թէև աւելի շփոթած կ՚երևէր քան այլայլած։ Արդարև՝ տը Պրէսի սիրոյ մասին շատ խօսեր էր և չէր կրնար կասիլ, և սակայն Ռոմէնայի արդի վիճակին մէջ, չէր կրնար նաև անոր վրայ ներգործել ոչ փաստերով և ոչ ապառնալեօք։ Տը Պրէսի վեր վար սկսաւ քալել սրահին մէջ, մերթ յորդոր կարդալով ընդունայն ահաբեկ օրիորդին որ հանդարտի, մերթ իր բռնելիք ընթացքին վրայ վարանելով։

— Եթէ — կ՚ըսէր մտովին — թողում որ այս վշտահար աղջկան լացերը սիրտս շարժեն, ի՞նչպիսի շահիմ եթէ ոչ այն անուշ յոյսերուս կորուստն, որոց համար այնքան վտանգ և ճօհն իշխանին և իր զուարթ ընկերներուն կատակները կրեցի։ Եւ սակայն — կ՚ըսէր իւրովի — կ՚զգամ՝ որ այս դեղը խաղալու յարմար չեմ։ Չեմ կարող սառն աչքը նայիլ այս վշտաբեկ դէմքն և լալագին աչերն։ Երանի՜ թէ իր նախկին գուռզութիւնը պահէր, կամ թէ ես ևս աւելի դաժան և Գրօն-տը-Պէօյի սրտին պէս կարծր սիրտ մ՚ունենայի։

Այս խորհուրդներով յուզուած՝ տը Պրէսի յորդորեց միայն տարաբաղդ Ռոմէնան սփոփելու, և հաւատաց թէ բնաւ իրաւունք չունի

առ այժմ այն ծայրայեղ յուսահատութեան մէջ ընկղմելու։ Սակայն այս միսիթարութեան պաշտօնը կատարելու առեն տը Պրէսի կանկ առաւ փողարին հեռաւոր շունդն՝ որոտընդոստ և քաջահնչիւն, ըսելով, Ճիշտ այն միջոցին որ դղեկին մուս բնիկներուն ալ տարնապ աղդեր և անոնց աղահութեան և ցոփութեան զանազան խորհուրդներն ընդհատեր էր։ Ամենէն աւելի թերևս տը Պրէսի այս ընդհատման վրայ չցաւեցաւ, վասն զի օրիորդ Բովէնայի հետ ունեցած խօսակցութիւնն այն ասպիճանի հասեր էր որ իրեն դժուարին կ'երևէր թէ շարունակել և թէ թողուլ իր ձեռնարկութիւնը։

Իսկ աստանօր կարևոր կ'համարինք վէպի մը թեթև պատահարներէն աւելի հաստատ ապացոյցներ մէջ բերել՝ ընթերցողին առջև մը նկարագրած բարուց և վարուց տխուր պատկերն արդարացընելու համար։ Արդարև վշտալի է դիտել որ այն արիասիրտ սեպուհներն՝ որոց դիմակալութեամբը թագաւորական դահին՝ Անկլիոյ աղատութիւնները ծնունդ առին, այնպիսի ահարկու բռնաւոր եղած լինին, և մեղապարտ դտնուած լինին ոչ միայն անկլիական՝ այլ նաև ընութեան և մարդկութեան օրինաց դէմ։ Բայց, աւաղ, բաւ է մեզ քաղել միայն բազմարդիւն Հէնրի պատմաբանին շատ մը հատուածներէն մին զոր ժամանակակից պատմիչներէ հաւաքեր է, ցոյց տալու համար որ նոյն իսկ երևակայութիւնը հաղիւ ուրեմն կարող է հասնիլ նոյն ժամանակի սոսկալի գործերու տխուր իրականութեան։

Սոփոնիսպա պրոբեֆրոնիսպա հեղինակին տուած նկարագիրն՝ Սոփիէն թագաւորին օրովը՝ նորման ազնուականներու և աւատապետներու կողմէ գործուած անզթութեանց մասին, զօրաւոր ապացոյց մ'է այն անօրէնութեանց որոց կ'ձեռնարկէին անոնք երբ կրիւք վառուած էին։

«Թշուառ ժողովուրդը սոսկալի կերպով կ'կեղեքէին անոր դղեակներ շինել տալով, և երբ շինուեցան՝ անօրէն մարդերով, կամ՝ լաւ ևս սատաններով զանոնք լեցուցին, որ թէ այր և թէ կին կ'յափշտակէին՝ երբ կասկածէին որ սակ ունին, բանտը կ'նետէին և մարտիրոսներու չկրած տանջանքով զանոնք կ'չարչարէին. էր որ աղմի մէջ կ'խեղդէին, էր որ գլխիվայր կ'կախէին՝ անոնց ներքևը հնոց վառելով. սակայն թշուառներու դլուխը կ'սեղմէին հանպուցաւոր լարերով մինչև որ իրենց ըղեղը թափանցին. մաս մ'ալ օձերով, իժերով և կարիճներով լեցուն գնդաններու մէջ կ'նետէին։» Բայց անզթութիւն ըրած կ'լինինք ընթերցողին առջև դնելով այս նկարագրին մնացած կտորը։*

*Հէնրի պատմութիւն. տիպ 1805. հատոր Ի, երես 346։

Տիրապետութեան դառնագոյն պտուղներէն իբրև մէկ ուրիշ օրինակ որ թերևս նմանը չունի, կրնանք յիշել, թէ Մաթիլդա իշխանուհին, թէև Սկովտիոյ թագաւորին դուստրն, ապա Անկլիոյ թագուհի Էտկար Էթլինի քեռաղջիկն, և Գերմանիոյ կայսրուհւոյն մայրն, այսինքն թագաւորներու աղջիկը, կինն և մայրը, սակայն երբ առաջին անգամ Անկլիա եկաւ դաստիարակուելու համար, միանձնուհի դառնալ, որպէս զի այս կերպով միայն կարող լինի նօրման աղնուականներու վարար հեռամտութենէ ազատելու ընդ միշտ։ Այս պատճառը մէջ բերաւ իբրև արդարացում Անկլիոյ կղերական մեծ ժողովի մ՝առջև, իբրև միակ գրգիռ կոյս լինելուն։ Սրբազումար ժողովն իշխանուհւոյն առարկութիւնը՝ նոյնպէս մէջ բերած պարագայից ստուգութիւնն ընդունեց, և այսպէս անուրանալի և նշանաւոր վկայութիւն մը տուած եղաւ այն ապաշնորհ ցոփութեան որով նոյն ժամանակն աղաղատուած էր։ Ամենուն յայտնի իրողութիւն մ՝էր, կ՝ըսէին, թէ՝ Վիլյէմ թագաւորին աշխարհակալութենէ ետքն՝ իր նօրման կուսակիցներն՝ այնպիսի երևելի յաղթութենէ մը բորբոքելով, իրենց մոլեգին կիրքը միայն իբրև օրէնք ճանչցան, և ոչ միայն նուաճեալ ռաքսօններու հողերն ու կալուածները կողոպտեցին, այլև անսանձ անառակութեամբ իրենց կիներն ու աղջիկներն ալ անպատուեցին, և այս պատճառաւ տան տիկիններ և նորատի առհմիկ օրիորդներ սովոր էին կուսութեան քօղն առնուլ և վանատուններն ապաստ էն փնտռել, չէ թէ կրօնաւորութեան կոչում ունենալնուն, այլ միայն իրենց պատիւը մարդուն անզուսպ անօրէնութենէ պահպանելու համար։

Ահա այնչափ շուայտ էին այն ժամանակներն, որ՝ ինչպէս Խոմէր կ՝պատմէ, եկեղեցականաց ժողովէն դատապարտութեան արժանի եղան. իսկ մենք աւելորդ կ՝համարինք այլ ևս խօսիլ մեր մանր նկարագրած տեսարաններուն ճշտութիւնը հաստատելու մտօք, թէև ասոնց աւելի ուրիշնոր պարագաներ ալ պիտի յիշատակենք։ Վարուրի ձեռագրին անվաւեր հեղինակութեան վրայ յենլով։

ԳԼՈՒԽ ԻԴ

Ինչպէս առիւծն իր մատակին՝ և ես անոր պիտի սիրահարիմ։
ՏՈՒԿԼԱՍ

Մինչդեռ մեր արդէն նկարագրած տեսարանները դղեկին միւս մասին մէջ կ'անցնէին, Ռեպեկա Հրէայ օրիորդը հեռաւոր և մենակաց աշտարակի մը մէջ իրեն տրուելիք վճռոյն կ'սպասէր։ Իր երկու ծպտեալ տաւանդիչներու ձեռօք այն աշտարակը տարուեր էր, և երբ փոքրիկ սենեկին մէջ մնաց՝ ինքզինք պատաւ վհուկի մ'առջև դտաւ որ Սաքսոնեան երգ մը կ'մրմնար՝ որպէս թէ դեռնի վրայ իր իլին գծած բոլորակի պարին ձայնակցիլ կ'ուզէր։ Պառաւ վհուկն իր գլուխը վերուց երբ Ռեպեկա ներս մտաւ և դեղանի Հրէայ օրիորդը դիտեց այնպիսի նենդոտ նախանձով զոր սովորաբար կ'տածեն չարակամ տգեղ պառաւներ գեղանի և նորատի օրիորդներու դէմ։

— Պէտք է որ եկնես երթաս դու, տան պառաւ ծղրիդն — ըսաւ աղեղնաւորներէն մին — մեր ալնիւ տէրն այսպէս կ'հրամայէ։ Հարկ է որ այս սենեկէն հեռանաս և գեղագոյն հիւրի մը տաս։

— Այո՛ — քրտնջեց վհուկն — ահա այսպէս կ'վարձատրուին ծառայութիւններն։ Եղաւ ատեն մ'երբ իմ կողմէս խօսք մը միայն բաւական էր ձեր լաւագոյն զինուորները ձիէն և պաշտօնէ վար նետել, և հիմակ պէտք է որ ուրք եկնեմ և քեզի պէս ախտաւորի մը հրամանին հնազանդելով դուրս երթամ։

— Բարեմիտ Ուլֆրիտ տիկին — ըսաւ միւս մարդն — այս տեղ մի կենար և մի վիճաբանիր. հապա եկիր գնա։ Մեր տիրոջ հրամանները պէտք է անմիջապէս կատարել։ Դու ևս օր տեսեր ես, պառաւ տիկին, բայց արևդ երկար ատենէ վեր մարը մտեր է։ Դու այժմ պատերազմի հին ձիու մը ճշնարիտ նշանակն ես, զոր թիփուտ վայրեր կ'վանեն։ Երբեմն դու ալ քու ճախրդ ունեցար, բայց հիմակ կ'կաղաս։ Ուստի եկիր ու գնա։

— Զար հոգիներ ձեզ կ'հալածեն — ըսաւ պառաւ կինն — և երանի թէ շնարկի մը մէջ սատկէիք։ Զէրնէպոկ ձեր սատանան իս բզիկ բզիկ ընէ՝ եթէ աղէկասիս վուշը մանելէն առաջ այս իմ յատուկ խուցէս դուրս եկնեմ։

— Այն ատեն պատասխան տուր մեր տիրոջ, պառաւ սատանայ —

լսաւ մարդն, և դուրս ելաւ, Ռեպեկան անոր հետ թողլով որոնց ներկայութեան ակամայ հանդուրժելու ստիպուեր էր։

— Այս անգամ ինչ դժոխային գործ մտածեր են արդեօք — ըսաւ պառաւն ինքն իրեն մրմնալով, և ատեն ատեն շարասէր և շեղակի ակնարկ մը նետելով Ռեպեկայի կողմը։ — Բայց դիւրին է դուշակել։ երկու փայլուն աչեր, սև գանգուրներ և թղթի պէս սպիտակ մարմին՝ զոր դեռ ևս քահանան իր սև խուզէ ծածած, այո, դիւրին է դուշակել թէ ինչ պատճառաւ օրիորդն այս թափուր աշտարակս կ'նստեն, ուսկից աղաղակ մը չկրնար լսուիլ որպէս թէ դեռնի տակէ հինգ հարիւր գրկաչափ հեռաւորութենէն ելնէր։ Բուերը քու դրացիներդ պիտի լինին, գեղանիս, և անոնց աղաղակներն որչափ լսելի լինին այնչափ պիտի լինին և քու ձայներդ։ Եւ այս օրիորդն օտարուհի մը կ'երևի — յարեց նա Ռեպեկայի զգեստն ու ապարանքը դիտելով։ — Ո՞ր երկրէն ես, սարակինոսի՞ թէ եգիպտացի։ Ինչու համար չես պատասխաներ։ Լալ գիտես, միթէ խօսիլ չգիտես։

— Մի՛ սրդողիր, բարի-մայր — ըսաւ Ռեպեկա։

— Կրնաս աւելի չխօսիլ — ընդմիջեց Ուրֆրիա — աղուէս մ'իր պոչէն և հրէայ կին մը լեզուէն կ'ճանչցուի։

— Ցանուն երկնից — վրայ բերաւ Ռեպեկա — ըսէ ինձ թէ բունի այս տեղ նետուելէն ետև՝ ուրիշ ինչ ձիւներ պիտի գան գլուխս։ Արդեօք կեանքս պիտի բաւնա՞ն կրօնս քաւելու համար։ Պատրաստ եմ կենացս բեռը խնդալին թողլու։

— Քու կեանքդ, սիրուն օրիորդ — պատասխանեց վհուկն — ամենևին. ինչ հաճոյք պիտի զգան կեանքդ զոհելով։ Հաւատի եղիր որ այդ կողմէ բնաւ վտանգ չկայ։ Քեզի հետ պիտի ունենան այն վարմունքն որ երբեմն բաւական վայելուչ սեպուեցաւ սաքսօն օրիորդի մը համար։ Եւ միթէ քեզի պէս հրէայ աղջիկ մը կրնա՞յ գանգատիլ եթէ լաւագոյն վիճակ մը չունենայ։ Նայէ անգամ մ'ինձ. ես ալ քեզի պէս նորատի և կրկնապատիկ գեղանի էի, երբ Ֆրօն-որ-Պէօ, արդէն Ռէժինալտի հայրն, ու իր նօրմաններն, այս գղեկիս վրայ յարձակուեցան։ Իմ հայրս և իր եօթն որդիքը դասիկոնէ դասիկոն, խուցէ խուց իրենց հօրենական ժառանգութիւնը պաշտպանեցին։ Ձմեաց սենեակ մը, սանդղի աստիճան մ'որ իրենց արիւնովը չարտաւի։ Ամէնքն մեռան և դեռ իրենց մարմինը չպաղած, դեռ իրենց արիւնը չչորցած՝ յաղթահարին որսն ու իր արհամարհանաց առարկան դարձեր էի։

— Միթէ տեղէ մը օգնութիւն յուսալի չէ. միթէ խոյս տալու

հնար մը չկայ — ըսաւ Ռեպեկա — քեզ առաւօրէն, այն, առաւօտ-ուէն պիտի վարձատրեմ։

— Այդ բանը մոքէդ հանէ — ըսաւ պառաւն — ասկից ուրիշ ա-զատում չկայ այլ միայն մահուան դուռն։ Եւ ուշ, շատ ուշ այն դուռը կ'բացուի մեր առջեւը — յարեց նա իր ալէզարդ գլուխն օրեցով։ — Բայց մխիթարութիւն մ'է արդէն մնացեալը թէ՝ երկրիս վրայ կ'թողունք մեր ետեւէն այնպիսի անձեր որ մեզի չափ թշուառ պիտի լինին։ Մնաս բարեւ, Հրէուհի։ Հրէայ թէ հեթանոս, քու ճակատագիրդ նոյնը պիտի լինի, վասն զի այնպիսի մարդոյ հետ է գործդ որ ոչ խիղճ ոչ գութ ունին։ Մնաս բարեւ, կ'ըսեմ. իմ գերեզմանս արդէն մա-նեցի, քու պաշտօնդ տակաւին նոր սկսի։

— Յանուն Աստուծոյ, կեցէ՛ր, կեցէ՛ր — ըսաւ Ռեպեկա — կեցէ՛ր, եթէ կամք ունիս ինձ անիծելու և թշնամանելու իսկ. քու ներկայու-թիւնդ արդէն տեսակ մը պաշտպանութիւն է։

— Տիրամօր ներկայութիւնն իսկ չպիտի կարենայ քեզ պաշտպանել — ըսաւ ժանտ պառաւն։ — Ահա սա տեղն է — յարեց նա կոյս Մա-րիամու մէկ կոշտ պատկերը ցոյց տալով — նայէ, միթէ կարող պիտի լինի՞ քեզ ապառնացող հարուածն արգիլելու։

Այս ըսելով սենեկէն դուրս ելաւ, հեղնալի ժպիտով մ'իր դէմքը կարկամած, որով սովորականէն աւելի նողկալի կերպարան մ'առաւ։ Դրսէն բանալիով դուռը գոցեց և Ռեպեկա կ'լսէր պառաւին ձայնն ու-րով կ'անիծէր սանդղին գահավէժ աստիճանները քանի վար կ'իջնէր կամացուկ և զժուարութեամբ։

Հետեւապէս Ռեպեկա՝ Բոլէնայի վիճակէն աւելի ահռելի վիճակ մը պիտի կրէր, վասն զի հաւանական չէր որ նկուն ազգի մ'աղջկան հետ յարգանօք կամ քաղցրութեամբ վարուին, թէեւ ասոնց նշոյլը սաքսոն իշխանուհւոյ մը ցոյց տուեր էին։ Սակայն հրէայ օրիորդը սա տառապութիւնն ունէր որ արդէն մոռնալու սովորութեամբ և հոգւոյ բնական զօրութեամբը պատրաստ կ'դանուէր մոքանալու իրեն դէմ ծագելիք վտանգներուն հետ։ Իր ծաղիկ հասակէն վեր՝ 'ի բնէ հաստատ և դիտող լինելուն՝ ոչ իր հօրը տան մէջ տեսած հանապիսուն ճոխութիւնն ու հարստութիւնն, և ոչ հարուստ երբայեցւոց տուներու մէջ նկատած ճոխութիւնները զօրեր էին զինքը կուրցընել այնչափ որ իրենց վայելած պերճութեան անհաստատութիւնը չտեսնէ։ Ինչպէս Դամոկլէս իր անուանի հացկերոյթին առեն՝ Ռեպեկա կ'դիտէր անդա-դար՝ այն շլացուցիչ ճոխութեան մէջ՝ իր ժողովրդեան գլխին վրայ մնալ մը կախուած սուրը։

Այս խորհրդածութիւնները մեզմեր և ըստ ինքեան դատողութեան յարգ-գորեր էին իր բնաւորութիւնն որ՝ ուրիշ պարագաներու մէջ, կրնար վէս, կամակոր ու ամբարտաւան դառնալ։

Ռեպեկա՝ իր հօրն օրինակէն և խրատներէն վարժեր էր իրեն հետ տեսնուող անձերու հետ մարդավարութեամբ վարուիլ։ Արդարև՝ չէր կարողնա հեռաւիլ անոր ծայրայեղ սարկութեան, վասն զի անոր մտքի նուաստութիւնը չունէր, և ոչ այն յարատև երկիւղներն՝ որմէ իր հօրը սառնութիւնը յառաջ կ'գար, բայց հպարտ խոնարհութեամբ կ'վարուէր, որպէս թէ ակամայ կ'հպատակէր այն վատթար կացութեան որուն մէջ իրրև անարդեալ ժողովրդեան մ'աղջիկը կ'գտնուէր. կ'զգար ինքն որ բաւական աստիճանի արժանի էր քան թէ այն՝ որուն կրօնական նախապաշարմանց բուռն լուծը կ'ստիպէին բաղձալու։

Այսպէս՝ ձախորդ պարագաներու հանդիպելու կազմ ու պատրաստ լինելով՝ Ռեպեկա կարևոր արիութիւն ստացեր էր 'ի հարկին գործելու։ Իր ներկայ կացութեան մէջ՝ բոլոր իր արթնութեան կարօտ էր և հեռապէս զայն իր օգնութեան կոչեց։

Իր առաջին հոգն եղաւ սենեակը քննել, բայց թէ փախուստի և թէ պաշտպանութեան համար ապաւէն մը չէր ընծայեր։ Ոչ ծածուկ անցք և ոչ գետնի դուռ ունէր, և բաց 'ի այն դռնէն որ գլխաւոր շէնքին վրայ կ'նայէր, սրահին միւս մասն աշտարակին պատերով շրջապատուած էր։ Դուռը ներսէն ոչ պարզունակ ունէր և ոչ ձող։ Պատուհան մը միայն փոքրիկ տանեստանի մը վրայ կ'բացուէր աշտարակին վերևն, և այս տանեստանն՝ 'ի սկզբան՝ աղատումի յոյս մը տուաւ Ռեպեկային. բայց շատ չանցաւ գիտեց որ պարսպին և ոչ մէկ մասին հետ հաղորդակցութիւն ունէր. առանձնակի պատշգամ մ'էր՝ ըստ սովորականին՝ քիւերով շրջապատուած, որ ծակեր ունէր, որուն առջև քանի մ'աղեղնաւորներ կենալով կարող պիտի լինէին աշտարակը պահպանելու և իրենց նետերով դղեկին այն մասը պաշտպանելու։

Ուստի ուրիշ յոյս չկար բայց միայն կրաւորական արիութիւն և Աստուծոյ վրայ հաստատ վստահութիւն մ'որ բնական է մեծ և վեհանձն հոգիներու։ Ռեպեկա՝ թէև Աստուծոյ ընտրեալ ժողովրդեան համար Ս. Գրոց ըրած խոստումները ծուռ մեկնելու սորվեր էր, սակայն չէր սխալեր ենթադրելով որ ներկայն իրենց փորձանաց ժամն էր; կամ վստահելով որ Սիօնի որդիք օրին մէկը պիտի կոչուին հեթանոսներու երջանկութեան մասնակցելու։ Նոյն պահուն՝ իր բոլորտիքն եղած բաները կ'հաստատէին որ իրենց ներկայ վիճակը պատժոյ և փոր-

ձանաց վիճակ մ'էր։ և թէ իրենց յատուկ պարտաւորութիւնն է ժառանգաւորաց մեղք գործելու։ Այսպէս ինքզինք աղէտից զոհ նկատելու վարժած լինելով Ռեպեկա իր յատուկ կացութեան վրայ կանխատեսութիւններ և կազդուրեր էր իր սիրտը դիմադրաւ կենալու այն վտանգներու դէմ որ հաւանօրէն իրեն պիտի պատահէին։

Սակայն բանտաւոր օրիորդը դող ելաւ և գոյնը փոխեց՝ երբ սանդղին վրայ ոտքի ձայն լսեց և աշտարակին սենեկին դուռը մեղմիկ բացուելով, բարձրահասակ մարդ մը ներս մտաւ։ այն աւազակներուն մէկուն պէս հագուած՝ որոց կ'վերագրէր իր աղէտից պատճառը։ Մարդը դուռն իր ետևէն գոցեց։ Իր գլուխն որ մինչև արտևանունքն ի՛ջեցուցեր էր՝ դէմքին վերի կողմը կ'ծածկէր, և իր վերարկուն այնպէս մը բռներ էր որ երեսին վարի մասն ալ կ'գոցէր։ Այսպէս ծպտեալ՝ որպէս թէ գործ մ'ընելու կ'տրամադրէր և որուն գաղափարն իսկ զինքն ամօթապարտ կ'ընէր։ ահաբեկ բանտաւոր աղջկան առջև կանգուն կ'կենար։ սակայն, որչափ հագուստէն աւազակ մը լինելը ակնյայտնի կ'երևէր, կարծես թէ անկարող էր բացատրել թէ ի՞նչ նպատակաւ այն տեղ եկեր էր, մինչև որ Ռեպեկա յեսին ձիգ մ'ընելով իր վրայ, ժամանակ ունեցաւ անոր բացատրութիւնները կանխելու։ Արդէն երկու փաւաւոր ապարանջան և մանեակ մը հաներ էր, զոր իսկոյն աւազականման մարդուն տուաւ, բնականապէս մտածելով որ անոր բարեսիրութիւնը շահելու միակ միջոցն էր ժլատութիւնը գոհ ընել։

— Ա՛ռ ասոնք — ըսաւ նա — բարի բարեկամ, և 'ի սէր Աստուծոյ պթա իմ և ծերունի հօրս վրայ։ Այս զարդերը մեծ արժէք ունին, սակայն ազատ ու անվնաս այս դղեկէն ելնելու համար հօրս տալիք պարգևներուն քով ասոնք բան մը չեն։

— Պաղեստինի գեղանի ծաղիկդ դու — պատասխանեց ելուզակն — այս մարգարիտներն են արևելեան, սակայն ապիտակութեան կողմէ ակուանեղդ գեր 'ի վեր են. անդամանդները փալփլուն են, սակայն աչերուդ փայլին չեն կրնար հասնիլ, և այս ծանր պաշտօնն ստանձնելէս վեր՝ ուխտ ըրի գեղեցկութիւնը նախադաս համարիլ հարստութենէ։

— Այդ գրկանքը մի դներ վրադ — ըսաւ Ռեպեկա — եթէ այս փրկանքն, և գթասիրտ եղիր. ոսկիով կրնաս զուարճութիւններ գտնել, մեզ անպատուելով միայն խղճի տագնապ պիտի շահիս։ Հայրս մտադիր պիտի գոհ ընէ քու ամէն փափաքդ, և եթէ խոհեմութեամբ վարուիս՝ կարող պիտի լինիս այս աւարով ընկերութեան մէջ մնաս

նենալ և կայուքիւն, կարող պիտի լինիս անցեալ մեղացդ թողութիւն առանալ և ապագային մէջ նոր յանցանքներ գործելու հարկէն ազատ պիտի մնաս։

— Շատ լաւ կ'խօսիս — պատասխանեց աւազակը Փրանսերէն, թերևս տեսնելով որ դժուարին պիտի լինի Ռեպեկայի սաքսօն լեզուով ասուած խօսակցութիւնը նոյնպէս շարունակել — բայց քաջ գիտցիր Բակայի Հովտին աղուոր շուշանն, որ հայրդ արդէն հզօր Ալքիմիսդի մը Ճանկին ներքև է, որ գիտէ արծաթի և ոսկիի վերածել մինչև անդամ ընդանի մը վանդակին ժանգոտ ձողերը։ Պատկառելի Իսահակ թորահանի մ'ենթարկուած է որ իրմէ պիտի ծծէ բոլոր թանկագին բաներն առանց իմ աղաչանքիս կամ աղերսանացդ կարօտ լինելու։ Իսկ քու փրկանքդ սիրով և գեղեցկութեամբդ պիտի վճարուի, և բնաւ ուրիշ դրամ չպիտի ընդունիմ։

— Դու աւազակ մը չես — ըսաւ Ռեպեկա առջի գործածած լեզուով — երբէք աւազակ մը չմերժեր այսպիսի պարգևներ. այս երկրիս մէջ երբէք աւազակ մը քու խօսած լեզուդ չգործածեր։ Դու վտարակ մը չես, այլ նօրման մը, թերևս 'ի ծնէ աղնուական. ո՛հ, աղնուական ճղիր նաև գործերուդ մէջ, և քեզնէ հեռու նետէ այդ նախատանաց և բռնութեան ահարկու դիմակդ։

— Իսկ դո՛ւ որ այդչափ լաւ կ'գուշակես — ըսաւ Պրայն տը Պուա-Կիլպէր, երեսին վրայէն վերարկուն բանալով — դու Իսրայէլի բուն աղջիկ մը չես, այլ 'ի բայց թողլով ծաղիկ հասակդ և գեղեցկութիւնդ, դու Էնատրի վհուկ մ'ես։ Ո՛չ, ես վտարակ մը չեմ, Սաարոնի գեղանի վարդդ, և քու վզիդ և թևերուդ վրայ՝ որոց այնքան կ'վայլեն, մարգարիտներ և անգամանդներ դնելու կարող մարդ մ'եմ, քան թէ քու զարդերդ կողոպտելու։

— Ձիս ի՞նչ պիտի ընես — ըսաւ Ռեպեկա — եթէ ոչ իմ հարստութիւնս։ Մեր մէջ ահագին խտրութիւն մը կայ. դու քրիստոնեայ ես, ես հրէայ. մեր միութիւնը հակառակ պիտի լինի թէ ձեր եկեղեցւոյ և մեր ժողովանոցի օրինաց։

— Արդարև հակառակ պիտի լինէր — պատասխանեց տաճարականը ծիծաղելով։ — Հրէուհի մը կին առնո՛ւլ. ո՛չ, եթէ նոյն իսկ Սաբա թագուհին լինէր, և գիտցիր նաև, Սիոնի գեղանի դուստր, որ եթէ ամենաքրիստոնեայ թագաւորն իր ամենաքրիստոնեայ աղջիկն ինձ կնութեան տար, Լանկտոքն ալ օժիտի տեղ, չպիտի ամուսնանայի ա-նոր հետ. իմ ուխտիս հակառակ է սիրել օրիորդ մը առանց սիրոյ

ինչպէս որ կամք ունիմ քեզ սիրել։ Ես տաճարական մ՝եմ, տես մի անգամ իմ ուխտիս խաչը։

— Ինչպէս կ՝համարձակիս խաչիդ կոչումն ընել — ըսաւ Ռեպեկա — այսպիսի պարագայի մը մէջ։

— Եւ եթէ այս կոչումը կ՝ընեմ — վրայ բերաւ տաճարականը — քեզի ի՞նչ փոյթ, քանի որ դու մեր այս փրկութեան նշանին չես հաւատար։

— Իմ հարցս ինձ սորվեցուցած բաներուն կ՝հաւատամ — ըսաւ Ռեպեկա — և Աստուած ինձ կ՝ներէ եթէ հաւատս մոլար է։ Բայց դու, ասպետդ, ի՞նչ հաւատ ունիս, դու որ կ՝ապաւինիս անխղճօրէն իբրև ամենատուրբ դաւանած խաչիդ, ճիշտ այն միջոցին՝ իբրև ասպետ և իբրև կրօնի պաշտօնեայ՝ քու հանդիսաւոր ուխտդ դրժելու կ՝ելնես։

— Ո՛վ Շիրակի դուստր, շատ քաջ և ծանր քարոզ առիր — պատասխանեց տաճարականը — բայց, անուշ վարդապետուհի, քու հրէական պաշտամունքդ անձուկ են և մեր մեծ արտօնութիւններն ըմբռնելու քեզ կ՝արդիլեն։ Տաճարականի մը համար ամուսնութիւնն անքաւելի մեղք մը պիտի լինէր, բայց եթէ մանր մունր յիմարութիւններ ընեմ, մեր ուխտին յաւաջիկայ ժողովին մէջ կրնամ քաւել տալ։ Միապետաց իմաստունն և նոյն ինք հայրն, որոց օրինակն, ինչպէս որ դու ալ կ՝խոստովանիս, բաւական կշիռ ունի, չկրցան երբէք ստանալ մեծագոյն արտօնութիւններ քան զայնս որ մենք Սիօնի տաճարին հէք զինուորներ ստացանք անոր պաշտպանութեան ժամանակ մերոյց տուած եռանդին համար։ Սողոմոնի տաճարին պաշտպանները կրնան ներողութիւն պահանջել Սողոմոնի օրինակին հետևելով։

— Եթէ դու — ըսաւ հրէայ օրիորդը — Ս. Գիրք և սրբոց վարք կ՝կարդաս մի միայն քու վաստուէր ընթացքդ անբասիր հանելու համար, դու ևս մեղապարտ կ՝համարուիս այն մարդուն պէս որ ամենէն փրկաւէտ և օգտակար խոտերէն թոյն կ՝քաղէ։

Տաճարականին աչերն այս յանդիմանութեան վրայ փայլակներ արձակեցին։ — Ռեպեկա, մոռիկ ըրէ — ըսաւ — ես մինչ ցայս կէտ անուշութեամբ խօսեցայ քեզի հետ, բայց այժմ իմ լեզուս բռնակալի մը լեզուն պիտի դառնայ։ Դու իմ աղեղիս և նիզակիս դերին ես, ապրացս օրինօք իմ կամացս հպատակն ես, իմ իրաւունքէս մաղի չափ չպիտի շեղիմ, չպիտի վարանիմ բռնութեամբ ստանալ ինչ որ աղերսանացս և հարկին կ՝մերժես։

— Մի՛ մօտենար — ըսաւ Ռեպեկա — մի՛ մօտենար, մոռիկ ըրէ ինձ

այդպիսի սոսկալի մեղք մը գործելէն առաջ։ Արդարև, դու կրնաս յաղթահարել այժմ, վասն զի Աստուած տկար ստեղծեց կինն, և իրեն պահպանութիւնը մարդուն վերհանձնութեան յանձնեց, բայց քու վատութիւնդ, տաճարական, Եւրոպայի մէկ ծայրէն միւս ծայրը պիտի հուշակեմ։ Քու միաբանակիցներուդ աւելորդապաշտութեան պիտի պարտաւորիմ անշուշտ ինչ որ իրենց արդահատութիւնը կրնայ զլանալ ինձ։ Քու ուխտիդ բոլոր ժողովները պիտի իմանան որ՝ դու իբրև հերետիկոս, հրէայ օրիորդի մը հետ մեռք գործեցիր։ Քու յանցանացդ անտարբեր գտնուողներն անգամ քեզ պիտի անիծեն կրած խաչդ անպատուելուդ իմ ազգէս օրիորդ մը սիրելով։

— Դո՛ւ, գեղանի հրէուհի, դու սրամիտ օրիորդ մ՚ես — պատասխանեց տաճարականը՝ քաջզգալով անոր ըսածին ճշմարտութիւնը, քանի որ իր ուխտին կանոնները դրապէս կ՚արգիլէին և մեծ պատժոյ կ՚ենթարկէին այն իր նիւթած սիրային գաւերը, նա մանաւանդ՝ շատ պարագաներու մէջ՝ ուխտադրուժն աստիճանէ անարգանօք կ՚ձգէին — այո՛, դու նրբամիտ ես — շարունակեց նա — բայց քու ձայնդ բաւական զօրաւոր պիտի լինի եթէ քու տրտունջներդ այս դղեկին երկաթէ պատերէն դուրս լսելի լինին։ Այս չորս պատին մէջ, գանգատները, ծղբ ու կոծ, արդարութեան կոչումներ և տառապագին աղաղակներ՝ միօրինակ կ՚մարին կ՚անցնին լռին։ Բան մը միայն կարող է քեզ ազատել, Ռեպեկա, Ճակատագրիդ հպատակէ, մեր կրօնն ընդունէ, և ասկից այնպէս առօք փառօք պիտի դուրս ելնես որ շատ մը նօրման տիկիններ թէ Ճոխութեան և թէ գեղեցկութեան կողմէ պիտի նսեմանան տաճարի լաւագոյն ախոյեանի մը սիրականիդ առջև։

— Հպատակի՛մ իմ Ճակատագրիս — ըսաւ Ռեպեկա — և արդարդ երկին, ի՞նչ Ճակատագրի։ Քու կրօնդ ընդունի՛մ, և ի՞նչէ այդ կրօնդ որ իր ծոցը քեզի պէս հրէշ մը կ՚պահէ։ Դո՛ւ, տաճարականաց լաւագոյն նիզակդ, դու վա՛տ ասպետ, ուխտադրուժ քահանայ։ Երեսիդ կը թքնեմ և դիմագրաւ կ՚կենամ։ Աբրահամու Աստուածն իր աղջկան փրկութեան Ճանբայ մը բացած է, մինչև անգամ այս վատահամբաւ անդունդէն դուրս ելնելու համար։

Այս ըսելով՝ պատշգամին վրայ նայող վանդակապատ պատուհանը բացաւ, և պահ մ՚ետքը, նոյն իսկ քիւին ծայրը կ՚գտնուէր Ռեպեկա։ առանց յենակ մ՚ունենալու իր և վարի գահավէժ վիհին մէջ տեղ։ Պուա-Կիլբէր՝ այս յուսահատական Ճիգը չզուշակելով, վասն զի մինչ ցարդ օրիորդը բոլորովին անշարժ կ՚մնար, ոչ ժամանակ ունեցաւ

անոր խորհուրդն արդիլելու և ոչ զանի կեցընելու։ Երբ ասպետն ուզեց մօտենալ, Ռեպեկա պոռաց. — Գոռոզ տաճարական, դտնուած տեղդ կեցիր, կամ եթէ կամիս մօտեցիր. եթէ քայլ մ'ևս առնուս ինքզինքս վիհը պիտի նետեմ, իմ մարմինս վարի սալարկին վրայ պիտի խորտակի և իր մարդկային ձևը պիտի կորուսէ, քու գաղանական հաճոյքդ զոհ լինելէն առաջ։

Այսպէս խօսելու ատեն՝ ձեռները դէպ 'ի երկին տարածելով խաչաձև դրաւ, որպէս թէ՝ անդունդը գահավիժելէն առաջ՝ Աստուծոյ ողորմութիւնը կ'հայցէր իր հոգւոյն համար։ Տաճարականը վարանեցաւ և իր վայրագ բնաւորութիւնն՝ որ գթութեան կամ աղէտից միշտ անկարեկիր էր, օրիորդին այս մեծ արիասրտութեան համար կակղեցաւ զարմացմամբ։ — Ա՛խր ինչիր, յանդուգն օրիորդ — ըսաւ նա — երկրի, երկնի և ծովու վրայ կ'երդնում, որ քեզի նախատինք մը չպիտի ընեմ։

— Ես քեզի չպիտի վստահիմ, տաճարական — ըսաւ Ռեպեկա — դու սորվեցուցիր ինձ ուխտիդ առաքինութեան չափը։ Ձեր առաջիկայ ժողովն անվաւեր կրնայ հրատարակել երդումդ մ'որ հրէայ օրիորդի մը պատուոյն կամ անպատուութեան կ'վերաբերի։

— Դու յանիրաւի կ'դատես զիս — պոչեց տաճարականը ջերմեռանդութեամբ — ահա երդում կ'ընեմ իմ կրած անուան, կուրծքիս խաչին, մէջքս կախուած սրիս, իմ հարցս հին զինադրոշմին վրայ որ քեզի ճնաս մը չպիտի հասցընեմ։ Կեցի՛ր, եթէ ոչ քու անձիդ, դէթ հօրդ սիրոյն համար դարձիր։ Ես անոր բարեկամը պիտի դառնամ, և այս դղեկիս մէջ հզօր բարեկամի մը կարօտ է։

— Ա՜խ — ըսաւ Ռեպեկա — քաջդիտեմ այդ բանը, բայց միթէ կարո՞ղ եմ քու վրայ վստահիլ։

— Իմ զէնն ու զարդս խորտակին և անունս աղարտի — վրայ բերաւ Պրայն տը Պուա-Կիլպէր — եթէ քեզի առիթ տամ իզնէ դանդատելու։ Ստէպ օրինաղանց եղեր եմ, ստէպ շատ պատուիրանները դէմ շարժեր եմ, բայց երբէք իմ խոստմանս դէմ։

— Կվիջանիմ քեզի վստահիլ — ըսաւ Ռեպեկա — այսչափ հեռուէն — և այն միջոցին քիւին ծայրէն վար իջաւ. բայց պատուհանի մը մօտ մնաց անշարժ։ — Ահա այս տեղ — ըսաւ նա — կանգ կ'առնում, դու ալ այդ տեղ կեցիր, և եթէ քայլ մ'առնլով ինձի մօտելու փորձ փորձես, այն ատեն պիտի տեսնես որ լաւ ևս ունիմ իմ հոգիս Աստուծոյ նուիրել քան պատիւս տաճարականի մը։

Մինչդեռ Ռեպեկա այսպէս կ'խօսէր, իր անվեհեր դիմադրութիւնն եր այնչափ կ'յարմարէր իր դէմքին սրտագրաւ գեղութեան հետ, իր աչերուն, կերպարանին, ձեւերուն այնպիսի արժանապատուութիւն մը մը տուին որ դերբնային էակ մը կ'երևէր։ Իր ակնարկն անվրդովմնաց, իր այտն գոյնը չփոխեց այն յեղակարծ և սոսկալի ճակատագրի երկիւղէն. ընդ հակառակն՝ քանի մտածէր որ իր բաղդին տէրն էր և թէ իրմէ կախում ունէր մահուամբ վատահամբաւութենէ ազատիլ, իր կերպարանն աւելի ևս կ'շարպտունէր, իր ակունքն աւելի պայծառ լոյս մը կ'սփռէին։ Պուա-Կիլպէր՝ որ ինքնին գոռոզ էր և վէս, մտածեց որ երբէք այն օրիորդին պէս վառվռուն և վեհապանծ գեղեցկութիւն մը չէր տեսած։

— Արի՛ հաշտուինք, Ռեպեկա — ըսաւ նա։

— Հաշտուինք, եթէ կամիս — պատասխանեց Ռեպեկա — բայց պէտք է որ սա միջոցը մեզ իրարմէ զատէ։

— Այսուհետև իրենէ վախնալու բան մը չունիս — ըսաւ Պուա-Կիլպէր։

— Ես քեզնէ չեմ վախնար — պատասխանեց օրիորդը — փառք աստուծոյ՝ այս աշտարակին այնպիսի ահագին բարձրութիւն մը տուեր է անդունդին վրայ, որ ոչոք ինքզինք վար նետելէն ետև՝ կրնայ ապրիլ, փառք անոր և Խաչակայ Աստուծոյն, քեզնէ չեմ վախնար։

— Շատ անիրաւ ես ինձի դէմ — ըսաւ տաճարականն — երկրի, երկնի և ծովու վրայ կ'երդնում որ անիրաւ ես։ Սովորաբար չեմ ինչպէս որ տեսար զիս դաժան, ինքնասէր և անողոքելի։ Կին մ'էր ինձ անզթութեան դաս տուողն և ես ալ կանանց դէմ անգութ եմ, սակայն քեզի պէս աղջկան մը դէմ չեմ կարող լինիլ։ Միտ դիր, Ռեպեկա, երբէք ասպետ մ'ինձի պէս անձնուէր սիրով նիզակ չէ առած իր ձեռքն իր սիրականին պաշտպանութեան համար։ Սեպուհի մ'աղջիկն էր որուն բոլոր հարստութիւնը կ'կայանար աւերակ աշտարակի մը, անբերրի այգիի մը, և Պօրտոյի մօտ քանի մը մղոն խոպան հողերու վրայ։ Իմ սիրած անձիս անունը ծանօթ էր այն տեղերն ուր զինուորական քաջագործութիւններ կ'կատարուէին, և աւելի հռչակուած էր հեռուներն իր համբաւը քան դաւառներ իրը կալուած ունեցող շատ մը կիներու համբաւն։ Այո՛ — կ'ըսէր նա վեր վար քալելով փոքրիկ տանեստանին վրայ, այնպէս եռանդագին որ կարծես թէ Ռեպեկայի ներկայութիւնը բոլորովին մոռցեր էր։ — Այո՛, իմ գործերս, իմ վտանգս, իմ արիութիւնս Գասդիլլի արքունիքէն մինչև Պիզանդիոնի պալատը հռչակ տուին Ա-

Ատէլախտ տը Մօնդմար օրիորդին անուան։ Բայց ինչ եղաւ իմ վարձքս։ Երբ աշխատութեամբ և արեամբ գնած փառքուս վերադարձայ Հայրենի երկիրը՝ տեսայ որ Ատէլախտ կասքօն ազնուականի մը հետ կարգուեր է, որուն անունն իր անհշան հողէն անդին երբէք լսուած չէր։ Ճշմարտապէս կ'սիրէի զանի, և անոր անհաւատարմութիւնը դառնապէս պատժեցի, բայց վրէժս ինձի դարձաւ։ Այն օրէն վեր՝ կեանքէն զզուեցայ և աշխարհային յարաբերութիւններս կտրեցի։ Իմ առնական հասակս ընտանի յարկ չպիտի ճանչէ, սիրական կին մը զիս չպիտի սփոփէ, իմ ծերութիւնս առ անին անուշութիւնները չպիտի վայելէ։ Մենաւոր պիտի լինի իմ գերեզմանս, և զաւակ չպիտի թողում եռեւէս որպէս զի իմ Պուա-Կիլպէր անունս ժառանգէ։ Իմ մեծաւորիս ոտքը դրի իմ ազատ կամքիս խրատունքն, իմ անկախութեանս արտօնութիւնը։ Տաճարականն որ ըստ ամենայնի սարուկ մ'է, բայց միայն անուամբ, չէ կարող ոչ հողը, ոչ կալուած ունենալ, և մինակ ուրիշի մը հաճոյից համեմատ կ'ապրի, կ'շարժի և կ'շնչէ։

— Աւաղ — ըսաւ Ռեպեկա — այդպիսի բացարձակ զոհողութեան դէմ ինչ փոխարինութիւններ կրնան գտնուիլ։

— Վրէժխնդրութեան զօրութիւնը, Ռեպեկա — ըսաւ տաճարականն — և փառասիրութեան յոյսերը։

— Անշահ փոխարինութիւն մ'է այդ — ըսաւ Ռեպեկա — և չէ կարող մարդկութեան սրբանուէր իրաւանց տեղ բռնել։

— Այդպէս մի ըսեր, օրիորդ — պատասխանեց տաճարականը — վրէժխնդրութիւնն աստուածոց զուարճութիւնն է, և եթէ նոյնն իրենց վերապահեր են, ինչպէս որ քահանաները կ'ըսեն, պատճառը սա է որ շատ անգին վայելք մը կ'համարին զայն և մեզի պէս մահկանացուներու անարժան։ Դարձեալ՝ փառասիրութիւնը կիրք մ'է որ կրնայ վրդովել նոյն իսկ երկնից անդորրութիւնը։

Ասպետը պահ մը կանգ առաւ և ապա շարունակեց։ — Ռեպեկա, դուն որ կարող է նախապատիւ համարել մահն անարգութեան՝ անշուշտ հպարտ և զօրաւոր հոգի մ'ունիս։ դու պէտք է որ իմս լինիս։ Մի՛ զոհեր — յարեց նա — քու հաւանութեամբդ և առաջարկած պայմաններուդ համեմատ քեզ պիտի ստանամ։ Պէտք է որ հաւանիս ինձի հետ մանակից լինելու միապետի մը գահին վրայէն երևցած փառասիրական մեծագոյն յոյսերու։ Պատասխանելէն առաջ մանիկ ըրէ ինձ և մերժելէն առաջ դատէ։ Տաճարականն՝ ինչպէս որ ըսիր, իր ընկերային իրաւունքը կ'կորուսէ, կ'զոհէ իր ազատ կամքը, բայց հզօր մարմնոյ

ե՞անդամ կ՚դառնայ՝ որուն առջև դահերը կ՚սկսին ասանիլ։ Ինչպէս անձրևի կաթիլն որ ծովուն կ՚միանայ և այն անդիմադրելի ովկիանու անհատական մաս կ՚դառնայ որ ժայռեր կ՚քանդէ և նաւատորմիներ կ՚կլլանէ, այս անհուն ծովուն կ՚նմանի նաև մեր մեծազօր միաբանութիւնն։ Այս հզօր ուխտին մէկ ապիկար անդամը չեմ, արդէն գլխաւոր հրամանատարներէն մին եմ, և թերևս օրին մէկը մեծ վարպետի գաւազանը ստանամ։ Բաւական չէ որ Տաճարին հէք զինուորներն ապրաթուր պիտի կոխեն թագաւորներու գլուխը, կանեփի սանդալներ հագնող վանական մ՚ևս այդ կրնայ ընել, բայց մեր երկաթապատ ոտքն անոնց աթոռները պիտի ելնէ, մեր երկաթէ թաթպանն իրենց Ճանկէն պիտի կորզէ գաւազանները։ Ձեր ընդունայն սպասած Մեսիայի իշխանութիւնը ձեր վտարանդի ցեղերու այնքան մեծ զօրութիւն չխոստանար որքան իմ նշմարած փառասիրութիւնս։ Գոյակից հոգի մը գտնուեցի որ այս փառասիրութեանս հաղորդ ընեմ, և այս հոգին 'ի քեզ գտայ։

— Մի՛թէ իմ ցեղիս մէկ աղջկան այդպէս կ՚խօսիս — հարցուց Ռեպեկա — մտածէ միանգամ . . . ։

— Մի՛ պատասխաներ ինձ — վրայ բերաւ տաճարականը — մեր կրօնից տարբերութիւնն իրարև աւարկութիւն մէջ բերելով. մեր դաղտնի ժողովներու մէջ՝ այս տղայական զրոյցներու վրայ կ՚ծիծաղինք։ Մի՛ կարծեր թէ մենք ընդ երկար կոյր մնացինք մեր հիմնադիրներու ապուշ յիմարութեան վրայ, որոնք կենաց ամէն բերկրանաց հրաժեշտ տուին՝ անօթութեան, ծարաւի, ժանտախտի և վայրենիներու երեսէն մարտերու մեռնելու զուարճութեան համար, մինչդեռ 'ի զուր կը ձգնէին անջրդի անապատ մը պաշտպանելու, որ միայն աւելորդապաշտութեան արժէք մ՚ունէր։ Մեր ուխտն աւելի ընդարձակ և յանդուգն խորհուրդներ յղացաւ, և իր զոհողութեանց լաւագոյն փոխարինութիւն մը գտաւ։ Եւրոպայի պետութեանց մէջ մեր ունեցած անբաւական կալուածները, մեր զինուորական բարձր համբաւն, որով քրիստոնեայ աշխարհներէն շատ մ՚ընտիր ընտիր ասպետներ կ՚յորդորուին գալ մեր դրօշակին ներքև մնալ, ահա ասոնք են անվրէպ միջոցներ հասնելու այն նպատակին զոր մեր բարեպաշտ հիմնադիրներն երբէք երազած չեն, և 'որոց դիտմամբ անհաղորդ կ՚մնան այն տկարամիտ մարդկան որ մեր միաբանութեան անդամ կ՚դառնան հին սկզբանց ոգւով և իրենց աւելորդապաշտութեամբը մեր հլու գործիները կ՚լինին։ Բայց մեր գաղտնեաց վարագոյրը բաւական բացի։ Շեփորին ձայնը թերևս իմ

ներկայութիւնս կ՚պահանջէ։ Լաւ մնացէ ընտանեաց վրայ, և. Մնաց բարեաւ։ Զեմ ըսեր քեզ ներել ինձ իմ սպառնալի բռնութիւնս, վասն զի քու բնաւորութիւնդ երևան գալու համար կարևոր էր այն. ոսկին միայն փորձաքարին քսելով կ՚ճանչցուի։ Վերստին պիտի դառնամ և քեզի հետ իմ բանակցութիւնս պիտի շարունակեմ։

Ասպեան աշտարակին սենեակը մտաւ սանդղէն վար իջնելով և թողուց Ռեպեկան առանձին, որ թերևս այնչափ մեծ երկիւղ չէր զգացած այն մահէն որմէ ազատեր էր, որչափ կ՚զգար այն անզգամ և յանդուգն մարդուն վայրագ փառասիրութենէն որուն իշխանութեան ներքև ընկեր էր դժբաղդաբար։ Երբ խուցը մտաւ իր առաջին գործն եղաւ Յակոբայ Աստուծոյ շնորհակալիքը մատուցանել իրեն տուած պաշտպանութեան մասին և անոր շարունակութիւնը հայցել թէ իրեն և թէ հօրը համար։ Իր աղօթից մէջ ուրիշ անուն մ՚ալ սահեցաւ, այս է վերաւոր քրիստոնէինն՝ զոր սև բաղդն արիւնռուշտ մարդոց, իր անհաշտ թշնամիներու ձեռքը մատներ էր։ Արդարև՝ իր սիրտ զինք տատեց՝ որպէս թէ՝ Աստուծոյ աղօթելու միջոցին, մարդու մը յիշատակն իր աղերսանաց հետ խառներ էր, մարդ մը՝ որուն Ճակատագիրն իրենին հետ բնաւ յարաբերութիւն չունէր, ըստ որում նազելրեցի և իր կրօնին թշնամի էր։ Սակայն աղօթքն արդէն արտասաներ էր և իր ցեղին բոլոր անձուկ նախապաշարումները չէին կարող ստիպել Ռեպեկան իր աղօթքը յետաս կուչելու։

ԳԼՈՒԽ ԻԵ

Ցենացոյ մէջ առաջին անգամ կ՚տեսնեմ հեղինակութեան մ՚այսպիսի անպիտան ու դժուարին գրուածը։

ՇԻ ՍԴՈՒԲԱ ԴՈՒ ԳՕՆԷԼԸ

Երբ տաճարականը դղեկին մեծ սրահը մտաւ, տը Պրէսի արդէն նոյն տեղը կ՚գտնուէր։

— Քու սիրուհիդ — ըսաւ տը Պրէսի — կարծեմ թէ վրդոված է իմինէս ալ՝ այս շեփորային դուռումէն. բայց դու աւելի ուշ և ակամայ դարձար և հետևապէս կ՚երևակայեմ որ քու տեսակցութիւնդ իմինէս աւելի հաճելի եղած է։

— Ուրեմն միթէ քու սիրոյ յայտարարութիւնդ սաքսօն իշխանուհոյն յաջող եղք մը չունեցա՞ւ — ըսաւ տաճարականը։

— Թոմաս Պէքէդի մասունքի վրայ կ՚երդնում — պատասխանեց տը Պրէսի — որ օրիորդ Ռովէնա անշուշտ լսած պիտի լինի որ լալագին կնկան մը տեսքին չեմ կարող հանդուրժել։

— Բա՛ — ըսաւ տաճարականն — ինչպէս դո՛ւ՝ որ Ազատ միաբանութեան մը պարագլուխն ես՝ կնկան մ՚արտասուքէն կ՚շարժիս։ Սիրոյ ջահին վրայ քանի մը կաթիլ ջուր աւելի ևս կ՚արծարծէ անոր բոցը։

— Շնորհակալ եմ կաթիլներէդ — պատասխանեց տը Պրէսի — բայց այն օրիորդը փարոս մը մարելու չափ արտասուք թափեց։ Երբէք տեսած չէի այնպիսի ձեռքի գալարումներ, և սուրբ Նիւրէի ժամանակէն վեր՝ այնպիսի արտասուքի հեղեղներ, որու վրայ Էյմէր վանահայրն արդէն մեզի խօսած է։ Ջրերու սատանան սիրուն սաքսօնուհին գրաւեր էր։

— Իսկ հրէայ աղջկան սիրտը սատանաներու լէգէոն մը գրաւեր է — պատասխանեց տաճարականը — վասն զի կ՚խորհիմ որ լոկ սատանայ մը եթէ նոյն ինք Ապօլօնիօն լինէր, չպիտի կարենար այնպիսի անսպարտելի զորութիւն և անվեհերութիւն ազդել անոր։ Բայց Ֆրօն–տը–Պէօ ո՞ւր է։ Ան փոքն երթալով աւելի աղմկալի կ՚հնչէ։

— Կարծեմ թէ հրէին հետ կ՚բանակցի — պատասխանեց տը Պրէսի պաղութեամբ։ — Շատ հաւանական է որ Իսահակին ոռնալը խափանեց շեփորին շուինդը։ Դու փորձով պարտիս գիտնալ, Պրայն, որ իր գանձերէն կապտուող հրէայ մ՚այնպիսի պայմաններով զոր մեր բարեկամը Ֆրօն–տը–Պէօ կարող է բռնի առաջարկել, ՚ի հարկէ քսան շեփորի և քսան թմբուկի ձայնէն աւելի բարձր գոռ ու գոչում պիտի արձակէ։ Բայց երթանք անոր ձայն տանք մեր ստրուկներու միջոցաւ։

Շատ չանցաւ Ֆրօն–տը–Պէօ անոնց միացաւ։ Իր բռնական անպիտութեան գործն ընդհատելու ստիպուեր էր, ինչպէս որ արդէն ընթերցողը գիտէ, և ուշացեր էր գալու որպէս զի քանի մ՚անհրաժեշտ հրամաններ տայ։

— Նայինք թէ ինչ է այս անիծեալ գոչիւնին պատճառը — գոչեց Ֆրօն–տը–Պէօ։ — Ահաւասիկ գիր մը, և եթէ չեմ սխալիր, սաքսօն լեզուաւ գրուած է։

Նոյն գիրը գիտեց իր ձեռաց մէջ դարձնելով և որպէս թէ իրաք կը յուսար թղթին գիրքը փոխելով անոր պարունակութեան տեղեկանալ։ և ապա զայն տը Պրէսիին տուաւ։

— Ըստ երևոյթին մեղաւոր տառեր են — ըսաւ տը Պրէսի, որ նոյն ժամանակի ասպետներու տոխտումենէ անմասն չէր։ — Մեր տան երէցը փորձ փորձեց ինձ գրել սրբագրելու, բայց իմ բոլոր պիրերս սլաքի ծայրերու և սրի ծայրերու նմանելուն՝ ծերունի քահանայն իր այս պաշտօնէն հրաժարելու սովորեցաւ։

— Տուր ինձ այդ նամակը — գոչեց տաճարականը։ — Մենք քահանայական պաշտօն և բուսական հմտութիւն ունինք մեր միտքը լուսաւորելու։

— Ուրեմն այդ քու վերապատուելի գիտութեամբդ օգնէ մեզ — վրայ բերաւ տը Պրէսի — ինչ է այս նամակին իմաստը։

— Մենամարտի կանոնաւոր հրաւէր մ՚է — պատասխանեց տաճարականը — բայց Ռեթզէհէմի Ս. Կոյսին վրայ կ՚երդնում՝ թէ այս յիմարական կատակ մը չէ, խիստ տարօրինակ մարտապիր է, և երբէք իշխանական դղեկի մը շարժական կամրջէն այս գունակ հրաւէր մ՚ուղղած չէ։

— Կատակ — գոչեց Ֆրոն-տը-Պէօ — կ՚ուզէի տուպիս իմանալ թէ ո՞վ կ՚համարձակի այս խնդրոյն վրայ կատակ ընել։ Կարդա, Պրայն։

Հեռևատէս տաճարականը հեռևեալ տողերը կարդաց.

«Ես Վամպա, որդի Վիգլէսի, տոհմիկ և ազատ մարդու՝ Թօմէրվուտի Սէտրիկի միմոն — ըսաւ տաքսօնն — և ես Կիւրթ, որդի Վուլֆի, խողարած . . . ։»

— Դու յիմար ես — ըսաւ Ֆրոն-տը-Պէօ ընթերցողն ընդհատելով։

— Ս. Վուկաս վկայ, այս ոճով գրուած է գիրը — պատասխանեց տաճարականը։

Այն տանն իր պաշտօնը շարունակելով կարդաց. — Ես Կիւրթս, Պօվուլֆի որդին, յիշեալ Սէտրիկի խողարածը, մեր դաշնակիցներու և ընկերներու գործակցութեամբն, որ մեզի կ՚միանան այս վէճին մէջ, այսինքն բարեխիրտ ասպետն՝ որ առայժմ Սև դրոսքիպորդ կ՚անուանի, և քաջ դեղացին, Ռօպէրտ Լօքսլէյ, փայտէք ճեղքող մականուանեալն, առ քեզ Ռէժինալտ Ֆրոն-տը-Պէօ և առ ամէն ձեր դաշնակիցս և դաւակիցս, ովք որ են, կ՚յայտնենք. բան որում՝, առանց պատճառի, առանց պատերազմի յայտարարութեան, յանիրաւի և բռնութեամբ մեր յիշեալ Սէտրիկ տիրոջանձը յափշտակեցիք, նոյնպէս տոհմիկ գերդաստանի օրիորդ մը՝ Ռովէնա Հարիօգատէնատէս, և միանգամայն տոհմիկ ազնուական Ամէլտէն Գոնիկալբրիի անձը, նոյնպէս քանի

մ՝աղատանք մարդիկ, իրենց տրուքներով, նոյնպէս հրէայ մը։ Նօրբոյի Խահակ անունով, իրեն աղջիկն հետ, հրէուհի մը, և քանի մը ջորիներ և ձիեր, և այս աշնուական մարդիկ իրենց ախուռապաններով և տրուքներով վերոյիշեալ հրէայ և հրէուհին՝ ամէնքը միասին Նորին վեհափառութեան հպատակ էին, և Թագաւորին Ճանբուն վրայ իբրև աւատ հպատակներ կ՝ուղևորէին, հետևապէս մենք կ՝պահանջենք որ յիշեալ աշնուական մարդիկ, այսինքն Սէտրիկ, Ռովէնա, Ամէլսուէն իրենց ապասաւորներով և իրենց վերաբերող ամէն շարժուն և անշարժ կահ կարասին՝ նամակը ստանալէն ժամ մը ետքը՝ մեզի կամ ընդունելու համար մեր նշանակած մարդուն յանձնէք ոչով մարմնով անարատ։ Եթէ մեր այս խնդիրը չկատարէք՝ ահա ձեզի կ՝իմացընենք որ իբրև աւազակ և ըստեղ պիտի նկատենք ձեզ, և մենք պատրաստ ենք թէ կանոնաւոր Ճակատամարտի մէջ ձեզի դէմ մաքառիլ, կամ՝ ձեր գղեակը պաշարել, որպէս զի ամէն Ճիգ թափելով մեծամեծ վնասներու հասցընել ձեզ և բնաջինջ ընել։ Ուստի, Ատուած ձեզի իր հովանաւորութեան ներքև պահէ։

Մեղնէ ստորագրեալ, Սէնդ—Վիթոլտի առջի իրկունը Հարդվիլ Վաքի մէջ՝ մեծ կաղնիին ներքև, և այս ամէնը գրուեցաւ ստորագրուեցաւ մարդու ձեռքը, այս է Ատուծոյ քահանայ, Նօրը—Տամի և Ս. Տընեգանի մատրան մէջ։

Այս գրոյն ստորոն՝ ամենէն առաջ՝ մրոտեր էին աքաղաղի մը կոշտ գլուխն ու կատարն, արձանագրով մը՝ որ կ՝յայտնէր թէ այս տեսակ մը մեհենադիրը Վամպայի ստորագրութիւնն էր։ Այս ամենածելի խորհրդաւոր նշանին ներքև խաչ մը կար, որ Պիւրթի նշանը լինելը կ՝իմացուէր. յետոյ կոշտ այլ յանդուգն տառերով Ս՝Ն դրոշակաձև բառերը գրուած էին, և այս ամենուն իբրև վերջաբան, մաքուր նկարուած նեռ մը Վաքսլէյի ստորագրութիւնը կ՝ներկայացընէր։

Ասպետներն այս տարօրինակ նամակին ընթերցումը լսեցին մէկ ծայրէն միւս ծայրն և ապա լռին ապշութեամբ սկսան իրարու երես նայիլ, որպէս թէ անկարող էին ըմբռնել թէ ինչ միտք ունէր այն։ Ամենէն առաջը Պրէսի լռութիւնը խզեց անզսպելի քրքիջ մը թողլով, և անոր միացաւ, թէև աւելի չափաւոր կերպով, տաճարականը, բայց ընդ հակառակն՝ Ֆրօն—տը—Պէօ տհաճութեամբ այս անպատեհ խնդութիւնը կ՝նկատէր։

— Բացէ՛ի բաց կ՝իմացընեմ ձեզի, ազնիւ ասպետներ — ըսաւ նա — որ լաւ էս կ՝ընէք եթէ խորհրդակցիք թէ այս պարագայիս մէջ

ինչ ընթացք պիտի բռնէք, փոխանակ այդ անպատեհ խնդութիւնը ցոյց տալու։

— Ֆրոն-տը-պէօ իր վերջին պարտութենէ վեր տխուր է — ըսաւ տը Պրէսի տաճարականին — և լոկ մարտադրի անունը լսելուն կը դողայ, թէև այս մենամարտի հրաւէրը միմոսի և խոզպանի մը կողմէ կ՚գայ մեղի։

— Սուրբ Միքայէլ վկայ — պատասխանեց Ֆրոն-տը-պէօ — կը փափաքէի որ դու մինակդ այս դէպքին հարուածը կրէիր, տը Պրէսի։ Այս գեղջուկներն այսպիսի անմեկնելի լրբութեամբ չէին վարուեր եթէ զօրաւոր խումբ մ՚իրենց զօրավիդ չունենային։ Այս անտառիս մէջ բաւական վտարակներ կան որ առթի մը կ՚սպասեն վրէժ լուծել այծեամներու պաշտպանութիւն ընելուս։ Օր մը այս վտարակներէն մին որ դողրսութեան յանցանքին վրայ բռներ էին, կապելտուի վայրի եղջերուի մ՚եղջիւրներուն, որ հինգ վայրկենի մէջ զանի ծակեց և սպաննեց, և այն ատենէն վեր, Էշպիի նշանացոյցին նետուած նետերուն չափ նետեր իմ վրաս տեղացուցին։ Ինձ նայէ, ապիրատ — յարեց նա իր ծառաներէն մէկուն դառնալով — միթէ մէկը չդրկեցիր որ երթայ հասկընայ թէ մեղի մենամարտի հրաւէր դրկողներն ի՞նչ ոյժ ունին։

— Երկու հարիւր հոգւոյ չափ միացած են անտառին մէջ — պատասխանեց ախոռեպան մ՚որ այն տեղ կ՚գտնուէր։

— Ահաւասիկ աղէտ գործ մը — ըսաւ Ֆրոն-տը-պէօ — որուն պատճառը ձեզի իմ դղեակս ապաստանարան տալս է, ձեզի որ չգիտցեր էք ձեր ձեռնարկութիւնը ծածուկ յառաջտանիլ, այլ այս պիծակներու երամն իմ ականջիս չորս դին բերիք։

— Պիծակներ — գոչեց տը Պրէսի — լաւ ևս է ըսել անխայթ բուռեր, երլուզակներու խումբ որ անտառները կ՚թափառին, և երէորսը կ՚աւերեն, փոխանակ ապրուստի համար աշխատելու։

— Անխայթ — պատասխանեց Ֆրոն-տը-պէօ — բայց կանդուն մը երկայնութեամբ երեքժանի նետեր են՝ որ բնաւ իրենց նշանէն չեն վրիպիր, եթէ նոյն իսկ նշանը Ֆրանքի չափ լինի. կարծեմ թէ ասոնց սլաք կ՚ըսեն։

— Ամօթ է, պարոն ասպետ — ըսաւ տաճարականը — կանչենք մեր մարդիկն ու անոնց դէմ յարձակումմ՚ընենք. ասպետ մը, լոկ զինուորական մը բաւական է այնպիսի գեղջուկներէն քսանի չափ դէմ դնել։

— Բաւական, շատ է անդամ — ըսաւ տը Պրէսի — ինձի ստորնագրելն կ՚համարիմ անոնց դէմ նեռ արձակել։

— Իրաւունք պիտի ունենայիր — պատասխանեց Ֆրօն-տը-Պէօ — եթէ ասոնք թիւրք կամ մաւրիտանացի և կամ Ֆրանսայի վեհերոտ ղեղայիները լինէին, քաջդ տը Պրէսի, բայց ասոնք անկլխայի շինականներ են, որոց վրայ մինակ մեր զինուց և ձիերու առաւելութիւնը կրնանք ունենալ, և ասոնք ալ մեծ օդուտ մը չպիտի ընծայեն անտառին ցանցառներուն մէջ։ Կ՚ըսես թէ յարձակումմ՚ընենք։ Հաղիւ թէ բաւական մարդիկ ունինք դղեակը պաշտպանելու։ Իմ լաւագոյն դունդերս Եօրք կ՚գտնուին, նոյնպէս և քու խումբդ, տը Պրէսի, քսանի չափ մարդիկ ունինք միայն, բայց՝ի անոնցմէ որ այս յիմարական գործին մասնակից գտնուեր էին։

— Մի թէ կ՚երկնչիս — ըսաւ տաճարականն — որ բաւական զօրք ժողվելով դղեկին չսպառնան։

— Այդ չեմ ըսեր, Պրայն — պատասխանեց Ֆրօն-տը-Պէօ — արդարև այս վտարակները յանդուգն պարագլուխ մ՚ունին, բայց առանց պաշարման մեքենայի և եղարանի, և առանց փորձառու գլուխներու. իմ դղեակս կրնայ անոնց ճգանց դիմադրել։

— Զայն տուր դրացիներուդ — վրայ բերաւ տաճարականն — որ իրենց մարդիկը ժողվեն և երեք ասպետներ ազատելու դան, որոնք միմոսէ և խոզարածէ մը պաշարուած են Ռէժինալտ Ֆրօն-տը-Պէօյի իշխանական դղեկին մէջ։

— Դու կ՚ծաղրես, ասպետ — պատասխանեց պարոնը — բայց որո՞ւ տունը գրկեմ։ Արդէն Մալվուազէն Եօրք կ՚գտնուի իր կուսակիցներու հետ, ես ալ անդ պիտի գնայի եթէ ձեր գժոխային գործը չպատահէր։

— Ուրեմն Եօրք տուրհանդակ մը գրկէ և մեր մարդիկը կանչէ — ըսաւ տը Պրէսի։ — Եթէ կարենան ճակատ բռնել իմ դրօշակիս և իմ ազատ գունդիս առջև՝ այն ատեն պիտի ըսեմ թէ անտառը նեռ ձգող վտարակաց մէջ ամենէն յանդուգն վտարակներն են։

— Եւ ո՞վ պիտի կատարէ այդ պատգամաւորութիւնն — ըսաւ Ֆրօն-տը-Պէօ։ — Արդէն ամէն անոյքերը բռնած պիտի լինին, և պատգամաւորը ձեռք պիտի ձգեն։ Բայց ուրիշ բան մը կ՚գայ միտքս . . . այո՛, յարեց նա պահ մը խորհելէն ետև։ — Պարոն տաճարական, անտարակոյս որչափ լաւ կարդալ նոյնչափ գրել գիտես, և թէ տան երէցին կաղամարն ու գրիչը միայն գտնենք, այն երէցին որ տարի մ՚առաջ մեռաւ՝ ծննդեան տօնախմբութեան մէջ . . . .

— Եթէ կ՚հաճիք — ըսաւ ախոռեպանն՝ որ տակաւին կ՚սպասէր — կարծեմ թէ պառաւ Իւլֆրիտ տեղ մը պահած է զանոնք 'ի սէր իր խոստովանահօր։ Այս մարդը միայն, ինչպէս որ պառաւն ըսած է ինձ, իրեն հետ կ՚վարուի եղեր այն մարդավարութեամբ զոր սովորաբար մարդիկ կ՚ցուցնեն կիներու և օրիորդներու։

— Ուրեմն գնա՛ բեր զանոնք, Էնժէլրէտ — ըսաւ Ֆրօն-տը-Պէօ — և դու ալ, պարոն տաճարական, այն յանդուգն մարտագրին պատասխան մը պիտի գրես անշուշտ։

— Լաւագոյն ունիմ՝ այդ պատասխանը սրիս ծայրովը տալ — վրայ բերաւ Պուա-Կիլպէր — քան թէ գրչիս ծայրով, բայց թող կամքդ կատարուի։

Ուստի նստաւ սա մնօք գիր մը գրեց Ֆրանսերէն։

«Ռէժինալտ Ֆրօն-տը-Պէօ՝ իր աղնուականներուն և ասպետական դաշնակիցներու և ընկերներու հետ, չընդունիր բնաւ գերիներու, ստրուկներու կամ փախստականներու կողմէ գրկուած մենամարտի հրաւէրն։ Եթէ ինքզինք Սև ասպետ կոչողն իրապէս ասպետութեան պատուոյն իրաւունք մ՚ունի, պարտաւոր է գիտնալ որ իր արդի ընկերակիցներուն պատճառաւ կ՚նուաստանայ և մեր տոհմիկ մարդերէ համար պահանջելու բնաւ իրաւունք մը չունի։ Իսկ մեր ըրած գերիներուն նկատմամբ, ձեզ կ՚աղաչենք՝ քրիստոնէական ողորմասիրութենէ շարժեալ, քահանայ մը գրկել որ կիրենք խոստովանէ և Աստուծոյ հետ հաշտեցընէ, վասն զի մեր անսասան դիտաւորութիւնն է առաւօտուն զանոնք սպաննել, այնպէս որ իրենց գլուխը պարապէն կախուած տեսնելով՝ ամէն մարդ պիտի հասկընայ թէ ուշչափ կ՚արհամարհենք այն մարդիկն որ անոնց ազատութեան համար ջանադիր կ՚գտնուին։ Հետևապէս, ինչպէս արդէն ըսինք, կ՚կրկնենք որ քահանայ մը գրկէք որպէս զի զանոնք Աստուծոյ հետ հաղորդէ, և այսպէս ընելով երկրիս գրայ յետին ծառայութիւն մ՚ըրած պիտի լինիք անոնց։»

Այս նամակը ծալելէն ետև՝ ախոռեպանին տուին, և ասոր ձեռքը գուրսը պատասխանի սպասող պատգամաւորին։

Շինականն այսպէս իր պաշտօնը կատարելով՝ դաշնակիցներուն ապաղաստեղին դարձաւ, որոնք նոյն պահուն պատկառելի կաղնիի մը ներքև՝ դղեկէն երեք նետաձիգ հեռու նստեր էին։ Նոյն վայրը՝ Վամպա և Կիւրթ, իրենց Սև ասպետ և Ղօքսլէյ դաշնակիցներու և խնդալին Ճղնաւորին հետ անհամբեր կ՚սպասէին իրենց հրաւէրին պատասխանին։

Իրենց չորս դին և բաւական հեռու շատ մը ժպիրհ շինականներ ելեյեր էին, որոց որսորդային զգեստն ու արևակէզ դէմքն իրենց զբաղումներու տեսակը կ՝յայտնէին։ Արդէն երկու հարիւր հոգիէ աւելի զումարուեր էին, և ուրիշ շատեր հետզհետէ կ՝գային։ Անոնք՝ որոց իբրև պարագլուխ՝ կ՝հնազանդէին, կ՝զանազանէին միւսներէն միայն իրենց զգակին վրայ գտնուած փետուրներէն, իրենց զբաղումը, զէնքն և կազմածն բոլորովին միւսներուն յար և նման լինելով։

Այս գունդերէն զատ՝ ընդհատ կանոնաւոր և աւելի զէշ զինեալ զօրականներ, որ մօտակայ քաղքին սաքսօն բնիկներէ կ՝բաղկանային, նոյնպէս Սէտրիկի ընդարձակ հողերէն շատ մը տարուկներ և սպասաւորներ նոյն տեղը հաւաքուեր էին իրենց տիրոջ ազատութեան գործակից գտնուելու համար։ Մեծապոյն մասն ուրիշ զէնք չունէր բայց միայն գեղջական գործիներ որ ստէպ առ հարկի իբրև յարձակողական զէնքեր կ՝գործածուին. ինչպէս, վարսպի համար գերաններ, մանգաղներ, գաւազաններ և այն գունակ գործիներ իրենց գլխաւոր զէնքերն էին. վասն զի նօրմաններն աշխարհակալի սովորական քաղաքականութեամբ՝ չէին ներեր որ յաղթեալ սաքսոնները սուրեր և նիզակներ գործածեն։ Այս պարագաները սաքսոններու աջակցութիւնն այնքան ահարկու չէին գործեր պաշարեալներուն համար, մինչդեռ հակառակը պիտի պատահէր եթէ այս աւաւելութիւնն ալ ունենային այն մարդիկ որ ոյժի, բազմութեան և արդար գաս մը պաշտպանելու եռանդեան կողմէ նշանաւոր էին։ Ահա այս գոյնզգոյն բանակին գլխաւորներուն յանձնուեցաւ տաճարականին նամակը։

Դախ կրօնաւորին գիմեցին անոր պարտնակութիւնն իմանալու համար։

— Սուրբ Տընպանի գաւազանը վկայ — ըսաւ այս արժանընտիր կրօնականն — այն գաւազանն որ փարախն աւելի ոչխարներ առաջնորդեց քան արքայութիւն որ և է ուրիշ սուրբի մը գաւազանը, կ՝երդնում՝ որ չեմ կարող այս գռեհիկ բարբառը բացատրել, քանի որ անընթեռնելի է. չեմ կարող գուշակել որ ֆրանսերէն է թէ ոչ արապերէն։

Այն ատեն նամակը Կիւրթին տուաւ, որ գլուխը խոժոռ դիմօք օրեց և գիրը Վանպայի անցուց։ Միմոսը թղթին չորս անկիւններն այնպիսի շինծու հասկացողութեան դէմքով մը քննեց ինչպէս որ կապիկ մը կրնայ կեղծել նոյն պարագաներու մէջ. յետոյ ոտիւն մ՝ըրաւ և թուղթը Լոքսլէյի յանձնեց։

— Եթէ մեծ գիրերն աղեղներ և փոքրները սլաքներ լինէին թեր-

ես ասկից բան ս՝ իմանայի — գիտեց բարեբարոյ շինականը — բայց այս վիճակին մէջ՝ նշանակութիւնն իմ՝ խելքէս այնքան հեռու է որչափ որ եղջերուն մեր քովէն չորս մղոն հեռի է։

— Ուրեմն ես պէտք է ձեր գրագիրը լինիմ — գոչեց Սև ասպետը։ Եւ Լաքսլէյի ձեռքէն գիրն առնլով՝ նախ առանձին զայն կարդայ և ապա սաքսօն լեզուաւ անոր իմաստը բացատրեց իր ընկերներուն։

— Սպաննե՛ն պիտի ազնիւ Սէտրիկն — ըսաւ Վամպա։ — Խաչ վկայ, որ դու կ՝մեռնիս, ազնիւ ասպետ։

— Ա՛մենեին, ազնիւ բարեկամս — պատասխանեց ասպետն — ես այս տեղ գրուածին պէս բացատրեցի բառերը։

— Ուրեմն Գանդորպլրիի տուրը Թոմաս վկայ — պատասխանեց Գիւրթ — պէտք է որ գղեակն առնունք, եթէ մեր ձեռքն իսկ փլելու հարկ լինի։

— Ուրիշ ղէնք չունինք զայն կործանելու համար — վրայ բերաւ Վամպա — մինակ մեր ձեռներն անյարմար են քարի հատորներ և շաղախ խորտակելու։

— Ժամանակ շահելու հնարք մ՝է այս — ըսաւ Լաքսլէյ։ — Զարդի համարձակին այնպիսի ոճիր մը գործելու որուն համար ահռելի վրէժ մը պիտի առնում։

— Ես կ՝փափաքէի — ըսաւ Սև ասպետն — որ մեր մէջ մէկը գտնուէր որ գղեակը մտնելու կարողլինէր և հասկընար թէ ինչ կ՝ուզեն պաշարեալները։ Քանի որ թոյլ կ՝տան որ իրենց խոստովանահայր մը գրկուի, այս բարեպաշտ ճգնաւորը կրնայ անյապաղ իր տուրք պաշտօնը կատարել և մեզի համար պէտք եղած տեղեկութիւնները ստանալ։

— Կրողը տանի քեզ և խորհուրդդ — գոչեց բարի ճգնաւորն։ — Ես քեզի կ՝ըսեմ, Գանդալկոտ ասպետ, որ երբ մի անգամ իմ կրօնաւորի պարեզօտս կ՝հանեմ, քահանայական կարգս, սրբութիւնս և մինչև անգամ լատիներէնս անոր հետ կ՝հեռանան իրենք, և երբ իմ կանաչ վուանս դնեմ, լաւագոյն ունիմ քսան եղնիկ սպաննել քան թէ քրիստոնեայ մը խոստովանանք ընել։

— Վախնամ — ըսաւ Սև ասպետը — շատ կ՝վախնամ որ այս տեղ մարդ մը չգտնուի որ առ ժամանակեայ կերպիւ իր վրայ առնու խոստովանահօր պաշտօնը վարելու։

Ամէնքն իրարու երես նայեցան առանց ձայն հանելու։

— Կ՝նայիմ որ — ըսաւ Վամպա քիչ մը լուռ կենալէն ետև — քա-

մարը դեռ ևս յիմար պիտի լինի, և իր գլուխն այնպիսի վտանգի մը պիտի դնէ որմէ խելօք մարդիկ կ՚խորշին։ Գէտք է գիտնաք, իմ սիրելի աղգակիցներս ու հայրենակիցներս, որ շինականի մը հագուստ կրեր եմ՝ գունաւոր հագուստ կրելէն առաջ, որ վանական լինելու համար կրթուեր էի մինչև որ ըղեղային տենդ մը գիս բռնելուն՝ հազիւ ուրեմն բաւական խելք ձգեց գլուխս միտս լինելու։ Յուսամ որ այս բարի Ձգնաւորին պարեգօտին օգնութեամբ, նա մանաւանդ անոր ինդգլին մէջ կախուած սրբութեան, գիտութեան շնորհիւ, գիս ձեռնհաս պիտի համարիմ ձեր կողմէ մեր արժանի Սէտրիկ տիրոջ և իր վշտակից ընկերներուն կարօտ եղած մարմնաւոր և հոգևոր մխիթարութիւններ տալու։

— Միթէ կարծեա՞ս թէ բաւական խելք ունենայ իր դերը խաղալու — հարցուց Սև ասպետը Պիւրթին ուղղելով խօսքը։

— Ձգիտեմ — ըսաւ Պիւրթ — բայց եթէ բաւական խելք չունի, առաջին անգամ պիտի պատահի որ խելքը պիտի պակսի իր յիմարութենէ օգուտ քաղելու համար։

— Ուրեմն պարեգօտդ տուր, բարի ընկեր — գոչեց ասպետն — և թող տէրդ յայտնէ մեղ դղեկին պաշտպաններուն դիրքը։ Տարակոյս չկայ որ քիչ-որ են և մէկի դէմ հինգ դրաւ կրնանք դնել որ չպիտի կարենան տոկալ անակնկալ և յանդուգն յարձակումի մը։ Ժամանակը կ՚անցնի, գնա։

— Եւ նոյն պահուն — ըսաւ Լօքսլէյ — դղեակն այնպէս մտէն պիտի պաշարենք, որ լուր տանելու համար ձանձ մ՚անգամ չպիտի ելնէ, այնպէս որ, իմ քաջասիրտ բարեկամս — շարունակեց նա Վամպայի ուղղելով խօսքը — կարող ես այս բռնաւորներուն յայտնել թէ ինչ բռնաբարութիւն որ բանեցրնեն իրենց բանտաւորներու վրայ՝ փոխարէն խստիւ պիտի վճարեն։

— Խաղաղութիւն ընդ ձեզ (pax vobiscum) — ըսաւ Վամպա, որ արդէն իր կրօնական զգեստը հագեր էր։

Եւ այս ըսելով Վամպա կրօնաւորի հանդիսաւոր և շքապանծ վարմունքը բռնելու ջանաց և ձանբայ ելաւ իր պաշտօնը կատարելու համար։

ԳԼՈՒԽ ԻԶ

Սոէպ սառ դառնայ ձի ամՀի,
Էն դանդաղկոտ կրակ կը փըչէ,
Սոէպ ճգնաւորս սուտ խև կ՝ըլնի,
Ճգնաւորի դէր խևը կ՝առնէ։

ՀԻՆ ԵՐԳ

Երբ միմոսը ճգնաւորի կնդուղ և ձորձ հագած, հանդուցաւոր կապով մէջքը սեղմած՝ Ֆրօն-տը-Պէօյի դղեկին դրան առջև ներկայացաւ, պահնորդն անոր անունը հարցուց նոյնպէս այցելութեան նպատակը։

— Խաղաղութիւն ընդ ձեզ — պատասխանեց միմոսը։ Սուրբ Ֆրանսուայի ուխտին մէկ խեղճ կրօնաւորն եմ. իմ պաշտօնիս պարտաւորութիւնները կատարելու եկեր եմ այս դղեկիս մէջ փակուած քանի մը դժբաղդ բանտաւորներու մօտ։

— Դու յանդուգն կրօնաւոր մ՝ես — ըսաւ պահնորդն — որ կ՝համարձակիս գալու այս տեղ ուր, բաց 'ի մեր յատուկ խոստովանայրէն, որ քանի մ՝ամսէ վեր մեռած է, քու փեսուրդ ունեցող աքաղաղ երբէք չերգեց քսան տարիէ վեր։

— Սակայն կ՝աղաչեմ, իմաց տուր իմ այցելութիւնս՝ դղեկին տիրոջ, և հաւատի եղիր որ հրաման պիտի տայ զիս ընդունելու։ Եւ աքաղաղը պիտի երգէ այնպիսի կերպով մ՝որ բոլոր դղեակն անոր պիտի լսէ։

— Շատ աղէկ — ըսաւ պահակը — բայց եթէ դլխիս փորձանք գայ խօսքիդ վրայ պաշտօնս թողլուս, պիտի տեսնենք թէ կրօնաւորի մը ձայնը պիտի կարող լինի դիմանալ սպիտակ սագի մը սլաքի մը դէմ։

Այս պատնէշին ընելէն ետև իր աշտարակը թողուց և գնաց իր տիրոջ յայտնելու այլանդակ լուրը թէ պատկառելի կրօնաւոր մը դրան առջև կ՝սպասէ և ներս մտնել կ՝ուզէ։

Մի և նոյն զարմանքով պահակը՝ կրօնաւորն իսկոյն ներս հրամցնելու հրամանն ընդունեց տիրոջը կողմէն, և նախ՝ ամէն տեսակ գաղտնի յարձակման առաջն առնելու համար դուռը պահպանել տալէն ետև՝ իր ընդունած պատուէրն առանց վարանելու գործադրեց։ Անմիտ անձնապաստանութիւնն որով Վանպա յորդորու եցաւ այս վտանգաւոր պաշտօնը կատարելու՝ հաղիւ զօրեց գինքը կազդուրելու երբ Ռէժինալտ Ֆրօն-տը-Պէօյին պէս ահռելի և ահարկու մարդուն առջև եկաւ, և իր

խաղաղութիւն ընդ ձեզը՝ որուն կերպով մը կ'վառահէր իր ասոյնքանը պահելու, աւաջուանէ աւելի անձկութեամբ և վարանումով արտասանեց։ Բայց Գրօն–տը–Պէօ վարժեր էր տեսնել ամէն կարգի մարդկանց ու դողն երբ իր առջևը կ'ներկայանային, այնպէս որ շինովի կրօնաւորին երկչոտութիւնը բնաւ իրեն կասկած մը չտուաւ։

— Դու ով ես և ուսո՞ կ'գաս, քահանայ — ըսաւ անոր։

— Խաղաղութիւն ընդ ձեզ — կրկնեց միմոը։ Ս. Գրանսուայի կարգին մէկ խեղճ սպասաւորն եմ, և այս ամայի տեղերէն անցնելու առնս, աւազակներու ձեռքն ընկայ (ինչպէս որ Ս. Գիրքը կ'ըսէ) ՝ն-ցուրդ մը ջողերու հանդիպեցաւ, և այս աւազակները սոյն դղեակս ղրկեցին զիս իմ հոգևոր պաշտօնս կատարելու ձեր պատուաւոր արդարութենէ դատապարտեալ երկու անձերու մօտ։

— Շատ լաւ — պատասխանեց Գրօն–տը–Պէօ — սակայն կրնա՞ս ըսել մեզի, հայր սուրբ, այն աւազակներուն թիւը։

— Արիասիրտ ասպետ — պատասխանեց միմոը, nomen illis legio, իրենց անունն է Լեգէոն։

— Ըսէ ինձ պարզապէս թէ քանի՞ հոգի են, ապա թէ ոչ, քահանայ, քու ձորձդ ու մէջքի լարդ չեն կարող պաշտպանել քեզ իմ բարկութեանս դէմ։

— Աւա՜ղ — ըսաւ սուտ կրօնաւորը — cor meum eructavit, այսինքն քիչ մնաց որ ահ ու դողէս պիտի մեռնէի։ Բայց կարծեմ թէ գեղացի ժողովուրդ, ամէնքը հինգ հարիւր հոգւոյ կ'հասնին։

— Ի՞նչպէս — ըսաւ տաճարականն որ նոյն պահուն սրահը կ'մտնէր — պիծակներն ի՞նչպէս դումարուեր են երամովին։ Ժամ է այսպիսի չարաշուք խուժան մը սատակել։ Յետոյ՝ Գրօն–տը–Պէօն մէկդի առնելով, անոր հարցուց.

— Միթէ այս քահանան կ'ճանչե՞ս։

— Չեմ ճանչեր — պատասխանեց Գրօն–տը–Պէօ — հեռաւոր վանքի մը կրօնաւորը լինելուն։

— Ուրեմն բերանացի մի յայտներ խորհուրդդ — պատասխանեց տաճարականը։ — Գրաւոր հրաման մը ղրկէ տը Պրէսիին ազատ գնդին որ իսկոյն իրենց հրամանատարին օգնութեան հասնին։ Դոյն միջոցին՝ և որպէս զի կրօնաւորը կասկած մը չառնու, թոյլ տուին անոր որ երթայ իր պաշտօնը կատարէ սաքսօն խոզերը սպանդարանի պատրաստելու համար։

— Շատ լաւ — ըսաւ Գրօն–տը–Պէօ — այդպէս պիտի ընեմ։ —

Եւ իսկոյն սպասաւոր մը սահմանեց որ Վասպան Սէտրիկի և Ամէլստէյնի բանան առաջնորդէ։

Սէտրիկի անհամբերութիւնն այս բանտարկութենէն աւելի սաստկացած էր քան պակսած։ Սրահին մէկ ծայրէն միւս ծայրը կ'երթևեկէր այնպիսի դիրքով մ'որ կարծես թէ թշնամի մը ղարնել կամ պաշարելով բերդի մը վրայ յարձակում'լնելու կ'պատրաստուի, մերթ ինքն իրեն հետ խօսելով, մերթ Ամէլստէյնի խօսք ուղղելով, որ արիաբար և ստոյիկեան համբերութեամբ արկածին վախճանին կ'սպասէր, կէսօրին լրած առաւտ ճաշը հանդարտիկ մարսելով, և իր դերութեան տեւողութեան վրայ անհոգ մնալով՝ որ կարծէր թէ՝ ինչպէս ամէն երկրային աղէաներ, վերջ պիտի առնու երկնից վճռոյն համեմատ։

— Խաղաղութիւն ընդ ձեզ — դոչեց միմոսը սենեակը մտնելով — Ս. Տրնստանի, Ս. Տրնիսի, Ս. Տիւթոկի և ամէն ուրիշ սուրբերու օրհնութիւնը ձեր վրայ և ձեր բոլորտիքն ի՛ջնէ։

— Ազատօրէն ներս մտիր — ըսաւ Սէտրիկ սուտ կրօնաւորին — և ըսէ ինձ թէ ի՞նչ դիտմամբ այս տեղ եկար։

— Եկայ ըսելու ձեզի որ մահուան պատրաստուիք — պատասխանեց միմոսը։

— Անկարելի՛ բան — ըսաւ Սէտրիկ սարսռելով — թէև յանդուգն են և անզգամ մեր թշնամիները, չպիտի համարձակին այդպիսի սոսկալի անզթութիւն մը գործելու։

— Աւաղ — ըսաւ միմոսը — մարդկային զգայումով մը զանոնք զսպել ուզելն ուրիշ բան չէ, բայց եթէ մետաքսէ դերձանով մը սրընթաց ձի մ'արգիլել։ Ուրեմն քաջ յիշէ, ազնիւ Սէտրիկ, և դու ևս, բարի Ամէլստէյն, թէ ինչ մարմնաւոր մեղք գործեցիք, վասն զի այս օրս իսկ բարձրագոյն ատեանի մ'առջև համար տալու պիտի կոչուիք։

— Միթէ կ'լսե՞ս այս բանս, Ամէլստէյն — ըսաւ Սէտրիկ — պէտք է որ մեր սիրտը զինենք այս յետին գործին դէմ, քանի որ լաւագոյն է իբրև մարդ մեռնիլ, քան ստրուկի պէս ապրիլ։

— Ես պատրաստ եմ — պատասխանեց Ամէլստէյն — տոկալու անոնց ամէն տեսակ անզգամութեան, և մահուան պիտի քալեմ երթամ այնչափ պաղարիւնով և հանդարտ՝ ինչպէս կ'երթամ խնջոյքի սեղանը նստելու։

— Ուրեմն մեր հոգևոր պարտուց պատրաստէ՛ մեզ, հայր — ըսաւ Սէտրիկ։

— Պահ մ'ևս սպասէ, հօրեղբայր իմ — ըսաւ միմոսն իր բնաւ-

ձայնովը — պէտք է՝ մութին վտանգաւոր քայլն առնէին առաջ, չորս աչքով չորս դին դիտել։

— Հաւատս վկայ — գոչեց Սէտրիկ — այս ձայնը կ՚ճանչեմ։

— Քու հաւատարիմ ստրուկիդ և միմոսիդ ձայնն է — պատասխանեց Վամպա իր կնոջուն եռին նետելով։ — Եթէ յիմարի մը խորհրդին հետևէիր, հիմակ այս տեղ չէիր լինէր։ Հիմակ գոնէ խենդի մը խօսքը մոխիկ ըրէ և այն ատեն ընդ երկար այս տեղ չես մնար։

— Ինչ կ՚ուզես ըսել դու, անդամ — պատասխանեց սաքսօնը։

— Այս կ՚ուզեմ ըսել — վրայ բերաւ Վամպա — սա կրօնաւորէ ձորձս և լարէ գօտիս առ, զորս առաջին անդամ կ՚կրեմ, և հանդարտօրէն դուրս ելլիր դղեկէն, և ձգէ վերարկուդ և գօտիդ. ես քու տեղդ վտանգն աչքս պիտի առնում։

— Քեզ իմ տեղս ձգեմ — ըսաւ Սէտրիկ այս առաջարկութեան վրայ զարմանալով — բայց քեզ պիտի կախեն, խեղճ յիմար։

— Թող իրենց գիտցածն ընեն — ըսաւ Վամպա։ — Յուսամ որ՝ ատանց արժանապատուութեանդ դէմ գործելու, Վիդլէսի որդին շղթայով մը կընայ կախուիլ այնչափ ծանրութեամբ որչափ որ իր նախահայր ազգապետը վզէն կ՚կրէր շղթան։

— Լաւ ուրեմն, Վամպա — վրայ բերաւ Սէտրիկ — կ՚ընդունիմ անձնուիրութիւնդ, բայց պայմանաւ մը, այսինքն զգեստներդ ըրա Ամթէլատէյնի հետ փոխես և չէ թէ ինձի հետ։

— Ո՛չ, Ս. Տընագան վկայ, ո՛չ — պատասխանեց Վամպա — այդ բնաւ իրաւացի չէ։ Օրինաւոր է որ Վիդլէսի որդին Հիրվարտի որդին ազատելու համար տառապի. բայց անխոհեմութիւն է ինձ մեռնիլ այնպիսի մարդու մը համար որուն նախահարքն անծանօթ էին իմ նախահարցս։

— Ա՛պերտատ — ըսաւ Սէտրիկ — Ամթէլատէյնի նախնիքն Անկլիոյ թագաւորներ էին։

— Ինչ որ կ՚ուզեն թող լինին — պատասխանեց Վամպա — բայց իմ վիզս շատ պինդ կապուած է ուսերուս վրայ և դժուարին է զայն ոլորելանոնց սիրոյն համար։ Ուստի, իմ բարի տէրս, կամ իմ ծառայութեանս նուէրը դու ընդունէ, կամ թոյլ տուր որ եկածիս պէս առ զատօրէն դուրս ելնեմ այս դղեկէն։

— Թող որ հին ծառը քայքայի — շարունակեց Սէտրիկ — և թող անտառին նորատունկ և վսեմ յոյսն աղատի։ Իմ հաւատարիմ Վամպաս, ազատէ ազնիւ Ամթէլատէյնն, այս է իրենց երակներուն մէջ սաքսօնեան

տրիւն ունեցող մարդկան պարտքը։ Դու և ես, միասին պիտի կրենք մեր շարասէր բռնակալներուն յետին կատղութիւնը, մինչդեռ նա, ազատ և անվնաս, մեր հայրենակիցներուն արիութիւնը պիտի զրպռէ և մեր մահուան վրէժը պիտի լուծէ։

— Ո՛չ, այդ չպիտի ընեմ, հայր Սէտրիկ — ըսաւ Ամէլսաէին ծերունին ձեռները սեղմելով, վասն զի երբ պարտադայէ մը զրպռուելով Ամէլսաէին խորհելու ու գործելու պէտքն ալ պարտ, իր գործերն ու զգացումներն իր տոհմիկ ցեղին յարմար էին — ո՛չ, այդ չպիտի ընեմ — շարունակեց նա — լաւ ես ունիմ այս զնդանիս մէջ շաբաթ մ՚առանց կերակուրի և մինակ հէք բանտարկին շոր ու ցամաք հացով ու ջրով անանիլ, քան խոյս տալու համար օգուտ քաղել պարտադայէ մը զոր գերիի մը բնական բարեսրտութիւնն իր տիրոջը կ՚ընծայէ։

— Տեսրք իմ, ձեզ իմաստուն մարդիկ կ՚անուանեն — ըսաւ Սիմոն — իսկ գիս յիմար։ Բայց Սէտրիկ հօրեղբայր և Ամէլսաէին եղբօրորդի, այս վիճաբանութեան մէջ յիմարը պիտի տայ որոշումն որպէս զի ծայրայեղ մարդասիրական ձևերէ ձեզ ազատէ։ Ես ճօհն Տրքի զամբկին կ՚նմանիմ որ չէր թողուր հեծնելու ուրիշ մէկն իր վրայ բայց եթէ ճօհն Տրքը։ Ես եկայ իմ տէրս ազատելու, և եթէ չհաւանիր, լաւ, այն ատեն նորէն իմ տեղս կ՚դառնամ։ Լաւ ծառայութիւն մը՝ դնդակի կամ փամփուշտի պէս՝ կարելի չէ ձեռքէ ձեռք անցնել, չեմ ուզեր ուրիշ մէկու համար կախուիլ, բայց եթէ այն անձին համար որ իմ տէրս ծնած է։

— Ուրեմն դնա, ազնիւ Սէտրիկ — վրայ բերաւ Ամէլսաէին — այս առիթը ձեռքէ մի հաներ։ Դուրսը՝ քու ներկայութեամբդ կարող ես բարեկամները քաջալերել մեր ազատութեան համար, մինչդեռ այս տեղ մնալովդ բոլորովին պիտի կորսուինք։

— Մինթէ դրսէն ազատութեան յոյս մը կա՞յ — ըսաւ Սէտրիկ՝ միտսին նայելով։

— Յո՛յս, անշուշտ — գոչեց Վամպա։ Ներէ ինձ ըսել, որ եթէ սա պարեզօտս հագնիս, զօրապետի մը զգեստ պիտի դնես։ Հինգ հարիւր հոգի դուրսը կ՚սպասեն, և այս առտու անոնց պարագլուխներէն մին էի։ Իմ խենդի գլխարկս սաղաւարտ մ՚էր և իմ ցուպս՝ դաւաղան մը։ Լաւ, պիտի տեսնենք հիմակ թէ ինչ օգուտ պիտի քաղեն խենդ մը խելացիի մը հետ փոխանակելով։ Իրաւի, քաջութեան կողմէ երևելի մին պիտի կորսուեն և խոհական անձ մը պիտի վաստրկին։ — Այս ըսելով՝ իր հագուստը Սէտրիկի հագուստին հետ կ՚փոխէր։

— Ուրեմն երթաս բարև, տէր իմ — շարունակեց Ղամպա — և քարի եղիր խեղճ Պիերթին ու Գանկա շան համար. իսկ իմ աքաղաղի ֆասարա Ռոթէրվուտի սրահին մէջ կախէ, իբրև յիշատակ այն հաւատարիմ խենդին՝ որ իր կեանքը նուիրեց տիրոջը կեանքն ազատելու համար։

Միմոն այս վերջին խօսքերը կէս ծաղրական կէս սրտաշարժ կերպով արտասանելուն՝ Սէարիկի աչքերն արտուքուլ լցան։

— Քու յիշատակդ պիտի պահուի — ըսաւ նա — որչափ որ հաւատարմութիւն և տէր երկրիս վրայ յարգ ունենան։ Բայց կ՚յուսամ իմ տիրելի Ռոմէնա, ազնիւ Ամէլատէն, նաև քեզ, խեղճ Ղամպաս, ազատելու միջոցներ պիտի գտնեմ. վասն զի մի կարծեր բնաւ թէ տէրդ պիտի երբէք մոռնայ քեզ։

Արդէն զգեստներու փոփոխութիւնը կատարուեր էր երբ յանկարծ Սէարիկի միտքը եկաւ մ՚առաւ։

— Ես միայն իմ լեզուս գիտեմ — ըսաւ նա — և քանի մ՚անիծեալ նօրման բառեր։ Ուստի ինչպէս պիտի վարուիմ իբրև վերապատուելի եղբայր մը։

— Հմայքն երկու բառի մէջ է — պատասխանեց Ղամպա — խաղաղութիւն ընդ ձեզն ամէն հարցումներու իբրև պատասխան պիտի ծառայէ քեզ։ Թէ երթաս, թէ դաս, թէ ուտես, թէ խմես, թէ օրհնես և թէ անիծես, խաղաղութիւն ընդ ձեզ խօսքն ամէն արպելքներ պիտի տապալէ քու առջեւդ։ Այս խօսքն այնչափ օգտակար է կրօնաւորի մ՚որչափ է աւելի թոմչի, կամ գաւազան մը վհուկի։ Այսպէս ծանր և հանդիսաւոր ձայնով մ՚արտասանէ խաղաղութիւն ընդ ձեզն և անդիմադրելի կ՚դառնայ։ Պահակ և գիշերապահ, ասպետ և ձիապան, հետեւակ և ձիաւոր, ամէնքն անոր հմայութիւնը կ՚զգան։ Կարծեմ որ, եթէ գիս վաղը կախելու տանին, ինչպէս որ շատ հաւանական է, կրնամ անով ներգործել նոյն իսկ դահճին վրայ։

— Եթէ ըսածդ ճիշտ է — վրայ բերաւ իր տէրն — իմ կրօնական հրահանգս շուտով տպորած կ՚համարուիմ։ Խաղաղութիւն ընդ ձեզ։ Յուսամ որ չպիտի մոռնամ անցեալսը։ Մնաս բարև, ազնիւ Ամէլատէն։ Մնաս բարև և դու, խեղճ տղայ, որուն սիրան աւելի կ՚արժէ քան գլուխը։ Ձեզ պիտի ազատեմ կամ պիտի դառնամ ձեզի հետ մեռնելու։ Մեր սաքսօն թագաւորներու արքայական արիւնը չպիտի հոսի քանի որ իմ երակներուս մէջ կ՚վազի, և այն խեղճ յիմարին մազին անցամ չպիտի դպին, այն որ իր կեանքը վտանգի կ՚դնէ իր տէրն ազատե-

լու համար, որչափ ասեն որ Սէտրիկ կրնայ արգիլել, ճնաք բարև։

— Երթաս բարև, ազնիւ Սէտրիկ — ըսաւ Ամէլսուէյն — և քաջ յիշէ որ կրօնաւորի մը գերը բնական կերպով խաղալու համար, պէտք է որ քեզի տրուելիք կերակուրներն ուտես։

— Երթաս բարև, հօրեղբայր իմ — յարեց Վամպա — և լաւ յիշէ խաղաղութիւն ընդ ձեզը։

Այսպէս քաջալեր ընդունելով Սէտրիկ յառաջանցաւ, և քիչ առեն առիթ ունեցաւ՝ իր միտքին իբրև գերբազօր դեղ գտած հմայքին առաքինութիւնը փորձել։ Ցած, կամարաձև ու մութ դրբաստաթի մը մէջ, ուր առ խարխաք կ'փնտռէր դղեկին սրահը տանող ճանապարհն, դիմացը կին մ'ելաւ։

— Խաղաղութիւն ընդ ձեզ — ըսաւ տուտ կրօնաւորը մէկդի կենալով որպէս զի կինն անցնի, երբ անուշ ձայն մը պատասխանեց. Հայցեմ, պարոն-էլէ դէր, յեր ֆիռ-ռի-ռը։ (Et vobiscum quoeso domine reverendissime, pro miserecordia vestra.)

— Ես քիչ մը խուլեմ — պատասխանեց Սէտրիկ ազը որ տաքսօն լեղուով, և նոյն պահուն ինքն իրեն մրմնջեց — կրողը տանի խենդն ու իր խաղաղութիւն ընդ ձեզը։ Առաջին խօսքէն ուղեցոյցս կորուսի։

Սակայն անտարբեր բան մը չէր այն ժամանակը՝ քահանայի մը համար խուլանալ լինիլ լատիներէնի, և Սէտրիկին հետ խօսողը քաջ գիտէր այս բանս։

— Կ'աղաչեմ շնորհ ընէք, տէրը հայր — պատասխանեց նա անոր լեզուով — դալ հոգևոր միխիթարութիւն մատակարարել վիրաւոր բանտարարի մ'որ այս դղեկիս մէջ կ'դանուի, ձեր տէրը պաշտօնին պատուիրած դիտութիւնը պարզևեցէք անոր, և հաւատի եղէք որ երբէք ողորմասիրական գործ մը ձեր վանքին ասկէ աւելի նպատակաւոր չպիտի լինի։

— Աղջիկս — ըսաւ Սէտրիկ տատիկ շփոթած — այս դղեկիս մէջ շատ քիչ ժամանակ ճնալու պարտաւորած լինելուս չպիտի կարենամ իմ պաշտօնս կատարել։ Ուստի շտապով պիտի մեկնիմ. քրիստոնէի մը մահը կամ կիսանքն իմ ապրելենէս կախում ունի։

— Բայց ներեցէք ինձ, հայր տէրը — կրկնեց աղերսարկուն — աղաչել յանուն ձեր տէրն ձեր տուած կարգին, որ տուանց միխիթարութեան և օգնութեան չթողուք անձ մը զոր կ'բռնադատեն և որուն կեանքը վտանգի մէջ է։

— Սատանան տանի զիս և Ի Գրին թողու՝ Օտինի և Թորի հոգինե-

ռուն հետ — պատասխանեց Սէտրիկ անհամբերութեամբ, և անտարա-
ղոյս իր հոգևոր կարգին անվայել ոճով պիտի շարունակէր խօսքն երբ
իր խօսակցութիւնն ընդհատեցաւ Իւրֆրիսի, աշտարակին պառաւ
վհուկին կոշտ ձայնէն։

— Ինչպէս, ապերախտ — գոչեց նա աղերսարկու աղջկան — միթէ
այսպէս կ'ճանչես բարեսրտութիւնս որով քեզ բանտէն դուրս հանեցի։
Դու ինչպէս կ'համարձակիս ստիպել սուրբ կրօնաւոր մը զայրագին
խօսքեր գործածելու հրէայ օրիորդի մը թախանձանքէն ազատելու
համար։

— Հրէայ աղջիկ մը — գոչեց Սէտրիկ այս առթիւ հեռանալու
փութալով — թոյլ տուր ինձ անցնիլ, կին . . . : Մի կեցցներ գիս,
եթէ կեանքդ կ'սիրես։ Այն միջոցին իսկ որ սուրբ պաշտօնս վարեցի՝
չեմ ուզեր որ քովս գալովդ գիս պղծես։

— Այս կողմէն եկուր, հայր իմ — ըսաւ պառաւ վհուկը։ — Դու
չես ճանչեր այս դղեակս, և առանց առաջնորդի մը չես կարող դուրս
ելնել։ Ասա եկուր, վասն զի քեզի հետ խօսիլ կ'փափաքիմ։ Իսկ դու
անիծեալ ազգի մ'աղջիկ, դնա հիւանդ մարդուն սենեակն և մինչև
վերադարձս ղանի խնամէ, և վայ գլխիդ պիտի գայ եթէ վերստին
հեռանաս անոր քովէն առանց իմ հրամանիս։

Ռեպեկա քաշուեցաւ։ Այս օրիորդն այնչափ աղաչեր պաղատեր էր
Իւրֆրիսն՝ որ աշտարակէն դուրս ելնելու հրաման ստացեր էր։ Իւր-
ֆրիսն ամէն խնամք տարեր էր այնպիսի տեղ մ'ուր Ռեպեկա խնդագին
պիտի սպասաւորէր եթէ երբէք վիրաւոր Իվանհօէի մնարին մօտ ծնար։
Ռեպեկա՝ ներկայ վտանգաւոր վիճակին ուշադիր, և որ և է առթէ օ-
գուտ քաղելու մասին արթուն կենալով, յոյս առեր էր կրօնաւորի մը
ներկայութենէն, որուն համար Իւրֆրիսէն իմացեր էր թէ այն ամ-
բարիշտ դղեակին եկեր էր։ Ուստի սուտ քահանային դարձին սպասեր
էր, անոր հետ խօսելու մտօք, որպէս զի անոր դութը շարժէ բան-
տաւորներու համար, սակայն իր ջանքն ի՛նչ արդիւնք ունեցաւ արդէն
ընթերցողը գիտէ։

ԳԼՈՒԽ ԻԷ

Թշուառ յիմար, դու պատմել մեզ ի՞նչ կարես,
Ալել եթէ մեզք, ամօթ և գործ տրտմաւէթ։
Գործքդ են յայտնի, արդէն դու բաղդդ գիտես —
Բայց ան պատմութիւնդ — ակսէ, դու անմիտ։

. . . . . .

Սակայն ցաւեր ունիմ տարբեր ես տարբեր,
Տաժանագոյն տագնապ և վիշտ անհամար,
Դուլ տուր հանգիստ այս իմ մոքիս վշտաբեր,
Խօսքիս հեզիկ ունկն տուր համբերատար։
Եւ թող տուր ինձ — եթէ գանել անկար եմ
Ինձ սատար բարեկամ — գանել մ'ունկնդիր։

ԳՐԻԳ, Աբգարոս-Ինան տպեան։

Երբոր Իւրֆրիտ՝ աղաղակ և սպառնալիք հանելով Ռեսլեկան իր ձգած սենեակը վանեց, սկսաւ հեսա Սէտրիկը փոքրիկ խուց մ'առաջնորդել որուն դուռն ուշի ուշով գոցեց. յետոյ՝ պահարանէ մը կոյժ մը գինի և երկու բաժակ հանեց, սեղանին վրայ դրաւ, հաստատական քան հարցական ձայնով մ'ըսելով,

— Դու սաքսօն մ'ես, հայր տուրը, մ'ուրանար — յարեց նա՝ գինեսելով որ Սէտրիկ պատասխան տալու կ'դանդաղէր։ — Իմ բնիկ երկրիս լեզուն անուշ է իմ ականջիս, թէև շատ քիչ կ'լսեմ, երբ խօսելու կ'ըսկսին այն դժբաղդ և ստոլին տարուկներն՝ որոց վրայ այս վէս նորմանները ամէն անարդ և տաժանելի աշխատութիւններ կ'բեռնաւորեն։ Դու սաքսօն մ'ես, հայր, այո՛, սաքսօն մը, ու թէև Աստուծոյ մէկ պաշտօնեայն, աղատ ես. քու ձայնդ քաղցր է իմ ականջիս։

— Միթէ սաքսօն քահանաներ այս գղեկիս այցելութեան չէ՞ն գար — պատասխանեց Սէտրիկ։ Սակայն կ'երևի ինձ որ իրենց պարտքն է երկրիս հարստահար և տարադիր զաւակները մխիթարել։

— Ո՛չ, այցի չեն երթար, կամ եթէ երթան, լաւ ևս ունին իրենց աշխարհակալներու սեղանակից լինիլ քան հայրենակիցներու ողբն ու կոծը լսել — պատասխանեց Իւրֆրիտ — այսպէս իմացած եմ'ի լրոյ, և այս մասին շատ բան չգիտեմ։ Տաս տարի է վեր՝ այս գղեակին՝ իր դուռը չբացաւ քահանայի մը, և միայն նորման յոփ երէց մը կ'երևէր այս տեղ որ Ֆրոն-տը-Պէոյի գիշերային շուայտութիւններու մասնա-

կից կ'լինէր և այն ևս՝ 'ի վաղուց անուն դնաց իր քահանայութեան համարը տալու Աստուծոյ։ Բայց դու՛ սաքսօն, դու սաքսօն քահանայ մ'ես և քեզի հարցում մ'ունիմ ընելու։

— Սաքսօն եմ — պատասխանեց Սէտրիկ — սակայն արդարև քահանայի անուան անարժան։ Թող որ իմ ճանբաս շարունակեմ։ Կ'երդնում՝ քեզ վերադառնալ կամ մեր եղբայրներէն մին ղրկել քեզի, որ խոստովանութիւնդ մտիկ ընելու աւելի արժանի լինի։

— Պահ մ'ևս կեցիր — ըսաւ Իւրֆրիտ — այժմ լսած ձայնդ քիչ ատենէն պիտի խղդուի սև հողին տակ, և չեմ ուզեր զերեզման իջնել իբրև անբան կենդանի։ Բայց դինին ինձ տուր պիտի տայ իմ ահռելի պատմութիւնս ըսելու համար։

Իւրֆրիտ բաժակ մը դինի լեցուց և այնպէս սոսկալի անյագութեամբ մը պարպեց որ կարծես թէ յետին կաթիլն իսկ ծծել կ'ուզէր։ — Դինին դիս ապուշ կ'դարձրնէ, այլ շուրախացրներ — ըսաւ նա աչքերը դէպ 'ի վեր վերցրնելով։ — Դու՛ ևս խմէ, հայր իմ, եթէ կ'փափաքիս լսել պատմութիւն մ'ատանց դեռինն ընկնելու շնչասպառ։

Թէև Սէտրիկ կ'փափաքէր այս չարաղոյժ հրաւէրը մերժել, բայց կնկան ըրած նշանն այնպիսի անհամբերութիւն և յուսահատութիւն կը յայտնէր, որ անոր աղաչանքին զիջաւ և բաժակը պարպեց։ Յետոյ Իւրֆրիտ՝ Սէտրիկի յոժարամտութենէն զոհ՝ իր պատմութիւնն սկսաւ այսպէս.

— Հայր իմ, այսօրուան պէս տեսած թշուառդ ծնած չեմ'ես — ըսաւ Իւրֆրիտ։ — Երբեմն ազատ էի, երջանիկ էի, պարկեշտ էի, կը սիրէի և կ'սիրուէի։ Այժմ ստրուկ եմ, թշուառ և անարդ. ես իմ տէրերուս կրնցը խաղալիկ եղայ որչափ ատեն որ գեղանի էի, երբ գեղութիւնս թառամեցաւ՝ իրենց անարգանաց, ատելութեան և ծաղրուառարկայ դարձայ։ Միթէ կ'զարմանաս, հայր, եթէ մարդկային սեռն, և մանաւանդ դիս այդ այլափոխութեան մէջ դնող ազգը կ'ատեմ։ Միթէ քու առջևդ կեցող խորշոմերես պառաւ վհուկն, որ իր բարկութիւնն անարդիւն անէծքով դուրս կ'թափէ, միթէ կարող է մոռնալ որ երբեմն ինք Դօրդիլսդօնի ազնիւ դեղապետին աղջիկն էր, ազգապետ մ'որուն նայուածքին առջև բիւրաւոր աւատատէրներ կ'դողային։

— Դու՛ Դօրդիլ Վօլֆիկէնկրի աղջի՛կը — գոչեց Սէտրիկ հիացմամբ յետս ընկրկելով — դու՛, դու այն ազնուական սաքսօնին աղջիկն, իմ հօրս բարեկամն ու զինակիցը։

— Քու հծրդ — կրկնեց Ուրֆրիտ — միթէ դու ես Սէտրիկ, Սաքսոն անուանեալը։ Վասն զի Ռոթէրվուտի աղնիւ Վիրվարտ որդի մը միայն ունէր, որուն անունը քաջածանօթ է իր հայրենակցաց։ Բայց եթէ դու Սէտրիկն ես, ինչու համար այդ կրօնական հագուստը հագեր ես. միթէ յուսահատ ես հայրենիքդ ազատելու և բռնութեան դէմ իրրև ապաւէն վանք մտեր ես։

— Փոյթ չէ թէ ես ով եմ — պատասխանեց Սէտրիկ — շարունակէ, թշուառ կին, պատմել քստմնելի և անշուշտ յանցանքով լի պատմութիւնդ։

— Կա՛յ, կա՛յ — պատասխանեց թշուառ կինը — խորունկ, սև, դատապարտելի յանցանք մը, յանցանք մ՚որ լեռի պէս սիրտս կ՚ճնշէ, յանցանք մը զոր դեհենին բոլոր կրակը չպիտի կարենայ սրբել. այո՛, այս դղեկիս մէջ՝ իմ աղնիւ հօրս և եղբարցս արիւնով ներկուած դղեկիս մէջ ապրիլս է իրրև սիրուհի մարդասպանին, իրրև ստրուկ և մատնակից իր զուարճութեանց, և ամէն անգամ որ կենսատու օդէն շունչ կ՚առնուի, ոճիր և անէծք կ՚շնչէի։

— Թշուառ կին — գոչեց Սէտրիկ։ — Եւ մինչդեռ հօրդ բարեկամները, մինչդեռ ճշմարիտ սաքսօն սիրտեր անոր և արիասիրտ որդւոցը հոգւոյն «ողջո՛» կ՚հանէին, իրենց աղօթից մէջ տարաբաղդ Ուիլֆրիդան ալ չմոռնալով, մինչդեռ ամէնքը կ՚ողբային և կ՚պատուէին մեռեալները, դու կ՚ապրէիր որպէս զի մեր ատելութեան և անիծից արժանանաս, դու կ՚ապրէիր որպէս զի միանաս սիրական ծնողքդ սպաննող անձին հետ, որ մինչև անգամ մատղաշ որդւոյ մ՚արիւնը թափեց Դօրգիլ Վօլֆկէնկը դերդաստանին յետին շառաւիղ մը կենդանի չթողլու համար, մինչդեռ դու կ՚ապրէիր անոր հետ միանալու ապօրէն սիրոյ կապերով։

— Արդարև՝ ապօրէն կապերով, բայց չէ թէ սիրոյ — պատասխանեց վհուկը — սէրը յաւիտենական բնակութեան մէջ կ՚դեղերի քան թէ այս սրբապիղծ կամարներու ներքև. ո՛չ, դէթ այդ մասին անպարտ եմ, Ֆրօն–տը–Պէօյի և իր ձեռին դէմ անհաշտ ատելութեամբ վառուած էի մինչև անգամ իր մեղապարտ գգուանաց ժամանակ։

— Դու ատեցիր զանի, ողորմելի՛ կին, սակայն անոր մօտ ապրեցար — պատասխանեց Սէտրիկ։ — Միթէ ձեռքիդ ներքև դաշոյն մը, դանակ մը, հերիւն մը չգտա՞ր։ Բարեբաղդ սեպէ ինքզինքդ, քանի որ այդ կեանքդ արժէք ունի քու աչքիդ, որ նօրման դղեկի մը գաղտնիքը գերեղմանի գաղտնիք են։ Վասն զի, եթէ կասկածէի միայն որ Դօր-

գիլի գուստրն իր հօրը սպաննիչին հետ ամօթալի յարաբերութեամբ կ՚ապրի, Ճշմարիտ սաքսօնի մը սուրը զանի իր սիրահարին ծոցը պիտի սատակէր։

— Միթէ Դօրգիլի անուան այդ հատուցումն իրօք պիտի ընէ՞ր — հարցուց Իւլրիգա, վասն զի այժմ կրնանք մէկդի թողուլ իր Իւրֆրիտ անունն։ — Ուրեմն դու Ճշմարիտ սաքսօնն ես, ինչպէս որ համբաւը կ՚հռչակէ։ Վասն զի՝ նոյն իսկ այս անիծեալ պատերուն մէջ, ուր, ինչպէս որ քաջ կ՚ըսես, ոճիրն անթափանցելի քօղով մը ծածկուած է, այս տեղս իսկ Սէտրիկի անունը հռչակ առաւ, և ես, թշուառ և անարդ, մեծ խնդութիւն զգայի՝ մտածելով որ մեր տարաբաղդ ազգը դեռ վրէժխնդիր մ՚ունի։ Ես ալ իմ վրէժխնդրութեան ժամերս ունիմ, մեր թշնամիներուն մէջ երկպառակութեան կրակն արծարծեցի, գինելի խնջոյքը կռիւներու և մարդասպանութեան վերածեցի, տեսայ անոնց արեան հոսումը, լսեցի անոնց օրհասական հեծեծանքը։ Լա՛ւ գիտէ դիս, Սէտրիկ. միթէ այս իմ աղտեղի և վատթար երեսիս վրայ չե՞ս տեսներ Դօրգիլներու կերպարանին նշանները կրող յիշատակ մը։

— Այդպիսի հարցումներ մի՛ ըներ, Իւլրիգա — պատասխանեց Սէտրիկ քամահելի տխուր ձայնով մը — սատանային ձեռքը զերեզմանէն ելնող անձի մը նշաններն ունիս։

— Թող այդպէս լինի — պատասխանեց Իւլրիգա — բայց այս սարսափելի դէմքը լուսեղէն հրեշտակի մը դիմակը կ՚կրէր երբ Ֆրօնտը–Պէօյի և իր Ռէժինալտ որդւոյն մէջ անմիաբանութեան որոմը ցանեց։ Դժոխքին մթութիւնը պիտի պահէր այնուհետև պատահածը, բայց պէտք է որ վրէժխնդրութիւնը վերցընէ քօղը, պէտք է գաղտն ու գողի յայտնէ ինչ որ մեռելները կրնան բարձրաձայն երևան հանել։ Երկար ժամանակէ վեր բռնաւոր հօր և վայրագ որդւոյ մէջ խռովութեան կայծը կ՚վառէր, երկար ատենէ վեր գաղտնի սնուցեր էի այս անբնական ատելութիւնն, 'ի վերջէ գինովութեան ժամանակ մը պայթեցաւ, և իմ բռնակալս՝ որդւոյն ձեռքը զարնուելով ընկաւ իր սեղանին առջև։ Ահա այսպիսի գաղտնիքներ կ՚պահեն այս կամարները։ Փլեցէ՛ք դուք, անիծեալ պատեր — գոչեց նա մոլորագին աչքերը դէպ 'ի վեր ածելով — և ձեր փլատակաց ներքև ճզմեցէ՛ք այս զզուելի գաղտնիքը գիտցողները։

— Եւ դո՛ւ մեղապարտ թշուառ արարած — ըսաւ Սէտրիկ — ի՞նչ ճակատագիր ունեցար բռնակալիդ մահուանէ ետքը։

— Գուշակէ՛, այլ մի՛ հարցըներ։ Ասա, սատ մնացի ես, մինչև որ

տարիներ, կանխահաս տարիներ եկան իմ դէմքիս վրայ նոպկալի նշաններ դրոշմեցին։ արհամարհանք և նախատինք գտայ ես որ ասեն մը հնազանդութիւն կ'պտնէի, ստիպուեցայ իմ վրէժխնդրութիւնս սահմանել տպասուհի մը դժգոհութեան սնոտի տրտունջներու և անզօր արարածի մը ունայն անիծից մէջ, դատապարտուեցայ իմ մենաւոր աշտարակիս մէջէն լսել այն ուրախութեան ձայներն՝ որոց ասեն մը մասնակից էի, և հարատահարեալ նոր զոհերու աղաղակներն ու ողբերը։

— Իւլրիգա — պատասխանեց Սէտրիկ — դու ի՞նչպէս կ'համարձակիս խօսիլ մարդու մ'որ այս կրօնական զգեստը կ'կրէ, այնպիսի տրտով մ'որ իր մեղապարտ ապարէզն և յանցանացը տրիտուրը կը փնտռէ։ Դժբաղդ կին, ի՞նչ կարող էր ընել նոյն իսկ տուրբ Էտվարտ քեզի համար, եթէ հոգւով մարմնով այս տեղ գտնուէր։ Արքայազն Խոստովանողն 'ի վերուստ իշխանութիւն ունէր մարմնոյ վէրքերը բուժել, բայց Աստուած միայն կարող է հոգւոյ բորոտը սրբել։

— Սակայն երեւ մի դարձընեը իղնէ, բարկութեան դաժան մարդարէ — դոչեց Իւլրիգա — բայց եթէ կարող ես բացատրէ ինձ թէ ի՞նչպէս պիտի վերջանան մենութեանս վրայ ծաւալող նոր և ահռելի զգացումներս։ Ինչու համար՝ երկար ժամանակէ հետէ գործած յանցանքս իմ աչքիս առջև կ'կանգնին իբրև նոր և անդիմադրելի ուրուականներ։ Ի՞նչ ճակատագիր պատրաստուած է գերեզմանէն անդին այն արարածին՝ որուն Աստուած այսպիսի անասելի թշուառութեան բաժին մը հանած է։ Լաւագոյն ունիմ դառնալ Վօդէնի, Հէրթայի և Զէրնէպօկի, և մեր հեթանոս նախնեաց ամէն աստուածներուն քան թէ կրել այն կանխահաս արհաւիրքն որով համակուած եմ թէ 'ի քուն և թէ արթուն եղած ժամանակս։

— Ե՛ս քահանայ չեմ — ըսաւ Սէտրիկ զգուանաք գլուխը դարձընելով այս մեղապարտութեան, թշուառութեան և յուսահատութեան ողորմելի պատկերէն — ես քահանայ չեմ, թէև քահանայի զգեստ հագեր եմ։

— Քահանայ կամ աշխարհական — պատասխանեց Իւլրիգա — քան տարիէ վեր առաջին անգամ կ'տեսնեմ քեզի պէս աստուածավախ մարդ մը. և միթէ դու կրնա՞ս ըսել որ այլ ևս ինձի համար յոյս չկայ։

— Ես քեզի կ'յորդորեմ որ զղջաս — ըսաւ Սէտրիկ — աղօթէ ու ապաշխարէ, և երանի թէ երկնային դթութեան արժանի գտնուիս։ Բայց չեմ ուզեր, չեմ կամիր աւելի ևս մնալ քու քովդ։

— Պահ մ՚ևս կեցիր — ըսաւ Իւլրիկա աղերսագին — մի թողուր զիս հիմակ, դու իմ հօրս բարեկամին որդին, որպէս զի սադանն՝ որ իմ կենացս խշխեց, չդրդէ զիս քու անհաշտ արհամարհանքդ վրէժ լուծելու։ Միթէ չէս մտածեր որ եթէ Ֆրօն-տը-Պէօ իր դղեկին մէջ գտնէր սաքսօն Սէտրիկդ, այս ծպտեալ հագուստով, քու կեանքդ չպիտի խնայէր, արդէն իր աչքը քու վրայ սևեռեց, ինչպէս կ՚սևեռէ թաղէն՝ իր որսին վրայ։

— Թող այդպէս լինի — ըսաւ Սէտրիկ — և թող զիս պատռէ իր կտուցով և ճիրաններով, դարձեալ խօսք մը չպիտի ըսեմ որ սրտիս վկայութիւնը չբերէ, իբրև սաքսօն պիտի մեռնիմ, իմ խօսքիս հաւատարիմ՝ համարձակ իմ գործերուս մէջ։ Քեզի կ՚հրամայեմ որ քաշուիս, մի դպիր ինձ, մի տիպեր որ կենամ։ Ֆրօն-տը-Պէօյի տեսքն այնքան զզուելի չէ ինձ որչափ քեզի պէս վատթար և ապականակիր ինկան մը տեսքը։

— Թող այդպէս լինի — վրայ բերաւ Իւլրիկա՝ նորէն Սէտրիկը շարժելով — քու ճանրագդ շարունակէ և քու ժպիրդ մեծութեանդ մէջ մոռցիր որ քու առջևդ կեցող թշուառ կինը քու հօրդ բարեկամին դուստրն է։ Ճանրագ քալէ, եթէ մարդկային սեռէն բաժնուած եմ իմ աղէտիս պատճառաւ, եթէ բաժնուած եմ այն անձերէ որոց օգնութեան ակնկալելու իրաւունք ունէի, չպիտի բաժնուիմ սակայն անոնցմէ իմ վրէժխնդրութեանս մէջ։ Մարդ մը չպիտի օգնէ ինձ, բայց բոլոր մարդկան ականջները պիտի դռնչեն ընելիք գործիս համբաւէն։ Երթամ բարև, քու արհամարհանքդ քակեց այն կապն որ զիս տակաւին իմ սեռիս հետ կապած կ՚երևէր, փարատեց այն յոյսս ալ որով կը յուսայի հայրենակցացս արդահատութիւնը գրգռել իմ տառապանացս համար։

— Ի՚նչ ըսես — ըսաւ Սէտրիկ, որ այս կոչումէն սիրտը կակղեր էր — միթէ այսչափ աղէտից և յանցանաց մէջէն անցնելէն ետև՝ յուսահատութեան մէջ կ՚գլորիս, մինչդեռ աչքդ բացուած են մեղացդ վրայ և երբ ապաշաւը կրնայ մեծ միխիթարութիւն բերել քեզի։

— Սէտրիկ — պատասխանեց Իւլրիկա — դու չես ճանչեր մարդկային սիրտն։ Ինձի պէս մտածելու և գործելու համար, պէտք էր որ զուարճութեան խօլական սէր և վրէժխնդրութեան անշէջ կրակ մ՚ունենայի զայն գործադրելու անյողդողդ գիտակցութեամբ, և ասոնք այնպիսի արբեցուցիչ կիրքեր են մարդկային սրտին համար որ անզօր գտնուեցայ զսպել և մարել։ Հատ ատենէ վեր՝ այս կրից զօրութենէն

զրկուած եմ, ծերութիւնը զուարճութիւն չունի, կնճիռներն ազդեցութիւն մը, և նոյն իսկ վրէժխնդրութիւնն անղօր անէծներով կ'ցնդի։ Այն ատեն կ'պայ խղճի խայթն՝ իժի պէս՝ անյեալն ընդունայն կ'որոնենք, և ապագայէն կ'յուսահատինք։ Այն ատեն երբ բոլոր մեր կարողութիւնները կ'դադրին գեհենին սադաններուն կ'նմանինք որ խղճի տագնապ կ'զգան այլ ապաշաւ չկիտեն։ Բայց քու խօսքերդ նոր հոգի տուին ինձ. շատ քաջ ըսիր թէ՝ «Ամէն ինչ կարելի է անոնց որ մեռնելու կ'համարձակին։» Դու ցոյց տուիր ինձ վրէժխնդրութեան միջոցն և վստահ եղիր որ զայն պիտի գործադրեմ։ Այդ զգացումը մինչև ցարդ իմ կուրծքիս մէջ ուրիշներհակ զգացումներով կ'տիրէր, այսուհետև այն պիտի դրաւէ զիս լիովին, և դու ինքնին պիտի ըսես թէ՝ Իւլրիգան թէև անարժան կեանք մ'անցուց, բայց իր մահն աղնիւ Դօրգիլի աղջկան արժանի մահ մ'եղաւ։ Դուրսը դունդ մը կայ որ այս անիծեալ դղեակը կ'պաշարէ, շուտ գնա անոր դլուխն անցիր և յարձակումը պատրաստէ, և երբ աշտարակին վրայ՝ ամրոցին արևելեան անկեան վրայ տեսնես դրօշակի մը ծածանիլը, նօրմաններուն վրայ յարձակէ ուժգին, ներսը բաւական գործ պիտի ունենան նոյն պահուն, և կրնաս պարսպին մօտենալ նետերն ու փրիններն առ ոչ ինչ դրելով։ Երթ գնա, կ'աղաչեմ, քու ճակատագրիդ հետևէ, և թող որ ես իմն կրեմ։

Սէտրիկ կ'փափաքէր Իւլրիգայի մթին խորհուրդը հասկընալու համար հարց ու փորձ ընել, սակայն Ֆրօն–տը–Պէօյի խիստ ձայնը լսելի եղաւ, և գոչեց. — Ո՞ւր տեղ կ'դեպերի այն դանդաղ քահանան. Գոնքոստէլլայի խիճերուն վրայ կ'երդնում որ զինքը պիտի նահատակեմ եթէ տակաւին այս կողմերս թափառի և սպասաւորներուս մէջ մատնութեան որոմներ ցանէ։

— Ի՜նչ ճշմարիտ մարդարէ է — ըսաւ Իւլրիգա — վատ խիղճ մը. բայց դու անոր մտիկ մի ըներ, դուրս ելիր և գնա մարդիկներուդ միացիր, սաքսօնեան աղաղակն արձակէ պայքարը սկսելու, և եթէ նօրմանները Ռօլֆի մարտական երգով պատասխանեն, վրէժխնդրութիւնն անոր հաղնելը շինելու յանձն պիտի առնու։

Այս ըսելով Իւլրիգա դաղանի դունէ մը դուրս ելաւ գնաց և Ռէժինալտ Ֆրօն–տը–Պէօ սենեակը մտաւ։ Սէտրիկ ջանաց թէև դժուարաւ, հպարտ պարոնը բարևելու, որ թեթև դլխի շարժումով անոր բարևն ընդունեց։

— Կ'երևի ինձ, հայր իմ, որ քու ծուխերդ երկայն խոստովանութիւն մ'ըրին։ Շատ աղէկ ըրին, վասն զի այս իրենց վերջին խոստովանանքը պիտի լինի։ Մինթ մահուան պատրաստեցի՞ր զանոնք։

— Ամէն բանի պատրաստ գտայ զանոնք — ըսաւ Սէտրիկ՝ կլցածին չափ լաւ Ֆրանսերէն խօսելով — քանի որ իմացան թէ որոց ձեռքն ընկած են։

— Ի՞նչպէս, կրօնաւոր — ըսաւ Ֆրօն–տը–Պէօ — կ'երևի ինձ որ խօսքդ սաքսօնի հոտ կ'բուրէ։

— Եմ — ըսաւ Սէտրիկ — Պըրդօնի Սէնդ Վիթոլտ վանուց մէջ կրթուած եմ։

— Այո — ըսաւ ասպետն — աւելի լաւ կ'լինէր քեզի համար եթէ նորման դառնայիր, նոյնպէս ինձի համար։ Բայց 'ի հարկին՝ մարդ չկրնար իր պատրամաւորներն ընտրել։ Ս. Վիթոլտի վանքը բուերու բոյն մ'է որմէ բնիկները պէտք է հանել, և պիտի գայ այն օրն երբ կրօնական զգեստը չպիտի պաշտպանէ սաքսօնն ինչպէս նաև ասպետը։

— Թող Աստուծոյ կամքը լինի — ըսաւ Սէտրիկ բարկութենէ դողդոջուն ձայնով մը, և այս երևոյթը Ֆրօն–տը–Պէօ երկիւղի արդիւնք համարեց։

— Կ'նայիմ — ըսաւ ասպետն — որ դու այժմ կ'երևակայես որ մեր զօրականները սեղանատուն և շտեմարան են, բայց հոգևոր պաշտօնովդ ինձ ծառայութիւն մ'ըրէ և ուրիշներուն զլխին ինչ ձիւն որ գայ փոյթս չէ։ Դու, պիտի ննջես դու քու խղիկիդ մէջ այնպէս ապահովութեամբ ինչպէս կ'ննջէ կողինջ մ'իր պատեանին մէջ։

— Հրամանդ ի՞նչ է — գոչեց Սէտրիկ իր այլայլութիւնը զսպելով։

— Սա Ճանբէն հետևէ ինձ — ըսաւ Ֆրօն–տը–Պէօ — որպէս զի քեզ եռելի դունակէն դուրս հանեմ։

Եւ սուտ կրօնաւորին առջևն ընկնելով՝ Ֆրօն–տը–Պէօ անոր հաղորդեց թէ ինչ դեր պիտի խաղար նոյն պարագային մէջ։

— Կ'տեսնես, տէր Հայր — ըսաւ անոր — սա սաքսօն խոզերու երամակն որ իմ՝ Դօրգիլսդօնի դղեակս պաշարելու կ'ժպրհին. ինչ որ կրնաս ըսէ անոնց այս ամրոցիս տկարութեան վրայ և յորդորէ զանոնք որ քսանչորս ժամու չափ անոր պատերուն ներքև սպասեն։ Նոյն պահուն, սա նամակը հասցէին տար։ Բայց, նայինք, կարդալ գիտես, տէր Հայր։

— Ամենևին — պատասխանեց Սէտրիկ — աղօթագիրքէս զատ, որուն տառերը կ'ճանչեմ, վասն զի խորհրդատեսը զոց գիտեմ, և օրհնեալ լինին Տիրամայրն և Ս. Վիթոլտ։

— Ուրեմն իմ նպատակիս շատ յարմար պատգամաւոր մ'ես։ Այս ցիրը Փիլիպ տը Մալվուազէնի դղեակը տար, ըսէ անոր որ իմ կողմէս

կ'յանձնես, բայց Պրայն որ Պուա-Կիլպէր տաճարականը գրած է զայն, և թէ կ'աղաչեմ զինքն որ ձիու և մարդու կարելի եղած արագութեամբ նոյն գիրը Եօրք հասցընէ։ Ըսէ անոր որ բանէ մը չվախնայ և թէ մեզ ողջառողջ պիտի գտնէ մեր ամրոցին ետևն։ Ինչ ամօթ մեզ՝ որ ստիպուեր ենք պահուիլ ափ մ'անզգամներու երեսէն որ սովոր են խոյս տալ'ի տես մեր դրօշակներու և ձիերու դափիւնին։ Ահա քեզի կ'ըսեմ, քահանայ, որ քու կերպովդ հնար մը գտնես այն անօրէնները նոյն տեղը պահելու մինչև որ մեր բարեկամներն իրենց նիզակներով այս տեղ գան։ Վրէժինդրութիւնս գրդռեցաւ և բաղէ մ'է այն՝ որ չդադարիր մինչև որ լաւ մը չկշտանայ։

— Իմ պաշտպան սուրբիս վրայ կ'երդնում — ըսաւ Սէտրիկ իր վիճակին չյարմարող աղդութեամբ մը — և բոլոր այն սուրբերուն վրայ որ Անկլիա ապրեցան և մեռան, որ քու հրամաններդ պիտի կատարուին։ Եւ ոչ սաքսօն մ'այս պատերէն պիտի հեռանայ, եթէ իմ գլխութեամբս և աղդեցութեամբս զանոնք կեցընելու յաջողիմ։

— Ա՛հ — ըսաւ Ֆրօն-տը-պէօ — դու լեղուդ կ'փոխես, տէր հայր, և խօսքերդ հակիրճ և ժպիրհ են, որպէս թէ սիրտդ կ'հրճուի սաքսօն երամակին կոտորածին վրայ։ Եւ սակայն դու և ես այն խոզերուն ցեղէն ես։

Սէտրիկ կեղծաւորութեան մէջ եփած մարդ չէր, և նոյն պահուն աւելի պիտի շահէր թէ որ Վամպայի բեղմնաւոր դլխէն խորհուրդ մ'իր մտքին մէջ ծագէր։ Բայց հարկն, հին առածին համեմատ՝ հնարագիտութիւնը կ'սրէ։ Ուստի իր կնդղին տակէն քանի մը խօսք մրմնջեց յայտնելու համար թէ այն դրսի մարդիկ բանադրեալ վտարանները են թէ եկեղեցւոյ և թէ պետութեան կողմէ։

— Տէր վկայ — պատասխանեց Ֆրօն-տը-պէօ — դու էապէս շշմարիտ խօսք մ'ըսիր։ Մոռցեր էի որ այն անզգամները կրնան նաև կողոպտել սաքսօն դէր աբբայ մը, որպէս թէ ծնած լինէին սա վարի աղի ջրանցքին հարաւային կողմը։ Միթէ Սէնդ-Իվի աբբան չէր զոր կաղնիի մը կապեր և ստիպեր էին պատարագ երգել, մինչդեռ իրենք անոր ստակն ու գոյքը կ'թալէին։ Ա՛հ, Տիրամայր վկայ, այս կատակն ընողը Կոտիէ տը Միալդօնն էր, մեր ընկերակից զօրականներէն մին։ Սակայն Սէնդ-Պիլ մատրան սկիհներն, աշտանակները գոլգոթաները սաքսօններ էին, այնպէս չէ՞։

— Անհաւատ մարդիկ էին — պատասխանեց Սէտրիկ։

— Անտարակոյս, և անոնք խմեցին աղուոր գինին և ընտիր դարեջուրն

որ շատ մը գիշերային խնջոյից սահմանուած էին, երբ կ'ոնդէք թէ դուք աղօթքով և ծոմապահութեամբ զբաղած էք, տէր Հայր. այնպիսի սրբապղծութեան մը վրէժն առնելու պարտաւոր ես։

— Արդարև վրէժխնդրութեան հակամէտ եմ — մրմռաց Սէտրիկ — Ս. Վիթոլտ իմ սիրտս կ'ճանչէ։

Նոյն միջոցին Ֆրոն-տը-Պէօն կրօնաւորը կ'առաջնորդէր դէպ 'ի դռնակը. լոկ տախտակի մը վրայ կամուրջն անցան, զգուիկ պատնէշի մը հասան, որ արտաքին պատին հետ հաղորդակցութիւն ունէր խիստ ամրապինդ դռնով մը։

— Հիմակ, դուրս ելլ գնա, և եթէ լաւ կատարես պատգամաւորութիւնդ և ապա այս տեղ դառնաս, սաքսօնի միս աւելի աժան պիտի գտնես քան Շէֆֆիլտի սպանդանոցին մէջ խոզի միս։ Մտիկ ըրէ, դուզուարթ խոստովանահայր մը կ'երևիս ինձ։ Կուէն Ետքն այս տեղ եկուր Մալվուազիի գինի այնչափ շատ պիտի գտնես խմելու որչափ որ պէտք է բոլոր վանատունդ ընկղմելու։

— Անշուշտ վերատին պիտի տեսնուինք — պատասխանեց Սէտրիկ։

— Ու այժմ առ սա պարգևն — ըսաւ նորմանն, և անոր ձեռքը սահեցուց ոսկի մը և ապա յարեց. — Քաջ յիշէ որ եթէ խօսքդ չկատարես՝ կնգուղիդ հետ գլխիդ կաշին պիտի հանեմ։

— Եւ քեզի կատարեալ արտօնութիւն պիտի տամ թէ մին և թէ միւսը հանելու — պատասխանեց Սէտրիկ դռնակէն դուրս ելնելով և մեծաքայլ դաշտին մէջ երթալով — եթէ 'ի դարձին մեծագոյն բանի չարժանանամ։ Յետոյ դղեկին կողմը դառնալով՝ ոսկին ասպետին նետեց, և նոյն պահուն գոչեց. — Կեղծաւոր նորման, ստակդ քեզի հետ գետինն անցնի։

Ֆրոն-տը-Պէօ այս խօսքն այն ինչ լսեց, բայց Սէտրիկի շարժումը կասկած տուաւ իրեն, ուստի,

— Աղեղնաւոր — ըսաւ պարսպին վրայ կեցող պահակին — նետ մը ղրկէ նայիմ սա կրօնաւորին քամակէն, բայց սպասէ — ըսաւ նա՝ մինչև դեռ պահակն աղեղը կ'լարէր — անօգուտ է, անոր վատահելու ստիպուած ենք, քանի որ լաւագոյն միջոց մը չունինք։ Կարծեմ թէ զիս չպիտի համարձակի մատնելու։ Սակայն եթէ գործն անյաջող երթայ, կրնամ բանտարկեալ շանորդի սաքսօններու հետ բանակցիլ։ Էյ, քեզի կ'ըսեմ, Կայլս բանտապահ, առջևս բեր Ռոթէրվուտի Սէտրիկն և իր միւս գեղջուկ ընկերակիցն, այսինքն Գոնինկսբրիկին, այն Ամէլստէյնը, կամ ինչպէս կ'կոչուի։ Իրենց անուններըը միայն նորման աս-

պետի մը բերանը կ՝ընուն և կարծես թէ Ճարպ կ՝հոսին։ Բաժակ մը գինի բերէք ինձի, ինչպէս կ՝ըսէր զուարթագին ՃՕՀՆ իշխանն, որպէս զի բերանս լուամ։ Գինին գինարանը տարէք և կալանաւորներն ալ անդ բերէք։

Իր հրամանները կատարուեցան, և երբ այն կոթական սրահը մտաւ ուր կախուեր էին իր և Հօրն արիութեամբը վաստակած կողոպուտները, սեղանին վրայ գաւաթ մը գինի գտաւ և երկու սաքսօն կալանաւորները չորս զօրականներու պահպանութեան ներքև։ Ֆրօն—տը—Պէօ գաւաթը մինչև յատակը պարպեց և ապա խօսքը կալանաւորներուն ուղղեց։ Այն ձևն որով Վամպա երեսին վրայ ծածկեր էր գդակը, զգեստի փոփոխութիւնը, սրահին մթութիւնն և ասպետին անկատար Ճանաչումը Սէտրիկի կերպարանին (քանի որ սա նօրման դրացիներէն կ՝խորշէր և հազիւ ուրեմն իր կալուածներէն դուրս կ՝ելնէր) արգելք եղան իրեն դիտելու որ իր գերիներէն ամենէն նշանաւորը խոյս տուեր էր։

— Քաջ անկլխացիներ — ըսաւ Ֆրօն-տը-Պէօ — միթէ Դօրկիլստոնի մէջ ձեզի եղած ընդունելութիւնը հաճելի կ՝գտնէք։ Միթէ գիտէք թէ քանի պատժապարտ էք որ Անժուի տան իշխանի մը տուած խնջոյքը սուրերեստութեամբ և ամբարտաւանութեամբ ծաղր ըրիք։ Միթէ մոռցա՞ք թէ ինչպէս անարժան կերպով վարուեցաք վեհանձն ՃՕՀՆ իշխանին հիւրասիրութեան դէմ։ Ասուած և Ս. Տընիս վկայ, եթէ հարուստ փրկանք մը չհատուցանէք՝ սա պատուհաններուն երկաթէ ձողերէն գլխիվար պիտի կախեմ ձեզ՝ մինչև որ շահէններն ու անպղերը ձեր մարմինը կմախք դարձընեն։ Խօսեցէք, շուն սաքսօններ, ձեր ողորմելի կենաց փոխարէն ի՞նչ պիտի վճարէք ինձ։ Դու ի՞նչ կ՝ըսես, Պ. Ռօթէրվուտ։

— Թանկ մ՝անգամ՝ չեմ վճարեր — պատասխանեց Վամպա — իսկ գիս գլխիվար կախելուդ դալով, իմ ըղեղս վեր դարձած է, կ՝ըսեն, փաթթոց կապելէս հետէ, ուստի եթէ ոտքէս կապելով կախես գիս, թերևս ըղեղս տեղը գայ։

— Սուրբ Ժէնրվիէվ — ըսաւ Ֆրօն-տը-Պէօ — ո՞վ է այս մարդը։

Եւ իր ձեռքի կորնթարթով Սէտրիկի գդակը միմոսին գլխէն վար նետելով՝ տեսաւ նա սարկութեան դժնդակ նշանն, այսինքն արծաթէ մանեակ մը վզին բոլորտիքը։

— Կայլս, Քլէմանդ, շուն սպասաւորներ — գոչեց զայրագին նօրմանն — ի՞նչ բերիք ինձի այս տեղ։

— Կարծեմ թէ ես կրնամ ըսել քեզի — ըսաւ Պրէսի, որ նոյն պահուն արահը կ'մտնէր։ — Այս մարդը Սէտրիկի միմոն է, որ Եօրքցի Իսահակին դէմ առնական մարտ մը մղեց տեղի նախապատուութեան խնդրոյ մ'առթիւ։

— Այս խնդիրն երկուքին համար ալ պիտի կարգադրեմ — պատասխանեց Ֆրոն-տը-Պէօ։ — Երկուքնին ալ նոյն կախաղանէն պիտի կախեմ, եթէ իր տէրն և Գօնթենկպրրկի սա խոզն իրենց կեանքն աղատելու համար փրկանք չվճարեն։ Սակայն իրենց հարստութիւնը տալ տակաւին մեծ բան մը տուած չեն լինիր, պէտք է նաև միասին տանին այս դղեակս պաշարող գուռնն, իրենց կարծեցեալ արտօնութիւններէ հրաժարին և մեր իշխանութեան ներքև իբրև սարուկ և հպատակ ապրին. թոզ ինքզինքնին երջանիկ համարին, եթէ՝ նոր սկսելիք աշխարհին մէջ, ներենք իրենց որ շունչ առնուն։ Գացէք — ըսաւ իր երկու սպասաւորներուն — և ինձի բերէք ճշմարիտ Սէտրիկն, և այս անգամ միայն կ'թողում ձեր սխալմունքը, նա մանաւանդ անոր համար որ խենդ մը սաքսօն Ֆրանքլինի տեղ առեր էք։

— Հա՛, բայց — ըսաւ Վամպա — ձեր ասպետական վսեմութիւնը պիտի տեսնէ հիմակ որ մեր մէջ աւելի խենդեր կան քան թէ Ֆրանքլիններ։

— Ի՞նչ ըսել կ'ուզէ այս անզգամը — հարցուց Ֆրոն-տը-Պէօ՝ իր ծառաներուն երեսը նայելով, որ ծանր ծանր և ակամայ խոստովանեցան որ, եթէ ներկայ եղողը Սէտրիկը չէ, չգիտէին թէ ինչ եղեր է։

— Երկնի՛ց սուրբերուն վրայ կ'երդնում — գոչեց Պրէսի — որ կրօնաւորին զգեստով փախուստ տուած պիտի լինի։

— Դժոխքի սադաններ — մռնչեց Ֆրոն-տը-Պէօ — ուրեմն Ռօթէրմլուտի խոզն էր որ դուռնակէն դուրս հանելով անձամբ առաջնորդեցի։ Եւ դո՛ւ — ըսաւ նա Վամպային — դու յիմարութեամբդ կարող եղար քեզնէ աւելի ապուշներու իմաստութիւնը պատրել, քեզի սրբազան կարգ պիտի տամ, գանկդ պիտի ածիլեմ. . . : Շուտով այս յիմարին գլխուն մորթը գերծեցէք, և պարիսպներէն անդին նետեցէք։ Ուրեմն քու արուեստդ կատակն է, լա՛ւ, հիմակ եթէ կ'համարձակիս միմնաութիւնդ գործածէ։

— Ասպետդ իմ, իմ ակնկալածէս աւելի լաւ կ'վարուիս ինձի հետ — ըսաւ խեղճ Վամպա լալով, որ իր ծաղրածու սովորութիւնները չէր կարողցեալ, նոյն իսկ մօտալուտ մահուան մ'երևոյթին առջև — եթէ ինձի ըսած կարմիր դդակդ տաս, ինձի պէս պարզ կրօնաւոր մը կարտիճալ պիտի ընես։

— Խեղճ մարդն — ըսաւ Պրէսի — որոշեր է իր պաշտօնին մէջ մեռնիլ։ Ֆրօն-տը-Պէօ, մի սպաններ զանի։ Տուր ինձի սա միմոն որպէս զի իմ ազատական դունդս զուարճացընեմ։ Դու ի՞նչ կ'ըսես ասոր, անզգամ։ Կ'ուզէս ներում ընդունիլ և ինձի հետ պատերազմի երթալ։

— Այո՛, իմ սիրոյս Հրամանատ — ըսաւ Վամպա — վասն զի, կը տեսնէք սա — յարեց նա իր մանեակը ցոյց տալով — չեմ կարող զայն ձգել առանց անոր Հաւանութեան։

— Ո՛Հ, նօրման ազգ մ'իսկոյն սաքսօն մանեակ մը կրնայ կտրել — պատասխանեց Պրէսի։

— Այո՛, ազնիւ ասպետ — ըսաւ Վամպա — և այսպէս կ'ըսէ ասուակը.

Կաղնոյն վրայ անկլիսան ազգն նօրմանին կ'այ,
Նօրմանին ձանր լուծ անկլիացւոյն վզին վրայ.
Դիւալ նօրմանին է անկլիացւոյն մէջ պնակին,
Ղեկ Անկլիոյ կայ նօրմանի +մայսկան յեռին,
Ե՞ ելքէ+ ղանի օր պէտանելի+ Անկլիա
Մինչ որ այս ընրուին իսկոյն ղապտի նա։

— Իրաւի, շատ բարեսիրտ ես, Պրէսի — պոչեց Ֆրօն-տը-Պէօ — որ յիմարի մը խենդ ու խելառ խօսքերը մտիկ կ'ընես, մինչդեռ մեր կործանումը կ'պատրաստուի։ Միթէ չէ՞ս գիտեր որ մեր խորհուրդն 'ի դերև ելաւ, քանի որ մեր դրսի բարեկամներու հետ հաղորդակցելու միջոցը ջնջեցաւ նոյն իսկ այս խաւուտիկ պարոնէն՝ որուն պաշտպանը կ'կանգնիս։ Այսու հետև ի՞նչ բանի կրնանք յուսալ, բայց եթէ անմիջական յարձակումի մը։

— Ուրեմն պարիսպն ելնենք — ըսաւ տը Պրէսի։ — Ե՞րբ գիս այնքան ծանրաբլուխ սեսած ես որչափ Ճակատամարտի ժամանակ։ Կանչէ վարի տաճարականն, և թող պատերազմի իր Ուխտին համար ցոյց տուած քաջութեան կէսին չափ կենացը համար գործածելով։ Դու ևս քու սուար մարմնովդ պարիսպն ելիր, ես ալ իմ կերպովս թեթև ձիգ մը պիտի ընեմ, և հաւատի եղիր որ եթէ սաքսօն վտարակները ամպերն ելնելու կարողանան, այն ատեն թերևս կարենան նաև Դօրդիլեոնի դղեակն 'ի վեր ելնել։ սակայն եթէ այն աւազակներուն հետ բանակցիլ կ'ուզես, ինչո՞ւ համար սա արժանի Ֆրանքլինի միջնորդութիւնը չես գործածեր, նա որ խորին հիացմամբ դինիդ բաժակը կը

նկատէ։ Դայիմ քեզ — շարունակեց տը Պրէսի բաժակ մը լեցուն գինի տալով անոր — սա ընտիր գինիով լուա կոկորդդ, և ոյժ առ մեզի ըսելու համար թէ ինչ պիտի ընես աղատութիւնդ ձեռք ձգելու համար։

— Ինչ որ տոհմիկ մարդ մը կրնայ ընել իր պատիւն անարատ պահելու — պատասխանեց Ամէլստէն։ — Թոյլ տուէք որ իմ ընկերներուս երթամ, և հազար մարկ փրկանք կ'վճարեմ ձեզի։

— Եւ միթէ կ'ապահովեմ մեզ որ սա սինքբոր ամբոխն՝ որ դղեկիս չորս կողմն կ'սխտան՝ Աստուծոյ և թագաւորին խաղաղութեան հակառակ, պիտի առնուս տանիս այս կողմերէն — հարցուց Ֆրօն-տը-Պէօ։

— Որչափ որ կարողութիւնս ներէ պիտի յորդորեմ որ քաշուին, և տարակոյս չունիմ որ իմ ծերունի բարեկամս Սէտրիկ ըստ կարի ինձ աջակից պիտի գտնուի։

— Ուրեմն համաձայն ենք — ըսաւ Ֆրօն-տը-Պէօ։ — Դու և քուկիններդ ազատ պիտի արձակուիք, և երկուստեք հաշտութիւն պիտի հաստատուի՝ հազար մարկ հատուցանելու պայմանաւ։ Ընչին դուռմար մ'է այս, սաքսօն, և պարտաւոր ես շնորհապարտ լինիլ որ այս չափաւոր փրկանքը կ'պահանջեմ ձեր անձերուն համար։ Բայց պէտք է գիտնալ որ մեր պայմանադրութեան մէջ Եօրքցի Իսահակը չկայ։

— Եւ ոչ հրէին աղջիկն — ըսաւ տաճարականն՝ որ նոյն միջոցին անոնց միացեր էր։

— Անոնցմէ և ոչ մէկն այս սաքսօնին խմբէն չէ — յարեց Ֆրօն-տը-Պէօ։

— Անարժան քրիստոնէի անունը պիտի կրէի — ըսաւ Ամէլստէն — եթէ մեր խմբէն լինէին։ Այն անհաւատներուն հետ ըստ հաճոյս վարուեցէք։

— Նոյնպէս օրիորդ Ռովէնա մեր պայմանէն դուրս է — յարեց տը Պրէսի։ — Չպիտի ըսեմ սակայն որ այնպիսի աղտոտ որս մը ձեռքէս կորզեցին առանց մենամարտութեան։

— Մեր պայմանադրութիւնը չվերաբերիր նաև սա թշուառ միմոսին — վրայ բերաւ Ֆրօն-տը-Պէօ։ — Միտք ունիմ իբրև օրինակ ընծայել այն բոլոր անզգամներուն որ ամէն նուիրական բաներ կատակի կը դարձընեն։

— Օրիորդ Ռովէնան — պատասխանեց Ամէլստէն մեծ հաստատամտութեամբ — իմ նշանածս է, և վայրի ձիերէ գեռնադարշատակիլ լաւ կ'ուզեմ քան անորմէ հեռանալ։ Վամպա ստրուկն այսօր իմ հօրս

Սէտրիկին կեանքն ազատեց, և իմն կորուսելու պատրաստ եմ քան թեղուլ որ անոր մաղին իսկ դպին։

— Օրիորդ Ռովէնա, քու նշանածդ, քեզի պէս աւատատէրի մը նշանածը — գոչեց տը Պրէսի։ — Սաքսօն, դու այնպէս կ'երազես թէ Եօթնապետութեան օրերը հասած են։ Քաջ գիտցիր որ Անժուի տան իշխանները չեն ներեր բնաւ որ իրենց սանուհիները քու ցեղիդ մարդկան հետ ամուսնանան։

— Իմ ցեղս, գոռոզնօրման — պատասխանեց Ամէլստէյն — աւելի յստակ և հին աղբիւրէ մը կ'սերի քան մուրացիկ գաղղիացիի մը ցեղն, որ իր ապրուստը կ'ճարէ ողորմելի դրօշակին ներքև ժողոված գողերուն արիւնը ծախելով։ Թագաւորներ էին իմ նախնիքս, կորովի՝ ի մարտ և իմաստուն խորհուրդներու մէջ. անոնք իրենց պալատին մէջ ամէն օր հարիւրաւոր հաւատարիմ հպատակներ կ'սնուցանէին քան թէ դուք վարձկան սպասաւորներ. թագաւորներ՝ որոց փառքը վիպասանները կ'երգէին, օրէնքը՝ Վաղնաժմոդի մէջ կ'յիշուէին, ոսկորտիքը սրբոց օրհնութեամբը կ'թաղուէին, և որոց գերեզմաններու վրայ փառաւոր եկեղեցիներ կանգնեցան։

— Առիր հիմակ, տը Պրէսի — ըսաւ Ֆրօն-տը-Պէօ, որ շատ գոհ էր իր ընկերին ընդունած պատասխանէն։ — Սաքսօնն աղուոր մը լուաց քեզ։

— Աղուոր մը, որչափ որ դերի մը կրնայ զարնել — ըսաւ տը Պրէսի շինովի անհոգութեամբ մը — վասն զի, պէտք է ազատ լեզու ունենայ այն որուն ձեռները կապուած են։ Բայց քու պատրաստաբան լեզուդ — յարեց նա Ամէլստէյնի դառնալով — օրիորդ Ռովէնայի ազատութիւնը չպիտի կարենայ ստանալ։

Ամէլստէյն՝ որ արդէն՝ իր սովորութեան հակառակ՝ այնպիսի կարևոր խնդրոյ մը վրայ երկար ճառ մը խօսեր էր, տը Պրէսիի վերջին նախատանաց պատասխան չտուաւ։ Միւս կողմէ խօսակցութիւնն ընդհատեցաւ սպասաւորի մը գալովն, որ իմաց տուաւ թէ կրօնաւոր մը դռնակին մօտ կ'սպասէ և յանուն սուրբ Պէնէդի ներս մտնել կ'խնդրէ։

— Յանուն Ս. Պէնէդի, այս թափառաշրջիկներուն թագաւորն — ըսաւ Ֆրօն-տը-Պէօ — միթէ այս անպամ եկողը ճշմարիտ կրօնաւոր մ'է, թէ ուշուրիշ խաբեբայ մը։ Վրան դլուխը նայեցէք, ստրուկներ, վասն զի՝ եթէ վերստին խաբուիք, ձեր աչերը պիտի փորել տամ, և անոնց փոսերուն մէջ հրակէզ ածուխներ պիտի դնեմ։

— Ձեր բարկութիւնն իմ վրայ թափեցէք, տէր իմ — ըսաւ Կայը

— Եթէ նորեկ մարդը Ճշմարիտ կրօնաւոր մը չէ։ Զեր Ժողովին Ձիապանն որ քաջ կ՚Ճանչէ զանի, կրնայ ըսել ձեզի որ Հայր Ամպրուազն է, Ժողովոյի վանահօր մէկ սպասարկու վանականը։

— Ներս հրամցուր — ըսաւ Ֆրօն-տը-Պէօ — շատ հաւանական է որ իր զուարթ մեծաւորին կողմէ մեզի լուր կ՚բերէ։ Իրաւի, սատանաները տօն ունին, և քահանաներն իրենց պաշտօնէն ազատ կ՚երևին, քանի որ այսպէս ամենուրեք կ՚թափառին։ Սա կալանաւորները տարէք, և դու սաքսօն, լաւ մտածէ ըսած բաներուդ վրայ։

— Կ՚պահանջեմ — ըսաւ Ամէլատէին — որ զիս պատուով հոգան իմ բանտիս մէջ և պէտք եղած խնամքը տանին իմ աստիճանի մարդու մ՚որ իր փրկանքին համար բանակցութեան մէջէ։ Ասկէ զատ՝ կ՚հրաւիրեմ ձեր մէջ ինքզինքն ամենէն արիասիրտ համարողը պատասխանել ինձ թէ ի՞նչ իրաւամբ իմ ազատութիւնս կ՚բռնաբարեն։ Այս մենամարտութեան հրաւէրը քեզի արդէն ղրկեցի Ձիապանիդ միջոցաւ, դու զայն ընդունեցար և պարտաւոր ես պատասխան տալու։ Ահաւասիկ իմ թաթպանս։

— Իմ գերիս մարտահրաւէրին չեմ պատասխաներ — ըսաւ Ֆրօն-տը-Պէօ — և դու ևս պէտք չէ որ պատասխան տաս Մօրիս տը Պրէսի։ Կայլս — շարունակեց նա — Ֆրանքլինին թաթպանն առ կախէ սա վարի եղնիկի եղջիւրներէն. այն տեղ թող մնայ այն մինչև որ տէրն իր ազատութիւնը գտնէ։ Եթէ այն ատեն համարձակի զայն խնդրելու, կամ եթէ պնդէ որ ապօրինի իմ գերիս եղած է, սուրբ Քրիստոֆորի կամարին վրայ կ՚երդնում՝, որ այնպիսի մարդու մը հետ գործ պիտի ունենայ որ երբէք իր թշնամւոյն հետ չափուիլ չմերժեց թէ հետի, թէ ձիով, թէ առանձին և թէ իր աւատատէրներու գլուխն անցած։

Հէ՛ պէս սաքսօնը գերիներն առին տարին, և նոյն պահուն՝ ներս բերին Հայր Ամպրուազ՝ որ մեծ վրդովման մէջ կ՚երևէր։

— Ահաւասիկ Ճշմարիտ Ասորաց ընդ Յեղն — ըսաւ Վամպա՝ վերապատուելի վանականին քովէն անցնելու ատեն — միտները շինծու էին։

— Սուրբ Տիրամայր — գոչեց վանականը՝ ներկայ ասպետներուն խօսելով — վերջապէս քրիստոնեայ ընկերութեան մը մէջ ապահով կը գտնուիմ։

— Այո՛, ապահո՛վ ես — պատասխանեց տը Պրէսի — և եթէ քրիստոնեաներ կ՚ուզես, ահա այս տեղ է ուժեղ Ռէժինալտ Ֆրօն-տը-Պէօ սեպուհն, որ հրէաները սաստիկ կ՚ատէ, և տաճարի բարի աս-

պետ Պրայն տը Պուա Կիլպէր, որուն պաշտօնն է սարսափինացիներ ապաննել. . . : Եթէ սատնք քրիստոնէութեան լաւ նշաններ չեն, լաւագոյնը չունիմ քեզի ընծայելու :

— Դուք Ժորվէյի վանահայր Էյմէրի բարեկամներն ու դաշնակիցներն էք 'ի Քրիստոս — ըսաւ կլօնաւորն, առանց տը Պրէսիին պատասխանի կերպը դիտելու : Դուք՝ իբրև Հաւատասէր ասպետներ և բարեպաշտ քրիստոնեաներ՝ պարտաւոր էք անոր օգնել և պաշտպան կանգնիլ : Վասն զի՝ ի՞նչ կ'ըսէ Ս. Օգոստինոս իր Ապոստոլոյ թղթոց գրքին մէջ :

— Ի՞նչ կ'ըսէ սատանան — ընդմիջեց Ֆրօն-տը-Պէօ — կամ լաւ ևս դու ի՞նչ կ'ուզես, քահանայ : Բնաւ ժամանակ չունինք սուրբ Հայրապետներէն վկայութիւններ մտիկ ընելու :

— Սուրբ Մարիամ — գոչեց Հայր Անպրուազ — ինչպէս շուտով կ'բարկանան այս պղծագործ աշխարհականները : Բայց պարտաւոր եմ ձեզի յայտնելու, քաջ ասպետներ, որ քանի մ'անօրէն մարդասպաններ, Աստուծոյ երկիւղն և եկեղեցւոյ պատկառանքը մոռնալով, և ոչ իսկ սուրբ Աթոռին կոնդակը յարգելով, եթէ ոք 'ի սոքանէ հրաժարեալ . . . (si quis, suadente diabolo . . .)

— Տէր Հայր — ըսաւ տաճարականն — այդ ամէնը դիտենք կամ կը դուշակենք : Մեզի պարզապէս ըսէ թէ արդեօք քու մեծաւորդ, վանահայրը դերի՞ ընկած է և որո՞ւ ձեռքը :

— Իրաւի — ըսաւ կլօնաւորը — Բելիարայ զաւակներուն ձեռքն ընկած է, որ անտառները կ'թափառին և Սուրբ Գիրքը կ'անգոսնեն. «Մի՛ դպչիք Տիրոջ օծելոյն և մի՛ վնասէք իմ մարգարէից :»

— Ահաւասիկ նոր փաստ մը մեր տուրերուն համար, պարոններ — ըսաւ Ֆրօն-տը-Պէօ՝ իր ընկերներուն դառնալով — և այսպէս Ժորվէյի վանահայրը մեզի օգնութեան դալու տեղ մեզնէ օգնութիւն կը խնդրէ : Այս ծոյլ եկեղեցականները մարդու շատ կ'օգնեն արդարև երբ վտանգի մէջ գտնուին : Բայց, տէր Հայր, խօսէ՛ և յայտնէ՛ մեզ իսկոյն թէ մեծաւորդ ի՞նչ բան կ'յուսայ մեզնէ :

— Հրամանաւդ, տէր իմ, պարտիմ ըսել որ իմ վերապատուելի մեծաւորս բռնի ձերբակալ ըրին, արդէն յիշած սրբազան պատուէրիս հակառակ, և Բելիարայ որդիներ իր տնտուկներն ու պարկերը խառնելէն ետև՝ երկու հարիւր մարկ զուտ և բարակ ոսկին կողոպտեցին : Ասկէ զատ՝ մեծ դումար մը կ'պահանջեն որպէս զի իրենց ամբարիշտ ձեռքէն զանի ազատ թողուն : Հետևապէս վերապատուելի վանահայրը

կ՚աղաչէ ձեզ, իբրև իր սիրելի բարեկամները, զինքն ազատելու, կամ խնդրուած փրկանքը վճարելով, կամ զինուց միջոցաւ, ըստ ձեր կամայ։

— Սատանան տանի վանահայրը — գոչեց Գրօն-տը-Պէօ։ — Կ՚երևի թէ առտու կանուխ շատկեկ զինի տնկեր է։ Քու մեծաւորդ ի՞նչ տեսած ունի որ նօրման սեպուհ մ՚իր քսակը բանայ եկեղեցական մ՚օգնելու համար, քանի որ նոյն եկեղեցականին պարկերը մեր քսակէն տասն անգամ աւելի ծանր են։ Եւ ի՞նչպէս կրնանք ազատել զանի զինու զօրութեամբ քանի որ մենք թուով աւելի նուազ ենք և ամէն վայրկեան արձակումի մը կ՚սպասենք։

— Ես ալ ճիշտ նոյն բանը պիտի ըսէի ձեզ — պատասխանեց կրօնաւորը — բայց դուք անհամբեր էք և ինձ ժամանակ չէք թողուր խօսելու։ Բայց Աստուած օգնէ ինձ, ես ծեր եմ և այս վտարակներու տեսքը ծերունիի մ՚ուղեղը վրդովելու կ՚բաւէ։ Արդարև բանակատեղի մը կ՚շինեն, և այս դղեկիս պարսպին դիմացը պատնէշ մը կ՚կանգնեն։

— Պարիսպն ելնենք — գոչեց տը Պրէսի — և նայինք թէ սա գեղջուկները դուրսն ի՞նչ կ՚ընեն։

Այս ըսելով՝ վանդակաւոր պատուհան մը բացաւ՝ որ տեսակ մը տանեստանի կամ սրածայր պատշգամի վրայ կ՚նայէր, և անկից սրահին մէջ գտնուողներուն պոռաց. — Ս. Տընի վկայ, ձեր կրօնաւորին տուած լուրերը ստոյգ են։ Պահպանակներ (mantelet) և պատնէշներ յառաջ կ՚քշեն և աղեղնաւորներն անտառին շաւղին վրայ կ՚խմբին փոթորկէն առաջ երևցող սև ամպի մը պէս։

Ռէժինալտ Գրօն-տը-Պէօ ևս դաշտին վրայ նայելով, իսկոյն իր որսորդութեան շեփորն առաւ և երկայն ու սուր ձայն մը հանելէն ետև՝ իր զինուորներուն հրաման տուաւ որ ամէն մէկը պարսպին վրայ իր պաշտօնին երթայ։

— Տը Պրէսի, արևելքի կողմը հսկէ՝ ուր պատերն այնքան բարձր չեն։ Ագնիւ Պուա Գիլպէր, քու արուեստդ սորվեցուցած է քեզ ինչպէս յարձակիլ և պաշտպանել պէտք է, դու ալ արևմտեան կողմը հսկէ։ Իսկ ես աշտարակը պիտի ելնեմ։ Սակայն զարձեալ ձեր բոլոր ճիգը միայն վայր մը մի՛ թափէք, աղնիւ բարեկամներ։ Այսօր պէտք է որ ամէն տեղ գտնուինք և կարելի եղածին չափ բազմապատկուինք։ Քիչուոր են մեր բազուկները, սակայն մեր պակասը կրնանք լեցընել գործունէութեամբ և արիութեամբ, քանի որ մեր հակառակորդները գեղջուկներ և թափառաշրջիկներ են։

— Բայց, աղնիւ ասպետներ — գոչեց Հայր Անպրուաղ, այն գոռ ու գոչումին մէջ որ մարտական պատրաստութեանց արդիւնքն էին — միթէ ձեզնէ մէկը չպիտի մտիկ ընէ Էյմէր Հոգևոր մեծաւորիս պատգամաւորութիւնը. կ'աղաչեմ միտ դրէք ինձ, աղնիւ Ռէժինալտ։

— Գնա աղաչանքդ Աստուծոյ ուղղէ — պատասխանեց վայրագ նօրմանը — վասն զի մենք որ երկրիս վրայ ենք, ձեզի մտիկ ընելու ժամանակ չունինք։ Էյ, Անսէլմ, նայէ որ ձիւթն ու եղն եռան և պատրաստ լինին որպէս զի սա յանդուգն դաւաճաններու գլուխը թափենք։ Ծեր ցուլի գլուխ ունեցող դրօշակս վերը քաշէ. այս ելուզակները պիտի տեսնեն իսկոյն թէ որո՞ւ հետ է իրենց գործը։

— Բայց, աղնիւ տէր — շարունակեց կրօնաւորն՝ անոր ուշադրութիւնը գրաւելու փորձ փորձելով — իմ հնազանդութեան ուխտս յիշէ և թոյլ տուր ինձ մեծաւորիս յանձնարարութիւնը կատարել։

— Առէք տարէք սա շաղակրատն — ըսաւ Ֆրօն-տը-Պէօ — զանի մատրան մէջ փակեցէք, թող իր աղօթագիրքը կարդա մինչև կռուին վերջը։ Նոր բան մը պիտի երևի Դօրդիլսդօնի վիմաշէն սուրբերու համար ողջոյնները և Հայր Ժէրնէր լսելը. կարծեմ թէ քարէ արձան դառնալէն վեր՝ այսպիսի տօն մը տեսած պիտի չլինին։

— Սրբոց դէմ մի հայհոյեր, Ռէժինալտ — ըսաւ տը Պրէսի — անոնց օգնութեան կարօտ պիտի լինինք սա սինլքոր խումբերը վանելու համար։

— Ես անոնց կողմէ օգնութիւն չեմ սպասեր պատասխանեց Ֆրօն-տը-Պէօ — միայն եթէ պարիսպներուն վրայէն սա աւազակներուն գլխուն զանոնք իջեցընենք։ Վարը հին սուրբ Քրիստոֆ մը կայ անօգուտ. այն միայն բաւական է ամբողջ գունդ մը գետնին տակն անցընելու։

Նոյն պահուն տաճարականը պաշարողներուն ընթացքը կ'քննէր աւելի ուշադրութեամբ քան վայրագ Ֆրօն-տը-Պէօ և իր թեթևամիտ ընկերակիցը։

— Ուխտս վկայ — գոչեց նա — այս մարդիկը մեր կարծածէն աւելի մարզական արուեստով կ'մօտենան դղեկին, թէև չգիտենք թէ ո՞վ է մարզիչը։ Նայեցէք մի անգամ ինչ հնարագիտութեամբ օգուտ կ'քաղեն ծառերու և թփերու ընծայած ամէն մէկ պատսպարանէն, որպէս զի մեր աղեղնաւորներու նետերէն պահպանուին։ Անոնց մէջ ոչ դրօշակ կ'տեսնեմ և ոչ ռայ, և սակայն իմ ոսկի շղթաս գրաւ կ'դնեմ որ ռազմագիտական արհեստին մէջ Ճարտար ասպետ կամ զատորդի մը պիտի ունենան իբրև առաջնորդ։

— Ես կ'նշմարեմ այն անձը — գոչեց տը Պրէսի — կ'տեսնեմ ապետի մը սաղաւարտին կատարին ծածանիլն և զէն ու զարդին շողալը։ Դիտեցէք և դուք սա բարձրահասակ մարդը, սև գրահով որ անպիտան գեղջուկ զինուորներ 'ի Ճակատ կ'յարդարէ։ Ս. Տընի վկայ, կարծեմ թէ այն մարդն է զոր ՍԼ ՊԱՊԷԼՊՈՊ անուանեցինք, և քեզ ձիէն վար նետեց, Գրօն-տը-Պէօ, Էշալիի նիզակախաղ գուպարին մէջ։

— Աւելի աղէկ — ըսաւ Գրօն-տը-Պէօ — իմ վրէժս լուծելու առիթ մը կ'տայ ինձ։ Կ'երևի թէ անանուն մարդ մ'է որ չհամարձակեցաւ դիպուածով շահած մրցանակը պահանջելու։ Ընդունայն սիտէ փնտռէք զանի այն տեղն ուր ասպետներ և ազնուականներ իրենց ոսոխներու կ'հանդիպին, և արդարև ուրախ եմ որ այս անարդ գնդին մէջ կ'գտնուի։

Խօսակցութիւնն ընդհատեցին երբ տեսան որ թշնամին մօտենալու նշաններ կ'ցուցնէ։ Ասպետներն իրենց յատուկ յատուկ տեղը բռնեցին, իրենց քիչուոր զինուորներու գլուխն անցած, և անոնց թիւը բաւական չէր բոլոր պարսպին շրջապատը պաշտպանելու։ Սակայն դարձեալ անվեհեր և պաղարիւնութեամբ սպառնալի յարձակումին դէմ գնելու պատրաստուեցան։

ԳԼՈՒԽ ԻԸ

Մարդիկներէ անջատ՝ այս ազգ թափառական,
Պանծալի են սակայն մէջ արհեստից մարդկան.
Ցով, անտառ, անապատ՝ ուր դեգերին անդուլ,
Գաղտնի իրենց գանձեր կ'բանան ձրիատուր.
Եւ աննշան խոտեր, ծաղիկներ և ծիլեր,
Երբ ժողովեն անոնք՝ պարգեն անլուր դեղեր։

ՀՐԷՍՑԿ

Հարկ է որ քանի մը քայլ ետ առնունք մեր պատմութեան մէջ՝ որպէս զի ընթերցողը ծանօթացընենք քանի մը կարևոր իրողութիւններու վրայ, որով պիտի կարող լինի այս նկարագրին շարունակութիւնն ըմբռնել։ Անտարակոյս իր միտքը գուշակել տուած է իրեն որ, երբ Իվանօէ վար ընկաւ և բոլոր մարդիկներէ անոք ու անօգնական մնաց, Ռեպեկայի թախանձանաց վրայ էր որ իր հայրը յանձն առաւ քաջարի մենամարտիկը մրցարանէն հանել և տանիլ այն տունն՝ ուր առ ժամանակ մը հրէաները կ'բնակէին Էշալիի աւանին մէջ։

Ուրիշ պարագայի մէջ դժուարին չպիտի լինէր Իսահակն այս բարեգործութեան յորդորել, քանի որ մարդասէր և բարեսէր զգացումներ ունէր, սակայն իր հալածեալ ցեղին պաշտպանութիւնն ու խղճահարութիւններն ալ ունէր, և ահա այս հանգամանքն ընկճել էր դործը։

— Սուրբ Աբրահամ — գոչեց նա — բարեսիրտ պատանի մ՝է այս, և իմ՝ սիրտս կ՝արիւնի քանի կ՝տեսնեմ իր արեան հոսելն ասղենկար ձոշն և ընտիր կերպասէ լանջպանակին վրայ, բայց ինչպէս տանիմ զանի մեր տունն, աղջիկս, միթէ քաջ խորհեցար այս բանին վրայ։ Քրիստոնեայ մ՝է, և՝ Մովսիսի օրինաց համեմատ՝ մինակ մեր աւանդական շահուն համար պարտաւոր ենք օտարին և հեթանոսին հետ յարաբերութիւն կապել։

— Այսպէս մի խօսիր, սիրելի հայր իմ՝ — պատասխանեց Ռեպեկա — արդարև՝ ներելի չէ մեզ ինքնայից և տօներու ատեն անոնց հետ խառնուիլ, բայց երբ թշուառ ու վիրաւոր է՝ հեթանոսն ալ հրէին եղբայրը կ՝դառնայ։

— Ա՝փափաքէի իմանալ թէ Յակոբ պէն Դուտէլա ռաբբին ինչ կարծիք ունի այս մասին — պատասխանեց Իսահակ — բայց դարձեալ պէտք չէ թողուլ որ այս պատանին իր արիւնը մահու չափ կորուսէ։ Ուստի թող Սէթ և Ռուբէն զանի Էշպի փոխադրեն։

— Ո՛չ, թող զանի դեսպակիս մէջ դնեն — ըսաւ Ռեպեկա — ես ձիու մը վրայ կ՝հեծնեմ։

— Բայց այդ կերպով Իսրայէլի և Եդոմի շուներուն աչքին պիտի երևիս — փութացաց Իսահակ՝ կասկածոտ ակնարկ մը նետելով չորս դին կեցող բազմաթիւ ասպետներուն և ախոյեաններուն։ Սակայն Ռեպեկա՝ առանց իր հայրը մտիկ ընելու, իր ողորմաբերական գործն՝ ի կատար հանելու կ՝դբաղէր, մինչև որ Իսահակ՝ անոր լսելիկին թևը բռնելով, նորէն վրդովեալ ձայնով մը գոչեց։

— Ահարոնի մօրուսը վկայ, ինչպիտի պատահի թէ որ այս պատանին մեռնի։ Եթէ մեր ձեռքը կորուսէ կեանքը, միթէ անոր արեան մեղ պարտաւոր չպիտի դատեն և խուժանը մեղ բզիկ բզիկ չպիտի ընէ։

— Նա չպիտի մեռնի, հայր իմ՝ — գոչեց Ռեպեկա՝ Իսահակին բռնէն կամացուկ մը սպրդելով — չպիտի մեռնի նա, եթէ զանի այս տեղ չթողունք, իսկ եթէ անզգայ մնանք՝ այն ատեն թէ Աստուծոյ և թէ մարդկան առջև մեղապարտ պիտի սեպուինք։

— Ոչ — ըսաւ Իսահակ աղջիկը թողտալով — կ'վշտանամ տեսնելով որ անոր արեան հոսիլն իրը թէ ամէն մէկ կայլակ իմ քսակէս ընկնող ոսկի մը ըլլէր։ Իրաւի՝ արդէն գիտեմ որ Պիզանդիոնի ռաբբի Մանասէի դուստր՝ Միրիամի դասերն, որուն Հայրն այժմ երկին է, բժշկութեան արուեստին մէջ քեզ Ճարտար ըրին և բոյսերուն գաղտնիքը գիտես, նոյնպէս ցքինեերու զօրութիւնն։ Ուստի մարդիդ խորհուրդին հետևէ։ Դու բարի աղջիկ մ'ես, և իմ տանս ու հարցդ ժողովրդեան համար օրհնութիւն մը, փառաց սլաակ մը, խնդութեան տաղ մը։

Սակայն Իսահակի հոգերն անհիմն չէին, և իր աղջկան վերհանձն ու շնորհագէտ բարեսրտութիւնը զինք՝ 'ի դարձին Էշալի, Պրայն տը Պուա Պիլպէրի շուայտ աչերուն ենթարկեց։ Ցաճարականը քանի մը անգամ Ճանբան անոնց քովէն անցաւ ու դարձաւ՝ իր լայիրշ և հրաւաւ աչքը գեղանի հրէուհւոյն վրայ յառելով, և արդէն տեսանք թէ իր գեղն ու շնորհն ինչ հիացում և արդիւնք արտադրեր էին, երբ գիտցուածով այն վաւաշ և առանց սիղբունքի մարդուն իշխանութեան ներքև ձգեց զինքը։

Ոեպեկա ժամանակ չկորցուց հիւանդը ժամանակաւոր բնակարանը փոխադրել տալու և սկսաւ ինքն իր ձեռօք վերքը քննել և դարմանել։ Վէպեր և ասպետական տաղեր կարդացող պատանիները կ'յիշեն անշուշտ թէ ինչպէս կիները՝ մեռեալ դարերու մէջ՝ ինչպէս կ'կոչեն, վիրաբուժութեան արհեստին տեղեակ էին և ինչպէս ստէպ արիական ասպետն իր վէրքերու բոյժը կ'յանձնէր այն կնոջ խնամքին, որուն աչերն տեսի խոր խոցեր էին իր սիրտը։

Բայց հրէաները, թէ այր և թէ կին՝ բժշկութեան արհեստին բոլոր ճիւղերուն տեղեակ էին և կ'գործածէին, և ժամանակին միապետներն և հզօր սեպուհները ստէպ նոյն անիծեալ աղջին մէկ փորձառուն ձեռքին խնամոց կ'դիմէին երբ վիրաւոր կամ հիւանդ ըլլէին։

Ուստի հրէայ բժիշկները շատ յաճախորդներ ունէին, թէև քրիստոնէից մէջ սա՝ ընդհանուր կարծիքը կ'տիրէր թէ հրէայ ռաբբիներ ծածուկ գիտութիւններու քաջահմուտ են և 'ի մասնաւորի կաբալեան արուեստին, որ իր անունն և ծագումն Իսրայէլի հին իմաստուններու ուսանց արդիւնքն է։ Միւս կողմէն ռաբբիները կ'խոստովանէին որ դերբնական արուեստից տեղեակ են, որով իրենց դէմ եղած ատելութիւնը չէր աւելնար, նա մանաւանդ՝ այս չարակամութեան յարակից արհամարհանքը նուազելու կ'օգնէր։ Հրէայ քաղաքացի մը թերևս այնքան ատելի էր որչափ հրէայ վաշխառու մը, սակայն նոյն ատելանք

արհամարհանք չէր գրգռեր։ Նոյնպէս հաւանական է, հրէից ձեռաք հիւանդաց գտած հիանալի բժշկութիւնը նկատելով, ինչպէս որ կ'ըսեն, թէ անոնք բուժելու արուեստին մէջ յատուկ գաղտնիք մը գիտէին, և թէ՝ իրենց առանձնասէր ոգին ծնունդ առնող վիճակին նայելով, մեծ հոգ կ'տանէին նոյն գաղտնիքը պահելու քրիստոնեաներէն որոց մէջ կ'ապրէին։

Գեղանի Ռեպեկան՝ իր ազգին յատուկ գիտութիւններու մէջ մասնաւոր խնամքով կրթուեր էր ու իր ժիր և ուշիմ միտքը զանոնք պահեր։ Խորհեր և ընդլայներ էր՝ գեր 'ի վեր քան իր հասակը, սեռն և նոյն իսկ այն ապրած ժամանակին։ Բժշկութեան արհեստը սովորեր էր պառաւ հրէայէ մ'որ իսրայէլացի խիստ անուանի բժշկի մը գուստրն էր, Ռեպեկան իր աղջկան պէս կ'սիրէր, և կ'կարծուէր թէ անոր իր գաղտնիքը հաղորդեր էր, և այս գաղտնիքն ալ իր գիտուն հօրէն ստացեր էր։ Իրաւ է որ այն պառաւ կնկան, Միրիամին բուժելն ընկեր էր նոյն ժամանակի կրօնամոլութեան զոհ ընկնելու, սակայն իր գաղտնիքն իր Ճարտար աշակերտուհւոյն միջոցաւ կենդանի մնացեր էր։

Ռեպեկա՝ որ հաւատարմապէս կ'փայլէր թէ իր ծանօթութեանց և թէ գեղութեան համար, սիրելի և պատկառելի եղեր էր առ հասարակ իր ցեղին, զոր Ս. Գրոց յիշած ընտրեալ կիներէն մէկուն տեղ կը համարէին. իր հայրն ալ՝ Ռեպեկայէն տասներեք յարդելով՝ ասելի աղաւութիւն կ'շնորհէր օրիորդին՝ իր կանացի սեռին և ժողովրդեանը սովորութեան հակառակ։ Ասկէ զատ՝ ինչպէս որ օրինակը տեսանք։ Խահակ՝ շատ անգամ իր աղջկան կարծեաց համաձայն կ'վարուէր՝ իրենին նախադաս համարելով։

Երբ Իսմաէլ Խահակին բնակարանը փոխադրուեցաւ, դեռ ևս մնացած էր՝ պայքարին ժամանակ մրցարանին մէջ կորուսած արեան օրաՀաւաս։ Ռեպեկա վէրքը գնեց և իր արհեստին յարմար գտած դարմանները ընելէն ետև՝ խնայուց իր հօրն որ եթէ Ջերմին առաջն առնուն, և անկէց վախ չունէր շատ արիւն կորուսելուն, և եթէ Միրիամի ապերանին իր ներդործութիւնը ցուցնէ՝ հիւանդին կեանքը վտանգէ աղաւ կրնար համարուիլ, և հետևեալ օրն Եօրք գնալու համար Ճանապարհ ելնելու վիճակին մէջ գտնուիլ։ Խահակ այս լուրն առնելուն փոքր մ'ինչ գժկամակեցաւ։ Իր գիտասիրութեան վերջ կ'ուզէր տալ Էշակի մէջ, և կամ կ'փափաքէր վերաւոր քրիստոնեայն գտնուած տան մէջ թողուլ խնամուելու, իսրայէլացի տան տիրոջ հաւատալով՝ որ բոլոր ընելիք ծախսն հոգը պիտի հոգայ։ Սակայն Ռեպեկա այս առաջարկութեան

գէմ շատ պատճառներ մէջ բերաւ, որոյմէ միայն երկուքը պիտի յիշենք՝ քանի որ Խահակին աչքին մեծ կշիռ ունէին։ Առաջինը սա էր թէ՝ Ռեբեկա երբէք չէր հաւանիր անոր ապրանքին որուսակը նոյնիսկ իր աղջակից մէկ բժշկին յանձնել, առ ահի որ այն մեծադին դիւան երեւան չելնէ. երկրորդը սա էր թէ՝ վերաւոր ասպետը, Վիլֆրիտ Իվանոէ, Առիւծասիրտ Ռիչարտի սրտակից մտերիմը լինելով՝ եթէ այն թագաւորը դառնար, Խահակ որ անոր ճօհն եղբօրն ապստամբական խորհուրդներն 'ի կատար հանելու համար գրամապէս օգներ էր, մեծ օգուտ կրնար քաղել եթէ Ռիչարտի մօտ զօրաւոր պաշտպան մ'ունենար։

— Այդ խօսքերդ ճշմարիտ են, Ռեբեկա — ըսաւ Խահակ անոր առաջարկութեանց գլխանելով — Ասուծոյ դէմ մեղանչելէ օրհնեալ Մարիամի գաղանիքը մատնելը. վասն զի երկնից մեղի շնորհած բարիքը պէտք չէ որ ուրիշներուն վատնենք անխտիր, թէ ասկի և թէ արծաթ լինին այն բարիքն, կամ դիւան բժշկի մը խորհրդաւոր գաղտնիքն։ Արդարև Դամասկոսամութեան մեզ շնորհած գանձը պարտաւոր են պահել անոր առանձնաշնորհներն։ Իսկ Անկլիոյ նաղմարեցիներու Առիւծասիրտ Ռիչարտ կոչած անձին գալով, իրաւի ըսաւ նա ունիմ Խոսէայի կատարեալ առիւծի մը Ճանկին ներքև ընկնիլ քան թէ այն Ռիչարտի ձեռքն, եթէ երբէք դոյզն սեղեկութիւն ստացած է եղբօրը հետ ունեցած գրամական յարաբերութեանց վրայ։ Հետևապէս խորհրդով պիտի անեամ և այս պատանին մեզի պարտի ընկերանալ 'ի նօրք։ Մեր տունն իրը պիտի լինի մինչև որ իր վէրքը բոյժ գտնէ։ Եւ եթէ առիւծի սիրտ ունեցող մարդն իր հայրենի երկիրը վերադառնայ, ինչպէս որ հաստատակայ ձայնը կ'համբաւէ, այն ատեն այն Վիլֆրիտ Իվանոէն իմ պահպանութեանս իրբև պատուար պիտի լինի, երբ թագաւորն ինձի դէմ բարկութեան բրդի։ Իսկ եթէ չվերադառնայ, նոյն ինք Վիլֆրիտ պիտի կարենայ մեր ծախքը վճարել՝ երբ իր նիզակին և արին ուժովը գանձեր վաստակի, ինչպէս որ երէկ և այսօր շահեցաւ. վասն զի այս պատանին լաւ պատանի մ'է, պայմանաժամին փոխ առածը ճշտիւ կ'վճարէ։ Արդեայ նաև Իսրայէլացւոյն օգնել, նոյն իսկ իմ հօրս տան արդին, երբ սա յանդուգն աւազակներէ և Բելիարայ ծնունդներէ շրջապատուի։

Երեկոյեան դէմ միայն Իվանոէ ինքզինք գտաւ։ Ընդհատ քունէ մը արթնցաւ և այն շփոթ տպաւորութիւններու ներքև որ բնականապէս անզգայ վիճակի մը յարակից են։ Ժամանակ մը շկրցաւ ճշտիւ յիշել

մրցարանին մէջ՝ անկման պարագաները, կամ առջի օրուան իր գլխէն անցած դէպքերուն յաջորդութիւնը բացատրել։ Իր վէրքէն կրած ցաւերուն կ՚միանային տուած և ընդունած հարուածներն, իրարու դէմ սրացող երիվարներ, երբեմն տապալող երբեմն տապալեալ, զինուց շառաչունն և շփոթ ճակատամարտի մը գոռն ու գոչումը։ Յաջողութեամբ ճիգ մ՚ըրաւ իր մահճին վարագոյրը բանալու, ճիգ մ՚որ դժուարին էր վէրքին ցաւէն։

Զարմանքով դիտեց որ շքեղօրէն զարդարուած սրահի մը մէջ կը գտնուի, ուր հանդստանալու համար փոխանակ աթոռներու՝ բարձեր կային, և արևելեան զարդերը նոյն սենեկին մէջ սիւեալ տեսնելով, սկսաւ տարակուսիլ թէ արդեօք քնանալու ժամանակ նորէն Պարէստինի երկիրը փոխադրուած է։ Այս տարակոյսը պրեթէ ստուգութեան դարձաւ երբ սրահակը վերցընելով՝ կնային կերպարան մ՚որ արևելեան քան եւրոպական ճաշակով պերճօրէն զարդարուեր էր, դռնէն ներս սահեցաւ՝ խափշիկ սպասաւոր մ՚ետէն ունենալով։

Այն միջոցին որ վիրաւոր ասպետն այս գեղանի երևոյթին խօսք պիտի ուղղէր, օրիորդն՝ իր կարմրուն շրթերու վրայ մատը դնելով՝ յորդորեց որ լռէ, մինչդեռ ծառան հիւանդին մօտենալով՝ սկսաւ Իվանոէի կողը բանալ, և չքնաղ հրէուհին կ՚նայէր թէ արդեօք կապը տեղն ու վէրքը բուժելու վրայ է։ Իր պաշտօնը կատարեց շնորհալի և մեծանձն համեստութեամբ և պարզութեամբ, որ՝ նոյն իսկ բարեկիրթ ժամանակներու մէջ՝ նոյն պաշտօնին կնիկան մը փափկութեան անհամաձայն եղած պարագան կրնար փարատել։ Այսպիսի նորաբոյս և գեղանի անձի մը՝ հիւանդ մը խնամելու կամ երիտասարդի մը վէրքը դարմանելու դաղափարը, կ՚փարատէր և տեղի կ՚տար բարեբար էակի մը գաղափարին որ իր ազգու խնամքը չէր գլանար վիշտ ամոքելու և մահու հարուածը վանելու համար։ Ռեպեկա՝ եբրայերէն լեզուով քանի մը համառօտ հրահանգներ տուաւ ծեր սպասաւորին որ, նոյնպիսի պարագաներու մէջ անոր օգնելուն՝ անմեռունչ հնազանդեցաւ։

Անծանօթ լեզուի մը ձայնին՝ որչափ որ խորթ հնչեն ուրիշէ մը արտասանուելով, գեղանի Ռեպեկայի բերանին մէջ գմայլելի և վիպական ներգործութիւն մ՚ունէին, զոր երևակայութիւնը բարեմոյն կիւսի մ՚արտասանած հմայից կ՚վերագրէ։ Թէև ակամայ իմանալի, այն հնչիւնն առոգանութեան անուշութենէն և նոյնին զուգահեռ բարեսէր նայուածքէ, սիրտ կ՚շարժէր և կ՚գերէր։ Իվանոէ նորէն փորձ չփորձեց խօսելու, այլ լուռելեայն թաղուց որ իր բժշկութեան յարմար

գաւառաց դարմաններին ընեն, և մինակ երբ այն անուշ էակին գործը լմննալով՝ աներևոյթ լինելու կ՚պատրաստուէր, Իվանոէ չկրցաւ իր հետաքրքրութիւնը զսպել։

— Անուշիկ աղջիկ — ըսաւ նա արպերին, վասն զի ընտել էր այս լեզուին իր Արևելք ըրած ուղևորութեանց պատճառաւ, և կ՚երևակայէր որ այն չքնաղ կինն՝ ապարօշով և պարեգօտով զարդարուած, պիտի կարենար այն լեզուն իմանալ — կ՚աղաչեմ քեզ, անուշ օրիորդ, շնորհ ընէիր . . .։

Բայց իր սիրուն բժշկուհին խօսքն ընդհատեց, և ժպիտ մը զոր հպիւ վանեց՝ երկու փոսիկներ նկարեց իր երեսին վրայ, որուն սովորական երևոյթը խոհուն մելամաղձութիւն մ՚էր։

— Պարոն ասպետ, ես բնիկ անկլիացի եմ և անկլիարէն կ՚խօսիմ, թէև իմ հաղուստս ու ցեղս ուրիշ երկրի կ՚վերաբերին։

— Ազնիւ օրիորդ . . . — վրայ բերաւ վերատին Իվանոէ ասպետը։

Ռեպեկա նորէն անոր խօսքն ընդմիջելու փութաց։

— Պ. ասպետ, մի տար ինձ ազնիւ մակդիրը։ Պէտք է իսկոյն իմանաս որ սպասուհիդ խեղճ հրէայ աղջիկ մ՚է, Եօրքցի Իսահակին դուստրն՝ որուն ամէն առաջ շատ օգտակար և բարեսէր պաշտպանն եղար։ Իր և տունեցիներուն պարտքն է՝ քու արդի վիճակիդ պահանջած ամէն հոգասէր խնամքը տանիլ քեզի։

Զգիտեմ թէ արդեօք գեղանի Ռովէնան պիտի ախորժէր տեսնելով որ իր անձնուէր ասպետը մինչ ցայն կէտ տեսակ մ՚այլայլութեամբ կը նկատէր սիրանուշ Ռեպեկայի ընտիր կերպարանը, թեթևաշարժ հասակն ու փալփլուն աչերն, աչեր՝ որուն փայլը կ՚պքօղէր, կամ կերպով մը կ՚ամոքէր երկայն և մեսաքսեայ ընքուիներ ու շարք մը, և զոր վիպասան մը թերևս յասմիկներու թաւուտէ երն ցոզ երեկոյեան աստղին հետ համեմատէր։ Սակայն Իվանոէ խիստ լաւ քրիստոնեայ լինելով՝ չէր կրնար նոյն զգայումները տածել հրէայ աղջկան մը համար։ Ռեպեկա այս փոփոխութիւնը գուշակեր էր, և նոյն դիտմամբ իր հօրն անունն ու ցեղը յայտնելու շտապեր էր. բայց Ռեպեկա, վասն զի Իսահակին աղուոր և խնամատուն աղջիկն ամէն կանացի տկարութենէ ազատ չէր, չկրցաւ ներքին հառաչ մը զսպել, երբ ակնածու զարմացման ակնարկն՝ որ լիովին անմասն չէր գորովէ, որով Իվանոէ ցարդ նկատեր էր իր անծանօթ բարերարուհին, յանկարծ պաղ, հանդարտ և անհաղորդ կերպերու փոխուեցաւ, որոնք ուրիշ բան չէին յայտներ եթէ ոչ ատորին կարդի անձի մը կողմէ տրուած անակնկալ ծառայու-

թեան մը համար երախտագիտութեան զգայում մը։ Ասել ըսել չենք ուզեր թէ Խլանոէ իր նախորդ վարմունքով աւելի մեծ նուէր մ'արտայայտել ուզեց քան այն զոր սովորաբար երիտասարդութիւնը կ'նուիրէ գեղեցկութեան, սակայն շատ ծանր էր նորատի օրիորդին համար՝ որ հարկաւ նոյն նուէրին ունեցած իրաւունքը կ'զգար, տեսնել որ իր մէկ խօսքը միայն բաւական եղեր էր իրը հմայութեամբ զինքն ինքեցրնել ստորին կարգ մ'ուր այն յարգանքը պատուաւոր կերպով իրեն տալ կարելի չէր երևեր։

Սակայն Ռեբեկա՝ իր անուշ և կայտառ բնաւորութեամբը Խլանոէն չմեղադրեց որ իր դարուն և կրօնին նախապաշարումները կ'դատէր։ Ընդ հակառակն՝ գեղանի հրէուհին՝ թէև կ'զգար որ իր հիւանդը զինք իրրև դատապարտեալ անձ մը կ'նկատէր, որուն հետ՝ անհրաժեշտ դատուածներին զատ՝ ամէն յարաբերութիւն ներելի չէր, անգադար մի և նոյն համբեր և անձնուէր խնամքը կ'տանէր իր հիւանդին առողջութեան և նորաբուժութեան համար։ Ռեբեկա խնայուց թէ պարտաւոր են Եօրք դառնալու, թէ իր հայրը միտք ունի զինք այն տեղ փոխադրելու, որպէս զի իր տան մէջ խնամէ մինչև որ կատարեալ առողջութիւնը գտնէ։ Խլանոէ այս խորհուրդին մեծ ընդդիմութիւնցցուց, պատճառ բերելով թէ աւելի ծանրութիւն չուզեր տալ իր բարերարներուն։

— Էշպի կամ շրջականերն — ըսաւ նա — ապրսօն Գրանքլին մը, կամ հարուստ ազատակատէր մը չկայ արդեօք, որ վիրաւոր հայրենակցի մը պատսպարան մը շնորհէ մինչև որ նորէն զէն ու զարդը դնելու կարողանայ։ Արդեօք ապրսօնեան վանատուն մը չկայ, կամ հնարին չէ արդեօք զիս մինչև Պրրդն փոխադրել, ուր ստոյգ եմ ասպնջականութիւն գտնել Սէնդ-Վիթոլտի վանահայր Վալտէօֆի մօտ, որուն բարեկամն եմ։

— Ի հարկէ ամենէն անշուք պատսպարանը — դոչեց Ռեբեկա տխրագին ժպիտով մը — աւելի յարմար պիտի երևի քեզ քան թէ անարդեալ հրէի մը բնակարանը։ Սակայն, Ղ. ասպետ, չես կարող բնակութիւն փոխել, եթէ միտք չունիս բժիշկդ ճանրել։ Մեր ազգն՝ մինչ դէս քաջ գիտես, կրնայ վէրքը բուժել, թէև վէրքը տալու արհեստը չունինք. և մեր ընտանեաց մէջ՝ 'ի մասնաւորի՝ Սողոմոնի օրէն աւադեալ դաղմանի գեղեր ունինք, որոց օգուտն արդէն 'ի փորձ վայելեցիր։ Ղ. ասպետ, ուշ նաղովրեցի մը, ներողութիւն կ'խնդրեմ, և ոչ Մեծին Քրիստոնիոյ չորս ծովերուն մէջ գտնուող քրիստոնեայ բժիշկ մը կարող է վահանդ ամէն մը հագնելու վիճակին մէջ դնել քեզ։

— Եւ եթէ որչափ ժամանակ պէտք է նոյն վիճակին հասցընելու ղիս — հարցուց Իվանոէ անհամբեր։

— Ութ օր միայն, եթէ համբերես և հրահանգներուս համեմատ վարուիս — պատասխանեց Ռեպեկա։

— Տիրամայր վկայ — ըսաւ Վիլֆրիտ (եթէ մեղք չէ անոր անունն այս տեղ արտասանել) — ժամանակը չէ թէ ինձի և թէ ուրիշ Ճշմարիտ ասպետի մը համար անկողին մնալ, և եթէ խոստումդ կատարես, օրիորդ, իմ սաղաւարտս պատկերով էլի (պատկ, 6 ֆրանք) քեզի պիտի նուիրեմ, ինչ կերպով որ զանոնք շահիմ։

— Իմ խօսքս պիտի կատարեմ — ըսաւ Ռեպեկա — և ասկէ ութերորդ օրը քու ձէն ու զարդդ պիտի դնես, եթէ միայն շնորհ մ'ընես ինձ առաջարկած դրամիդ փոխանակ։

— Եթէ ձեռքէս գայ, և եթէ ասպետ մը, Ճշմարիտ քրիստոնեայ մը կարող է մատուցանել քու կրօնդ ունեցող անձի մը — պատասխանեց Իվանոէ — այն շնորհը յօժարակամ և երախտապիտութեամբ քեզի պիտի մատուցանեմ։

— Լա՛ւ ուրեմն — պատասխանեց Իվանոէ — պիտի աղաչեմ միայն քեզ այսուհետև հաւատալ թէ հրէայ մը կարող է քրիստոնէի մը բարիք ընել՝ առանց ուրիշ վարձ մը պահանջելու քան երկնային Հօր օրհնութիւնն, որ թէ հրէայն և թէ հեթանոսը ստեղծեց։

— Այդ մասին կասկած մ'ունենալ մեղք է, օրիորդ — պատասխանեց Իվանոէ — և ես առանց որ և է խղճահարութեան կամ հարցման ինքզինքս Ճարտարութեանդ կ'վստահիմ, հաւաստի լինելով որ ութ օրուան մէջ վահանս կրելու պիտի յաջողիմ քու շնորհիդ։ Եւ հիմակ ըսէ ինձ, բարեսիրտ բժշկուհիս, թէ դուրսն ինչ լուրեր կան։ Ինչ է-ղան աղնիւ սաքսօն Ալէարին և իր ընտանիքն . . . ինչ, սիրասուն օրիորդ . . . ։ — Իվանոէ այս տեղ խօսքը կտրեց, որպէս թէ չէր կարող Ռովէնայի անունը հրէի մը տան մէջ արտասանել — այսինքն այն օրիորդն որ գուպարին թագուհին եղաւ։

— Եւ որ քու կողմէդ ընտրուեցաւ, աղնիւ ասպետ, այն բարձր պաշտօնը վարելու համար, և այս ընտրութիւնը քու արիութեանդ չափ գովեստից արժանի եղաւ — պատասխանեց Ռեպեկա։

Իվանոէի արեան կորուստն արդէք եղաւ իր այտերը թեթև մը կարմրելու, վասն զի կ'զգար որ պահելու համար ըրած անձնարակ փորձերով աւ Ռովէնա խորին համակրութիւնն անխոհեմաբար մատնեց։

— Ոչ այնչափ անոր որչափ ճօհն իշխանին վրայ խօսիլ էր միտքս —

ցուաւ նա — և կ՚փափաքէի իմ հաւատարիմ ձիապանիս վրայ լուր տանել և իմանալ թէ ինչ պատճառաւ իմ քովս չսպասաւորեր։

— Ներէ ինձ բժշկական իշխանութիւնս գործածել — պատասխանեց Ռեպեկա — և պատուիրել քեզ լռութիւն պահել և սրտայոյզ խորհուրդներ վանելու, մինչդեռ ես պիտի յայտնեմ քեզ ինչ որ դիտնալ կը փափաքիս։ Ճօհն իշխանը գուպարը դադրեցուց և իր կուսակցութեան ազնուականներն, ասպետներն և եպիսկոպոսներն առնելով՝ շուքի Եօրք դարձաւ, լաւ կամ վատ միջոցներով՝ երկրին մէջ հարուստ կարծուած անձերէ կրցածին չափ դրամ շորթելէն ետև։ Կ՚ըսեն թէ իր եղբօրը թագը գլուխը դնելու դիտաւորութիւն ունի։

— Գոնէ անոր պահպանութեան համար նիզակ մը խորտակելէն առաջ չպիտի պատահի այդպիսի բան մը — ըսաւ Իվանհօէ իր անկողնին մէջ ելնելով — եթէ միայն մէկ Ճշմարիտ քաղաքացի իսկ գտնուի բոլոր Անկլիոյ մէջ։ Ինչարտի իրաւանց համար պիտի մեռնամարտիմ ամենէն քաջին դէմ, և եթէ հարկ լինի, երկուքի դէմ։

— Բայց որպէս զի այդ բանն ընելու կարողանաս — ըսաւ Ռեպեկա ձեռքովն անոր ուսին դպելով — պէտք է որ այժմ իմ հրահանգիս հետևիս և հանդարտ նստիս։

— Ճշմարիտ է, օրիորդ — ըսաւ Իվանհօէ — հանդարտ պիտի մնամ որչափ որ այս անհանդարտ ժամանակները կ՚ներեն։ Իսկ Սէտրիկի և իր ընտանեաց վրայ ինչ գիտես։

— Իր մատակարարն — ըսաւ հրէայ օրիորդը — քանի մ՚օր առաջ եկաւ սաստիկ շուարած, որպէս զի հօրէս գումար մը պահանջէ, որ Սէտրիկի արքարներու բուրգին գինն էր, և անորմէ իմացայ որ Սէտրիկ և Գոնինկսբրիի Ամէլատէին Ճօհն իշխանին պալատէն սաստիկ զայրացած ելեր և իրենց բնակարանը վերադառնալու վրայ են։

— Մինթէ իշխանին հացկերոյթին Սէտրիկի հետ կին մը գնա՞ց — հարցուց Իվանհօէ։

— Օրիորդ Ռովէնան — ըսաւ հրէայ աղջիկն՝ այս հարցման առելի Ճշգրտապէս պատասխանելով քան որ եղած էր — օրիորդ Ռովէնա իշխանին հացկերոյթին չգնաց, և մատակարարին ըսածին նայելով՝ հիմակ իր Սէտրիկ խնամակալին հետ Ճանբայ ելած է դէպ 'ի Ռոթէրուիլուտ գնալու. իսկ քու հաւատարիմ Կիւրթ ձիապանին դալով. . . »

— Վա՛յ — գոչեց ասպետն — ինչպէս անունը գիտես. բայց անշուշտ պիտի գիտնաս — յարեց նա իսկոյն — և զարմանք չեն, վասն զի, ինչպէս որ այժմ համոզուած եմ, քու ձեռքէդ, քու յատուկ սա-

Ֆլաստասրտութեանէդ ընդունած է հարիւր ոսկի դահեկան (zecchin 11 Ֆրանք)։

— Այդ կիտին վրայ մի խօսիր — ըսաւ Ռեպեկա սաստիկ կարմրելով — կ՚նայիմ որ քանի դիւրին է լեզուով մատնել ինչ որ սիրտը խնդացին պահել կ՚փափաքի։

— Բայց այն ոսկիի գումարը — գոչեց Իվանհօէ ծանրութեամբ — հօրդ վճարելու կ՚հարկադրէ զիս իմ պատիւս։

— Ինչպէս որ կամիս այնպէս ըրէ — ըսաւ Ռեպեկա — ութ օր անցնելէն ետև. բայց առ այժմ բան մը մի խօսիր և մի մտածեր այդ մասին որպէս զի բոյժդ չուշանայ։

— Թող այդպէս լինի, սիրուն աղջիկ — վրայ բերաւ Իվանհօէ — ապաշնորհ սիտի երևիմ եթէ հրամանիդ հակառակ վարուիմ։ Բայց խեղճ Կիւրթին վիճակին վրայ խօսք մ՚ևս ըսէ, և այսուհետև ուրիշ հարցընելիք չունիմ։

— Ցաւ է ինձ յայտնել — ալնիւ ասպետ — պատասխանեց հրէուհին — որ Սէտրիկի հրամանին համաձայն ձերբակալ եղաւ։ — Վերջը՝ գիտելով որ այս լուրը վիշտ կ՚պատճառէ Ռ.իլֆրիտի, անմիջապէս յարեց. — Բայց Օսվալտ անտեսը յայտնեց ինձ որ եթէ նոր յանցանք մը գործելով Կիւրթ Սէտրիկի զայրոյթը չգրգռէ, անելիք է որ իր հաւատարիմ ստրուկին պիտի ներէ, քանի որ տիրոջը վստահութիւնը կ՚վայելէ և Սէտրիկի որդւոյն ունեցած սէրէն սխալմունք մը գործեր էր։ Նոյնպէս լսաւ թէ ինքն ու իր ընկերներն, և մասնաւորապէս Ռամպա մինոն որոշեր են թոյլ տալ որ Կիւրթ խոյս տայ ուղևորութեան ժամանակ, եթէ երբէք Սէտրիկի բարկութիւնն անոր դէմ չդարձի։

— Երանի թէ այս խորհուրդն 'ի գործ դնեն — ըսաւ Իվանհօէ — սակայն կ՚երևի թէ զիս սիրող անձերու թշուառութեան պատճառ լինելու սահմանուած եմ։ Իմ թագաւորս զիս կ՚պատուէ ու կ՚յարգէ, և կ՚տեսնես որ իրեն ամենէն շատ պարտաւոր եղող եղբայրը բաղուկը կը վերցընէ իր թագը յափշտակելու համար. ամենապեղծի ինկան մ՚իմ յարգանքս դժբաղդութիւն բերաւ, և այժմ իմ հայրս արտնեղութեան ժամանակ՝ թերևս սպաննէ այն հէք ստրուկն, որուն միակ յանցանքը զիս սիրել ու օգնելն է։ Կ՚նայիս, նորատի աղջիկ, թէ ինչ տարաբաղդ էակի կ՚վատնես քու խնամքդ։ Խոհեմ եղիր, և թոյլ տուր ինձ որ երթամ որպէս զի որսական անհաշտ վոհմակի պէս զիս հալածող աղէսքը ձեր դլխին ևս ձիւն մը չբերէ։

— Ո՛չ — ըսաւ Ռեպեկա — քու տկարութիւնդ և վիշտդ, այնքա՛ն ասպետ, թոյլ չեն տար քեզ նկատելու Երկնից խորհուրդը։ Դո՛ւ հայրենիքդ վերադարձար այն միջոցին որ ամենէն շատ ուժեղ բազկի և ճշմարիտ սրտի մը կարօտ էր, և քու, նոյնպէս թագաւորիդ թշնամիներուն զուռզուութիւնը խորտակեցիր երբ իրենց ամբարտաւանութեան եղջիւրը կ'խրոխտար. իսկ միթէ չէս գիտեր որ՝ առաջ վէրքդ բուժելու համար՝ Երկին քեզի օգնական մը, բժիշկ մը զրկեց նոյն իսկ երկրիս ամենէն քամահեալ ցեղէն։ Ուրեմն, արիացիր, և վստահ եղիր որ ժողովրդեան առջև հրաշք մը գործելու սահմանուած ես։ Մնաս բարև, և Ռուբէնի ձեռքը զրկելիք դեղն առնելն ետև՝ հանդիստ կեցիր որպէս զի հետևեալ օրուան ուղևորութեան պատրաստ գտնուիս։

Իլանոէ այս բանաւոր խօսքերէն համոզուեցաւ և Ռեպեկայի պատուէրը բռնեց։ Ռուբէնի տուած դեղն ամրիչ և քնէաց զօրութիւն մ'ունէր, այնպէս որ հիւանդն անվրդով խոր քուն մը քաշեց։ Միւս առտու՝ իր բարեսիրտ բժիշկն Իլանոէն բոլորովին տենդային նշաններէ զերծ, և ուղևորութեան յոգնութիւնը կրելու կարող գտաւ։

Ուստի Իլանոէն առին և մրցարանէն բերող դեսպակին մէջ դրին, և որպէս զի ուղևորութիւնը հանդիստ ընէ՝ պէտք եղած զգուշութիւնները չմոռցան։ Կէսի մը վրայ միայն Ռեպեկայի աղերսը մոռնալ չըրին, կ'փափաքէր որ ծանր ծանր ուղևորին վիրաւոր ասպետին հարկ եղած հոգը տանելու համար։ Սակայն Իսահակ՝ ժիւմէնալի տաններորդ երդիծաբանութեան հարուստ ճանրորդին պէս՝ անդադար ահ ու դողով կ'մտածէր որ թերևս կողոպտուի, վասն զի գիտէր որ թէ նօրմանն ասպատակին, թէ սաքսօն վտարակին համար ընտիր որս մը ոլիտի համարուէր։ Հետևապէս անդուլ ճանրան շարունակից, քանի մը տեղ կարճատև օթևան և կարճագոյն ճաշ առաւ, այնպէս որ Սէորիկէն և Ամէլստէյնէն անցաւ, թէև ասոնք իրմէ բաւական առաջ ուղևորուած էին, բայց Սէնդ-Վիթոլսի մէջ երկայն բարակ ճաշ ընելով ետ մնացեր էին։ Սակայն դարձեալ Միրիամի ապեղանիին զօրութիւնն այնքան մեծ, կամ Իլանոէի կազմուածքն այնքան կորսվի էր, որ իր բարեմոյն բժշկին վախցած անպատեհութիւնն իսկ չզգաց։

Սակայն մէկ ուրիշ նկատմամբ հրէին շտապն իրեն փեսաակար քան օգտակար դարձաւ, վասն զի այս շտապը շատ մը կռիւներ յարոյց իր և իրրև պահապան ընկերանալու համար վարձու բռնած մարդոց մէջ։ Այս մարդիկը սաքսօն էին և իրենց ազգին յատուկ հանպատութիւնն ու քաջ ուտեստ կ'սիրէին, թէև այս հանգամանքը նօրմաններին իրրև ծու-

ջութիւն և որկրամոլութիւն անոնց երեսին կ՚զարնէին։ Հայլօքի վիճակին ներքեւ՝ այս պաշտօնն ընդունող էին ճոխ հրէին կուռնակէն լաւ մ՚ուտելու յուսով, և շատ զժգոհեցան երբ իրենց յոյսը պարապ ելած տեսան՝ արագ արագ ուղևորելու պարտաւորելով։ Նոյնպէս գանգատ ըրին թէ այս բուռն ընթացքէն մեծ վնաս կրած են իրենց երիսարներն։ Ի վերջէ՝ Իսահակին և իր արբանեակներու մէջ մեծ կռիւ մը ծագեցաւ ամէն մէկ ճաշի ատեն տրուելիք գինիին և գարեջրին քանակութեան վրայ։ Հետևապէս՝ երբ վտանգի ձայնն ելաւ, և Իսահակի երկնչած փորձանքը մօտալուտ երևցաւ՝ իր վարձկան պահապաններն՝ որոց պաշտպանութեան վրայ դրեր էր իր յոյսը, մեկնեցան գացին, և հրէայն կարևոր միջոցներ չգործածեց անոնց հաւատարմութիւնը գրաւելու համար։

Այս աղէտալի վիճակին մէջ՝ հրէայն իր աղջկան և վիրաւոր հիւանդին հետ՝ Սէտրիկի հանդիպեցան, ինչպէս որ արդէն գրեցինք, և այնուհետև տը Պրէսիի և իր դաշնակիցներու իշխանութեան ներքև ընկան։ Ի սկզբան՝ դեսպակին ուշադրութիւն չդրին և թերևս անտես մնար եթէ տը Պրէսի՝ հետաքրքրութենէ շարժեալ՝ անոր մէջ չնայէր՝ իր արշաւանքին առարկան տեսնելու յուսով, վասն զի Ռովէնա իր քօղը չէր հանած։ Սակայն տը Պրէսիի զարմանքը մեծ եղաւ՝ երբ գիտեց որ դեսպակին մէջ վիրաւոր մարդ մը կար, որ կարծելով թէ սաքսօն վտարականերու ձեռքն ընկած է, և թէ իր անունը կրնայ թէ իրեն և թէ ընկերներուն պաշտպանութեան միջոց մը լինիլ, քացէ՚ի բաց յայտնեց թէ ինք Վիլֆրիտ Իվանօէն է։

Ասպետական պատուոյ գաղափարներ՝ որ բոլորովին օտար չէին տը Պրէսիի՝ իր վայրագ և անկանոն կեանց շրջանին մէջ, թոյլ չտուին իրեն անոք և անօգնական ասպետին վնաս մը հասցընել, նոյնպէս չնեղեցին որ զանի Ֆրօն–տը–Պէօյի ձեռքը մատնէ, որ ամէն պարագայի մէջ իր ոսոխն ու Իվանօէի աւատին հետամուտ լինելով՝ անխնայ պիտի սպաննէր անշուշտ։ Միւս կողմէն՝ տը Պրէսիի վեհանձնութենէ վեր բան մ՚էր, ինչպէս որ մրցարանին դէպքն ու Վիլֆրիտի հայրենի տունէն տարագրութիւնը հուշակ տուին, օրիորդ Ռովէնայի նախադաս համարած մէկ սիրոսոխ մ՚ազատ թողուլը։ Բարոյն և շարքն մէջ միջին կէտ մը գտնելու չափ միայն կարող եղաւ, և իր երկու ձիաւորներուն ապսպրեց դեսպակին մօտ կենալ և չնեղել որ մարդ մ՚անոր մօտենայ։ Ցը Պրէսի պատուիրեց նաև որ, եթէ հարցընող գտնուի թէ դեսպակին մէջ ոմ կայ, ըսեն թէ դեսպակն օրիորդ Ռովէնայինն է և թէ կուռնին

մէջ զարնուող մէկ զինակիցնին անով կ՚փոխադրեն։ Դօրդիլսդօն հասանելով՝ մինչդեռ տաճարական ասպետն և գղեակին տէրն իրենց յատուկ խորհուրդն՝ ի գործ դնելու եռևէ էին՝ մին հրէին գանձը կորզելու, և միւսն անոր աղջկան սիրտը, որ Պրէսիին ձիապանները Իվանհոէն տարին՝ իբրև վիրաւոր մէկ ընկերակից մը, և հեռաւոր սենեակ մը ձգեցին։ Հետևապէս անոնք այս բայատրութիւնը տուին Ֆրօն–տը–Պէօյի, երբ հարցուց թէ ինչ պատճառաւ պատերազմի փողը հնչելուն պարսպին վրայ չգտնուեցան։

— Վիրաւոր ընկերակից մը — պատասխանեց նա սաստիկ զարմացած և զայրացին — ուրեմն զարմանք չեն եթէ գեղջուկներ և շինական զինուորներ մեր գղեակները պաշարելու կ՚յանդգնին, և եթէ գեղացիներ և խոզպաններ մենամարտի կ՚հրաւիրեն մեզի պէս ազնուականներ, քանի որ զինուորներ հիւանդապահ դարձեր են և Ազատ ընկերներ հոգեվարներու մնարին մօտ կ՚կենան, երբ գղեակը յարձակում կրելու վրայ է։ Ելի՛ք, պարիսպներն ելի՛ք, դատարկապորտ անպիտաններ — գոչեց նա իր ստէնտորեան ձայնը հանելով, այնպէս որ բոլոր գմբեթները թնդացին — շուտ պարիսպները գացէ՛ք թէ ոչ սա լախտովս ձեր ոսկորները պիտի խորտակեմ։

Այս հիւանդապահ մարդիկ պատասխան տուին իրենց երեսը ծռմռելով թէ՝ իրենց ուզածն ալ պարսպին վրայ ելնել կուուիլ է, բաւական է որ Ֆրօն–տը–Պէօ զիրենք անբասիր հանէ իրենց տիրոջ մօտ, որ ապսպրեր էր հոգելարը խնամել։

— Հոգելարն, ապիրատներ — պատասխանեց տաճարականը — տարակոյս մի ունենաք որ ամէնքնիս ալ հոգելար պիտի դառնանք, եթէ մինչև վերջը քաջութեամբ չմաքառինք։ Բայց ձեր անզգամ հիւանդին պահպանութիւնն ուրիշին պիտի յանձնեմ. աստ եկուր, Իւրֆրիտ վէհուկ, սաքսօն սատանայ, չե՞ս լսեր ձայնս։ Դնա այն հիւանդ մարդը խնամէ, քանի որ դայեկի մը պէտք ունի, մինչդեռ այս անպիտաններն իրենց զէնքը պիտի գործածեն։ Ահաւասիկ երիտ նետակալ՝ նուրդներով և փքիններով, ելի՛ք ոտնածակին և նայեցէ՛ք որ ամէն մէկ փքին սաքսօնի մը ըղեղին մէջ մխէ՛ք։

Այն մարդիկն՝ որ իրենց սեսակի մարդոց պէս՝ պատերազմ կ՚սիրէին և անգործութիւնը կ՚ատէին, տաճարականին հրամանին համեմատ՝ պատերազմի վայրը գացին խնդալին, և այսպէս Իվանհոէի հոգն Իւրֆրիտի կամ Իւլրիգայի յանձնուեցաւ։ Բայց այս կիներն՝ որուն միտքը կրած նախատանքը և վրէժխնդրութեան յոյսերով կ՚բորբոքէր, հեշտիւ հաւանեցաւ Ռեպեկայի թողուլ հիւանդին հոգածութիւնը։

ԳԼՈՒԽ ԻԹ

Ելէ՛ր, արի զինուոր, սա դիտանոցը վերին,
Բալոր դաշտը գիտէ, և յայտնէ վիճակ մարտին։
ՇԻԼԼԷՐԻ Օրլեանէ օրէրդը։

Շատ անգամ վտանգի ժամն անսուտ բարութեան և սիրոյ ժամ է։ Այն ատեն՝ ակամայ՝ մեր ներքին ընդհանուր յուզմունքէն կ՚մղուինք մատնելու այն զգացումներու աշխոյժն զոր՝ անդորր ժամանակներ՝ մեր խոհեմութիւնը կ՚աքօղէ՝ եթէ լիովին չէ կարող ջնջել։ Ռեպեկա ինքզինքը վերստին Իվանհօէի մօտ գտնելով՝ զարմացաւ որ ախորժելի ու վառվռուն այլայլութիւն մը կ՚զգայ, մինչև այն պահուն իսկ որ չորս կողմը վտանգ եթէ ոչ յուսահատութիւն կ՚տիրէր։ Ռեպեկա՝ Իվանհօէի երակը զննելու և առողջութեան վրայ լուր հարցնելու ատեն՝ իր ձեռքին ձայնին այնպիսի անուշութիւն մը կ՚տար որմէ կ՚երևէր մատնաւոր համակրութիւն մը զոր պահել կ՚ուզէր։ Իր ձայնը նուաղեցաւ և ձեռքը դողցաց և միայն Իվանհօէի սա պաղ խօսքէն «Դո՛ւ ես, անուշ աղջիկ» ուշաբերեցաւ և յիշեց որ տածած զգացումը փոխադարձ չէր և չէր կրնար լինիլ։ Հառաչ մը հանեց որ հազիւ լսելի էր, և ասպետին ըրած հարցումներն իր առողջութեան մասին բարեկամական հանդարտութեամբ մ՚ուղղեց։ Իվանհօէ շտապաւ պատասխանեց թէ առողջութեան մասին իր յուսացածէն աւելի կ՚զանէ ինքզինքը։

— Շնորհապարտ եմ, սիրելի Ռեպեկա — ըսաւ նա — քու ջանահնար խնամոցդ։

— Զիս «Էրէլի Ռեպեկա կ՚անուանէ — ըսաւ աղջիկն իւրովի — բայց պաղ և անհոգ կերպով մ՚որ բառին հետ չհամաձայնիր։ Իր պատերազմի ձին, իր որսական բարոյին աւելի սիրելի են իրեն քան անարգեալ հրէուհին։

— Իմ միտքս, անուշ աղջիկ — շարունակեց Իվանհօէ — աւելի զբաղուած է անձկութեամբ քան մարմնացաւով։ Քիչ մ՚առաջ զիս պահող մարդերուն խօսակցութեան նայելով կ՚հասկնամ որ կալանաւորը մ՚եմ, և այն խստոտ ձայնը լսելով որ զինուորական գործի մը կ՚սահմանէր պահապաններս, կ՚իմանամ որ Ֆրօն–տը–Պէօյի դղեկին մէջն եմ։ Եթէ իրօք այսպէս է, ինչ վախճան պիտի ունենայ այս գործը կամ ինչպէս պիտի պաշտպանեմ Ռովէնան և իմ հայրս։

— Հրէին կամ Հրէուհիին անունը չտար — ըսաւ Ռեպեկա մտովին — սակայն իր համակրութեան ի՞նչ իրաւունք ունինք։ Ո՛հ, քանի՛ իրաւամբ կ՚սպասուիմ Աստուծմէ որ մտածութիւններս անոր վրայ դառնալու թոյլ տուի։ Այս կարճ ամբաստանութիւնն ինքն իր անձին դէմ ընելէն ետև՝ Ռեպեկա փութաց բոլոր դիտցած տեղեկութիւններն Իվանոէի հաղորդել, սակայն բոլոր դիտցածը սա էր, թէ Պուա-Կիլբէր տաճարականն և Ֆրոն-տը-Պէօ սեպուհը դղեկին հրամանատարներն են, թէ դղեակը դրսէն պաշարուած էր, բայց չգիտէր թէ ո՞յք են պաշարողներն։ Ըսաւ նաև թէ քրիստոնեայ քահանայ մը կայ դղեկին մէջ որ կարելի է աւելի տեղեկութիւններ ունենայ։

— Քրիստոնեայ քահանայ մը — ըսաւ ասպետը խնդալով — դնա՛ կանչէ, Ռեպեկա և այս տեղ բեր, եթէ կարող ես։ Ըսէ անոր որ հիւանդ մարդ մ՚իր հոգևոր միխիթարութեան կարօտ է, ի՞նչ որ կ՚ուզես ըսէ վերջապէս, և առ բեր զանի։ Պէտք է որ բան մ՚ընեմ կամ փորձեմ, բայց ի՞նչ կրնամ որոշել քանի որ չգիտեմ թէ դուրսը գործերն ի՞նչ վիճակի մէջ են։

Ռեպեկա՝ Իվանոէի խնդրոյն համեմատ՝ Սէարիկը վիրաւոր ասպետին սենեակը տանելու փորձ փորձեց, բայց, ինչպէս որ արդէն դիտենք, Իւրֆրիտի միջամտութենէն չկրցաւ յաջողիլ, քանի որ այս ալ իր կողմէն սուտ կրօնաւորին դարձը կ՚դիտէր որ անոր ճանբան կտրէ։ Ռեպեկա դարձաւ և իր ընթացքին արդիւնքն անոր յայտնեց։

Սակայն Իվանոէ և Ռեպեկա ժամանակ չունեցան ցաւելու որ այս տեղեկութեանց աղբիւրը կորուսին, և ոչ անոր տեղ ուրիշ հնարք մ՚ենթակայելու, վասն զի՝ պաշտպանութեան պատրաստութեանց առթիւ՝ դղեկին մէջեալած աղմուկն՝ որ արդէն մեծ էր, այժմ տասնապատիկ աւելի սաստկացաւ և պոռ ու գոչում դարձաւ։ Զինուորներուն ծանր և շտապալի քայլերը տանեստանէն կ՚անցնէին կամ զանազան որմածակներ և պաշտպանութեան տեղերը տանող նեղ և ոլորուտ անցքերուն և սանդուղներուն մէջ կ՚հնչէին։ Ասպետներուն ձայնը կ՚լսուէր, որով մարտիկները կ՚քաջալերէին կամ մարտին միջոցները կ՚կարգադրէին, մինչդեռ իրենց հրամանները կ՚կորսուէին զինուց շաչման կամ զինուորներուն խլեցուցիչ աղաղակներուն մէջ։ Թէև այս աղմուկն ու շփոթն ահարկու էին, և աւելի սոսկալի կ՚դառնային գուշակելի աղէտաբեր դէպքէն, սակայն անոնց մէջ վսեմութիւն մը կ՚տեսնուէր զոր Ռեպեկայի վեհ հոգին կրնար նկատել նոյն իսկ այս սարսափելի ժամուն։ Իր աչքը վառեցաւ, թէև իր երեսէն գոյնը գացեր էր, և երկիւղախառն

վեսմ խանդով կրկնեց՝ կէս մ՝ինքզինքին և կէս մ՝իր ընկերին խօսելով։ Սուրբ Գրոց սա տունը. «Կապարճը կ՝հնչէ, նիզակը կ՝շողայ, վահանները կ՝շաչեն և զօրապետներուն ու մարտիկներուն աղաղակը կ՝լսուի։»

Բայց Իվանօֆ կ՝նմանէր այն ամեհի նժոյգին՝ որու վրայ Սուրբ Գրոց այս մասը կ՝խօսի. իր անպործութենէ անհամբերութեամբ կ՝վառէր, և անզուսպ եռանդ մը կ՝տանէր սրանալու համար այն կռուին մէջ որուն նախանշանն էին այն աղաղակները։

— Եթէ միայն կարենայի վինչև պատուհանին մօտ ընդ քարշ երթալ — ըսաւ նա — որպէս զի տեսնեմ թէ այս արիական մարտն ինչպէս պիտի մղեն։ Եթէ ունենայի միայն աղեղ մ՝որ նետ մ՝արձկեմ կամ տապար մ՝որով կարենամ զարնել, դէթ լոկ հարուած մը, մեր ազատութեան համար . . .։ Բայց ունայն վատիաք. ոչ ոյժ ունիմ և ոչ զէնք։

— Մի՛ նեղանար, ազնիւ ասպետ — ըսաւ անոր Ռեպեկա — աղամուկն յանկարծ դադրեցաւ։ Կարելի է որ պատերազմ չարձակեն։

— Դու չգիտես այս բաներն — ըսաւ Իվանօֆ անհամբեր — այս սգալի լռութենէ սա կ՝իմացուի որ մարդիկ պարիսպներու վրայ կազմ ու պատրաստ կ՝գտնուին և մօտալուտ յարձակման մը կ՝սպասեն։ Մինչ ցարդ լսածնիս փոթորկին հեռաւոր մրմունջն էր. քիչ ատենէն բոլոր կատաղութիւնը պիտի պայթի։ Եթէ կարենայի միայն սա պատուհանին մօտ դնալ։

— Ազնիւ ասպետ, այդ ճիգն ընելով ինքզինքիդ պիտի վնասես — պատասխանեց հիւանդապահ գեղանի օրիորդը — բայց Իվանօֆի անչափ եռանդը դիտելով յարեց հաստատամտութեամբ. — Ես ինքս վանդակին մօտ պիտի կենամ և քեզի դուրսն անցած դարձածն ըստ կարի պիտի պատմեմ։

— Այդ բանը չպիտի ընես, պէտք չէ որ ընես — դոչեց Իվանօֆ ամէն պատուհան, ամէն ծակ՝ քիչ ատենէն աղեղնաւորներուն նշանակէտը պիտի դառնայ, և թէ դիպուածով նետ մը գայ . . .։

— Թո՛ղ բարև գայ — մրմռաց Ռեպեկա, և հաստատ քայլով մ՝արդէն ակնարկեալ պատուհանին քանի մ՝աստիճաններէն վեր ելաւ։

— Ռեպեկա, սիրելի Ռեպեկա — դոչեց ասպետն — այդ օրիորդի խաղ չէ. ինքզինքդ վտանգի և մահուան մ՝ենթարկեր, և իմ դժբաղդութիւնս մի՛ պատճառեր ակամայ այս ընթացքիդ գրգիռ տալուս, եթէ կամ տա հին վահանով ծածկուէ և որչափ կարելի է անձդ քիչ ցցուր պատուհանին առջևը։

Ռեբեկա՝ Իվանհոէի խօսքին զարմանալի արագութեամբ հնազանդեցաւ՝ հին լայն վահանն առաւ, ինքզինքը պատսպարեց և պատուհանին տորին մառին դէմ դնելով, և այսպէս ըստ բաւականին ապահով կարող էր տեսնել դղեկէն դուրս անցածն և պաշարողներուն յարձակման համար ըրած պատրաստութիւնները պատմել։ Արդարև՝ Ռեբեկայի բռնած դիրքն իր նպատակին յատկապէս յարմար էր, վասն զի՝ գլխաւոր շէնքին անկիւնը նստած լինելով՝ ոչ միայն կարող էր տեսնել դղեկէն անդին անցած բաներն, այլ նաև կրնար դիտել պարսպին արտաքին ամրութիւններն որոց դէմ թերևս պաշարողներն ամենէն առաջ յարձակումմը պիտի ընէին։ Արտաքին ամրոց մ՚էր այն որ շատ ամուր և բարձր չէր և նպատակ ունէր պաշտպանելու այն գաղտնի դուռն՝ որմէ Ֆրոն-տը-Պէօ Սէտրիկն ասկէ առաջ Ճանբայ հաներ էր։ Դղեկին փոսն այս ամրոցը կ՚զատէր պարսպին միւս մասէն, այնպէս որ եթէ թշնամին զայն գրաւէր, շարժուն կամուրջը քաշելով՝ դիւրին էր հաղորդակցութիւնը կտրել գլխաւոր շէնքին հետ։ Դրսի ամրոցին վերայ դուռ մը չիներ էին դղեկին դռնակին պատասխանող վանդակապատով մը և ամէնը մէկէն հաստատ պատնէշով մը շրջապատուած էր։ Ռեբեկա կրնար դատել այս ամրոցին պաշտպանութեան համար սահմանուած մարտիկներէն՝ որ պաշարեալներն այս կիսին վրայ ապահով չէին, և նոյն գործին առջև պաշարողները գումարուած տեսնելով՝ հաւանական երևցաւ իրեն որ նոյն վայրը դղեկին ամենէն տկար կողմն էր։

Ներսատի հրէուհին այս պատրաստութիւնները Իվանհոէի յայտնելու փութաց՝ յարելով,

— Անտառին եզերքն աղեղնաւորներով պատած են, թէև անոր թանձր ճիւղերէն փոքրիկ մաս մը դուրս ելեր են։

— Ի՞նչ դրօշակ պարզեր են — հարցուց Իվանհոէ։

— Չեմ կարող ճանչնալ իրենց պատերազմի նշանը — պատասխանեց Ռեբեկա։

— Տարօրինակ նորաձևութիւն մ՚է — մրմռաց ասպետն — այսպիսի դղեկի մը վրայ յարձակելու պատրաստուիլ առանց վառ կամ դրօշակ պարզելու։ Միթէ կարող ես դիտել անոնք որ իբրև պարապլուխ կ՚շարժին։

— Ամենէն նշանաւորն է սև գրահ հագած ասպետ մը — ըսաւ Ռեբեկա — նա միայն յոտից ցդլուխ զինեալ է, և կարծես թէ բոլոր զօրաց հրամանատարութիւնը կ՚վարէ։

— Իր վահանին վրայ ի՞նչ նշանաբան ունի — հարցուց Իվանոէ։

— Երկաթէ ձողի նմանող բան մ՚է, և սև յատակի վրայ կապտագոյն փականք մը — պատասխանեց Ռեպեկա։

— Շղթաներ և կապոյտ փականք — ըսաւ Իվանոէ։ — Զգիտեմ թէ այս նշանաբանն ո՞վ կ՚կրէ, բայց այս ժամուս կրնայ իմս լինիլ... միթէ չեմ կարող արձանագիրը կարդալ։

— Հաղիւ ուրեմն այս հեռաւորութենէ նշանաբանը կարող եմ նշմարել — պատասխանեց Ռեպեկա — բայց երբ արևը վահանին վրայ կը զարնէ, քեզի ըսածս միայն կ՚դիտեմ։

— Միթէ ուրիշ հրամանատարներ կ՚երևի՞ն — հարցուց մտայոյզ Իվանոէ։

— Ասպիճանաւորի նշանները կրող մէկը չեմ տեսներ ասկից — ըսաւ Ռեպեկա — բայց՝ անտարակոյս դղեակը միւս կողմէն ևս պաշարուած է։ Կ՚երևի թէ այս պահուս կ՚պատրաստուին ընդ առաջ խաղալու։ Աստուած Սիօնի, պաշտպանէ մեզ։ Ի՞նչ սոսկալի տեսարան։ Առջևէն քարոզները ստուար վահաններ կ՚կրեն և տախտակէ շինուած պատնէշ մը կ՚քշեն. միւսները կ՚հետևին՝ իրենց աղեղները լարած, միշտ յառաջ քալելով։ Ահա իրենց աղեղները կ՚վերցընեն. Աստուած Մովսէսի, ներէ՛ քու արարածներուդ։

Ռեպեկա իր նկարագիրն ընդմիջեց յանկարծ յարձակման նշան տրուելով, որ փողի մը սուր շռինդն էր, և ասոր անմիջապէս պատասխանեցին պարիսպներէն շնչող նօրմանեան շեփորներ. որոց զոռն թմբուկներու խոր և որոտընդոստ բոմբիւնին միանալով՝ թշնամւոյն մենամարտի դիմագրաւ կ՚պատասխանէին։ Երկու կողման աղաղակները սոսկալի դղրդիւնը կ՚աւելցընէին, յարձակողները կ՚գոչէին. «Սուրբ Գէորգ՝ տիրապահ զուարթագին Անկլիոյ» և նօրմանները պատասխան կ՚տային գոչելով, «Օ՛ն առաջ, տը Պրէսի, Պոսէան, Պոսէան, Ֆրոն—տը—Պէօ զօրավիպ» իրենց այլ և այլ հրամանատարներու մարտական աղաղակներուն համեմատ։

Սակայն այս կռիւն աղաղակներով չպիտի վերջանար և յարձակողներուն յուսահատական ճգունքը՝ պաշարեալներու կողմէ միօրինակ ուժգին դիմադրութեան մը հանդիպեցան։ Աղեղնաւորներն՝ որ արդէն անտառային վարժութիւններու մէջ սովոր էին քաջ աղեղ լարել՝ իրենց նետերն այնպէս ճարտար և անվրէպ թափ կ՚նետէին՝ որ եթէ քերդապահ մ՚իր անձին մէկ մասն իսկ ցոյց տար՝ անոնց նետերէն ազատ չէր մնար։ Բայց նետերու այս բուռն տարափն որչափ որ կարկուտի պէս

խիստ ու թանձր կ՚տեղար, դարձեալ մէն-մի աղեղ իր սոսկական նշանն ունէր, և քան հատ մէկէն իւրաքանչիւր ձեղքի կամ՝ պատնէշի, նոյնպէս պատուհանի վրայ կ՚թափէին՝ ուր զինուոր մը պատահմամբ կը դտնուէր կամ կասկածելի էր որ դտնուէր, այս նեռերու՝ բուռն արձակմանէ, ըսինք, բերդապահ մարտիկներէն երկու կամ երեք հոգի սպաննուեցան և ուրիշ շատեր վէրքեր առին։ Բայց իրենց դիմակալէն ու զարդի վրայ վատահ՝ և իրենց դիրքէն պատսպարեալ՝ Ֆրօն-տը-Պէֆի զինուորներն ու դաշնակիցները կռուին մոլեգնութեան հաւասար յամառութեամբ կ՚մաքառէին, թէ իրենց լայն աղեղներով և նետակալներով և թէ իրենց պարսատիկներով և ուրիշ զէնքերով, նետերու անընդհատ և խիստ տարափին դէմ. և որովհետև պաշարողներն 'ի հարկէ լաւ պատսպարուած չէին՝ աւելի մեծ ինչաս կրեցին քան պաշարեալները։ Երկու կողմէն նետուած սլաքներուն և փքիններուն շառաչիւնը կ՚ընդմիջէր միայն այն աղաղակներէն որ կ՚արձակէին երբ այս կամ այն կողմէն նշանաւոր կորուստ մը պատահէր։

— Ուրեմն, ես այս տեղ դատարկաւուն կրծնաւորի մը պէս պիտի պառկիմ — դոչեց Իվանոէ — մինչդեռ այն մարտն՝ որմէ իմ՝ ազատութիւնս կամ մահս կախում պիտի ունենայ, դուրսը կ՚մղեն ուրիշներ։ Նայէ դարձեալ պատուհանէն, բարեխիրտ օրիորդ, բայց դիտէ որ վարի աղեղնաւորներ քեզ նշան չառնուն. նայէ դրսի կողմը միանգամ ևս, և ըսէ ինձ թէ արդեօք յարձակումի կ՚պատրաստուին։

Ռեպեկա՝ առնացի քաջութեամբ և ըրած աղօթքներէն զօրացած՝ նորէն պատուհանն ելաւ, դրսէն չտեսնուելու համար ըստ կարի պահպանուելով։

— Ինչ կ՚տեսնես, Ռեպեկա — հարցուց նորէն վիրաւոր ասպետը։

— Մինակ նետերու ամպ մը կ՚տեսնեմ՝ որ կ՚թռին այնքան թանձր որ աչերս կ՚խաղային և նետաձիգ աղեղնաւորներն աչքէս կ՚պահեն։

— Այսպէս կարելի չէ շարունակել — ըսաւ Իվանոէ։ Եթէ խմբուելն զալով չյարձակին և զինու զօրութեամբ դղեակը չառնուն, նետերն անօգուտ պիտի մնան քարկիր պատերուն և պարիսպներուն դէմ խորտակուելով։ Քանի մի անգամ փսկանք ունեցող ասպետը դիտելու, դեղանի Ռեպեկա, և նայէ թէ ինչպէս կ՚վարուի, վասն զի զինուորներն ալ իրենց պարտադէխին նման պիտի լինին անշուշտ։

— Ձեմ տեսներ զանի — ըսաւ Ռեպեկա։

— Անօրէն վնաս — դոչեց Իվանոէ — արդեօք ինկը թողուց Ֆիշա այն միջոցին որ մերին աւելի կ՚ատամկանայ։

— Ո՛չ, չեմ ողջ — ըսաւ Ռեպեկա։ — Ահա հիմակ կ՚տեսնեմ զանի. դունդ մը մարդկան դլուխն անցեր արտաքին ամրոցին դէմ կ՚բաբէ . . . ։ Գերաններն ու պատնէշները կ՚տապալեն . . . տապարով դռները կ՚խորտակեն։ Խուժանին վրայ կ՚ծածանի պարադլխին մեծ սև փետուրն ինչպէս որ ագռաւ մը կ՚սաւառնի դիակներու դաշտին վրայ . . . ։ Պատնէշին վրայ խրամատ մը բացին . . . ահա ներս կը խուժեն . . . դուրս կ՚վանտին . . . Ֆրօն-տը-Պէօ կ՚հրամայէ պաշտպանողներն, իր հսկայական հասակն ամբոխին վրայ կ՚տիրապետէ։ Վերջին խրամատը կ՚վազեն և անոր անցքը դրուելու համար ձակատ առ ձակատ, քայլ առ քայլ կ՚մաքառին։ Ասուած Յակոբայ, երկու ամէն կոհակներու հանդիպումն է, ներհակ հովերէ մղեալ երկու ովկիանոսներու գուպարն է։

Ռեպեկա պատուհանէն ներս դարձուց գլուխն որպէս թէ չէր կարող այն ահարկու տեսարանը նկատել։

— Ռեպեկա, նորէն դուրս նայէ — ըսաւ Իվանհօէ՝ անոր քաշուելուն պատճառը չըմբռնելով — նետերն առ այժմ դադրած պիտի լինին, քանի որ հիմակ դէմ առ դէմ կ՚կռուին . . . հիմակ նայէ, վտանգ չկայ այս միջոցին։

Ռեպեկա նորէն դուրս նայեցաւ և դրեթէ իսկոյն գոչեց. — Օրհնեալ սուրբ մարգարէներ. խրամատին վրայ Ֆրօն-տը-Պէօ և Սև ասպետը կ՚մենամարտին՝ իրենց զինուորներու՝ դոռ ու գոչումին մէջ՝ որոնք գուպարին ելքը կ՚դիտեն։ Ասուած, հարստահարեալին օգնութեան հասիր այս դատին մէջ։ — Նոյն պահուն Ռեպեկա բարձր աղաղակ մը հանեց և գոչեց.

— Ընկա՛ւ, ընկա՛ւ։

— Ո՞վ ընկաւ — գոչեց Իվանհօէ — Տիրամօր սիրոյն, ո՞վ ընկաւ, ըսէ ինձ։

— Սև ասպետը — պատասխանեց Ռեպեկա մեղմ ձայնով մը, ապա՝ յանկարծ գոչեց նորէն խնդագին եռանդով. — Բայց ոչ, բայց ոչ, օրհնեալ լինի բանակաց Ասուծոյն անունը, նորէն կանգուն կ՚երևի և կ՚մաքառի այնպէս թէ մինակ բազուկը քսան հոգւոյ ոյժ ունի . . . իր սուրը կ՚կոտրի . . . շինական զինուորի մը ձեռքէն տապար մը կը կորզէ . . . հարուած հարուածի վրայ տալով՝ Ֆրօն-տը-Պէօն ասպետիկ կ՚նեղէ . . . ։ Հսկայն կ՚ծռի և կ՚երերի՝ իբրև կաղնի մը փայտասէն տապարէն . . . ահա կ՚ընկնի՛, կ՚ընկնի՛։

— Ո՞վ, միթէ Ֆրօն-տը-Պէօ — գոչեց Իվանհօէ։

— Այո՛, Ֆրոն-տը-Պէօ — պատասխանեց Հրէուհին։ — Գոռոզ տաճարականն իր զինուորներուն դլուխն անցած անոր օդնութեան կ՝դայ . . . ։ Իրենց միացած զօրութիւնը կ՝ստիպէ Սև ասպետը կայ առնլու . . . ։ Ֆրոն-տը-Պէօն պարսպէն ներս կ՝քաշեն։

— Պաշարողները փակարանը մտան, այնպէս չէ՞ — ըսաւ Իվանհօէ։

— Այո՛, անոր տիրեցին — դոչեց Ռեբեկա — և արտաքին պարսպին մօտ պաշարեալները խստիւ կ՝նեղեն. ոմանք եղարանները կը կանգնեն, ոմանք մեղուներու պէս կ՝բզզան և կ՝աշխատին իրարու ուսին վրայ ելնել։ Եւ ահա քարեր, գերաններ, կոճղեր կ՝նետեն իրենց գլուխն, և քանի վիրաւորներն ետևի կողմը կ՝առնուն կ՝տանին, յարձակման նոր նոր մարտիկներ անոնց տեղը կ՝անցնին։ Աստուած մեծ, միթէ մարդկան քու պատկերդ տուիր որպէս զի իրենց եղբարց ձեռք այսպէս այլակերպ դառնան։

— Հիմակ այդ բանին մի՛ մտածեր — ըսաւ Իվանհօէ — այդպիսի մտածութիւններ ընելու ատեն չէ։ Որ կողմը կ՝յաղթէ, ո՛րը կ՝յաղթահարի։

— Եղարանները վար տապալեցին — պատասխանեց Ռեբեկա տարտնջալով — անոնց ներքև զինուորները ճշմռուած միջանցքներու պէս տապատ կ՝կենան . . . բերդակալները վրայ կ՝ելնեն։

— Սուրբ Գէորգ օգնութեան հասնի — ըսաւ ասպետը — միթէ ապիրատ գեղացի զինուորները կ՝տկարանա՞ն։

— Ո՛չ — դոչեց Ռեբեկա — ճշմարիտ զինուորներու պէս կ՝կռուին։ Սև ասպետն իր ծանր տապարով դունակին կ՝մօտենայ։ Մտիկ ըրէ զարկած շանթահար հարուածները. պատերազմի դոռ ու դոչումին և զինուորներու աղաղակներու մէջ ահա կ՝լսուին։ Այս արիասիրտ ախոյեանի վրայ քարեր և գերաններ կ՝տեղան, և բնաւ հոգ չըներ իրրև թէ աղուամազ կամ փետուրներ լինէին։

— Ս. Յովհաննէս . . . վկայ — դոչեց Իվանհօէ իր անկողնին վրայ խնդալին ելնելով — ինձ կ՝երևէր որ Անկլիա մարդ մը միայն կար որ այսպիսի արիութիւն մը գործէր։

— Դունակը կ՝դղրդեն — շարունակեց Ռեբեկա — կ՝քայքայի. կտոր կտոր կ՝լինի իր հարուածներուն ներքև . . . շինական զինուորները կը սրանան . . . արտաքին ամրոցները կ՝առնուն . . . ահ, Աստուած, պարիսպներուն բարձունքէն փոսին մէջ կ՝գահավիժին բերդականները . . . ո՛ մարդիկ, եթէ ճշմարտապէս մարդ էք, խնայեցէք անոնց որ չեն կարող ինքզինքնին պաշտպանել։

— Կամուրջը . . . կամուրջն որ դղեկին հետ հաղորդակցութիւն ունի, ձեռ.ք անցուցին — գոչեց Իվանոֆ։

— Ո՛չ, պատասխանեց Ռեպեկա — տաճարականը խորտակեց այն տախտակն որու վրայէ կ՚անցնէին։ Շատ քիչ բերդակալներ իրեն հետ դղեակը քաշուեցան։ Միւսներուն ձգած վայնասունէն կրնաս երևակայել իրենց վիճակն։ Աւաղ, կ՚դիտեմ՝ որ աւելի տաժանելի է յաղթութեան վրայ նայիլ քան թէ ճակատամարտին հետևիլ։

— Հիմակ ի՞նչ կ՚ընեն, օրիորդ — ըսաւ Իվանոֆ — նորէն նայէ, նայէ անգամ մ՚ևս։ Թափուած արեան վրայ վշտանալու ժամ չէ։

— Ու այժմ գործն աւարտած է — պատասխանեց Ռեպեկա։ Մեր բարեկամներն իրենց գրաւած արտաքին ամրոցին մէջ կ՚ամրանան, և թշնամւոյն սլաքներուն դէմ այնչափ լաւ պատսպարուած կ՚երևին, որ մինակ բերդապահներն ատեն ատեն քանի մը նետեր կ՚արձակեն, զանոնք նեղելու քան վնասելու մտօք։

— Մեր բարեկամներն — ըսաւ Իվանոֆ — չպիտի թողուն անշուշտ այսպէս փառաւորապէս սկսուած և յաջողութեամբ 'ի կատար ելած ձեռնարկութիւն մը։ Ո՛հ, ոչ, ես վստահութիւն ունիմ այն արի ասպետին վրայ որուն տապարը խորտակեց կաղնիի կոճղեր և երկաթի ձողեր . . . ։ Զարմանալի՛ բան — մրմնաց նա առանձին — որ այստեղ երկու մարդ գտնուի որ այսպիսի յուսահատ գործի մը ձեռնարկեն։ Սև յատակի վրայ փականք և շղթայ, ի՞նչ կ՚նշանակեն այս նշանները . . . միթէ ուրիշ բան չեմ տեսներ։ Ռեպեկա, որով կարող լինիս իմանալ թէ ո՞վ է Սև ասպետը։

— Ո՛չ ինչ — պատասխանեց Հրէուհին — իր հանայն զէնն ու զարդը գիշերային ագռաւի թևին պէս սև է, և չեմ տեսներ նշան մ՚որ զինքն ուրիշներէն տարբերէ։ Բայց անգամ մը տեսնելով անոր բազկին զօրութիւնը բերդի մէջ, կ՚երևի ինձ որ հազար մարտիկներու մէջ անգամ պիտի կարենամ զինքը ճանչել։ Կուռի կ՚արանայ որպէս թէ հացկերոյթի մը հրաւիրուած լինէր։ Իր վրայ մարմնական ուժէն տարբեր բան մը կայ. կարծես թէ իր բոլոր հոգին, իր ախոյեանի բոլոր զօրութիւնը կ՚ընդարձակի ամէն անգամուն որ հարուած մը թափ տայ թշնամին։ Ասուած նեղրողամիտ լինի անոր թափած արիւնին համար։ Սոսկալի այլ վսեմ տեսարան մ՚է այս բաղուկը նշմարել և տեսնել թէ ինչպէս մէկ մարդ ու սիրտ կարող է բիւրաւոր մարդիկ յաղթահարել։

— Ռեպեկա — ըսաւ Իվանոֆ — դու. դիւցազն մը նկարագրեցիր

ինձ. պաշարումներն անշուշտ քիչ մը հանգիստ կ'առնուն որպէս զի իրենց ոյժը քիչ մը կազդուրեն, կամ փոսն անցնելու հնարը փնտռեն։ Այն ասպետին պէս պարապլուխ ունեցող գունդ մը, ամօթալի երկիւղ, դժոխի վարանումներ չունենար, այսպիսի արիական գործ մը չեն թողուր, քանի որ արդելքներով տաժանելի դարձող գործ մը փառայեղ կ'դառնայ։ Իմ տանս պատուոյն վրայ կ'երդնում՝, իմ պայծառ սիրուհւոյս վրայ կ'երդնում՝ որ սաս տարի գերութիւն քաշելու տրամադիր կ'գտնուէի եթէ օր մը միայն այսպիսի պայքարի մ'ասեն։ այն արիասիրտ ասպետին մօտ պատերազմէի։

— Աւա՜ղ — ըսաւ Ռեպեկա պատուհանէն վար իջնելով և վիրաւոր ասպետին անկողնոյն մօտ գալով — փառաց այդ հրապոյր խղձդ, քու արդի տկարութեան համար զղացած ցաւդ ու հանած տրտունջներդ քու առողջութեան պիտի վնասին անշուշտ։ Ի՞նչպէս կ'մտածես ուրիշներուն վէրք տալ քուկդ բժշկելէն առաջ։

— Ռեպեկա — ըսաւ Իվանհօէ — դու չգիտես թէ քանի դառն է մարդու մ'որ ասպետութեան սկզբանց մէջ մեծցեր է, իրրև քահանայ կամ կինի մը պէս անգործ նստիլը, մինչդեռ իր շրջս կողմը պանծալի նախձիրներ կ'գործեն։ Պատերազմի սէրը մեզ ապրեցնող անուշդն է. պատերազմի փոշին մեր մթնոլորտն է. մենք կ'ապրինք, կ'փափաքինք միայն ապրիլ երբ յաղթական ենք և անուանի։ Ասոնք են միայն ասպետութեան կանոններն։ Ասոնք են ահա, նորաբոյս օրիորդ, ասպետութեան կանոնները զոր երդմամբ ընդուներ և անոր մեր ամենէն սիրական բաները կ'զոհենք։

— Աւա՜ղ — ըսաւ գեղանի հրէուհին — և ի՞նչ է այս, ազնիւ ասպետ, եթէ ոչ մեսիտութեան սառանային զոհ մը, Տոլոգի հօր ողջակէզ մը։ Բոլոր թափած արեանդ, բոլոր կրած աշխատութեանդ և քու գործերուդ պատճառած արտասուայ՝ իրրև վարձ, ի՞նչ կ'մնայ քեզ, երբ մահը կ'գայ խորտակելու հզօր մարդուն նիզակին և իր պատերազմի երիվարին թռիչքը սանձել։

— Ի՞նչ կ'մնայ — գոչեց Իվանհօէ։ — Նորաբոյս օրիորդ, կ'մնայ փառք, փառք որ մեր շիրիմը կ'ոսկեզօծէ և մեր անունը կ'խնկարկէ։

— Փառքը — պատասխանեց Ռեպեկա։ — Աւա՜ղ, միթէ ժանգահար վէրան է որ ասպետին նոսեմ և փոշելից դերեզմանին վրայ ասպարի պէս կ'կախուի, միթէ արձանագրութեան ուրուած տառերն են զոր անուս կրօնականը դժուարութեամբ կ'կարդայ հեռաքրքիր ուխտաւորին, միթէ ասոնք բուսական վարձք են ամէն անուշ զգացումներ զո-

հելու, թշուառներ ընելու համար թշուառութեամբ ապրելու։ միթէ թափառական վիպասանին կոչտ քերթուածները այնքան հրապուրելի են որ տնային սէր, զողջոյկ բարեկամութիւն, անգորրութիւն և երջանկութիւն ապրելու կոխէք, որպէս զի այն երգերուն գիւցազնը դառնաք զոր թափառաշրջիկ քերթողներ կ՚երգեն գինով գեղջուկներու՝ մինչդեռ իրենց երեկոյեան դարեջուրը կ՚ըմպեն։

— Հիրվարտի հոգւոյն վրայ կ՚երդնում — գոչեց ասպետն անհամբեր — որ դու, նորատի օրիորդ, ըսածդ չգիտես։ Դու կ՚փափաքիս ասպետութեան մնքուր լոյսը մարել, որ միայն կարող է ազնուականը ստորնէն, ասպետը գեղջուկէն և վայրենիէն որոշել, որ մեր կեանքը մեր պատիւէն շատ վար կ՚դասէ, վշտաց, նեղութեան և ազէտից վրայ մեզ յաղթական կ՚հանէ, և մեզ կ՚ստրկեցընէ ուրիշ չարիք չճանչել այլ միայն պարտութիւնը։ Դու քրիստոնեայ չէս, Ռեպեկա, և քեզի անծանօթ են այն վսեմ զգացումներն որ ազնիւ օրիորդի մը սիրտը կը հպարտեն երբ իր սիրահարն այնպիսի արիութեան գործ մը կ՚կատարէ որ իր սէրը կ՚նուիրագործէ . . .։ Գիտէս արդեօք, նորաբոյս օրիորդ, որ ասպետութիւնը մնքուր և վսեմ զգացումներու ստուգն է, հարստահարելոյ նեցուկն, անիրաւութիւններու վրիժառուն և բռնաւորներու իշխանութեան սանձն։ Առանց ասպետութեան ազնուականութիւնը ստոյն անուն մը կ՚դառնար, և անոր նիզակին ու սրին մէջ՝ իր լաւագոյն պաշտպանութիւնը կ՚գտնէ ազատութիւնը։

— Արդարև՝ ես — ըսաւ Ռեպեկա — այնպիսի ցեղի մը ծնունդն եմ՝ որ իր քաջութեան կողմէ նշանաւոր հանդիսացաւ իր հայրենի երկրին պաշտպանութեան առեն, բայց երբ՝ դու ես ազգերու կարգն էր՝ պատերազմի մղեց միայն Աստուծոյ հրամանաւ կամ հայրենիքը բռնութենէ ազատելու համար։ Փոքրն ձայնն այլ ես չգրգռեր Ցուդան, և իր խստան որդիքը քաղաքային և զինուորական բռնութեան հլու նահատակներն են։ Քաջ խօսեցար, ազնիւ ասպետ, մինչև որ Աստուածն Յակոբայ իր ընտրեալ ժողովրդեան համար նոր Գեղէոն մը կամ Մաքաբէ մը չյարուցանէ, անվայել է հրէայ աղջկան մը ճակատամարտի և պատերազմի վրայ խօսիլը։

Մեծասիրտ օրիորդն իր խօսքն աւարտեց տրտում ձայնով մ՚որ իր ժողովրդեան նուաստութեան վրայ ունեցած համոզումը բացորոշ կը յայտնէր, որ թերևս աւելի դառն կ՚դառնար իրեն համար մտածելով որ Եհովան զինքը կ՚նկատէր իբրև անձ մ՚որ իրաւունք չունէր պատուոյ խնդրոյ մը միջամտիլ կամ ազնիւ ու վեհանձն գործունեութիւն յայտնել։

— Ո՜հ, որչափ քիչ է Ձանչէ այս իմ սիրտս — ըսաւ նա իւրովի — թէ կ՚երևակայէ որ վատութիւնը կամ ստորնութիւնը հարկաւ մեր բնութեան յարակից են, նպաստելեցուց այլանդակ ասպետութիւնը դարձնելուս համար։ Տա՛ր երկին որ իմ արեանս զոհողութիւնը՝ կաթիլ առ կաթիլ թափելով կարողանայի Յուդայի գերութիւնը փրկել։ Տա՛ր Աստուած՝ որ այս զոհողութեամբ կարողանայի հօրս և իր այս բարերարին շղթաները քակել։ Ա՛հ, քրիստոնեայն պիտի տեսնէր այն ժամանակ թէ Աստուծոյ ընտրած ժողովրդեան աղջիկը պատրաստ չէ մեռնիլ քաջութեամբ նպաստելու համար հպարտ աղջկանց միոյն պէս, որ կ՚պարծին թէ հիւսիսային կոշտ և սառնալի աշխարհին մէկ սնապարծ իշխանէ մը կ՚սերին։

Յետոյ Ռեբեկա վիրաւոր ասպետին անկողնոյն կողմը դարձուց աչքը։

— Ա՜հա կ՚նիրհէ նա — ըսաւ Ռեբեկա — մարմինն արեան կորուստէն և միտքն այսքան տարբեր տարբեր այլայլութիւններէ տկարանալով, բնութիւնն այս ժամանակաւոր անդորրութենէ օգուտ կ՚քաղէ որպէս զի քնով իր ոյժը կաղդուրէ։ Աւա՜ղ, միթէ յանցանք է անոր նայիլս, թերևս այս վերջին նայուածքս պիտի լինի. կարելի է որ քիչ ատենէն այս աղուոր կերպարանքը չպիտի վառի այն արիական ոգւով որ մինչև անգամ իր քունին մէջ կ՚երևի, երբ ոնպուն՝ ուռած, բերանը բաց, աչերն արիւնանիշ այս ազնիւ ասպետն ոտնհար պիտի լինի այս անիծեալ դղեկիս յետին թշուառականին կողմէն, և չպիտի շարժի։ Եւ իմ հայրս... ո՜հ, իմ հայրս, չարիքն աղջկանդ սիրտը կ՚բնակի, վասն զի քրիստակ մաղերդ մուցյայ այս պատանիին շէկ գիսակը տեսնելով։ Ո՛ գիտէ, թերևս այս ամէն աղէտքն Եհովայի բարկութեան կարապետներն են անսիրտ աղջկանդ դէմ որ օտարականի մը գերութեան աւելի հոգ կ՚տանի քան թէ իր հօրն, որ Յուդայի տոհմապանքը կ՚մուռնայ և անծանօթ հեթանոսի մը գեղեցկութեան կ՚նայի։ Բայց այս յիմարական զգայումը սրտէս պիտի քաղեմ, եթէ այս սիրտս խորտակելու ատեն իսկ մէն մի չիլ արիւնի անգամ։

Ուստի իր քօղովն ամբապէս ծածկուեցաւ և վիրաւոր ասպետին անկողնէն քիչ մը հեռու նստաւ՝ կռնակն անոր դարձընելով, և ջանաց զօրացընել իր հոգին ոչ միայն դրսէն սպառնացող աղէտից դէմ, այլ նաև բոլոր մասնտու ներքին զգայումներուն դէմ որ ակամայ իր հոգին ի՛ համակէին։

ԳԼՈՒԽ Լ

Գնա՛ մոխիր սեղեակը, նայէ վրայ իր մահճէ·
Զէ այն անց, յայտնութիւն խաղաղասէր սուերի՝
Որ՝ ինչպէս մի արտոյտ՝ դէպ յերկին հոլաթև՝
Փափկիկ ցօղով առտուան անուշ քամիով թեւթև՝
Ցերանութիւն կը թռի՝ հառաչով բարի մարդկան։

Իսկ Անսելմ մեկնի այսպէս·

Հէյն «ողբերգ»։

Պաշարող կունդին յաջողութենէ ետև՝ պատահած հանդստութեան ժամուն՝ միանգամ մէկ կողմն իր յաղթանակը ապակիներու կ'պատրաստուէր և միւսը պաշտպանութեան միջոցները կ'ամրացնէր, տաճարականն և տը Պրէսի դղեկին սրահին մէջ կարճատև խորհրդի մը նստան։

— Ո՞ւր է Ֆրօն-տը-Պէօ — հարցուց վերջինն՝ որ դղեկին միւս կողմին պաշտպանութիւնը ուղղեր էր — կ'ըսեն թէ սպաննուեր է։

— Դեռ ողջ է — ըսաւ պաղութեամբ տաճարականը — դեռ ողջ է։ Բայց եթէ իր վահանին վրայի ցլին գլուխն, և՝ 'ի պաշտպանութիւն՝ տասն երիւթի թանագ ունենար, դարձեալ ընդունած տասպարի հարուածին ներքև անշուշտ տասպաստ պիտի ընկնէր։ Քանի մը ժամ ևս և Ֆրօն-տը-Պէօ անդին իր նախնեաց մօտ պիտի երթար, և ճօհն իշխանին կուսակցութենէն հզօր անդամ մը շորթեալ պիտի կորստուէր։

— Եւ սադանի թագաւորութիւնը լաւ պարգև մը պիտի ստանար — ըսաւ տը Պրէսի։ — Ահա այս փորձանքը կ'պատահի երբ մարդ տարբերն ու հրեշտակները կ'ծաղրէ և կ'հրամայէ որ պարսպին բարձունքէն սրբանուէր անդրիներ և արձաններ այն գռեհիկ թշնամիներու գլուխը նետեն։

— Կորի՛ր, դու յիմար ես — ըսաւ տաճարականը — քու աւելորդապաշտութիւնդ Ֆրօն-տը-Պէօյի ամբարշտութեան կ'հաւասարի։ Ձեզնէ և ոչ մին կարող է հաւատոյ կամ անհաւատութեան պատճառը մեկնել։

— Խաչ հանէ երեսդ, պարոն տաճարական — պատասխանեց տը Պրէսի — խնդրեմ լեզուիդ չափ տալ երբ խօսքդ ինձ կ'ուղղես։ Տիրամայր վկայ, ես քեզնէ և քու միաբանութենէդ շատագոյն քրիստոնեայ

ՄԻ՝ եմ, վասն զի դուրսը՝ թերևս իրաւամբ՝ շշուկ մը կ՚պտըտի թէ Սիրանի տաճարականներն իրենց ծոցը բաւական հերետիկոսներ կ՚սնուցանեն, և թէ Պրայն տը Պուա-Պիլպէր սեպուհն անոնց դասէն է։

— Այդ ձայներուն միտ մի դներ — պատասխանեց տաճարականը պաղութեամբ և դղեկին պաշտպանութեան հոգը տանինք։ Այն անպիտան գեղամարտիկներն (yeomen) ինչպէս կուուեցան քու կողմդ։

— Նոյն իսկ ատանաներու պէս — գոչեց տը Պրէսի — պարիսպներուն մօտ մրջունի պէս կ՚վխտային պարապդուխ ունենալով, ինչպէս կարծեմ, նետամարտի մէջ մրցանակը վաստակող աղեղնաւորը, վասն զի անոր շեփորն ու կամարը Ճանչցայ։ Ահա տես միանգամ Գիլբուրթի այնքան գովեալ քաջաքաղքտութիւնն, որով այս ստահակները մեզի դէմ ապստամբելու խրախոյս առին։ Եթէ անթափի ղէն ու զարդ չկրէի, այն անզգամը գիս անխնայ պիտի սպաննէր իբր թէ որսի այծեամ մը լինէի։ Իմ գինուց մէն մի բեւեռին նշան առաւ իր կուռ նետերով որ իմ կողերս այնպէս ուժգին զարկին որպէս թէ ոսկրներս երկաթէ լինէին։ Եթէ զրահիս ներքև սպանիական վերուս հագած չլինէի՝ անշուշտ բաներս բռնած էր։

— Բայց դու լաւ պաշտպանեցիր քու կայանդ — ըսաւ տաճարականը — մինչդեռ մենք արտաքին ամրոցը կորուսինք։

— Այդ ծանր կորուստ մ՚է — ըսաւ տը Պրէսի — այն ստահակները դղեակին ՝ի մօտուստ զարնելու համար ամրոցին մէջ պիտի պատսպարին, և եթէ լաւ չհսկենք, կարող պիտի լինին աշտարակին մէջ անպաշտպան անկիւնն առնուլ, կամ անտես պատուհան մը, և յետոյ մեր վրայ խուժել։ Բաւական շատոր չեն մեր մարդիկն, չեն կրնար դղեկին ամէն կողմը պաշտպանել, և կ՚զանգատին որ այն ինչ տեղ մը կ՚երևին և իսկոյն նետերու տարափ մ՚իրենց վրայ կ՚տեղայ, ինչպէս տօնի օր գիւղացիի մը նշանադիրը։ Գրօն-տը-Պէօ հոգեվար է, իր ցլի պէս գլխէն և կոշտ ուժէն։ Չենք կարող օգնութիւն մը ստանալ։ Դու ինչ կ՚մտածես, Պրայն, միթէ խոհեմութիւն չէ՞ հարկին գլուխ ծռելև սա մեր անօրէն թշնամիներու հետ հաշտուիլ գերիները յանձնելով։

— Ինչպէս — գոչեց տաճարականը — մեր գերիներն ետ տանք և առակ նշաւակի ու միանգամայն նզովքից սուրկնայ դառնանք։ Քանի՞ նշանաւոր են մեր մարտիկները, գիշերայն անպէն ուղևորներ գերելու յանդգնութիւն ունին, սակայն չեն կարող այս բերդէն վանել վտարակներու թափառիկ խումբ մը, որուն հրամանատարներն են խողոպրած

ներ, միմոներ և մարդկային աղգի դիրտը . . . : Քանի՞ եպերելի է խորհուրդդ, Մօրիս տը Պրէսի : Լաւ ևս ունիմ այս բերդիս փլատակներուն ներքև մարմինս ու ամօթս թաղել քան թէ այդպիսի անարդ և անպատիւ անձնատրութեան հաւանիլ :

— Ուրեմն պարիսպն 'ի վեր ելնենք — ըսաւ Պրէսի դանդաղօրէն — երթէք մարդ մը, թէ թիւրք և թէ տաճարական՝ ինձի չափ կեանքն առ ոչ ինչ չէ դրած . բայց կարծեմ թէ անպատուութիւն չէ փափաքիլ որ իմ Ազատ արի ընկերներուս գնդէն քառասունի չափ այս տեղ աջակից ունենայի : Ո՛ իմ արիական նիզակներս, եթէ դիտնայիք միայն թէ ի՞նչ ծանր վիճակի մէջ կ'գտնուի այսօր ձեր հրամանատարն, ի՞նչպէս պիտի տեսնէի իսկոյն իմ դրօշակիս ծածանիլը ձեր համախումբ տէգերու վրայ, և ի՞նչպէս արագ այս գեղջուկներու դասակը պիտի փախուստ տար միայն ձեր դալստեան լուրն առնլով :

— Ըստ հաճոյս կոչէ՞ ով որ կ'ուզես — ըսաւ տաճարականը — բայց ճնացած դինուորներով պաշտպանենք նաև մեր դիրքն : Ըստ մեծի մասին՝ ասոնք Գրօն-տը-Պէօյի մարդիկն են՝ որ իրենց բիւրաւոր լպիրշ և բուռն գործերու համար անկլիացւոց ատելի են :

— Աւելի լաւ — ըսաւ տը Պրէսի — այս կոպիտ ստրուկներն իրենց արեան յետին կաթիլը պիտի թափեն ինքզինքնին պաշտպանելու համար, քան թէ մեզ արտաքին գեղջուկներու վրէժխնդրութեան ենթարկել : Ուրեմն գործի սկսինք, Պրայն տը Պուա-Կիլպէր, և՝ թէ ողջ մնամ և թէ մեռնիմ, պիտի տեսնես որ այսօր Մօրիս տը Պրէսի իբրև տոհմիկ ազատանի պիտի վարուի :

— Ելէք, պարիսպներն ելէք — գոչեց տաճարականն : Եւ երկուքնին պարիսպն ելան որպէս զի ինչ որ ճարպիկութիւնը կարող է թելադրել և արիութիւնը կատարել, 'ի գործ դնեն դղեկին պահպանութեան համար : Դիւրաւ հասկըցան որ ամենէն շատ վտանգի ենթակա դտնուող տեղը այն ամրոցին դիմացի կողմն է, զոր պաշարողներն արդէն գրաւեր էին : Իրաւ է որ խրամը կ'զատէր ամրոցը դղեկէն և դիւրին գործ չէր պաշարողներու համար դէմ առ դէմ գոնակին վրայ յարձակիլ, որուն հետ ամրոցը հաղորդակցութիւն ունէր, առանց խրամէն անցնելու : Բայց Պրէսի և տաճարականը միաբան խորհեցան որ պաշարողներն՝ եթէ իրենց սպարապետին ցարդ ցոյց տուած հնարագիտութեամբ վարուին, պիտի փորձ փորձեն՝ ահագին յարձակմամբ բերդապահներուն ոյժն յատկապէս այն տեղը դուսարել, և նոյն պահուն բերդին նուազ պաշտպանեալ մէկ վայրը գրաւելու համար պարտ

ու պատշաճ միջոցները տնօրինել։ Այսպիսի որոգայթի մը դէմ զինելու համար, ըստ որում, ինչպէս յայտնի է, բերդապահ զինուորները քիչուոր էին, ասպետները տեղ տեղ՝ պատերուն վրայ պահակներ դրին այնպէս որ իրարու հետ հաղորդակցին, և ուր որ վտանգ մը տեսնեն իսկոյն ձայն տան և նշան։

Ուստի՝ որոշուեցաւ որ տը Պրէսի դունակին պահպանութեան հսկէ, իսկ տաճարականը՝ քսանի չափ մարդ՝ իբրև պահեստի վաշտակ՝ իր մօտ պահէ ու պատրաստ գտնուի վազել իսկոյն ուր որ սպառնալից վտանգ մը տեսնուի։ Ամրոցին կորուստը սա ձախորդ հետևութիւնն ևս ունեցեր էր որ՝ թէև դղեկին պատերը բարձր էին, պաշարեալներն անկից չէին կարող դիտել՝ առջի ճշտութեամբ, թշնամւոյն շարժումները. վասն զի ցանցաւ պուրակ մը ամրոցին դրան այնչափ կ՚մօտենար՝ որ պաշարողները կրնային, ոչ միայն անվտանգ, այլև բերդապահներէն անտես մնալով, ըստ հաճոյս մարտիկներ ներս մղրնել։ Հետևապէս անտոյգ լինելով թէ փոթորիկը դղեկին ուր կողմէն պիտի պայթի, տը Պրէսի և իր ընկերը ստիպեալ էին ամէն յեղակարծ պատահարի դէմ կազմ ու պատրաստ գտնուիլ, և իրենց զինակիցները՝ թէև քաջարի, կ՚զգային այն մտայոյզ վհատութիւնն որ թշնամիներէ շրջապատեալ մարդոց բնական է, քանի որ այս թշնամիներն յարձակման ժամանակն ու եղանակն ըստ քմաց ընտրելու ազատութիւնն ունէին։

Նոյն միջոցին՝ դղեկին տէրը՝ մարմնաւոր ցաւերու և բարոյական անձկութեան ենթակայ՝ կ՚ճնար անկողնոյ մէջ։ Ֆրօն–տը–Պէօ՝ նոյն աւելորդապաշտ ժամանակի կոյր բարեպաշտներու սովորական հնարը չունէր, որոց շատերն՝ իրենց գործած մեղքը քաւելու համար առատ պարգևներ կ՚նուիրէին եկեղեցիներու համար, և այս կերպ ապաշխարութեամբ և ներողութեան յուսով իրենց արհաւիրքը կ՚մեղմէին, և թէպէտ՝ հարստութեան այս օրինակ ասացած սրտի անդորրութիւնը չէր նմաներ անկեղծ ապաշաւի հետևող անդորրութեան, ինչպէս ապիոնի միջոցաւ ձեռք ձգուած ապուշ թմրութիւնն առողջարար և բնական քունի չնմանիր, սակայն դարձեալ այս վիճակը խղճի վառվռուն տագնապներէն նախադաս էր։ Բայց Ֆրօն–տը–Պէօյի պէս դաժան և զօշաքաղ մարդու մը մոլութիւններու մէջ՝ տիպական էր ապահութիւն և լաւ ևս կ՚համարէր եկեղեցի և քահանայ գիմադրաւել, քան անոնց ձեռօք թողութիւն և ներում՝ գնել իր հարստութիւններն ու կալուածքը փոխարէն տալով։ Տաճարականն՝ որ ուրիշ տեսակ թերահաւատ մ՚էր, իր զինակիցը ճշտիւ չէր նկարագրած՝ ըսելով թէ

Գրոն–տը–Պէօ՝ի հարկին չպիտի կարենար ընդհանուր կրօնի մասին գաւանած թերահաւատութեան պատճառը յայտնել. վասն զի Գրոն–տը–Պէօ կրնար պատճառ բերել թէ եկեղեցին շատ սուղ կ՚ծախէ իր ներողութիւններն, և թէ ծախու հանած հոգևոր ազատութիւնն հնարին չէր գնել, ինչպէս Երուսաղէմի առաջին հրամանատարութիւնը «մեծ գումարով մը» և Գրոն–տը–Պէօ լաւ ևս ունէր դեղին զօրութիւնն ուրանալ քան բժշկին ծախսը վճարել։

Բայց արդէն հասեր էր այն ժամն երբ երկիրն ու բոլոր իր դանձերն իր աչաց առջևէն անհետ պիտի սահէին, և վայրենի ասպետը՝ թէև ապառաժուտ սիրտ մ՚ունէր, ահ ու սարսափ պիտի զդար ապագայ կենաց խաւարին մթութեան մէջ իր նայուածքն ածելով։ Իր մարմինն այրող տենդը մաքին անհամբերութիւնն ու օրհասը կ՚զրդռէր և իր մահուան անկողինը դեռ ևս սոսկումի նորանոր զգացումներու հետ մաքառող քինախնդիր և աննկուն բնաւորութեան տէր անձի մը տեսարանը կ՚ընծայէր։ Մտքի զարհուրելի վիճակ մ՚էր, որուն նմանը կը տեսնուի միայն այն ահռելի վայրերն՝ ուր դահոյաններ կ՚ելնեն առանց յոյսի, խղճի խայթեր առանց ապաշաւի, ներկայ օրհասական վիճակի ահարկու վշտակցութիւնն, և նախազգացում մ՚որ այս օրհասն ոչ դուռ և ոչ դադար պիտի ունենայ։

— Ո՞ւր են այն շուն քահանաներն հիմակ — ոռնաց Գրոն–տը–Պէօ — որ իրենց հոգևոր խեղկատակութեան այնքան արժէք կ՚ընծայեն։ Ո՞ւր են այն բոկոտն կրօնաւորներն որոց համար ծերունի Գրոն–տը–Պէօ Ս. Աննայի վանքը հիմնեց, իր ժառանգորդը շատ մ՚արտաքին մարդերէ և արտերէ զրկելով, ո՞ւր են այժմ այն անկուշտ շուները։ Հաւատի եմ որ գարեջրի մէջ կ՚լողան, կամ իրենց ձեռնածուի խաղերը կ՚խաղան ժլատ դեղջուկի մ՚անկողնին մօտ։ Զիս՝ որ իրենց հիմնադրին ժառանգն եմ, զիս՝ որու համար պարտաւոր են աղօթել հիմնարկութեան կանոնադրին համեմատ, զի՛ս, ո՛հ, ինչ ապաշնորհ հրէշներ են, կ՚թողուն որ՝ անտուն և անտէր շան մը պէս՝ մեռնիմ առանց խոստովանանքի և հաղորդի։ Ըսէ տաճարականին որ ասա դայ՝ քահանայ մ՚է նա, և կարող է բան մ՚ընել։ Բայց ոչ, լաւագոյն է սատանային խոստովանիլ քան թէ Պրայն տը Պուա–Կիլպէրի, որուն փոյթը չէ ոչ երկին և ոչ դժոխք։ Լսած եմ ծերուններ որ աղօթից վրայ կ՚խօսէին, ինքնահնար աղօթից վրայ, և անոնք պէտք չունին տուտ քահանաներու դիմել կամ կաշառել, բայց ես, ես չեմ համարձակիր։

— Ռէժինալտ Գրօն–տը–Պէօ — ըսաւ իր անկողնոյն քովէն ձեղքած և սուր ձայն մը, դու, դու կ'ապրիս ուրեմն ըսելու թէ կայ բան մը զոր ընելու չես համարձակիր։

Երբ Գրօն–տը–Պէօ իր բազմատանջ խիղճով և դղրդեալ մարմնով այս տարօրէն ձայնը լսեց որ իր մենախօսութիւնն ընդմիջեց, կարծեց, ինչպէս կ'կարծէին այն ժամանակ աւելորդապաշտ մարդիկ, թէ սատանն է որ Հոդեվարներուն անկողիններու բոլորտիքը կ'յաճախեն որպէս զի անոնց միտքը յաւիտենական փրկութեան խորհուրդներէն դարձընեն։ Դող ելաւ, և պաղ քիրտ մ'իր մարմինը ծածկեց, բայց յանկարծ իր սովորական արիութիւնը յիշելով զոչեց.

— Ո՞վ կայ անդ, ովեւ դու։ Ո՞վ կ'համարձակի իմ խօսքերուս արձագանք տալ դիշերային ազուաւի ձայնով. անկողնիս մօտ եկուր որպէս զի քեզ տեսնեմ։

— Ես քու չար հրեշտակդ եմ, Ռէժինալտ Գրօն–տը–Պէօ — պատասխանեց ձայնը։

— Ուրեմն քու մարմնական ձևովդ, ինքզինքդ ցոյց տուր ինձ — պատասխանեց Հոդեվար ասպետն — եթէ իրօք սատանայ մ'ես, մի կարծեր թէ ես քեզնէ պիտի երկնչիմ։ Յաւիտենական դեհենը վկայ, եթէ միայն կարենայի իմ չորս կողմն սաւառնող քսամեալի նկարներուն դէմ մաքառիլ, ինչպէս որ երկրային վտանգներու դիմադրեր եմ, նոյն իսկ երկին և դժոխք չպիտի ըսէին որ կռիւը մերժեցի։

— Քու մեղայդ վրայ մտածէ, Ռէժինալտ Գրօն–տը–Պէօ — ըսաւ նորէն դրեթէ դերբնային ձայնը — մտածէ ապաստամբութեանդ, յաւիշտակութիւններուդ և մարդասպանութեանդ վրայ։ Ո՞վ գրգռեց վաւաշոտ ճօհն Իշխանն իր ալեւոր հօր, իր վեհանձն եղբօր դէմ ապստամբելու։

— Դու ինչ որ ես, դև, քահանայ կամ սատանայ — պատասխանեց Գրօն–տը–Պէօ — դու տուտ կ'խօսիս բերնիդ մէջ։ Ես միայն չգրգռեցի ճօհն Իշխանն ապստամբութեան, մենք յիսուն ասպետ և սեպուհ էինք, կիդրոնական դաւառներու ընտրելագոյն ազնուականները, նիզակ շարժող մարդոց մէջ ամենէն քաջերը։ Մինթէ ամենուն յանցանքին պատասխանատուն ես եմ։ Սուտ սադան, քեզ կ'անպոռնեմ, կորիր և այսուհետև մի շրջիր իմ անկողնիս մօտ, թող որ խաղաղութեամբ մեռնիմ եթէ դու մահկանացու էակ մ'ես, և եթէ սադան մը, քու ժամդ տակաւին հասած չէ։

— Դու ղէրոէ մեռնիս խաղաղութեամբ — կրկնեց ձայնը — նոյն իսկ

մահուան անկողնին մէջ, դու չպիտի յիշես քու ապանութիւններդ, այլ դղեկին մէջ արձաղանք տուող հեծեծանքն, և անոր պատերը դեռ ևս ներկող արիւնը։

— Դու չպիտի կարենաս դղրդել զիս քու ունայն խօսքերովդ — պատասխանեց Ֆրօն-տը-Պէօ քսամնելի և բռնադրօսիկ քրքիջով մը։ Երինկից հաճելի զուրծ մ'էր ըրածս երբ անհաւատ հրէին հետ այնպէս վարուեցայ, ապա թէ ոչ ինչո՞ւ համար պիտի սրբազործէին այն մարդիկն որոց ձեռքը սարակինացւոց արեան մէջ թաթախուած են։ Իմ ապանուած սաքսօն խոզպաններս իմ հայրենեաց, իմ ցեղիս, իմ վեհապետիս թշնամիներն էին։ Հօ, հօ, կ'նայիս որ վահանիս վրայ ծակ չկայ։ Միթէ խօսքդ հաստա՞ւ, միթէ ափ 'ի բերան մնայի՞ր։

— Ո՛չ, ապիրատ հայրասպան — պատասխանեց ձայնը — մնածէ հօրդ, մնածէ անոր մահուան վրայ. մնածէ այն խնջոյքի սրահին վրայ որ իր արեամբը ներկուեցաւ, այն արեան որ որդւոյ մը ձեռօք թափեցաւ։

— Հա՛ — պատասխանեց ասպետն՝ երկայն լռութենէ մ'ետև — եթէ դու այդ դէպքը գիտես, դու իրօք չարին հեղինակն ես, և ինչպէս վանականները կ'ըսեն, դու ամենագիտութիւն ունիս։ Կարծէի թէ այդ գաղտնիքն իմ և ուրիշ կնկան մը ծոցը փակուած է, իմ ոճրագործութեան թելադիրը, դաւակիցը։ Կորի՛ր, ձգէ զիս, սատանայ, և դնա Իւլրիգա սաքսօն վհուկը գտիր, այն միայն կրնայ ըսել քեզ ինչ որ ինք և ես միայն տեսանք։ Գնա, անոր գնա, կ'ըսեմ քեզ, այն որ վէրքը լուաց, գիակը կանգնեց և ապաննուած մարդուն բնականապէս և բնութեան օրինաց համեմատ մեռնողի մը կերպարանը տուաւ։ Գնա՛ անոր, նա եղաւ իմ փորձիչ չար ոգիս, իմ վատթար գրգռիչս և գործին վատթարագոյն մղիչակը. թո՛ղ նա ևս կրէ այն տանջանքն որ դժոխքի նախագուշակներն են։

— Արդէն զանոնք կ'կրէ — ըսաւ Իւլրիգա՝ Ֆրօն-տը-Պէօյի անկողնին մօտենալով — երկայն ատենէ վեր այդ բաժակէն խմած է, և անոր դառնութիւնն այժմ կ'մեղմի տեսնելով որ դու ևս այժմ մասնակից կ'գտնուիս։ Ակռաներդ մի կրճտէր, Ֆրօն-տը-Պէօ. մի այդպէս դարձներ աչերդ, բուռդ մի դոցեր սպառնալից դէմքով իմ վրայ նայելով։ Քու ձեռքդ որ քու անուանի հաւիդ ձեռքին պէս, կարող պիտի լինէր լերան ցլի մը գանկը մէկ հարուածով պատռել, այժմ իմինիս պէս տկար և անզօր է։

— Անարդ մարդասպան վհուկ, դարշելի բու — պատասխանեց

Ֆրոն-տը-Պէօ — ուրեմն դու ես որ կ'գաս իմ յուսահատութեանս վրայ հրճուիլ, և խնդութեան աղաղակներ հանել այն աւերակներու վրայ որ քու գործդ են։

— Այո՛, Ռէժինալտ Ֆրոն-տը-Պէօ — պատասխանեց կինն — Իւլրիգան է, քու սպաննած Գօրգիլ Վօլֆկէնկրի աղջիկն է, որ կը ներկայի և կ'խնդրէ քեզմէ քու հայրական տունէդ, իր հայրն ու ազգականներն, իր անունն ու իր պատիւը, վերջապէս ինչ որ Ֆրոն-տը-Պէօյի ձեռքէ 'ի կորուստ մատնեց նա։ Մտածէ անգամ մը թէ ինչ նախատինք կրեցի, Ֆրոն-տը-Պէօ, և պատասխան տուր եթէ ճշմարիտը չեմ խօսիր։ Դու իմ շար հրեշտակս եղար, այժմ ես քուկդ պիտի լինիմ, և իմ անէծքս մինչև հողիդ փչելդ քու գլխիդ վրայ պիտի թափեմ։

— Գարշելի անղգամ — ուռնաց Ֆրոն-տը-Պէօ — դու այն վայրկենին ականատես չպիտի լինիս։ Զեզի կ'ըսեմ, հէյ, Կայլս, Քլէմէնդ, Էօդաշ, Սէնդ Մօր, Սուեփան, բռնեցէք այս անիծեալ վհուկն, և պարապէն վար նետեցէք, նա մեզ սաքսօններուն մատնեց։ Հէյ, Սէնդ Մօր, Քլէմէնդ, տնտիրտ անդգամներ, ինչու չէք հասնիր։

— Վերստին կոչէ, արիասիրտ ասպետ — շարունակեց պառաւը սոսկալի հեգնութեան ժպիտով մը — քու աւատատէրներդ չորս կողմդ ժողվէ, և անոնք որ կ'ուշանան՝ խարազանի և բանտի դատապարտէ։ Բայց գիտցիր, հզօր զօրապետ — շարունակեց նա՝ յանկարծ իր ձայնը փոխելով։ — Անոնց կողմէ ոչ պատասխան, ոչ հնազանդութիւն և ոչ օգնութիւն պիտի ստանաս։ Մտիկ ըրէ սա զարհուրելի ձայները — վան դի յարձակումն ու պաշտպանութիւնը նորէն սկսելով՝ պարապին վրայէն ահուելի կերպով զոռ. ու գոչում կ'լսուէին — պատերազմի այս ժխորը քու տանդ անկումը կ'իմացընէ, արեամբ հիմ առած՝ Ֆրոն-տը-Պէօյի տան հիմունքը կ'խախտին այն թշնամեաց ձեռքէ զորս ամենէն շատ արհամարհած է։ Սաքսօնը, Ռէժինալտ, սաքսօնն է որ քու պարիսպդ կ'քանդէ։ Ինչու համար անգամալոյծ գեղջուկի պէս անկողին կ'մնաս, մինչդեռ սաքսօնը յարձակմամբ բերդդ կ'գրաւէ։

— Երկինք և սաղանք — գոչեց վիրաւոր ասպետն։ — Ո՛հ, քանի մը վայրկենի համար միայն լինի ոյժ տուէք որ ընդ քարշ երթամ սա խառնուրդին միանամ և իմ աստիճանիս յարմար մահ մը գտնեմ։

— Այդ բանին մի մտածեր, քաջդ մարտիկ — ըսաւ Իւլրիգա — դու զինուորի պէս չպիտի մեռնիս, այլ պիտի սատակիս իբրև աղուէս մ'իր որջին մէջ, երբ գեղացիներն անոր բոլորտիքը գտնուող յարկին կրակ տան։

— Ժանտաժուտ վհուկ, դու սուտ կ'խօսիս — գոչեց Ֆրօն-տը-Պէօ — իմ զինակիցներս արիաբար կ'մաքառին, իմ պարիսպս ամուր և բարձր է, և իմ երկու բարեկամներս սաքսօնեան բանակի մ'անգամ դիմադրաւ կենալու կարող են, թէև այն բանակը նոյն իսկ Հէնկիստի և Հօրսայի հրամանատարութեան ներքև իսկ լինին։ Տաճարականին և Աղատ ընկերներուն պատերազմի աղաղակն ամենուն վրայ կ'կոչայ, և պատոյս վրայ կ'երդնում որ մեր յաղթանակը հռչակելու համար մեր վառելիք ուրախութեան կրակը քու ոսկորներդ և մարմինդ պիտի այրէ։ Ես բաւական պիտի ապրիմ ըսելու համար որ երկրային կրակէն դեհենին մէջ գլորած ես, դեհենն որ երբէք քեզի պէս դիւական էակ մը չէ ծնած։

— Այդ յոյժ պահէ — պատասխանեց Իւլրիգա — մինչև որ փորձառութիւնն աչքդ բանայ։ Բայց ոչ — յարեց նա առջի խօսքն ընդմիջելով — այժմէն պիտի իմանաս այն դատապարտութիւնը զոր ոչ քու իշխանութիւնդ, ոչ յոյժդ, ոչ արիութիւնդ կարող պիտի լինին արգիլելու, թէև այն դատապարտութիւնը քեզի համար պատրաստուած է այս իմ տկար ձեռքս։ Միթէ չես դիտեր սա հեղձուկ և անել մուխն որ արդէն ոլոր ոլոր կ'բարձրանայ սենեկին մէջև չորս դին կ'ամպոտէ։ Միթէ կարծես թէ ուռած աչերդ կ'մթագնի միայն և շնչառութիւնդ կ'արգիլուի։ Ոչ, Ֆրօն-տը-Պէօ, ուրիշ պատճառ մը կայ։ Միթէ կը յիշես այն կիզանուտ նիւթերն որ սա սենեկիս տակ դիղուած են։

— Կին — գոչեց ասպետը մոլեգնութեամբ — անշուշտ կրակի շտուիր զանոնք . . . ։ Բայց, երկին վկայ, եթէ կրակ ձգեցիր և դղեակը բոցերու ճարակ տուիր . . . ։

— Գէթ, քիչ ատենէն այն բոցերն օդին մէջ պիտի բարձրանան — պատասխանեց Իւլրիգա իր ահռելի հանդարտութեամբն — և նշան մը տալով պիտի իմացընեմ պաշարողներուն որ կրակը մարելու փորձ փորձողներն աշխուժիւ նեռահարեն։ Մնաս բարև, Ֆրօն-տը-Պէօ, երանի թէ Միստա, Սքօկիւլա և Զէրնպօկ, սաքսօններու այս հին դիքը, այս սատանաներն, ինչպէս որ այժմ կ'կոչեն քահանաները, մահուանդ անկողնայն մօտ քեզ մխիթարեն, վասն զի Իւլրիգա քեզ կ'թողու։ Բայց պիտցիր, եթէ այս լուրս կրնայ քեզ սփոփել, որ Իւլրիգա քու երթալիք մութ ափունքը պիտի դիմէ. նա ևս քու պատուհասիդ մասնակից պիտի լինի, ինչպէս որ եղաւ յանցանացդ։ Երբ, հայրապան, մնաս բարև, ընդ միշտ մնաս բարև։ Երանի թէ այս կամարին ամէն մէկ քարը լեզու մը գտնէր այս աղան ականջիդ կրկնելու։

Այս ըսելով՝ Իւլրիգա սենեկէն դուրս ելաւ, և Ֆրօն-տը-պէօ-լսեց ձուլածոյ բանալին կրճիւնը։ Սաքսօնուհին կրկին կղպակով դուռը գոցեց, և այս կերպով ազատութիւն ամէն յոյս 'ի դերև հանեց։ Ֆրօն-տը-պէօ՝ իր օրհասական սարդնապին մէջ իր սպասաւորներն ու զինակիցներն օգնութեան կոչեց։ — Ստեփան և Սէնդ-Մօր, Քլէմէնդ և Կայլս, անօգնական ի՛այրիմ այս տեղ. . . Հասէ՛ք, օգնութեան հասէ՛ք։ ՖաՀՀդ Պուա-Կիլպէր, արի՛ տը Պրէսի, Ֆրօն-տը-պէօ ձեզ կ'կոչէ։ Մատնտու ձիապանները, ձեր տէրն եմ՝, ձեր զինակիցն եմ՝, ձեր դաշնակիցն եմ՝, դրուժան և անհաւատարիմ ասպետներ։ Դաւաճաններու սրատեսան ամէն անէծք ձեր մեղապարտ գլուխը թափին։ Միթէ պիտի թողո՞ք որ այսպէս թշուառ մեռնիմ։ Ձայնս չեն լսեր, չեն կարող լսել. . . Ձայնս Ճակատամարտի վայնասունին մէջ կ'կորստի. . . Ուսին աւելի թանձր կ'ելնէ. . . կրակը վարի յարկը բռնեց։ Ո՛հ, թող օդի շունչ մը գայ, և փոյթս չէ եթէ անմիջական մահ վրաս հասնի։

Եւ իր մոլեգին յուսահատութեան մէջ՝ թշուառն իր աղաղակները իւուսներուն աղաղակներուն կ'միացրնէր. յետոյ ինքն իրեն, մարգարէին սեռի, և նոյն իսկ Աստուծոյ դէմ անէծք կ'թափէր։

— Կարմրագոյն բոցը թանձր մուխը կ'պատռէ — գոչեց նա — սաղանն իմ վրայ կ'բալէ իր յատուկ տարր կրբև դրոշակ գործածելով։ Գորի՛ր, շնա՛ր ոգի, շեմ ընկերանար քեզ առանց իմ զինակիցներուս. ամէն, ամէն բան քուկդ են, այս զօրագունդն, այս պարիսպը։ Միթէ կարծէ՞ս թէ Ֆրօն-տը-պէօ առանձին պիտի մեկնի։ Ո՛չ, անհաւատարիմ սատճարականը, վա՛ աշուտ տը Պրէսի, Իւլրիգա, անարդ արուեստիկը, ղղուելի մարգարտանուհին, զօրականներն որ ինձ իմ ձեռնարկութեանցս մէջ օգնեցին, սաքսօն շուներն և անիծեալ հրէաներն որ իմ գերիներս են, ամէնքն, ամէնքն իմ բաղդիս պիտի վիճակին։ Երբէք ասկէ աւելի դատարտագին ընկերութիւն մը գեհենին ճանրան չէ բռնած. . . հա՛, հա՛, հա՛. . . ։ — Եւ իր զառանցանքին մէջ, քահ քահ խնդաց մինչև որ դմբեթին արձագանք տուաւ։

— Ո՞վ կ'ծիծաղի այս տեղ գոչեց Ֆրօն-տը-պէօ այլայլած ձայնով մը — վասն զի պայքարին աղմուկն իր ծիծաղին արձագանքը չէր արգիլեր ականջին ղարնելու — ո՞վ կ'ծիծաղի այս տեղ։ Միթէ դո՞ւ ես, Իւլրիգա։ Խօսէ՛, խօսէ՛, վհո՛ւկ, և ես քեզի կ'ներեմ. վասն զի միանակ դու կամ դժոխքի սադանը կարող է այսպիսի ժամանակ մը ծիծաղիլ. կորի՛ր. . . կորի՛ր. . . ։

Բայց ամբարշտութիւն մը պիտի լինի եթէ հայհոյիչին և հայրասպանին մահուան անկողնին մօտ դեռ ևս կենանք։

ԳԼՈՒԽ ԼԸ

Օ՜ն 'ի Խրամատն, սիրելի բարեկամներ, միանգամ ևս,
Կամ օ՜ն փակեցէք պատն մեր անկլիացի դիակներով,
— Եւ դուք, քաջ գեղամարտիկներ,
Որոց մարմիններ յԱնկլիա են շինուած, ցոյց տուէք արդ,
Ձեր բնիկ եռանգը — արի՛ երդնուցք
Որ դուք արժանի էք ձեր հայրենեաց։

ԱՐՔԱՅՆ ՀԷՆՐԻ Ե.

Թէև Սէտրիկ մեծ վստահութիւն չունէր Իւլրիգայի խօսքին վրայ, բայց զանց չըրաւ Սև աստղետին և Լօքսլէյի հաղորդել անոր խոստումն։ Ատոնք շատ գոհ եղան իմանալով որ դղեկին մէջ բարեկամ մը ունին որ, 'ի հարկին՝ իրենց մուտքը պիտի դիւրացընէր։ Ուստի որոշեցին սաքսօնին հետ որ, ինչ դժուարութիւններ որ պատահին, հարկ է յարձակում մ՚ընել, իբրև միակ միջոց Ֆրօն–տը–Պէօյի իշխանութեան ներքև գտնուող կալանաւորներն աղատելու համար։

— Ալֆրէտի արքայական արիւնը վտանգի մէջ է — ըսաւ Սէտրիկ։

— Ազնուական կնկան մը պատիւը վտանգի մէջ է — ըսաւ Սև աստղետը։

— Եւ կամարիս վրայ նկարուած ուրբ Քրիսդոֆի վրայ կ՚երդնում՝ — ըսաւ գեղապինուորն — որ եթէ այն հէք, հաւատարիմ, թշուառական Ռամպան աղատելու գրգիռը միայն ունենայի, իմ՝ անձս վտանգի մէջ պիտի դնէի քան թողուի որ անոր մազին իսկ դպին։

— Ես ալ այնպէս — ըսաւ ձգնաւորն։ Այո, պարոններ, կարծեմ թէ յիմար մը (կ՚ուզեմ ըսել, լաւ հասկընանք, յիմար մ՚որ յետին ծայր ճարպիկութիւն և ուշմտութիւն ունի, և կրնայ բաժակ մը գինիի այնքան համ և ախորժ տալ որչափ լաւագոյն ապուխտի մը շերտն) ուստի կ՚ըսեմ, եղբարք իմ, որ այսպիսի յիմար մը բնաւ զուրկ չպիտի մնայ իմաստուն կրօնաւորէ մ՚որ իրեն համար աղօթէ կամ կռուի վշտալի պատրագայի մը մէջ, մինչդեռ ես մինակ պատարագ կրնամ ըսել կամ գնդաղարդն մը գործածել։

Եւ այսպէս խօսելով՝ իր ծանր գեղարդն գլխին վրայ դարձուց այնչափ դիւրութեամբ ինչպէս հովիւ մ՚իր ցուպը։

— Ճշմարիտ է, սուրբ Հայր — վրայ բերաւ Սև ասպետը — Ճշմարիտ է, այնպէս թէ նոյն ինք Ս. Տրնապան ըսած լինէր։ Եւ այժմ՝ քաջէ Լօքսլէյ, միթէ լաւ չլինիր որ ազնիւ Սէտրիկն յարձակման գործն իր վրայ առնու։

— Հաւատաս վկայ, ոչ — պատասխանեց Սէտրիկ — երբէք սովորած չեմ յարձակիլ կամ պաշտպանել բռնական իշխանութեան բնակարանները զոր նորմաններն այս դժբաղդ երկրին վրայ կանգնեցին։ Ես ամենուն գլուխը պիտի կռուիմ, բայց իմ պարկեշտ դրացիներս քաջ գիտեն որ Ճարպիկ զինուոր մը չեմ ոչ պատերազմի արուեստին և ոչ բերդերու վրայ յարձակման մասին։

— Քանի որ ազնիւ Սէտրիկ այսպէս կ՚խօսի — ըսաւ Լօքսլէյ — ես ինքս աղեղնաւորներուն հրամանատարութիւնը վրաս կ՚առնում՝ և կը հաւանիմ որ մեզի նշանի տեղ ծառայող կաղնիէն զիս կախէք եթէ թողունք որ բերդակալները պարիսպներուն վրայ երևին առանց զանոնք ծակծկելու այնքան նետերով որչափ որ սխտորի ատամներ կան Ծնունդի համար շինուած երշիկի մը մէջ։

— Քաջ խօսեցար, անվեհեր որսորդ — պատասխանեց Սև ասպետը — և եթէ զիս հրամանատարութեան մ՚արժանի համարին, և այս տեղ՝ Ճշմարիտ անկլիացւոյ մը հետևող քանի մը զինուորներ գտնուին, վասն զի այս անունը կրնամ տալ ինքզինքիս, պատրաստ եմ իմ փորձառութիւնս ձեր դատին համար 'ի գործ դնել և այս պարիսպներուն յարձակման զանոնք առաջնորդել։

Պարապլուխներու մէջ իւրաքանչիւրին պաշտօնն այսպէս կարգադրուելէ ետև՝ առաջին յարձակումն սկսան, որուն ելքն արդէն ընթերցողն իմացաւ։

Երբ մարտկոցն առին՝ Սև ասպետն այս յաջողութեան լուրը Լօքսլէյի իմացուց, պատուիրելով միանգամայն որ ուշի ուշով գղեկին վրայ հսկէ որպէս զի բերդակալներն արդիլէ իրենց զօրութիւնը միաւորելու, յանկարծական յարձակում մ՚ընելու և իրենց կորուսած մարտկոցը նորէն ձեռք ձգելու մտօք։ Ասպետն յատկապէս այս յարձակման առաջն առնելու կ՚ձգնէր, վասն զի իր մարդիկն անմարդ կամաւոր զինուորներ, և պատերազմի անվարժ լինելով՝ յանկարծական յարձակման ժամանակ թերևս չկարենային դիմակալել նորման ասպետներու հինգերեայ մարտիկներուն, որ թէ յարձակողական և թէ պաշտպանողական գէնքերը

ունէին, և պաշարողներուն բուռն եռանդին դէմ դնելու համար կամ տարեալ մարդանաց և քաջալարժ զինուորաշարժութեան արդիւնք եղող պաղարիւնութենէն զուրկ չէին։

Նոյն դադարի միջոցին՝ ասպետը տեսակ մը շարժուն կամուրջ, կամ երկայն լաստ մը շինել տուաւ, որով խրամն անցնել կ՚յուսար թշնամւոյն դիմադրութեան հակառակ։ Այս գործը բաւական ժամանակ տեւեց, սակայն հրամանատարները չէին դժգոհեր այս մասին, մանաւանդ սա պատճառաւ որ Ուլրիկա նոյն յապաղման ժամանակ իրենց նպաստաւոր որ և է հնար գործածելու պիտի առիկէր։

Երբ այս լաստը լմընցաւ, Սև ասպետը պաշարող զնդին այսպէս խօսեցաւ. — Անօգուտ է աւելի երկար ժամանակ աստ մնալ, բարեկամք իմ, արևը մարը կ՚մտնէ յարևմուտս, և այնպիսի ծանր գործ մ՚ունիմ որ չպիտի կարենամ օր մ՚ևս ձեզի հետ մնալ։ Սակէ զատ՝ հրաշք մ՚է եթէ Եօրքէն բերդակալներուն օգնութեան ձիաւորներ չհասնին. ուստի հարկ է որ մեր կռիւը շուտով աւարտենք։ Հետևապէս՝ թող ձեզմէն երթայ Լօքսլէյի ըսէ որ դղեկին միւս կողմէն շատ մը նետեր արձակէ և դէպ յառաջ քալէ որպէս թէ պարիսպն 'ի վեր ելնելու միտում ունի։ Իսկ դուք, արիասիրտ անկլիացիք, իմ քովս կեցէք և պատրաստ եղիք լաստը խրամին վրայ նետելու, երբ դռնակը մէկ կողմէն բացուի։ Արիաբար նոյն դռնակէն ինձ հետևեցէք և օգնեցէք ինձ դղեկին մեծ պատին վրայ գտնուող ելից դուռը խորտակելու։ Իսկ ձեզնէ անոնք որ այս գործին մէջ ինձ աջակից չեն կամիր գտնուիլ, և կամ զայն 'ի կատար հանելու համար լաւ զինեալ չեն, թող երթան մարտկոցին կատարը կենան. ձեր աղեղներուն լարերը մինչև ձեր ականջները քաշեցէք և ձեր նետերով պարսպին վրայ ներսէն ելնողներն իսկոյն տապալեցէք։ Ազնիւ Սէտրիկ, միթէ կ՚հաճի՞ս այս տեղ մնացողներուն հրամանատարութիւնն ընդունիլ։

— Հիրվարտ հողին վկայ, ոչ, չեմ ընդունիր — գոչեց սաքսօնն — ուրիշներուն հրամանատար կանգնելու մեծամտութիւնը չունիմ, սակայն թող ապագայ սերունդը դիս իմ գերեզմանիս մէջ անիծէ եթէ ես ևս ուր որ երթաս չհետևիմ, քեզի ուղեկից գտնուողներուն հետ։ Այս կռիւն իմն է, և կ՚վայլէ որ պատերազմի գլուխն ես անցնիմ։

— Սակայն, մտածէ, ազնիւ սաքսօն — ըսաւ ասպետը — դու ոչ վերտ, ոչ զրահ ունիս, այլ միայն սա թեթև սաղաւարտը, վահան մը ու սուր մը։

— Լաւ ևս — պատասխանեց Սէտրիկ — աւելի թեթև կ՚լինիմ

պարիսպն 'ի վեր ելնելու, և ներէ ինձ այս ինքնագովութիւնս, աղնիւ ասպետ, այսօր պիտի տեսնես սաքսօն մ'որ այնչափ արիութեամբ պիտի վազէ կռուին կուրծքը բայց՝ որչափ որ երբէք չյանդգնիր ընելնօրմանն ասպետ մ'իր պողոպատիկ զրահովը։

— Լաւ ուրեմն, յանուն Անտուծոյ — ըսաւ ասպետը — դուռը բաց և սա շարժուն կամուրջը խրամին վրայ նետէ։

Մարտկոցին ներքին պատէն խրամին տանող դռնակն՝ որ գղեկին պատին վրայ եղած մէկ դռնակին հետ հաղորդակցութիւն ունէր, յանկարծ բացուեցաւ. շարժուն կամուրջը նետեցին և իսկոյն ջրերուն վրայ սկսաւ ծփալ մարտկոցէն մինչև գղեակն երկրննալով՝ և սահուն ու վտանգաւոր ճանբայ մը բացաւ՝ որուն վրայ երկու մարդ միայն ճակատ ճակատ կարող էին քալել։ Սև ասպետը քաջզգալով որ կարևոր է յանկարծուստ հանիլ թշնամոյն, մօտէն Սէտրիկի հետևեցաւ, կամրջին վրայ սրացաւ և միւս կողմը զտաւ։ Այն տեղ սկսաւ գղեկին դուռն օրոտընդոտս զարնել իր տապարով. պարսպէն նետուած նետերէն և քարերէն ղերծ կ'մնար, վասն զի կիսովին պատսպարուեր էր նախորդ շարժական կամրջին բեկորներէն՝ զոր տաճարականը փլեր էր մարտկոցը թողլով, և դրան վերին կողմը ձգեր էր տակաւին հակակշիռն։ Ասպետին ընկերներն այսպիսի պատսպարան մը չունէին։ Ասոնց երկուքն իսկոյն փքիններէ սպաննուեցան, ոմանք խրամին մէջ ընկան, և միւսները շտապաւ մարտկոցը զացին մտան։

Սէտրիկի և Սև ասպետի վիճակն արդարև նոյն պահուն վտանգաւոր էր, և աւելի պիտի ծանրանար եթէ մարտկոցին աղեղնաւորները Ֆարպիկ չլինէին, որոնք անդադար պարապին վրայ նետեր կ'տեղային, և եթէ այսպէս ուր ուրեմն իրենց հրամանատարները վերծ չպահէին այն նետերու տարափէն որ անտարակոյս պիտի 'ի սպառ ջնջէր։ Սակայն դարձեալ իրենց կացութիւնը չափազանց վտանգաւոր էր և ժամէ ժամ աւելի կ'ծանրանար։

— Ամօթ ձեզ ամենուդ — գոչեց տը Պրէսի իր բոլորտիքն եղող զօրականներուն — դուք քաջ աղեղնաւորներու անուն ունիք և կ'թողուք որ սա երկու շուները գղեկին պարսպին ներքև անպնաս կենան։ Շուտ պարսպին սա յարկի քարերը վար գլորեցէք, եթէ ուրիշ ճար մը չունիք։ Շուտ բրիչ ու լծակ բերէք, և իսկոյն սա ստուար արտևանն վար նետեցէք — և նոյն պահուն ահագին քարի կտոր մը ցցուց որ քիւէն դուրս ցցուած էր։

Նոյն միջոցին՝ պաշարողներն աշտարակին անկիւնը տեսան ֆլորմիր

դրօշակի մը ծածանիլը՝ զոր Իւլրիդա իբրև նշան յայտներ էր Սէտրիկին։ Ամենէն առաջ՝ Լօքսլէյ՝ քսջ որսորդն նշմարեց զայն՝ մինչդեռ դէպ 'ի մարտկոցը կ'շտապէր՝ յարձակման ընթացքը դիտելու անհամբեր լինելով։

— Ս. Գէորգ — գոչեց նա — զուարթագին Ս. Գէորգ Անկլիոց համար։ Օ՜ն 'ի զէն, անվեհեր մարտիկներ. ինչպէս կ'թողու՞ք որ քարի ասպետն ու ալնիւ Սէտրիկն առանձին մաքառին դրան դէմ։ Օ՜ն առաջուընեն, յիմար ճիգնաւոր, և ցոյց տուր մեզի որ քու վարդապրանիդ համար կռուիլ գիտես։ Իսկ դու՞ք, իմ արի գեղջկան զինուորներս, առաջանցիք, դղեակը մերն է, ներսը բաբեկաճներ ունինք. տեսէք սա դրօշակը, պայմանեալ նշանն է . . . ։ Գօրպիլսդրն մերն է։ մտածեցէ՛ք թէ ինչ պատիւ, ինչ աւար պիտի ունենաք, ճիգ մ'ևս ընեցէք և դղեկին կ'տիրեցէք։

Այս ըսելով՝ իր ընտիր աղեղը լարեց, և շիտակ նետը գնաց զարկաւ զինուորի մը կուրծքն, որ՝ տը Պրէսիի հրամանին համեմատ՝ պարսպին մէկ քարը քակելու վրայ էր որպէս զի Սէտրիկի և Սև ասպետի գլխին վրայ գլորէ։ Ուրիշ զինուոր մը մեռնողին ձեռքէն երկաթէ ճանկն առաւ, որով արդէն զգրգռեր էր քարն՝ երբ նետ մը գալով գլուխը զարկաւ և անկենդան խրամին մէջ նետեց։ Զօրականներն ահաբեկ մնացին, վասն զի այս ահարկու աղեղնաւորին զարկէն որ և է զէնք ապահով չէր։

— Մի՞թէ ետ կ'քաշուի՞ք, վատեր — ըսաւ տը Պրէսի — Մառանգոց Սէնդ Տընի, առէ՛ք ինձ սա լծակը։

Եւ լծակը կորզելով՝ խարխլած արտաւանին զարկաւ ուժգին. շատ ծանր էր, և եթէ վար գլորէր, ոչ միայն շարժական կամրջին մնացած կտորը պիտի փլէր, որուն ներքև յաւաջընթաց մարտիկները սպառնալուներ էին, այլև պիտի ընկլուզէր այն կոշտ տախտակն ընդ որ դղեակը հասեր էին։ Ամէնքը սեսան վտանգն, և ամենէն անվեհեր մարտիկները՝ նոյն իսկ քաջարի ճիգնաւորը, շարժուն լաստին վրայ ոտք կոխելու վարանեցան։ Երեք անգամ Լօքսլէյ իր նետն արձակեց և երեք անգամ Նորմանն ասպետին անթափ գրահին վրայէն նետը յատակեցաւ։

— Անիծեա՛լ լինի սա սատանիական պողոպատիկ վերտը — գոչեց Լօքսլէյ — եթէ անկլիացի դարբին մը զայն շինած լինէր, այս սլաքներն արդէն հեշտիւ թափ անցած էին, որպէս թէ մետաքսէ կամ կտաւէ վերտ լինէին։ — Ցետոյ Լօքսլէյ սկսաւ պոռալ. — Ընկերս-

Ներ, բարեկամներ, ազնիւ Սէտրիկ, եւ քաջուեցէք, ահագին քար մը ձեր գլխին վրայ պիտի ընկնի։

Այս աղդարարութիւնը չլսուեցաւ. վասն զի Սև ասպետին դրան տուած հարուածներու բոմբիւնը նոյն իսկ քսան թմբուկի ձայնը կարող էին խափանել։ Իրաւ է որ Հաւատարիմ Կիւրթ յառաջ նետուեցաւ դէպ 'ի կամուրջն որպէս զի Սէտրիկի իմաց տայ մօտալուտ վտանգը կամ անոր վիճակակից լինի, բայց իր խորհուրդը շատ ուշ հասաւ, հոծ արուեստն արդէն տեղէն խախտեր էր, և տը Պրէսի որ իր ձիունքը կ'կրկնապատուէր, իր խորհուրդն 'ի գործ դնելու վրայ էր, երբ տաճարականին ձայնն իր ականջին հնչեց։

— Ամէն ինչ կորսուած է, տը Պրէսի, դղեակը կ'այրի։

— Ցիմար ես որ այդպէս կ'խօսիս — պատասխանեց ասպետը։

— Արևմտեան կողմն արդէն բոցերու մէջ է։ Ընդունայն ջանայի կրակը մարել։

Պրայն տը Պուա-Կիլպէր՝ իրեն ընդարձակ սառնութեամբն այս սոսկալի գոյժը տուաւ, բայց մի և նոյն հանդարտութեամբ չընդունեց զայն իր զարմանահար ընկերը։

— Ալքայութեան սուրբեր — գոչեց տը Պրէսի — հիմակ ի՞նչ պիտի ընենք։ Ուխտ կ'ընեմ Լիմօժի Ս. Նիկողոսի զուտ ոսկի աշտանակ մը նուիրել եթէ . . .։

— Ուխտդ քեզի պահէ — պատասխանեց տաճարականն — և ինձի մոխիկ ըրէ։ Զօրականներուդ հետ վար իջիր որպէս թէ դուրսը յարձակում ընել կ'ուզես, բաց դղեկին դուռն, երկու հոգի միայն լաստին վրայ կ'դանուին, զանոնք խրամին մէջ նետէ, և մարտկոցը վազէ դնա։ Ես ալ մեծ դռնէն յարձակում մը պիտի ընեմ և մարտկոցը դրսէն պիտի զարնեմ, եթէ այն ամրոցը ձեռք ձգենք, վստահ եղիր որ մենք պիտի կարենանք ինքզինքնիս պաշտպանել մինչև որ մեզ օգնութեան հասնին կամ դոնէ մեզի պատուաւոր պայմաններով անձնատուր լինինք։

— Այդ լաւ մտածեր ես — ըսաւ տը Պրէսի — ես իմ դերս պիտի խաղամ, տաճարական, անտարակոյս զիս անօգնական չպիտի թողուս։

— Ասպետի խօսքս կ'տամ, որ չպիտի թողում — ըսաւ Պուա-Կիլպէր — բայց յանուն Աստուծոյ, շուտ ըրէ։

Տը Պրէսի իր մարդիկը ժողվելու փութաց, և շիտակ դղեկին դռնակը վազեց և անմիջապէս բանալ տուաւ։ Բայց այն ինչ դուռը բացուեցաւ որ Սև ասպետը զերբնային ուժով մ'իր ձանգան հորդեց, Պրէսիի և իր զօրականաց դիմադրութեան յաղթելով։ Իսկոյն երկու յառաջա-

դէմ զօրականներ իր հարուածներուն ներքև տապաստ ընկան, իսկ միւսները փախուստ տուին, թէև իրենց հրամանատարն ամէն ճիգ թափեց ընդ առաջ ելանելու։

— Շուներ — ըսաւ տը Պրէսի — այսպէս պիտի թողո՞ւք որ երկու մարդիկ մեր աղատութեան միակ ճանբան գրաւեն։

— Նոյն ինք սատանան է — ըսաւ հին զինուոր մ՚ընկրկելով սև ախոյեանին հարուածներէն ստիպեալ։

— Եւ եթէ սատանան է — վրայ բերաւ Պրէսի — միթէ անոր առջև խոյս պիտի տաք մինչև գժոխքին դուռը։ Դղեակը մեր ետևի կողմէն կ՚այրի, ապիրատներ — պոնէ յուսահատութիւնը ձեզ արիութիւն թողտայ, կամ թոյլտուէք որ ես ընդ առաջանցնիմ, այս ախոյեանին հետ ես ինքս պիտի չափուիմ։

Եւ արդարև՝ տը Պրէսի այն քաղաքային պատերազմներու սովորալի ժամանակն ստացած համբաւին համեմատ մաքառեցաւ նորէն։ Դռնակին տանող կամարաւոր անցքն՝ ուր այս երկու ահեղ ախոյեաններն այժմ ճակատ առ ճակատ կ՚կռուէին, իրարու տրուած ահարկու հարուածներէն կ՚թնդէին, տը Պրէսի իր տուրն, ու Սև ասպետն իր հսկայական տապարը գործածելով։ Ի վերջէ նորմանը հարուած մը ընդունեց՝ որուն ուժգնութիւնը՝ թէև մասամբ մեղմեցաւ իր վահանին միջոցաւ, ապա թէ ոչ տը Պրէսի նորէն ուրքի վրայ չպիտի կարենար ելնել, դարձեալ այնպէս բռնութեամբ գաղաթին ինչաւ որ ասպետը կրնակին վրայ գետինն ընկաւ։

— Անձնատուր եղիր, տը Պրէսի — ըսաւ Սև ասպետն անոր վրայ ծռելով և իր դիմակին թելերէն ցոյց տալով այն գժնդակ դաշոյնն որով ասպետներն իրենց նկուն թշնամիները կենդանի կ՚ընէին, և զոր գթութեան դաշոյն կ՚անուանէին։ — Անձնատուր եղիր, Մօրիս տը Պրէսի, քեզ օգնութեան դան չգան, թէ ոչ խսկոյն պիտի սպաննեմ քեզ։

— Անձնատուր չպիտի լինիմ — պատասխանեց տը Պրէսի — անծանօթ յաղթողի մը, անուանդ յայտնէ ինձ կամ զիս սպաննէ. չպիտի ըսուի երբէք որ Մօրիս տը Պրէսի անանուն ղեղջուկի մը ղերին եղաւ։

Սև ասպետը քանի մը խօսք փսփսաց տը Պրէսի ականջին։

— Անձնատուր կ՚լինիմ, թէ զօրավիգ դան ինձ թէ ոչ, քու գերիդ եմ — պատասխանեց նորմանն՝ որուն հպարտ և անվեհեր կամակորութիւնը բռնաղբօսիկ այլ ակնածական հլութեան մը փոխուեցաւ։

— Ամրոցը գնա — ըսաւ յաղթականն իշխանական ձայնով մը — և քեզ տալիք հրամանիս սպասէ։

Սակայն նախ՝ ներէ ինձ յայտնել քեզ — ըսաւ տը Պրէսի — ինչ որ կարևոր է քեզ գիտնալ։ Վիլֆրիտ Իվանօէ այս դղեկիս մէջ կ՚գտնուի վիրաւոր և գերի, հրդեհին մէջ պիտի այրի թէ որ իսկոյն օգնութիւն չգտնէ։

— Վիլֆրիտ Իվանօէ — գոչեց Սև ասպետը — գերի՞ է և վտանգի մէջ։ Ո՞վ որ դղեկիս մէջ անոր մարդին անգամ դպի՝ իր մահուամբ պիտի տուժէ այս յանդգնութիւնը. ցոյց ինձ անոր սենեակն. ուր է։

— Սա պտուտակ սանդղէն վեր ելիր — ըսաւ տը Պրէսի — և անոր սենեակը կ՚գտնես։ Ա՛ուղէս որ քեզ առաջնորդեմ — յարեց նա հլու ձայնով մը։

— Ո՛չ, գնա իսկոյն ու իմ հրամանիս սպասէ։ Քեզի վստահութիւն չունիմ, տը Պրէսի։

Այս կռուին և ասոր հետևող խօսակցութեան ժամանակ, Սէտրիկ՝ գունդ մը զինուորներու գլուխն անցած՝ որ կամրջէն անցեր էին դրան բացուիլը տեսնելով և որոց մէջ նշանաւոր էր Ճղնաւորը, Պրէսիին նկուն և յուսահատ մարտիկները կ՚հալածէր. ոմանք շնորհ կ՚հայցէին, ոմանք 'ի զուր դիմադրելու կ՚միտէին, բայց մեծ մասը դղեկին ընդարձակ բակին մէջ ապաւէն մը կ՚փնտռէին։ Տը Պրէսի գեռանէն ելաւ, և իր յաղթողին եռանէն տրտում ակնարկ մը նետեց՝ ըսելով, — Նա իմ վրայ վստահութիւն չունի, բայց միթէ իր վստահութեան արժանի եղա՞յ։ — Յետոյ սուրն առաւ, իբրև հնազանդութեան նշան սաղաւարտը հանեց, մարտկոցը գնաց և իր սուրը յանձնեց Լօքսլէյի՝ որուն իր Ճանբուն վրայ հանդիպեցաւ։

Հրդեհին բռնութիւնը սաստկանալով՝ անոր նշանները տեսնուեցան իսկոյն Վիլֆրիտի սրահին մէջ, ուր նա Ռեպեկայի աչալուրջ հսկողութեան ներքև կ՚մնար։ Կռուին զոռ ու զոչումէն արթընցեր էր Իվանօէ, և Ռեպեկա՝ իր թախանձաղին աղաչանաց վրայ՝ նորէն պատուհանն ելեր էր որպէս զի մարտին վիճակը քննէ և իրեն իմացընէ. սակայն ժամանակ մը մարտիկները չկրցաւ տեսնել հեղձուկ միէն որ շատնալով սենեկին մէջ կ՚սուրար. իսկ «Ջո՛ւր, ջո՛ւր» աղաղակներէն՝ որ ոռ ոռտընդոստ մարտին մէջ անգամ լսելի էին, հասկըցան իրենց սպառնացող նոր վտանգը։

— Դղեակը կ՚այրի՛ — ըսաւ Ռեպեկա — կ՚այրի՛. ի՞նչ կրնանք ընել աղատելու համար։

— Փախի՛ր, Ռեպեկա, և քու կեանքդ աղատէ — ըսաւ Իվանօէ — վասն զի որ և է մարդկային օգնութիւն կարող չէ իմս աղատել։

— Պլիտի փախչիմ — պատասխանեց Ռեբեկա — կամ միասին պլիտի աղատինք, կամ միասին պլիտի մեռնինք։ Եւ սակայն, տէր Աստուած, իմ հայրս, իմ հայրս ինչ վիճակի մէջ է արդեօք։

Նոյն պահուն՝ սրահին դուռը բացուեցաւ, և տաճարականը ներկայացաւ։ Ահռելի էր իր տեսքն. իր ոսկեզօծ զրահը խորտակեր ու արիւնլուայ էր, և իր սաղաւարտին փետուրներէն մաս մը փետտած և մաս մ'այրած էր։

— Ահա քեզ գտայ — ըսաւ նա Ռեբեկային — դու պիտի տեսնես այժմ որ իմ խոսաւումն թէ՝ մի և նոյն բարի կամ վատ բաղդին վիճակակից պիտի գտնուինք, պիտի կատարեմ։ Աղատումի ճար մը կայ միայն, հաղար տեսակ վտանգներէ շաւիղս յարդարեցի քեզի աղատելու համար. արի, ելիր և իսկոյն ետևէս եկուր։

— Մինակս — պատասխանեց Ռեբեկա — քեզի չպիտի հետևիմ։ Եթէ դու կնկան մը ծնունդն ես, եթէ մարդկային գթութեան ստուերն անդամ սրտիդ մէջ կ'գտնուի, եթէ սիրտդ զրահիդ չափ կարծր չէ, ազատէ իմ ծերունի հայրս, աղատէ այս վիրաւոր ասպետը։

— Ասպետ մը — պատասխանեց տաճարականն իր ընդաբոյս հանդարտութեամբն — ասպետ մը, Ռեբեկա, պարտաւոր է իր ճակատագիրը կրել, թէ սրի և թէ կրակի կերպարանով անոր երևի այն. և որքան հոգն է թէ ինչպէս և ուր տեղ հրէայ մ'իր մահը կ'գտնէ։

— Վայրենի մարտիկ — ըսաւ Ռեբեկա — լաւ ևս ունիմ բոցերուն մէջ կորնչիլ քան ձեռքէդ կեանքս ընդունիլ։

— Ընտրութեան ժամանակ չպիտի տամ քեզ, Ռեբեկա — անգամ մ'ինձ դիմադրաւ կեցար, սակայն երբէք մահկանացու մը չէ կարող երկու անգամ դիմադրել ինձ։

Այս ըսելով՝ իր թևերուն մէջ առաւ սարսափած աղջիկն, որ օդը կ'թնդէր իր աղաղակներովն, և սենեկէն դուրս տարաւ անոր ողբն ու կոծը մտիկ չընելով, և առանց միտ դնելու իրեն դէմ Իվանհոէի ժայթքած սպառնալիքն ու մենամարտի հրաւէրը։

— Տաճարին շուռնն, ուխտիդ աղտը, թող այդ նորատի օրիորդը. դաւաճանդ Պուա-Կիլբէր, Իվանհոէն է քեզ հրամայողն։ Անօրէն։ սրտիդ արիւնը պիտի ծծեմ։

— Եթէ աղաղակդ չլսէի, Ալիֆրիտ, երբէք քեզ չպիտի գտնէի — ըսաւ Սև ասպետն, որ նոյն պահուն սենեակը մտաւ։

— Եթէ դու ճշմարիտ ասպետ մ'ես — ըսաւ Ալիֆրիտ — իմ հոգս մի տանիր. գնա՛ սա առևանգչին ետևէն, ազատէ օրիորդ Ռավէնան, աղատէ աղնիւ Սէտրիկը։

— Ամէն մէկն իր կարգին — պատասխանեց փականագործ ասպետն — ամենէն առաջ՝ կարգը քոկդ է։

Եւ Իվանհոէն բռնելով՝ այնչափ հեշտիւ առաւ տարաւ որչափ որ տաճարականը Ռեպեկան վերուց. այս բեռով դէպ 'ի դռնակը վազեց և այն տեղ զանի երկու զինուորներու ինամոց յանձնելով՝ վերստին դղեակը դարձաւ միւս զերիներն ազատելու համար։

Արդէն աշտարակին մէկը հրավառ կ'վառէր, բոցերը զայրագին կը տուրային բոլոր պատուհաններէն և հրասրերէն (shot-hole)։ Բայց շէնքին միւս մասերուն մէջ՝ պատերուն և գմբեթներուն ահագին հաստատութիւնը կրակին ուժգնութեան կ'դիմադրէին, և այն տեղ մարդու կատղութիւնը դեռ ևս կ'յաղթանակէր, մինչդեռ հազիւ աւելի ահարկու տարրը կ'տիրապետէր այլուր. վասն զի պաշարողները բերդականները կ'հալածէին սենեկէ սենեակ, և անոնց արեամբ կ'հանէին վրէժ մ'որ երկար ժամանակէ վեր գիրենք կ'բորբոքէր Ֆրօն-տը-պէօ բռնաւորին զինուորներուն դէմ։ Բերդապահ զօրականներէն շատերը մինչև յետին ծայր դիմացան, մէկ քանին միայն անձնատուր եղան, և ոչ ոք շնորհ գտաւ։ Օդը կ'թնդար ողբերէն և զինուց շառաչէն, յուսահատ և հեղեվար անօրէններուն արեամբ գետինը թաթաւեր էր։

Այս խառնակութեան ժամուն՝ Սէտրիկ Ռովէնան վնասելու համար վազեց, մինչդեռ հաւատարիմ Կիւրթ՝ խառնուրդին մէջէն 'ի մօտուստ անոր հետևելով՝ իր աւ ձին վառնոյը կ'մուռնար և իր տիրոջ ուղղեալ հարուածներուն առաջն առնելու կ'օդնէր։ Ալինիւ սաքսօնը բարեբաղդութիւնն ունեցաւ իր սանուհւոյն սենեակը հասնելու այն միջոցին որ Ռովէնա յոյսը կտրած՝ օրհասական տաղնապով խաչ մը կ'սեղմէր իր կրծքին վրայ և անվրիպելի մահուան մը կ'սպասէր։ Սէտրիկ՝ Ռովէնան Գիւրթին յանձնեց որ ապահովի մարտկոցը տանի, որուն Ճամբան թշնամիէն և բոցերէն ազատ էր։ Այս գործը կատարելէն ետև՝ անձնենդ Սէտրիկ իր Աթէլստէյն բարեկամը գտնելու փութաց՝ իր անձն վտանգի մէջ դնելով, որպէս զի սաքսօն թագաւորութեան յետին շառաւիղն ազատէ։ Բայց Սէտրիկ այն հին սրահն՝ ուր ինքն ալ գերի մնացեր էր, հասնելէն առաջ՝ Վամպայի հնարագէտ միտքն իր վիճակակից ընկերին հետ խօսս տալու հնարը գտեր էր։ Երբ աղմուկն ու շփոթը յայտնեցին որ պայքարը տաքցած է, միմոն՝ իր թոքերուն բոլոր ուժովն սկսաւ գոչել. — Սուրբ Գէորգ և վիշապը. բարի սուրբ Գէորգ տիրապահ զուարթագին Անկլիոյ. դղեակը մերն է։ — Եւ որ-

պէս զի այս աղաղակներն աւելի ահռելի բերէ՝ որահին մէջ ցիր ու ցան մէկ քանի ժանգոտ վահաններն առաւ և սկսաւ խրատու զարնել։

Դուրսը կեցող պահակն՝ որուն միտքն արդէն ահ ու սարսափի մէջ ընկեր էր, Վամպայի հանած զոչիւնը լսելով՝ խոյս տալով, առանց դուռը զոցելու, դայեր տաճարականին ըսեր էր որ Թշնամիներ հին սրահն արշաւեր են։ Նոյն պահուն զերիներն անարգել նախասենեակը փախան և անկից զղեկին բակը հասան, որ նոյն միջոցին վերջին կռուի մը թատրը դարձեր էր։ Նոյն վայրը կ'գտնուէր վէս տաճարականն՝ որ իր երիվարը հեծեր էր և իր չորս կողմը ձիաւոր և հետի զօրականներ առեր էին՝ իրենց բոլոր զօրութիւնը ժողվելով անուանի պարագլխին մօտ՝ որպէս զի յետին փորձ մը փորձեն նուհանջելու։ Իր հրամանին համեմատ՝ շարժական կամուրջն ինկեցուցեր էին, բայց անոր անցքը փակեր էին Թշնամիները, վասն զի աղեղնաւորներն որ իրենց նետերով զղեկին այս կողմն զարկեր էին, հրդեհն ու կամրջին ինկնելն այն ինչ տեսնելով, շտապեր էին խմբովին դէպ 'ի այն կողմն, որպէս զի ոչ միայն բերդապահ զօրաց փախուստն արգիլեն այլև գղեակին այրելէն առաջնոր ու տարէն իրենց բաժինն առնուն։ Միւս կողմէն՝ պաշարողներէն մաս մ'որ զռնակէն ներս մտեր էին՝ նոյն պահուն դէպ 'ի մեծ բակը կ'դիմէին և մնացող բերդապահները կ'վանէին, որոնք այսպէս երկու կողմէն պաշարուեր էին։

Սակայն յուսահատութենէ բորբոքելով և իրենց անպարտելի պարագլխին օրինակէն խրախոյս առնելով՝ այս փոքրիկ դունդը մեծ արիութեամբ պատերազմեցաւ, և քաջաղէն լինելով՝ քանիցս յաջողեցաւ պաշարողները վանելու, թէև ասենցմէ քիչ էր։ Ռնպեկա՝ տաճարականին տարակինացի մէկ զերին առջևը կեցեր էր ձիով և փոքրիկ դնդին մէջտեղ կ'գտնուէր. և Պուա-Կիլլէր, այս արիւնալի պայքարին խառնակութեան ժամանակ իսկ՝ Ռեպեկայի ապահովութեան համար պէտք եղած հոգը կ'տանէր։ Սուէպ անոր կ'մօտենար, և իր յաստուկ պաշտպանութիւնը մոռնալով, իր եռանկիւնաձև և պողպատիկ թանապներով ծածկուած վահանն իրեն պատուար անոր առջևն կը բռնէր. յետոյ՝ յանկարծական շարժում մ'ընելով՝ Ռեպեկայի քովէն սրընթաց կ'վազէր իր մարտական աղաղակն արձակելով, յառաջադէմ պաշարողները տապաստ կ'կործաներ և գրեթէ իսկոյն կ'վերադառնար հրեուհւոյն երիվարին մօտ։

Աթելստէյն՝ որ՝ ինչպէս արդէն ընթերցողը գիտէ, դանդաղ էր, բայց չէ թէ արիութենէ դուրկ, երբ գիտեց տաճարականին հոգատաս-

թութեամբ պաշտպանած քոշաւոր կինը, կարծեց թէ Ռոմէնան է, և թէ ասպետը կ'ուզէր առևանգել՝ առ ոչ ինչ գրելով տեսած դիմադրութիւնը։

— Սուրբ Էտվարտին հոգին վկայ — գոչեց նա — պիտի ազատեմ զանի այն խրոխտ ասպետին ձեռքէն, և նա իմ բազկիս ուժովը պիտի սատակի։

— Առաջ լաւ մտածէ ընելիք գործիդ վրայ — գոչեց Վամպա — շտապող ձեռքը ձկան տեղ գորտ կ'որսայ։ Գդակս վկայ, սա վարի կինն օրիորդ Ռոմէնան չէ։ Դիտէ միանգամ իր երկար սև հիւսակներն. իրաւ որ եթէ սևը Ճերմակէն զանազանել չգիտես, կրնաս երթալ մարտի, բայց ես չպիտի հետևիմ քեզ։ Եթէ չգիտնամ թէ որո՞ւ համար պիտի մաքառիմ ոսկորներս խորտակել տալու միտք չունիմ. հապա դու որ զրահ ու վահան չունիս։ Մտածէ միանգամ որ մետաքսէ գդակ մը չէ կարող պողպատիկ սուրի մը դիմանալ։ Եթէ յամառը ծուխնեստուիլ կ'ուզէ, յամառը պէտք է որ թրջուի։ Խաղաղութիւն ընդ քեզ, ամենաբի Ամէլստէյն — յարեց նա վերջապէս, թող տալով սաքսօնին պարեգօտը զոր ցայն վայր բռներ էր։

Դիաթաւալ ղինուորի մը ձեռքէն ընկած լախտը գետնէն առնուլ, տաճարականին գնդին վրայ սրանալ և աջ ու ահեակ յաջորդաբար հարուածներ իջեցընել, և ամէն մէկ զարնուածքին մարտիկ մը ասպատ նետել՝ Ամէլստէյնի հերակլեան ուժին համար մէկ վայրկենի գործ եղաւ, նոյն միջոցին որ անսովոր կատաղութեամբ բորբոքեր էր իսկոյն Պուա-Կիլպերէն քանի մը քայլ հեռու գտնուեցաւ, և իր բարձրագոյն ձայնով զանի 'ի մենամարտ կոչեց։

— Դարձիր, անսի՛րտ տաճարական, տուր այն օրիորդին ազատութիւնը, վասն զի անարժան ես անոր դպելու, կորի՛ր, դո՛ւ մարդասպան և կեղծաւոր աւազակներու գնդին մէկ անդամը։

— Ճուն — գոչեց տաճարականն ակռաները կրճտելով — հիմակ պիտի սորվեցընեմ քեզ Սիօնի տաճարի սուրբ Ուխտին ինչպէս կ'հայհոյեն։ — Եւ այս ըսելով՝ իր երիվարը կէս մը շուրջ դարձուց, դէպ 'ի սաքսօնն կորավազ քալեց, և իր ասպատանները վրայ կանգնելով, այնպէս որ իր ձիուն վար ինջնելէն օգուտ քաղէ, Ամէլստէյնի գլխուն ոսկալի հարուած մ'ինջեցուց։

Վամպա իրաւունք ունէր ըսելու թէ՝ մետաքսէ գդակ մը չէ կարող գլուխը ջերմ պահել պողպատիկ սրէ մը։ Տաճարականին զէնքն այնքան հատու էր որ կտրեց՝ որպէս թէ ուռիի ոստ լինէր, լախտին

հատ և երկաթեայ Ճարմանդն, զոր տարաբաղդ սաքսօնը վերուցեր էր հարուածին դէմն առնլու, և իր գլխին վրայ իջնելով. զանի գետին փռեց։

— Հա՛, Պօսէան — գոչեց Պուա-Կիլպէր որոտաձայն — այսպէս սատակին պիտի Տաճարի ասպետներու թշնամիները։

Յետոյ՝ Ամէլսաէյնի անկումն ամենուն վրայ տիրած սարսափն ահիթ բռնելով՝ տաճարականը գոչեց. — Անոնք որ խոյս տալ կ'ուզեն թող իմ ետևէս գան։ — Եւ իր ձին դէպ 'ի շարժական կամուրջը քշեց՝ ցիր ու ցան ընելով այն աղեղնաւորները որ իր Ճամբան կտրել կ'ուզէին։ Իր ետևէն գացին սարակինացիները, և հինգ վեց զօրականներ որ ձի հեծեր էին։ Տաճարականին նահանջն վտանգաւոր դարձաւ իրեն և իր փոքրիկ գնդին վրայ արձակուած անհամար նետերուն պատճառաւ, բայց դարձեալ արդելք մը չեղան իրեն ամրոցին հասնելու, և՝ իր նախորդ յաստակագծին համեմատ՝ կարծէր թէ թերևս տը Պրէսի նոյն ամրոցին տիրացեր է։

— Տը Պրէսի, տը Պրէսի — պոռաց նա — միթէ այս աՀՒ ես։

— Այս տեղ եմ — պատասխանեց տը Պրէսի — բայց գերի եմ։

— Միթէ կարող եմ քեզ ազատելու գոչեց Պուա-Կիլպէր։

— Ո՛չ — պատասխանեց տը Պրէսի — անձնատուր եղայ, թէ օգնութիւն գտնեմ թէ ոչ, և կ'ուզեմ անստուտ գերի լինիլ։ Դու փախի՛ր, բազէներն արձակուած են, Անկլիոյ և քու մէջ ծով դիր... չեմ կրնար աւելի բան մ'ըսել։

— Լա՛ւ ուրեմն — ըսաւ տաճարականը — քանի որ այդ տեղ մնալ կ'փափաքիս, յիշէ միանգամ որ ես խօսքս կատարեցի։ Ուր որ կամին թող լինին բազէները, փոյթս չէ, կարծեմ թէ Դէմբլսդօվի ասպետատան պատերը բաւական ապահով պատսպարան մ'են և այն տեղ պիտի մնամ ինչպէս արադիլ մ'իր բոյնին մէջ։

Այսպէս խօսելով վազ ընդ վազ յառաջ քշեց իր ուղեկիցներուն հետ։ Բերդականներէն ոմանք որ ձիեր չէին գտեր՝ տաճարականին մեկնելէն ետև շարունակեցին յուսահատօրէն կռուիլ՝ չէ թէ ազատում գտնելու, այլ իրենց կեանքը սուղ ծախելու համար։ Գղեկին ամէն կողմը հուրը ծաւալիլ սկսեր էր, երբ զայն վառողն աշտարակի մը վրայ երևցաւ հին ընդդէմի մը կերպարանով և սկսաւ պատերազմի երգ մը երգել, ինչպէս երբեմն Ճակատամարտի դաշտին վրայ կ'երգէին նախկին հեթանոս սաքսօն պուէտները։ Իր երկայն մոխրագոյն գիսակն հերարձակ կ'տատանէր ուսին վրայ իր բաց գլխէն, գոհունակ

Ալէժխնդրութեան բերկրանքը ցնորական հրով կ՚փայլէր իր աչաց մէջ, և նա կ՚շարժէր իր ձեռքը բռնած աղեկատն որպէս թէ դժոխային գոյներէն մին լինէր, որ կ՚հինեն և կտրեն մարդկային ազգի կենաց թելն։ Ամանդութեամբ պահուած են հրդեհին և կոտորածի տեսարանին մէջ այս կնկան տեսակ մը անրջական կատղութեամբ երդած նուապներէն մէկ քանին։

1

Փայլուն պողոպատիկը սրէ,
Ջահդ վառէ և դու,
Դուսար Հէնկիսդի։
Ձփայլէր պողոպատիկը խնջոյքի միս Ջարդելու։
Կարծր և պինդ ձև ունի և սուր ծայր,
Ջահը հարսնական սենեկին համար չէ,
Կապուտակ փայլակներ ունի իր բոց ծծմբային։
Սրէ պողոպատիկը, ազուանները կ՚կուչեն,
Վառէ ջահը, Ջէրնոլոկ կ՚մռնչէ,
Պողոպատիկը սրէ, վիշապի որդի։
Վառէ և դու ջահդ, օրիորդ Հէնկիսդի։

2

Ցեղապետին դղեկին վրայ սև ամպն է իջած,
Արծիւը կ՚գոչէ, ամպին ծոցը կ՚սաւառնի։
Մի գոչեր, նեռ՝ ամպին նեռ՝ ձիաւորը
Հացկերոյթդ կ՚պատրաստուի։
Վալհալայի օրիորդներ ընդ առաջ կ՚նային,
Հէնկիսդի տոհմը պիտի անոնց գրկէ հիւրեր։
Թոթուեցէք ձեր սև գիսակներ, դստերք Վալհալայի,
Եւ՝ լի նշան ուրախութեան ածէք որոտալիր թմբուկներ։
Շատ վէս մարտիկներ ձեր դրան պիտի զարնեն,
Շատ մը սաղաւարտ կրող գլուխներ։

3

Ցեղապետին դղեկին վրայ գիշեր կ՚բաղմի տրտում՝
Սև ամպեր կ՚գիրուին ընդ բոլոր։
Շահատակին արեան պէս պիտի լինին հուր կարմիր։
Անտառներու փայտհատ իր շէկ կատար պիտի կանգնէ անոնց։

Այն որ շողալով պալատներ կ՚այրէ
Եւ իր հրավառ վառն օդին մէջ կ՚պարպէ,
Պարմիր, լայնածուփ և նաեմ,
Քաջերու գուպարին վերեր.
Սուրերու և բեկեալ վահաններու շկահին մէջ է իր ուրախութիւն՝
Վէրքէ հոսող ծխաշունչ արիւնն լիզել կ՚ախորժի։

4

Ամէնքը պիտի կորնչին.
Սուրը կ՚ճեղքէ սալաւարտներ,
Նիզակը կուռ վահանէն թափ կ՚անցնի,
Կրակը իշխաններու պալատներ կ՚լափէ
Մարտի ամբոցները բաբաններ կ՚քանդեն։
Ամէնքը կորնչին պիտի։
Հէնկիսդի ցեղն անհետ եղաւ,
Հօրայի անունն չ՚քացաւ.
Ձեր բաղդին առջև մ՚ընկրկիք, որպէսզի սրի.
Թող ձեր սուրեր ըմպեն արիւն իբրև գինի.
Պարարտեցէք այս սպանդարանի խնջոյքով,
Ձեր հրկիզեալ պալատներու լուսով։
Ուժեղ լինի ձեր սրեր մինչ ձեր արիւն է ջերմ,
Եւ ոչ մին խնայէք առ ահի կամ գթոյ,
Վասն զի ժամ մը միայն ունի վրէժխնդրութիւնն,
Անհաշտ ատելութիւն խակ պիտի մարի
Ես ևս կորնչիմ պիտի։

Հսկայական բոցերն արդէն ամէն արպելք նուաճելով երեկոյեան երկնից մէջ դիւարձրանային իբրև լայնատարը և հրանուտ փարոս մ՚որ հեռուէն կ՚լուսաւորէ շրջակայ երկիրներն։ Իրարմէ ետև աշտարակները կ՚տապալէին, ինչպէս նաև հրակէզ ձեղունները և գերանները, և մարտիկները ստիպուեցան վերջապէս մեծ գաւթէն հեռանալու։ Բերդապահ զօրականներն որոնմէ շատ քիչ մնացեր էին, ցիր ու ցան եղան և մօտակայ անտառին մէջ խոյս տուին։ Յաղթողներն որ խումբ խումբ գումարուեր էին, երկիւղախառն զարմանքով կ՚նշմարէին այն բոցերն որ իրենց գինուց վրայ մթագոյն նշոյլ մը կ՚բեկբեկէին։ Իւլրիգա սաքսօնուհոյն անբջական և վայրագ կերպարանն ընդ երկար տեսնուեցաւ

այն բարձր կիսին վրայ՝ զոր իրրև կայան ընտրեր էր իրեն, և իր թեւերն անջրպետի մէջ կ'շարժէր կատաղի խնդութեամբ, որպէս թէ իր վառած հրդեհին թաղուելն լինելը կ'զգար։

Վերջապէս սոսկալի քայքայմամբ մը բոլոր աշտարակը փլաւ և իր բնաւորն այրող բոցերուն մէջ կորաւ։ Այս զարհուրելի տեսարանին ղեկավար հանդիսատեսներն սոսկումով դիտելով զայն՝ խորին լռութիւն մը պահեցին, և քանի մը վայրկեան իրենց ձեռքը շարժեցին միայն խաչ հանելու համար։

Այն ատեն Լօրդէյի ձայնը լսելի եղաւ։ — Աղաղակ բարձէք, դեղացի մարտիկներ, բռնաւորին քարայրը կործանեցաւ։ Թող ձեզմէ ամէն մէկն իր աւարը տանի մեր ընտրած ժամադրութեան տեղն 'ի Դրիսաինկդրի Հարդ-Հիլ-Վօքի մէջ։ Ահա այն տեղացիներն՝ բաշխուեցէք պիտի ընենք մեր խմբերուն և վրէժխնդրութեան այս մեծ գործին մեղի աջակից գտնուող արժանի դաշնակցաց մէջ։

ԳԼՈՒԽ ԼԲ.

Այլ, ամէն երկիր իր քաղաքականութիւն ունել պարտի.
Ցերութիւններ ունին հրամայողներ, քաղաքներն՝ իրենց սահմանք;
Մինչև անգամ վտարակ վայրենի՝ յիւր շրջանն անտառային,
Ինչ պահպանէ տակաւին քաղաքային օրինաց մի ստուեր.
Վասն զի՝ իր դալարի դոդնոցն Ադամ հագնելէ հետէ,
Մարդ մարդու հետ ընկերային միութեան չեն ունեցել կայան
Ասանց օրինաց, որ են կապ անբակտելի այս միութեան։

Հին խաղ։

Արշալոյսն արդէն կաղնիի անտառին յանցաւոր վայրերն սկսեր էր լուսաւորել։ Դալարագեղ տերևներն ցօղաւէտ մարգարիտներով կը շողային։ Եղջերուն իր եղնիկին հետ բարձր ձարխտաներու ապաւէնը կ'թողուր և անտառին բացատներն վայրերը կ'դիմէր. և չկար անդ որ-ատրդ մ'որ դիտէ կամ արդիլէ այծեամն որ իր կորիւններուն գլուխը կը քալէր սիգապանծ։

Ցոլոր վտարականները գունաթուեր էին 'ի Հարդ-Հիլ-Վօք, դամբակատ կաղնին ներքև, և այն տեղ գիշերն անցուցեր էին՝ պաշարման նեղութիւններէն ետև՝ և հանդիստ կ'ընէին, ոմանք գինի խմելով, ոմանք քնանալով, շատերն ալ նոյն օրուան գէպքերու նկարագիրն ընելով, և յաղթութեան շնորհիւ իրենց պարտադրեալ ձեռքն անցած առատ աւարին քանակութիւնը կ'հաշուէին։

Արդարև շատ էր աւարը, վասն զի, որչափ որ շատ բաներ կրակին Ճարակ եղան, դարձեալ ոսկի և արծաթ անօթներ, պերճ զրահներ և փառաւոր զգեստներ անվեհեր վտարակներու Ճգանց ընտրելի ազատեր էին, որոնք վատնդի առջև չեն ընկրկիր երբ այսպիսի աւարներ իրենց վարձքն են։ Սակայն իրենց ընկերութեան կանոններն այնքան խիստ էին որ ոչ ոք կողոպուտէն փոքրիկ մաս մ՝անգամ սեպհականելու յանդգնեցաւ, վասն զի ամէն ինչ մէկ տեղ գիղեցին որպէս զի պարագլուխն բաշխումն ընէ։

Ժամադրութեան տեղը հին կաղնի մ՝էր, սակայն չէր այն ծառն որու ներքև արդէն Լաքսլէյ՝ Կիւրթն ու Վամպան տարեր էր։ Այս կաղնին անտառային ամփիթատրոնի մը կերպրոնը Դորգլասարնի փլած դղեկէն կէս մղոն հեռու կ՝գտնուէր։ Ահա այն տեղ Լաքսլէյ կայ առաւ, հսկայական կաղնիին թանձր Ճիւղերուն ներքև շինուած դալարաւէտ աթոռի մը վրայ նստաւ և իր անտառորդ ընկերներն իր չորս կողմը շարուեցան։ Սև ասպետն իր աջ կողմը նստեցուց, իսկ Սէտրիկը ձախ կողմը։

— Ներէցէք համարձակութեանս, ազնիւ տեարք — ըսաւ նա — բայց այս անտառներուն մէջ ես եմ միասին։ ասոնք են իմ պետութեան երկիրներն և այս իմ վայրի հպատակներս իմ իշխանութիւնս չպիտի յարգէին, եթէ իմ հողերուս մէջ՝ որ և է մէկու նախագահութիւն շնորհէի։ Հիմակ, աղեղնաւորներ, ոմն տեսաւ մեր երէցն, ուր է մեր զուարթագին Ճգնաւորը։ Գրիսամնէյց մէջ բազմաբազմաց առաջ մը պէտք է պատարագով մը սկսի։

Ո՞չ ոք տեսեր էր Գորմէնհրոգի կրօնաւորը։

— Ասուած պահպանէ մեզ — ըսաւ վտարակներու պարագլուխը — կարծեմ թէ այն զուարթ կրօնականն զինիին շիշին մօտ չափէն աւելի յապաղած պիտի լինի։ Ո՞վ տեսաւ զինին զղեկին առումէն վեր։

— Ես — ըսաւ Միլը — մառանի մը դրան բոլորը կ՝պտրտէր և օրացոյցի ամէն սրբոց վրայ կ՝երդնուր թէ Գրօն-սը-ղէօյի Կապրնյի զինիէն պիտի Ճաշակէ։

— Երանի թէ սուրբերը՝ որչափ որ կան — ըսաւ հրամանատարը — պահպանած լինէին զինքն որպէս զի շատ մը զինիի շիշեր պարպած և դղեկին փլատակներուն ներքև թաղուած չլինէր։ Գնա՛, Միլը, հետդ բաւական մարդ առ, վերջին անգամ զինքը տեսած տեղդ փնտռէ, հրակէզ աւերակներուն վրայ փոսէն ջուր առնելով թափէ-ջարերը մի առ մի պիտի դարձնեմ իմ քաջ երէցս գտնելու համար

Այս պարտաւորութիւնը կատարելու համար այնքան մարդիկ փութացին, թէև նոյն պահուն առ ու աւարին բաշխումը պիտի ընէին, որմէ հասկըցուեցաւ թէ զօրականներն որչափ կ'փափաքէին իրենց հոգեւոր հայրն ազատել։

— Բայց նոյն պահուն արի՛ մեր գործը շարունակենք — ըսաւ Լօքսլէյ — վասն զի, երբ այս յանդուգն պատերազմին համբաւը հոչակուի, տը Պրէսիի, Մալվուազէնի և Ֆրօն-տը-Պէօֆի ուրիշ դաշնակից խումբերը մեր վրայ պիտի քալեն, և մեր ապահովութեան համար ընտրելի է որ այս կողմերէն հեռանանք։ Ազնիւ Սէտրիկ — ըսաւ նա՝ դէպ 'ի սաքսօնը դառնալով — այս կողոպուտն երկու մասի բաժնուած է, հաւնածդ ընտրէ որպէս զի այս ձեռնարկութեան մեզի օգնող հպատակացդ մէջ բաժնես։

— Բարի զօրական — ըսաւ Սէտրիկ — սիրտս տրտմութեամբ լի է։ Գոնինկսբրկի արիասիրտ Ամէլսատէյն մեռաւ, այն որ սուրբ Խոստովանողին յետին շառաւիղն էր։ Անոր հետ անդառնալի կերպով կորան մեր յոյսերը. իր արեամբ նշոյլ մը մարեցաւ, և մարդկային շունչ մը չէ կարող զայն վերատին վառել։ Իմ մարդիկս՝ այս միջոցիս ինձի սպասաւորողներէն զատ՝ իմ ներկայութեանս կ'սպասեն որպէս զի իր պատուեալ մարմինն դերեզմանը տարուի։ Լէտի Ռովէնա Ռոթէրվուտ դառնալու կ'փափաքի և պէտք է որ բաւական ուղեկից և պահապան ղրկեմ։ Ուստի արդէն այս վայրէս հեռացած պիտի լինի և սպասեցի, չէ թէ աւարին մասնակից լինելու մտօք — վասն զի՝ եթէ Աստուած և սուրբ Վիթոլտ ուզէ, ոչ ես և ոչ իմիններէս մին բէնի արժէք ունեցող բանի մ'անդամ չպիտի դպի — կ'սպասէի միայն որ քեզի և քաջասիրտ զօրականներուդ իմ շնորհակալիքս յայտնեմ որ իմ ազնիւ սանուհիս կեանքն ու պատիւն ազատեցիք։

— Ո՛չ — ըսաւ վտարականներուն պարագլուխը — դեռ ևս գործին կէսը միայն աւարտեցինք, այս աւարէն առ որչափ որ պէտք է դրացիներդ և սպասաւորներդ վարձատրելու համար։

— Ես բաւական ունևոր եմ և կարող եմ ունեցած կարողութեամբս զանոնք վարձատրել — պատասխանեց Սէտրիկ։

— Եւ անոնցմէ մէկ քանին բաւական խելացի բրթան ինքզինքնին վարձատրելու. ամէնքն ունայնաձեռն չդարձան, ամէնքնիս ալ մանկիկներ չենք կրեր։

— Ազատ էին այնպէս վարուելու — ըսաւ Լօքսլէյ — մեր օրէնքը միայն մեղ կ'պարտաւորեն։

— Բայց դու, իմ խեղճ միմոս — ըսաւ Վէտրիկ գառնալով որպէս զի ծաղրածուն գրկէ — ես ինչպէս կրնամ քեզ վարձատրել, քեզ որ անվեհեր շղթայ և մահ աչքդ առիր իմ տեղս անցնելու համար։ Ամէնքը զիս երեսի վրայ կ'թողուին, և մինակ հէք խենդն ինձի հատատարիմ մնաց։

Այսպէս խօսելու առեն՝ արտօսր մը փլփլաց անտաշ ցեղապետին աչաց մէջ, համակրութեան նշան մը զոր Ամէլսատէնի մահուան առթիւ իսկ չէր ցոյց տուած, բայց իր միմոսին կէս մը բնազդական սիրոյն մէջ բան մը կար որ իր բնութիւնը կ'սարսէր աւելի սուր կերպով քան նոյն իսկ վիշտը։

— Բայց — ըսաւ միմոսն՝ իր տիրոջը գիրկէն հեռանալով — եթէ իմ ծառայութիւնս աչերուդ ջրովը վճարես՝ միմոսն ալ իր արտասուքովը քեզ ընկերանալու պիտի պարտաւորի, և այն առեն ինչ պիտի լինի իր պաշտօնը։ Սակայն, տէր իմ, եթէ իրաք կ'ուզես զիս զոհ ընել, կ'աղաչեմ քեզ ներել իմ Պիւրթ ընկերիս՝ որ առ քեզ ապաստաւորութենէ շարաթ մը զողցաւ որդւոյն սալու համար։

— Ներեմ անոր — գոչեց Վէտրիկ — ոչ միայն պիտի ներեմ այլև պիտի վարձատրեմ զինքը։ Ծունր դիր, Պիւրթ։

Խոզպանն իսկոյն տիրոջն ոտքն ընկաւ։ — Ոչ Thone և ոչ erse (ոչ ստրուկ և ոչ գերի) ես այսուհետև — վրայ բերաւ Վէտրիկ և դաւազանով մ'անոր դպաւ։ — TOLK FREE SACLESS օրինաւոր ազատագիր ես այժմ, թէ քաղքին մէջ և թէ դուրսը, դաշտերուն մէջ և անտառէն դուրս։ Վօլպրուհէմի հողերուս մէջ քեզի կ'ընծայեմ քառասուն արտավար, իրենէ և իմիններէս առ քեզ, քեզի և քուկիններուդ ընդմիշտ. և Աստուծոյ անէծքը թափի այն զլխուն վրայ որ այս պարգևս ետ կ'առնու։

Պիւրթ՝ յանկարծ ազատ, հողատէր դառնալուն՝ իր ոտից վրայ կանգ առաւ և գեանէն իր հասակին չափ բարձր ցատկեց խնդութենէն։

— Դարբին մը և խարտոց մը բերէք — գոչեց նա — որպէս զի ազատ մարդու մը վզէն սա մանեակը հանեմ։ Իմ աղնիւ տէրս, քու պարզևդ իմ ոյժս կրկնապատկեց և քեզի համար կրկնապատիկ պիտի կռուիմ. ծոյս աղատ սիրտ մը կայ հիմակ. ես փոխուած մարդ մը կ'երևիմ իմ աչքիս և ուրիշներուն առջև։ Հա, Ֆանկս — յարեց նա — ահա ատ ես — վասն զի հաւատարիմ շունն՝ իր տիրոջը խնդութիւնը դիտելով՝ սկսաւ անոր վրայ ցատկել՝ որպէս զի համակրութիւնը յայտնէ — միթէ տակաւին քու տէրդ կ'ճանչնա։

— Այո՛ — ըսաւ Վ.ամպա — Գանկս և ես քեզ կ՚ճանչենք, Պիւրթ, թէև միշտ վզնակ ունինք. Հաւանական է որ զոռ միայն մեզ և ինքզինքդ մոռնաս։

— Իրաւ որ ես ինքզինքս պիտի մոռնամ ձեզ մոռնալէն առաջ, անուտ ընկեր — ըսաւ Պիւրթ — և եթէ ազատութիւնը քեզ յարմար գայ, Վ.ամպա, սէրդ քեզ պիտի շնորհէ զայն։

— Ոչ, ոչ — ըսաւ Վ.ամպա — երբէք քու վրադ չպիտի նախանձիմ, եղբայր Պիւրթ, սորուին կրակին մօտ կ՚նստի երբ ազատ մարդը պարտաւոր է պատերազմի դաշտը դնալ։ Ո՞նչ կ՚ըսէ Մէրմպրրի Օլահէյմը. «Լաւագոյն է խենդ մը խնջոյքի մը քան թէ խնամատուն մը կռուի մէջ։»

Նոյն պահուն՝ ձիերու դափը լսուեցաւ, և օրիորդ Ռոմէնա երևցաւ, որուն բոլորտիքը շատ մը ձիաւորներ և հետևակներու մեծագոյն դունդ մը կային, որ իրենց նիզակները կ՚շարժէին և իրենց սակրները կ՚հնչեցընէին 'ի նշան օրիորդին ազատութեան։

Նոյն ինք Ռոմէնա՝ պերճօրէն հագուած և թխագոյն երիվարի մը վրայ հեծած՝ իր ազնիւ կերպերը նորէն կ՚յայտնէր, և մինակ անտարբեր դունատութիւն մը կ՚ցուցընէր թէ որչափ տառապանք կրեր էր. իր քնքուշ ձակատը՝ թէև տակաւին տրտմագին՝ ապագային հանդարտ նշոյլով մը և ազատութեանը համար շնորհապարտ զգացումով մը կը վառէր։ Գիտէր թէ Իսլանոէ ազատ է, և գիտէր որ Ամէլատէին մեռեր էր։ Առաջին գէպքը զինքն անկեղծ խնդութեամբ կ՚լնուր, և եթէ երկրորդն իրեն մեծ տրտմութիւն մը չէր պատճառած, կարելի է ենթադրել իրեն մոռացելով՝ այս կերպով՝ իր Սէարիկ խնամակալին միակ աւարիութենէ կ՚ազատէր։

Երբ Ռոմէնա իր ժողովրդը գէպ 'ի Լոքսլէյի ամրոցն ուղղեց, անվներ օրարդը՝ իր բոլոր հետևորդներով ալ եկաւ զանի ընդունելու՝ իբր մարդասէրութեան ընդարձակ բնազդումով։ Ռոմէնայի արիւնն երեսին ջարիկաւ՝ ձեռքը բարև տալով և դլուխն այնքան վար ծռելով որ իր գեղաձուի հիւսակներն պահ մը ժողովրդին ծփին բաշին հետ խառնուեցան. համաւստ այլ դդուելի ոճով յայտնեց առ Լոքսլէյ և իր միւս ազատարարներուն իր երախտագիտութիւնը։ — Ասուած օրհնէ ձեզ, քաջ մարդիկ — յարեց նա — Ասուած և մեր Տիրամայրը ձեզ օրհնէ և վարձատրէ որ այդպէս արիաբար տառապելոց դատը պաշտպանեցիք, եթէ երբէք ձեզնէ մին անօթի լինի, յիշէ թող որ Ռոմէնա կարող է կերակրել, եթէ ծարաւի լինի, շատ գինի և գարեջրի շիշերը

ունի, և եթէ հօրմանները ձեզ այս անտառներէն վանեն, Ռոզէնա ունի նաև սլուրակներ՝ ուր իր արիասիրտ պաշտպանները կարող են ապաստանիլ Թափառիլ, և անտառապահ մը չպիտի գայ հարցընելու թէ ո՞ր նեան եղջերուն զարկաւ։

— Աղնիւ օրիորդ, շատ շնորհակալ ենք — ըսաւ Լօքսլէյ — շնորհակալութիւն իմ՛և ընկերներուս կողմէ. բայց արդէն մեզի վարձք մ՛է քեզ ազատելը, մենք որ անտառին ներքև կ՛թափառինք՝ շատ դժբախտ մէջանբասիր չենք, բայց օրիորդ Ռոզէնայի ազատումը թերևս իբրև քաւում նկատուի երկինքը։

Ռոզէնա նորէն բարև տալով՝ անոնցմէ հեռանալու կ՛պատրաստուէր, բայց պահ մը կանգ առնելով՝ այն միջոցին որ Սէտրիկ իր ողջոյնները կ՛տար և իրեն պիտի ընկերանար, անակնկալս տը Պրէսի գերին մօտ գտնուեցաւ։ Ծառի մը տակ կ՛կենար խորին մտածութեան մէջ, ձեռները կրծքին վրայ խաչաձև դրեր էր, և Ռոզէնա կ՛ցուսար որ անտես կրնար անցնիլ։ Սակայն գերին վեր նայեցաւ և երբ դիտեց որ Ռոզէնան ներկայ է, ամօթահար կարմրեցաւ, պահ մը վարանոտ մնաց. յետոյ՝ դէպ անոր մօտ գնալով՝ անոր նժոյգին սանձը բռնեց և ծնկին մէկը գետինը կրկնեց։

— Արդեօք օրիորդ Ռոզէնա պիտի հաճի՞ գերի ասպետի մը վրայ, անպատուեալ գինուորի մը վրայ ակնարկ մը նետել։

— Պարոն ասպետ — պատասխանեց Ռոզէնա — այս ձեր սկսած ձեռնարկութիւններու մէջ՝ անպատուութիւնն յաջողութեան մէջ կը գտնուի քան պարտութեան։

— Յաղթանակն, օրիորդ, պէտք է որ սիրոն ամրէ — պատասխանեց տը Պրէսի։ — Մի միայն թող օրիորդ Ռոզէնան ներէ ինձ ազէտալի սիրոյ մ՛արդիւնք եղող բռնաբարութեանս համար, և պիտի տեսնէ որ տը Պրէսի գլուխ աղնուաբար անոր ծառայել։

— Պարոն ասպետ, իբրև քրիստոնեայ քեզի կ՛ներեմ — ըսաւ Ռոզէնա։

— Ասկից կ՛իմացուի — ըսաւ Վամպա — որ մեր տիրուհին բնաւ չներեր անոր։

— Բայց — շարայարեց Ռոզէնա — երբէք չպիտի կարենամ՞ներել ձեր յիմարութեան որ այսչափ թշուառութիւն և տառապանք պատճառեց։

— Թող տուր այդ օրիորդին ձիուն սանձն — ըսաւ Սէտրիկ յառաջ գալով։ — Մեր վերևը գտնուող պայծառ արևուն վրայ կ՛երդնում՝

որ՝ եթէ ամօթապարտութիւնը դիս չզսպէր, սա նիզակովս քեզ կեռոնը պիտի դամէի. բայց ստոյգ եղիր, Մօրիս որ Պրէսի, որ այս վատանուն գործին մատնակից գտնուելուդ համար պատիժդ պիտի ընդունիս։

— Անվտանգ կ'սպառնայ այն որ դերիի մը կ'սպառնայ — ըսաւ որ Պրէսի — բայց սաքսօն մը ելբ արդեօք մարդավարութեան զգացում մ'ունեցած է։

Ցեսոյ քանի մը քայլ քաշուելով թողուց որ Ռոմէնան անցնի։ Սէտրիկ մեկնելէն առաջ՝ իր յատուկ երախտագիտութիւնը յայտնեց Սև ասպետին, և թախանձագին աղաչեց որ իրեն ընկերանայ դէպ 'ի Ռոթէրվուտ։

— Գիտեմ — ըսաւ — որ ձեզի պէս թափառական ասպետներ՝ ձեր նիզակին ծայրովը բաղդ կ'փնտռէք, և բնաւ աչք չունիք հողերու և կալուածոց, բայց պատերազմը փոփոխական սիրուհի մ'է, և նոյն իսկ ախոյեանին համար՝ որուն արհեստն է դէս ու դէն թափառիլ, երբեմն բնակութիւնն ախորժելի է։ Դու՝ Ռոթէրվուտի սրահներուն մէջ՝ օթևան մ'ունիս, աղնիւ ասպետ։ Սէտրիկ բաւական հարուստ և կարող է բաղդին անիրաւութիւնները դարմանել, և իր բոլոր ինչքն իր աղատարարին ինչքն են։ Ուստի, եկուր Ռոթէրվուտ, չէ թէ իրրև հիւր, այլ իրրև որդի և եղբայր մը։

— Սէտրիկ արդէն դիս հարստացուց — պատասխանեց ասպետը — սրտեղծ ինձ ճանչել սաքսօնեան արիութեան արժէքը։ Անտարակոյս Ռոթէրվուտ պիտի դամ, քաջդ սաքսօն, և շատ շուտով. սակայն այժմ ստիպողական և կարևոր գործեր քու բնակարանէդ դիս կ'հեռացընեն։ Բայց դարձեալ, երբ վերադառնամ, թերևս զոհողութիւն մը պահանջեմ քեզմէ որով վեհանձնութիւնդ փորձի պիտի դնեմ։

— Արդէն չխնդրած կամքդ կատարած եմ — ըսաւ Սէտրիկ, իր բաց ձեռքով սև ասպետին թաթպանաւոր ափին մէջ զարնելով — խնդիրդ կանխաւ կ'ընդունիմ, եթէ իմ հարստութեանս կէսն իսկ զոհեմ։

— Այդչափ թեթևակի խօսք մի տար — վրայ բերաւ փականաւոր ասպետը — սակայն, կ'յուսամ իմ խնդրելիք շնորհս ընդունիլ. առ այժմ երթաս բարև։

— Այս միայն ունիմ ըսելու — յարեց սաքսօնն — որ, աղնիւ Ամթէլսուէյնի յուղարկաւորութեան ժամանակ՝ իր Գոնինկսբրիի դղեկին սրահներուն մէջ պիտի բնակիմ։ Բայց պիտի լինի այն իր դամբանական

ինչոյից մասնակից գտնուելու փափաքող անձերու, և ես ալնիւ Էտիթի դժբաղդ իշխանին մօրը կողմէ կ'խօսիմ, այն դղեակը պոց չպիտի ծնայ այն անձին առջև՝ որ թէև ապարդիւն՝ արիապէս ջանայ Ամէլստէյնը նօրմաններու լծէն և շղթայէն ազատել։

— Այո՛, տէր իմ — ըսաւ Վամպա, որ իր տիրոջը մօտ պաշտօնն սկսեր էր — մեծ խնջոյք մը պիտի լինի այն տեղ։ Մեղք որ ալնիւ Ամէլստէյն չպիտի կարենայ իր յուղարկաւորութեան խնջոյքին ներկայ գտնուիլ, բայց — շարայարեց միմոն՝ իր աչերը ծանրօրէն դէպ 'ի երկին վերցընելով — այս իրկուն արքայութեան մէջ կ'ընթրէ, և անտարակոյս իր փորը լաւ մը կ'լեցընէ։

— Լուռ կեցէք, և կորիր դնա՛ — ըսաւ Սէտրիկ՝ որ իր բարկութիւնն՝ այս անպատեհ կատակին վրայ՝ մեղմեց Վամպայի մատուցած նոր ծառայութիւնները յիշելով։

Ռովէնա հրաժարական բարևի ձևով շնորհալի ողջունեց Սև ասպետը։ Սաքսօնն Ատուծոյ պահպանութիւնը մաղթեց անոր համար, և ընդ առաջ քալեցին անտառին մէկ լայն ցանցատէն։

Այն ինչ ուղի ընկեր էին որ անտառին մէջէն յանկարծ թափօր մը սկսաւ յառաջ քալել, ծառաշէն ամփիթատրոնին շրջանն ըրաւ ծանրօրէն և Ռովէնայի ու հետևորդներուն դացած ճամբան բռնեց։ Մօտակայ վանքի մը կրօնաւորներն՝ Սէտրիկի խոստացած առատաձեռն նուէրն ընդունելու յուսով՝ կ'քալէին դադաղին քովէն՝ որու մէջ Ամէլստէյնի մարմինը դրուած էր, և սաղմոս կ'երգէին, մինչդեռ զայն տրտում տխուր իրենց ուսերուն վրայ բառնալով կ'տանէին աւատատէրները դէպ 'ի Գօնինկսպրրկի դղեակը, որպէս զի Հէնկիսդի գերեզմանին մէջ թաղուի, որուն ընտիր և երկայն աղպատոհմէն կ'սերէր հանգուցեալը։ Իր հպատակներէն շատերն այս պոյժն առնելով յուղարկաւորութեան եկեր էին, և դադաղին կ'հետևէին տրտմութեան և վհատութեան պէթ արտաքին նշաններով։ Վտարակները վերտին ոսք ելան, և քիչ մ'առաջ գեղեցկութեան և ծաղիկ հասակի մատուցած նուէրներին մեռելին մատուցին ինքնայօժար։ Քահանայից հանդիսաւոր երգն ու սգալի քալուածքն իրենց ուշը բերին իրենց այն ընկերակիցներն որ առջի օրուան պայքարին մէջ ընկեր մեռեր էին, բայց այսպիսի յիշատակներ վաղանցիկ են այն անձերու համար որ վտանգալի և բաղմարկած կեանք մը կ'վարեն, և այս գամբանական երգին ձայնն օդին մէջ մարելէն առաջ՝ վտարակները նորէն սկսեր էին իրենց կապուան ու կողոպուտը բաժնելու։

— Արիասիրտ ախոյեան — ըսաւ Լոքսլէյ Սև ասպետին — դու՛, որ եթէ այդ ընտիր սրտով և հզօր բազկով մեզ չօգնէիր, անտարակոյս չպիտի յաջողէինք, դու կ՚հաճի՞ս արդեօք այս առ ու աւարի գործին մէջէն առնուլ ինչ որ քեզ լաւագոյն կ՚թուի, օրպէս զի յիշեմ մեր այս պամարաշէն կաղնին։

— Ձեր անկեղծօրէն ըրած պարդները կ՚ընդունիմ և ես անկեղծօրէն — ըսաւ Սև Ասպետը — ուստի թոյլ տուէք ինձ միայն Վօրիս տը Պրէսին առնուլ։

— Արդէն քուկդ է այն — պատասխանեց Լոքսլէյ — և այդ մասին բաղդաւոր է. ապա թէ ոչ այդ բունաւորն այս կաղնիին ամենէն բարձր ճիւղը պիտի զարդարէր, մեր դատին չափ ազատ ընկերներովը, զոր կաղիններու պէս խիտ առ խիտ անոր բոլորտիքը պիտի կախէինք։ Բայց որովհետև քու դերիդ է, կենդանի պիտի մնայ, եթէ իմ հայրս իսկ տպանած լինէր։

— Տը Պրէսի — ըսաւ Սև ասպետը — հիմակ ազատ ես, գնա՛ այն՝ որուն դերին ես դու՝ անցելոյն վրէժը լուծելու կ՚անգոսնէ. բայց զգոյշ եղիր ապագային մէջ, թերևս աղէտաբեր դառնայ քեզի։ Վօրիս տը Պրէսի, ահա կ՚կրկնեմ, ԶԳՈՅՇ ԵՂԻՐ։

Տը Պրէսի լռութեամբ խոնարհութիւն մ՚ըրաւ, և քաշուելու վրայ էր՝ երբ վտարականներն անոր դլխին հեգնութիւն և անէծք թափեցին։ Գուռդ ասպետը յանկարծ կայ առաւ, ետ դարձաւ, ձեռները խաչաձև կապեց, իր բոլոր բարձրութեամբը կանգնեցաւ և գոչեց. — Լսեցէք, դո՛ք հաջող շուներ, դո՛ք որ եղջերուի դէմ կ՚ոռնաք, բայց չէք համարձակիր երբէք անոր վաղել երբ նեղն ընկած է, տը Պրէսի ձեր թշնամանքը կ՚անգոսնէ, ինչպէս պիտի անգոսնէր ձեր գովեստները։ Գացէք ձեր մացառներուն ետև և քարայրներու մէջ պահուելու, դո՛ք վտարակ գողեր, և լուռ կեցէք՝ երբ ասպետական և ազնիւ խօսք մը լսէք նոյն իսկ ձեր որջերէն մէջն մէն մը հեռուէն։

Այս անպատեհ մարտահրաւէրին վրայ տը Պրէսի գլխին նեռը պիտի սեղային անշուշտ՝ եթէ վտարականներու պարապլուխը միջամտելով իսկոյն չարգիլէր։ Նոյն պահուն ասպետը ձիու մը սանձէն բռնեց, վասն զի Ֆրօն–տը–Պէօֆի ախոռներէն առնուած ձիերէն մաս մը՝ որ կողպուտին մէկ բաժինը կ՚կազմէր, շուրջ կ՚կենային իրենց զարդարուն թամբերով։ Ուստի ասպետը թամբին վրայ ցատկեց և անտառին մէջէն սրընթաց վազեց դնաց։

Երբ այս դիպուածէն յառաջ եկած աղմուկը փոքր ինչ դադրեցաւ,

պրարտպլուխ վտարակն իր վկէն սուլիչն ու կամարը հանեց՝ զոր գեռ նոր Էշպիի գուպարին մէջ վաստակեր էր։

— Ագնիւ մարտիկ — ըսաւ նա Սև ասպետին — եթէ չես անգոսներ ընդունելու այս որսորդի շեփորն՝ զոր անկլիացի վտարակ մ՝իր վրայ կրեր է, կ՝աղաչեմ ընդունիլ զայն քու արիական ընթացքիդ՝ի յիշատակ, իսկ եթէ երբէք, ինչպէս որ քաջագոյն ասպետի մը կրնայ պատահիլ, Դրէնտի և Տիզի որ և է անտառի մէջ վտանգի մէջ գտնուելու լինիս, շեփորով սապէս երեք բառ փչէ Wa-sa-hoa, և թերևս օգնական և նեցուկ գտնես։

Այն ատեն շեփորը փչեց և քանի մ՝անգամ իր արտասանած բառերը հնչեց, մինչև որ Սև ասպետը ձայներն ըմբռնեց։

— Շնորհակալեմ քեզ պարգևիդ համար, քաջ զօրական — ըսաւ Սև ասպետը — մեծ վտանգի մը մէջ, քեզնէ և քու աղեղնաւոր զինուորներէ զատ լաւագոյն օգնականներ չպիտի փնտռեմ։ — Եւ նոյն պահուն շեփորը փչեց և նոյն զոչիւնով անտառը թնդացուց։

— Շատ լաւ և յստակ հնչեցիր — ըսաւ Լոքսլէյ — իրաւ որ, կրողը զիս տանի՝ եթէ դու ինչպէս պատերազմի նոյնպէս որսորդութեան արհեստը չգիտես. դրաւ կ՝դնեմ որ դու ժամանակին այծեամներու քաջ որսորդ մ՝ես եղեր . . . ։ Ընկերներ — յարեց նա — քաջ ըմբռնեցէք այս երեք ձայներն, այս է Սև ասպետին կոչումը, և ով որ զայն լսէ, և չփութայ՝ նեղութեան մէջ՝ անոր օգնել, իր յատուկ աղեղին լարովը՝ պիտի դանակոծ ընեմ և մեր խմբէն պիտի արտաքսեմ։

— Երկայն կեանք կ՝մաղթենք մեր պարագլխին — գոչեցին որսորդ զօրականները — և կեցցէ փականաւոր ասպետը։ Տար երկին որ մեզի առիթ մ՝ընծայէր փորձով ցուցընելու թէ որչափ կ՝փափաքինք անոր օգտակար լինելու։

Այնուհետև Լոքսլէյ կողոպուտը բաժնելու գործը շարունակեց, զոր զովելի անկողմնապահութեամբ կատարեց։ Եկեղեցւոյն և բարեպաշտական գործերու համար տասանորդ մը հանեց. մաս մ՝ալ տեսակ մը հասարակային դանձուն յատկացուց. մաս մը մարտին մէջ ընկնող զինուորներու արբևարիներուն և տղոց, կամ անոնց հոգիին համար պատարագ ընել տալու սահմանեց։ Իսկ մնացածն՝ իրենց կարգին և արժանեաց համեմատ՝ վտարականներուն բաշխեց, և պատահած այլ և այլ կասկածելի խնդիրներու մէջ՝ պարագլուխը խորագիտութեամբ վճիռ կ՝արձակէր և իր ընկերներուն կողմէ հլութեամբ կ՝ընդունուէր։ Սև ասպետը քիչ զարմացաւ տեսնելով որ այս մարդիկը՝ թէև ապօրէն վիճակի մը մէջ,

այնպիսի կանոնաւոր և արդար վարչութիւն մ՚ունէին, և իր տեսած ամէն բաներէն անոնց հրամանատարին արդարամիտութեան և դատողութեան վրայ ունեցած կարծեայ մէջ հաստատուեցաւ։

Երբ ամէն մէկն իր կողոպուտի բաժինն առաւ, և մինչդեռ գանձապետը՝ չորս կորովի գեղամարտիկներու օգնութեամբ՝ ընկերութեան պատկանող բաներն ապահով վայր մը փոխադրելու. կ՚զբաղէր, եկեղեցւոյ պահուած մասն անտէր կ՚մնար։

— Կ՚փափաքէի — ըսաւ պարագլուխը — իմանալ թէ մեր զուարթ երէցն ինչ եղաւ. երբէք սովորութիւն չունէր տարակայ պտնուելու երբ սեղան օրհնելու, կամ կողոպուտը բաժնելու ժամը հասնէր, և անոր պաշտօնն է մեր յաջող ձեռնարկութենէ զոյացած տասանորդը ստանալը։ Թերևս այս պաշտօնին շնորհիւ իր կրօնական մէկ քանի վրիպակները ծածկեց։ Սակայն՝ ասկից քիչ մը հեռու՝ իր ուխտէն ստրբ եղբայր մ՚ունիմ որ մեր գերին է, և կ՚փափաքէի որ մեր ճգնաւորն այս տեղ գտնուէր որ գերին հետ պատշաճ կերպով վարուէինք. բայց շատ կ՚տարակուսիմ որ պատերազմաբէր երէցն ապահով վիճակի մէջ պտնուի։

— Շատ պիտի ցաւիմ այս բանիս վրայ — ըսաւ Սև ասպետը — վասն զի շնորհապարտ եմ անոր իր հղիկին մէջ զուարթադին հիւրընկալութիւն մ՚ընելուն ինձ։ Երթանք դղեկին փլատակներուն մօտ, թերևս անդ իր վրայ աւելի շուտով լուր մը ստանանք։

Մինչդեռ այսպէս կ՚խօսէին, զօրականներու մէջ մեծ աղաղակ մը փրթաւ այն անձին համար որուն կորստեան վրայ կ՚դողային, և ամէն կասկած փարատեցաւ՝ երբ իր մարմնեղ անձն երևելէն առաջ՝ ճգնաւորն իր գալուստն աւետեց ստէնտորեան ձայնով։

— Տեղ բացէք, իմ զուարթ ընկերներս — գոչեց նա — տեղ բացէք ձեր հոգևոր հօր և իր գերիին։ Մեր գալուստը նորէն բարձրաձայն շնորհաւորեցէք։ Ագնիւ հրամանատար, արծիւի պէս կ՚գամ՝, իմ ճիրաններուս որս մը բռնած։

Ցեռոյ ամբոխին մէջէն ճամբայ բանալով, մինչդեռ բոլորտիքը կը ծիծաղէին, վեհապանծ յաղթանակաւ երևցաւ, մէկ ձեռքը գեղարդը բռնած, և միւսը լար մ՚որուն մէկ ծայրէն խեղճ Իսահակին վիզը կապեր էր. իսկ սա առ սարսափ և 'ի վիշտ կորակոր ընդ քարշ կ՚հետևէր յաղթական կրօնաւորին, որ մեծապոչ կ՚պոռար. — Ո՞ւր է Ալէն-է-Տէլ, որպէս զի 'ի պատիւ ինձ երգ մը շինէ։ Սուրբ Հերմանկիլտ վկայ, այն անպիտան բանահիւսը միշտ բացակայ կ՚գտնուի երբ արիութեան գործ մը հռչակելու առիթ մը պատահի։

— Քաջդ Ճղնաւոր — ըսաւ Հրամանատարը — թէև շատ կանուխ է, կ'նայիմ որ այս առտու դինելի պատարագի մը գտնուեր ես. բայց յանուն սուրբ Նիկողոսի, ո՞վ է այդ բերած որսդ։

— Գերի մը զոր իմ Նիզակիս և սրիս շնորհիւը շահեցայ, ազնիւ Հրամանատար — պատասխանեց Գօրմէնհրոսդի Ճղնաւորը — կամ լաւ ևս ըսեմ, իմ աղեղիս և գեղարդիս շնորհիւը, և սակայն իմ հոգևոր իշխանութեամբս ծանրագոյն գերութենէ մ'ազատեցի զինքը։ Խօսէ, հրէայ, միթէ քեզ սադանին Ճանկէն չփրկեցի։ Միթէ քեզ Կաստ-պոմէդ, Հայր Մերդ և ողջոյն Մարիամ չ'սորվեցուցի։ Միթէ բոլոր դիշեր քու կենացդ համար զինի խմելով և սուրբ խորհուրդները քեզի մեկնելով չանցուցի։

— Աստուծոյ սիրոյն — գոչեց հէք հրէայն — միթէ մէկը զիս այս յիմարին . . . կ'ուզէի ըսել այս սուրբ մարդուն ձեռքէն չ'պիտի ազատէ։

— Ի՞նչ կ'ըսես, հրէայ — պատասխանեց Ճղնաւորը սպառնական երևոյթով մը։ — Միթէ յի՞ս կ'կոչես խոստումդ, հրէայ։ Մտածէ անդամ մը, վասն զի եթէ նորէն թերահաւատութեանդ մէջ ընկնիս, թէև խաչկորի պէս փափկասուն չես . . . երանի՛ թէ նախաճաշկիս համար հաստ մ'ունենայի, դու բաւական կարծր չես և քեզ խորովելու հարկ չկայ։ Խօսք մտիկ ըրէ, Խաչակ, և հետս կրկնէ սա խօսքերը. ողջոյն, Մարիամ։

— Օ՛ն, սրբապղծութիւն մի ըներ, յիմար Ճղնաւոր — ըսաւ Լօքսլէյ — աւելի լաւ կ'ընես եթէ յայտնես մեզ թէ ո՞ւստի գտար այդ գերիդ։

— Սուրբ Տընդան վկայ — ըսաւ Ճղնաւորը — զանի գտայ այն տեղ ուր լաւագոյն ապրանք կ'փնտռէի։ Մառանն իջեր էի տեսնելու համար թէ արդեօք աղատելու բան մը կա՞յ. վասն զի համեմներով տաքցած զինի կայսեր բերնին արժանի ըմպելի մ'է, կարծէի թէ շռայլութիւն է այնչափ զինի մէկտեղ տաքցընելը։ Գանարեան զինիի տակառիկ մ'առեր էի, և կ'պատրաստուէի օգնութեան կանչել այն ծոյլ զօրականներէն մէկ քանին զոր միշտ փնտռել պէտք է երբ բաւական գործ մ'ընելու պատեհ առիթ գտնուի, երբ հաստ դուռ մը տեսայ, — Հա՛, հա՛ — ըսի ինքնիրենս — անտարակոյս այն տեղ պիտի պահուած լինին ամենէն ընտիր զինիները, և անզգամ տակառապետը՝ իր յատուկ կոչումէն զրկուելով՝ բանալին դրան վրայ մոռցեր է։ — Ուստի ներս մտայ, և ուրիշ բան չգտայ եթէ ոչ ժանգոտ շղթաներու կոյտ մը և սա շաներես հրէայն՝ որ իսկոյն ինձ անձնատուր եղաւ, թէ

օգնութեան հասնին իրեն թէ ոչ։ Հազիւ թէ ժամանակ գտայ՝ թեր-ապահատին հետ կռուին յողնութենէ ետք՝ բաժակ մը փրփրալի գինի քաշել, և իմ գերիս առնլով դուրս ելնելու կ'պատրաստուէի, երբ յանկարծ՝ որոտընդոստ դղրդմամբ արտաքին աշտարակի մը պատերը վար ընկան (կրողին երթան անունք որ ղայն ամուր չէին շինած) և իմ ճամբաս գոցեցին։ Աշտարակ աշտարակի ետեւէ փլելով տոսկալի պայթիւններ իրարու յաջորդեցին։ Անանքէս յոյսս կտրեցի, և դիտելով որ իմ պաշտօնս ունեցող մարդու համար անպատուութիւն էր հրէի մը մօտ մեռնիլ, գեղարդս վերցուցի անոր գլուխը ջախջախելու, բայց անոր ալեւոր մազերուն գթացի, և լաւ ևս համարեցի գեղարդս մէկդի թողուլ՝ և անոր վերադարձին աշխատիլ իմ հոգևոր ղէնքս գործածելով։ Եւ արդարև՝ տուրբ Տրնդանի օրհնութեամբը, սերմը լաւ հողի վրայ ընկաւ, մինակ՝ բոլոր գիշերն խորհուրդներու վրայ անոր հետ խօսելուս և կերպով մը ծոմ պահելուս (վասն զի իմ միտքս սիրելու համար տնկած քանի մը բաժակ գինիս յիշատակութեան իսկ արժանի չեն) կ'խոստովանիմ որ գլուխս քիչ շատ կ'դառնայ։ Պիլպէրդ և Ալիպալտ գիտեն թէ ինչ վիճակի մէջ գտան զիս, այսինքն բոլորովին ուժաթափ։

— Կրնանք վկայել — ըսաւ Պիլպէրդ — թէ երբ փլատակները մաքրեցինք, և տուրբ Տրնդանի օգնութեամբ զնդանին տանդուղը բացինք՝ Գանարեան տակառիկը կիսով պարապ, հրէայն կիսով մեռած և Ճգնաւորը կէսէն աւելի ուժաթափ գտանք, ինչպէս որ ինք կ'ըսէ։

— Դուք ամզդամներ, տուտ կ'խօսիք — պատասխանեց նախատեալ Ճգնաւորը — դուք և ձեր դիմեմոլ ընկերները պարպեցիք տակառիկը, ձեր առաւօտեան բաժակն անուանելով։ Կատաղած լինիմ, եթէ մեր հրամանատարին կոկորդին համար պահած չէի նոյն տակառիկը։ Բայց, ինչ փոյթ, հրէայն քրիստոնեայ եղաւ, և կ'հասկընայ ինչ որ իրեն ըսի, գրեթէ՝ եթէ ոչ բոլորովին, ինձի չափ քաջապէս։

— Հրէայ — հարցուց հրամանատարը — միթէ իրա՞ւ է։ Միթէ քու հաւատքդ ուրացա՞ր։

— Երանի՛ թէ ձեր առջև շնորհ գտնէի — ըսաւ հրէայն — բայց ատոյգ է որ այն տոսկալի դիշերը՝ պատկառելի Ճգնաւորին ըսածներէն բան մը չհասկըցայ։ Աւաղ, այնչափ ահ ու դողով կ'տառապէի վշտացին որ եթէ նոյն իսկ մեր տուրբ Աբրահամ նահապետը գար ինձ քարոզ կարդար, զիս խուլ ունկնդիր մը պիտի գտնէր։

— Դու տուտ կ'խօսիս, հրէայ, և քաջ գիտես այս բանս — ըսաւ

Ճգնաւորը — մեր բանակցութիւնէ բաւ մը միայն պիտի յիշեմ քեզի. դու խօսք տուիր մեր տուրբ Ուխտին նուիրել բոլոր քու ստացուածքդ։

— Աղնիւ տեարք իմ, բոլոր նահապետներն ինձ վկայ — ըսաւ Խոսահակ, առաջուանէ աւելի շփոթիլ սկսելով — որ այնպիսի բաւ մ'իր բերնէն չելաւ բնաւին։ Բայց, ես ծեր չքաւոր մարդ մ'եմ, թերևս իմ մէկ հատիկ դուստրս կորուսի, իմ վրայ դթայէք և թոյլ տուէք որ երթամ։

— Ամենևին — գոչեց կրօնաւորը — եթէ տուրբ եկեղեցւոյն 'ի նպաստ ըրած ուխտերդ ետ առնուս, պէտք է որ ապաշխարես։

Եւ իր ծանր գեղարդը բառնալով՝ հրէին ուսերուն վրայ պիտի ինջեցընէր ուժգին, եթէ Սև ասպետը հարուածին առջևը չառնուր. բայց և այսպէս կրակոտ Ճգնաւորին բարկութիւնն իր վրայ դարձուց։

— Քէնդի տուրբ Թովմասի վրայ կ'երդնում — ըսաւ նա — որ եթէ դլուխս դառնայ՝ քեզ պիտի տրվեցընեմ, պարոն Դատարկապորտ, որ քու առանձին գործերուդ խառնուիս, թէև երկաթէ ղէն ու զրահ հագած լինիս։

— Մի՛ բարկանար ինձի դէմ — ըսաւ ասպետը — գիտես որ ես քու երդուեալ բարեկամդ ու ընկերդ եմ։

— Ես այդպիսի բան մը չդիտեմ — պատասխանեց Ճգնաւորը — և քեզ իբրև խառնակիչ պարծուկ մը 'ի մենամարտ կ'կոչեմ։

— Բայց — ըսաւ ասպետն՝ որ կարծես թէ կ'ախորժէր իր առջի օրուան հիւրընկալը գրգռելով — մոռցար արդեօք թէ ի՞նչպէս իմ սիրոյս համար (վասն զի բան մը չեմ ըսեր սափորին և երէին փորձութեան վրայ) դու ծոմապահութեան և հսկումի ուխտդ աւրեցիր։

— Իրաւ որ — ըսաւ կրօնաւորն իր ահագին բուռը սեղմելով — քեզի կռուի մը պիտի տամ։*

— Այդպիսի պարդևներ չեմ ընդունիր — ըսաւ ասպետը — քու

*Առիւծասիրտ Ռիչարտի բնաւորութեան հակառակ չէ կռուի առնուլ տալ՝ կրակոտ Ճգնաւորին հետ, եթէ վէպերու պատմածները ստոյգ են։ Վասն զի՝ Ստեղեաց մէջ գլխէն անցած արկածներուն, և նոյն հեռաւոր երկիրներէն վերադարձին վրայ խօսող խիստ հետաքրքրական վէպի մը մէջ՝ կ'պատմուի թէ գրեթէ այս տեսակ կռիւամարտութիւն մ'ըրաւ Գերմանիա գերի գտնուած ատենը։ Իր հակառակորդն իր գլխաւոր բանտապահին որդին էր, որ անխոհեմաբար Ռիչարտը կռիւամարտութեան հրաւիրեց։ Թագաւորն իբրև ճշմարիտ մարդ ընդ առաջ անցաւ և հարուած մ'ընդունելով սաբսեցաւ։ Իբրև փոխարէն՝ Ռիչարտ իր ձեռքը մոմով ծեփելէն ետև՝ հնար մ'որ կարծեմ արդի կռիւամարտիկներու անյայտ է, անոր ակնջին այնպիսի ուժգին հարուած մը տուաւ որ հակառակորդը նոյն տեղը սպաննեց։

ապտակդ իբրև փոխ առնելու բաւական պիտի համարիմ, բայց այնքան մեծ վաշխավաճառի հաստատեմ փոխարէնն զոր երբէք քու հրէայ գերիդ իր առեւտրին մէջ վաստակած չէ։

— Հիմակ փորձավաճառի հաստատեմ այս բանս — ըսաւ կրօնաւորը։

— Հէյ — պոչեց հրամանատարը — ինչ կ'ընես այդ անդ, յիմար ճգնաւոր. ինչպէս կ'համարձակիս մեր մեծ կաղնիին ներքև կռուիլ։

— Այս կռիւ մը չէ — ըսաւ ասպետը — այլ միայն մարդավարութեան փոխադարձ ցոյցեր։ Ճգնաւոր, եթէ կ'յանդգնիս, զանրկ, քու հարուածիդ պիտի հանդուրժեմ, եթէ դու ալ իմինիս հանդուրժես։

— Այդ զլխիդ երկաթէ անօթովդ իմ վրայ առաւելութիւն մ'ունիս — ըսաւ կրօնաւորը — բայց ահաւասիկ քեզի համար։ եթէ գողնաթն իսկ լինիս պէտք է սաղաւարտովդ դարձեալ բաղկիս ներքև պիտի տապալիս։

Ճգնաւորն իր ջղուտ բազուկը մերկացուց մինչև արմուկը՝ և իր բոլոր ոյժն ամփոփելով՝ ասպետին այնպիսի հարուած մ'ինջեցուց որ կրնար եզ մը գետին կործանել։ Բայց իր հակառակորդը ժայռի պէս կեցաւ անտատան։ Ահագին աղաղակ մը բրդաւ բոլոր գեղացի զօրականներու մէջ. վասն զի Ճգնաւորին կռուին առակ դարձած էր անոնց մէջ, և քիչեր կային որ՝ կատակով կամ դիտմամբ՝ անոր բազկին զօրութեան փորձն առած չլինէին։

— Հիմակ, քահանայ — ըսաւ ասպետն իր թաթիպանը հանելով — եթէ զլխս վրայ առաւելութիւն մ'ունէի, ձեռ քս չպիտի ունենայ. ուստի ճշմարիտ մարդու պէս ամրապէս կեցիր։

— Genam meam dedi vapulatori, իմ այտս ապտակողին տուի — ըսաւ քահանան — և եթէ իմ տեղէս շարժես պիտի, ընկեր, յօժարակամ պիտի տամ քեզի հրէին փրկանքը։

Այսպէս խօսեցաւ ըմբշային քահանան՝ իր կողմէն դիմադրաւ կերպարան մը դասելով։ Բայց ոչ մարդը կարող է իր Ճակատագրին դիմադրել։ Ասպետն այնպէս ուժով և սրտով մուտ իր հարուածքն որ Ճգնաւորը թաւալցուր գետինն ընկաւ՝ 'ի մեծ զարմացումն բոլոր հանդիսականաց. բայց նորին ոտք ելաւ առանց շփոթութիւն և զայրոյթ յայտնելու։

— Եղբայր — ըսաւ նա ասպետին — դու այդ ոյժդ աւելի զգուշութեամբ գործածելու պարտաւոր էիր. եթէ ծնօտս ջախջախէիր պատարագս պիտի մնչէի միայն, վասն զի սրնգահարը զէշ կ'նուագէ երբ անծնօտ է։